



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Unfamily


h-1 1902¹⁰

891 99-192

4-67

100
290

94 ⁹²¹ 62/ 1-029



0101 - 16/10-78
0123 23/239

Հաճախի «Հաճախարար» թերթի հրատարակիչ
 891.99-192
 Հրատարակելու: 20 1902 թ

NOV 2011

U-67
 պ.



1001
 3872

ՄԻՍԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ ԼԻԱԿԱՏԱՐ ԵՐԳԱՐԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

ԳՐԻԳՈՐ ԱԻԱԳՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԻԳՐԱՆԵՑ.



Բանի կ'երգէ «Հայաստանին» իմ «Սոխակ»
 Սրտիս խորքում վա՛ռ կը թողնէ
 Նա միշտ սիրո՛ւ, միշտ ազգայի՛ն յիշատակ:
 Բ օ Գ - Ա. մի.

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

Բ Ա Գ Ո Ի

ՏՊԱՐԱՆ Ա. ՂԱՍԱՐԵԱՆԻ.

1902

Дозволено цензурою. С.-Петербургъ, 15 Февраля 1902 г.

Баку, Типографія А. К. Касабова, Арм. ул., с. д. № 6.

Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Ք.

621.




Մեր նպատակն է եղել, որ Հայ ժողովրդի, Հայ Հասարակութեան ձեռքը տայինք ոչ միայն երգերի մի ժողովածու, մի երգարան, այլ նաև,—որ գլխավորն էր,—ընթերցանութեան համար նիւթեր, այո՛, մատչելի նիւթեր:

Հասել ենք արդեօք մեր նպատակին,—այդ մասին չէ մեր խօսքը:—Մենք միայն այսքանը կամենում ենք ասել, որ «Սոխակի» բազմաթիւ օրինակները, որոնք սպառուած են ժողովրդի մէջ, համեմատաբար կարճ ժամանակում, կարող են պարզ զաղափար տալու այն ընդունելութեան և պահանջի վերայ, որ ստացել է «Սոխակը» Հայ Հասարակութեան կողմից: Հէնց այդ արդարացի պահանջին բաւականութիւն տալու մտօք էր, որ սեպուհ պարտականութիւն համարեցինք ձեռնարկել գրքիս հինգերորդ տպագրութեան, թերութեանց համար ներողամտութիւն խնդրելով:

Եթէ «Սոխակը» այսօր ժողովրդի համար մի համեստ պահանջ է դարձել, այդ պատիւը հրատարակողինը չէ, այլ—Հայ գրողների, Հայ երգիչների, որոնց թիւն օրէցօր աճելուն կ'բարեմաղթենք սրտի ամենայն խորքից:

Գրիգոր աւագ քահանայ Գրիգորեանց.

Բազու, 1901 թ.



Ի Ս Ն Ո Ւ Է Ր Ը.

Հրատարակելով ներկայ «ՍՈՒՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ» անունով ազգային լիակատար երգարանի ԱՌԱՋԻՆ Հատորը Հինգերորդ տպագրութեամբ՝ Ձեզ, Ձեր պատելի անուանը, Ձեր անմոռանալի յիշատակին եմ նուիրում սորան, իմ սիրական եղբայրներ և նազելի քոյրեր:

Նուէրիս Հետ օրհնում եմ Ձեզ, իմ պատուական Հայեր, և բարեմաղթում Ձեզ ամենայն բարիք և Աստուածային Սէր՝ անխախտ և անսասան պահելու, մեր խնկելի նախորդներից մեզ աւանդած, Հայ լեզուն, Հայ կրօնը և Հայ եկեղեցին, տալով—Կայսրինը՝ Կայսեր, և Աստուծոյն՝ Աստուծոյ:

Գրիգոր առաջ քահանայ Գրիգորեանց.





37400001

Ի Մ Ս Ո Ւ Ա Կ Ի Ն.

Թուրք, Սոխակ, թուրք, գնա՛ գէպի քո սիրած, քո պաշտած և՛ քո սրտին և՛ քո հոգուն մօտիկ, շատ մօտիկ հայրենիքը, ուր սպասում են քեզ՝ քո դալալիկը լսելու։ Գնա՛, երգի՛ր այնտեղ քո մեղեդին, Սոխակ, որին վաղուց, շատ վաղուց սովոր են մարդիկ։ Գնա՛, ոգևորի՛ր օտար աստղերի տակ հառաչող պանդուխտ հայի վշտացած և կեանքի ծովի մէջ խորասուզուած տխուր սրտերը, Սոխակ, որ գէթ քեզանով և միայն քեզանով մխիթարութիւն գտնեն և քեզանով սփոփանք ստանան...

Գնա՛, Սոխակ, գնա՛, էլ մի՛ ուշանալ. պատճառ, եթէ քո թուիչքը փոքր ինչ դանդաղեցնում ես, քեզ յայտնի պատճառով, կամ երբ կեանքի բնական օրէնքներից թեւադրուած, երբեմն—փոքր ժամանակով—դադար ես առնում քո «վի՛լդ-կառ»-ը երգելուց՝ հազար ու բիւր տարակուսանայ պատճառ ես դառնում, Սոխակ։

Ուստի՛ քանի որ քո գարունն է, քանի որ քո կեանքի—այսպէս ասած—ոսկեղինիկ դարն է՝

Գնա՛, սուղի՛ր քո դալալիկ,
Հայոց Սոխակ, Հայոց թուշնիկ,
Որ զօրանան, բացուին հեզիկ
Վարդեայ թփեր, վարդ կոկոնիկ։

Գրիգոր աւագ քահանայ Գրիգորեանց.

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

ՌՌԻՍԻԱՅԻ ՕԳՈՍՏԱՓԱՌԻ ԿԱՅՍՐԻՆ*)

«Боже, Царя храни!»
Հիմնի եղանակով.

ստո՛ւած, պա՛հիր Կայսրին—
 Հայկեան Պաշտպանին,
 Երջանիկ օրով,
 Ընտանիքով.
 Թո՛ղ զօրքով նա քաջաց՝
 Վանէ թշնամեաց.
 Աստո՛ւած, պա՛հիր Կայսրին:

*) Ռուսիայի այժմեան թագաւորող Օգոստափառ Կայսրն է լուսամիտ Նիկոլայ Ալեքսանդրովիչը՝ Իւր բարեպաշտ ամուսին Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեօդորովնայի հետ: Երիտասարդ թագաւոր Կայսրը Իւր պապական Գահը բարձրացաւ, ողորմութեամբն Աստուծոյ, 1894 թ. հոկտեմբերի 20-ին, Իւր սիրած Ծնողի՝ Թագաւոր և Օգոստափառ Կայսր Ալեքսանդր Ալեքսանդրովիչի լի հաւատով, լի սիրով խաղաղ մահից յետոյ, իսկ մեծահանգէս Թագաւորութիւնը կատարուեցաւ մայիսի 14-ին 1896 թ.: Այդ օրը Բաղուի եկեղեցեաց զանգակների զօղանջիւնը ոտի էր կանգնեցրել ամբողջ ազգաբնակութիւնը: Հայերը լքցուած էին Ս. Լուսաւորչի մայր եկեղեցին, ուր տողերիս գրողը, օրուայ հանդէսի առթիւ, զոհացողական մաղթանքից առաջ, արտայայտեց մերձաւորապէս հետեւեալը.

«Այսօր Թագակիր Մոսկուայի պատմական Կրէմլը ցնծութեան, հրճուանքի և ուրախութեան մէջ է: Այո՛, նորա մէջ են հաւաքուել այսօր

*
* *

Աստուած, պահիր Կայսրին,
Որ Հայոց ազգին
Նա լինի պաշտպան
Միշտ, անխափան
Եւ տալ ազատութիւն.
Աստուած, պահիր Կայսրին:

Գ. Ա. Բ. Գրիգորեանց.

Երկրագնդի բոլոր կողմերից շատ և շատ ներկայացուցիչներ՝ մի մեծ, մի վսեմ, մի համաշխարհային տօնախմբութեան հանդէս կատարելու համար: Այսօր Ռուսիայի երկրասարգ Արքայն՝ Նորին Կայսերական Մեծութիւն Նիկողայ Ալեքսանդրովիչը, Իւր Օգոստոսափառ ամուսնոյ՝ Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեօդորովնայի հետ, օծվում է և պսակվում Իւր Նախահայրերի և Հայրերի սրբազան պսակով: Այսօր միլիոնաւոր բաղմանքով, բաղմանքով ազգ և ազգներ—մեծ թէ փոքր, այր թէ կին, տղայ թէ աղջիկ,—ամենքը, այն, ամենքը, ծունկ չորած, աղօթում են Աստուծուն և բարեմաղթում Ռուսիայի Կայսրին Սէր, Ոյժ և Կ ա ռ ո ղ ու թ իւ ն, Իւր լայնածաւալ պետութիւնը դէպի առանջ, դէպի բարին, դէպի գեղեցկը, դէպի վսեմը և դէպի օդառէտը առաջնորդելու:

Հեռու, շատ հեռու Տաճկա-հայն էլ, որ անդուծ քրդերի և այլ բաշի-բզուկ թշնամիների ձեռքից փախել-հեռացել է անսպասեանքն ու դաշտերը, սարերն ու ձորերը, քաղաքներն ու այրերը, այսօր, կրկնում եմ, հա, այսօր մի կերպ, գողիգող, մի յետ, մի առաջ նայելով, գալիս է իւր խարխուլ, իւր կիսաւեր սուրբ եկեղեցին և, մահակը մի կողմ դնելով, արտասուքն աչերին և գողգողուն ձեռքերն երկինք ամբարձած, աղօթքի մբմունջ է վեր ուղղում դէպի երկնքի գահոյքը և՛ արեւատութիւն և՛ երջանիկ օրեր մաղթում Ռուսիայի Նորապսակ Կայսրին՝ Նորա առանձնաշնորհութիւնը և գութը հայցելով: Այսօր ամեն տեղ և ամենքի բերանից աղօթքի, մաղթանաց, գոհութեան և փառաբանութեան ձեններուն մրմունջներ են լսվում և, որպէս խունկ

2.

«Աւանդ փառացս անցաւորի».

Մովսէս Խորենացի.

Աշխարհէ աշխարհ, ծովէ ծով անցար,
Յաջող, անվնաս արիւր տուրեառ.
Այսպէս քո կեանքի շահաբեր նաւակ
Բերեց ու Հանեց քեզ փառաց վիճակ.
Բայց չեմ երանիլ քեզ՝ վաճառական,
Մինչև չըտեսնեմ քո յետին վախճան:

անուշահոտութեան, ծառանում, բարձրանում դէպի Աստուծոյ Աթոռը, երկիրը—ասես—միանալով երկնքի հետ:

Մենք, Հայերս էլ, որ այսօր խոնուած ենք սոյն նուիրական տաճարի մէջ, մեր ամենահալառաւութեան և սիրոյ զգացմունքն արտայայտելու այսօրուայ սրբազան թագադրութեան առթիւ, միանանք, ուրեմն, այդ միլիոնաւոր մարդկանց հետ և մեր ջերմագին աղօթքն ու խնդրումքը վեր առաքենք առ բարձրեալն Աստուած, որ Նա պարգեւէ Նոյին Կայսերական Մեծութիւն՝ Նորապսակ Թագաւոր Նիկողայ Ալեքսանդրովիչին և Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեօդորովնային երկար կեանք և գեղապանծ օրեր: Աղօթենք առ բարձրեալն Աստուած, որ Նա իւր հովանու տակ անփոքր և անսասան պահէ—պահպանէ Նոյին Կայսերական Մեծութեանց՝ բոլոր Արքայական ընտանիքով: Աղօթենք առ բարձրեալն Աստուած, որ Նա, իւր Սուրբ Հոգու շնորհաց ազդմամբ, ներշնչէ այսօրուայ Նորապսակ Թագաւոր Կայսր և Ինքնակալ Ամենայն Ռուսաց Նիկողայ II-ի մէջ հոգի խմաստութեան և զօրութեան, հոգի կարողութեան և սիրոյ, որպէս զի՝ Իւր Արքայական վսեմ և յաղթական դրօշակի տակ կարող լինին միշտ և հանապազ բարօրութեան, երջանկութեան և խաղաղութեան օրեր վայելել Իւր հաւատարիմ ազգերը, որոնց թւում և Հայոց վշտալի ազգը, ամէն»:

Գ. Ա. Բ. Գրիգորեանց.

Անբաւ մեծութիւն, գոյք, գանձ անսպառ
 Քաջ Կրեսոսի պէս դու էլ ձեռք բերար.
 Ապրում ես անհոգ, հանգիստ ամեն ժամ,
 Ինչպէս որ Եդեմ ապրեց հայր Ադամ.
 Բայց չեմ երանիլ քեզ՝ անգնիւ հարուստ,
 Մինչև չըտեսնեմ քո յետին ապրուստ:

Լողում, շրջում ես ականց ծովի մէջ,
 Ինչպէս Շամիրամ Վանայ ծովի մէջ.
 Չեկաւ մի դըշխոյ այս աշխարհի դուռ,
 Որ քո պէս կապէր նարօտ ոսկեհուռ.
 Բայց չեմ երանիլ քեզ՝ անգնիւ տիկին,
 Մինչև չըտեսնեմ քո վիճակ յետին:

Հրճվում, խնդում ես, ինչպէս երեսայ,
 Կարծես մայիս է թառել քո վերայ.
 Թէ որ քեզ պճնած տեսնէր Անահիտ՝
 ձիշտ պիտի կարծէր շարած մարգարիտ.
 Բայց չեմ երանիլ քեզ՝ ո՛վ օրիորդ,
 Մինչև չըտեսնեմ քո փառքդ յետնորդ:

Բընութեան ձեռքից ծընար բարեբաղդ,
 Ընկար մօրդ գիրկ իբրև չքնաղ վարդ.
 Աստուած թէ վարդին պատուաստեց հոտով,
 Քեզ էլ զմուսեց հանճարով, ձիրքով.
 Բայց չեմ երանիլ քեզ՝ մանուկ տհաս,
 Մինչև չըտեսնեմ քո վերջին օրհաս:

Աճեցին քո մէջ զէտ հսկայ կաղնիք,
 Փրփրոտ բերանով Սէր, Եռանդ և Կիրք.
 Ապրում ես ազատ, սէզ, սօս ու զուարթ,
 Քո պէս երջանիկ չըկայ ոչ մի մարդ.
 Բայց չեմ երանիլ քեզ՝ երիտասարդ,
 Մինչև չըտեսնեմ քո վերջ և քո բաղդ:
 Գարբին քեզ տուեց մահաբեր սուր, զէն,
 Տաք սիրտ էլ առար դարբընի բովէն.

Ելար դու մարտեր, խոյացար սարեր,
 Գետին փրռեցիր յաղթական քաջեր.
 Բայց չեմ երանիլ քեզ՝ կտրիճ զինուոր,
 Մինչև չըտեսնեմ քո փառքդ բոլոր:

Պաղել են քո մէջ աշխոյժ և վառ խանդ,
 Որոնցով արիր աշխարհ քարուքանդ,
 Այժմ տանըդ մէջ նըստած լուռ, հանդարտ,
 Անցնում ես ուրախ օրեր բարեբաղդ.
 Բայց չեմ երանիլ քեզ էլ՝ ծերուհի,
 Քանի քո վերջն էլ դեռ չէ ինձ յայտնի:

Թէ որ մշտավառ արև ու լուսին
 Ծիծաղ էլ ծանակ իրենց երեսին
 Գան, խօսեն ինձ հետ, թէ իրենց փայլով
 Պիտի աշխարհին պահեն իւր փառքով,
 Ես չեմ երանիլ նոցա էլ փառքին,
 Քանի նոքա էլ մեզ պէս վերջ ունին:

Կամ թէ բարձրուղէ՛յ կաղամախ, նոճիք,
 Ինձ հաւատացնեն, թէ անվերջ տարիք.
 Պիտի վերճեմեն 'ի գոգ Լիբանան,
 Պիտի ուռճանան մեր լերանց ծընկան.
 Նոցա էլ երբէք չեմ երանիլ ես,
 Քանի նոքա էլ վերջ ունին մեզ պէս:

Այլ ես կ'երանեմ այն վաճառողին,
 Որ արդիւնք կըտայ յօգուտ իւր ազգին:
 Ես միշտ կ'երանեմ այն ճոխ մեծատան,
 Որ միշտ սովելոց կըկանգնէ պաշտպան:
 Ես բիւր երանի կըտամ այն տիկնոջ,
 Որ միշտ կըկըթէ իւր օրդիք բողբոջ:
 Ես միշտ կ'երանեմ այն օրիորդին,
 Որ ամբիժ վարքով կ'ապրէ ըստ կարգին:
 Ես բիւր երանի կըտամ այն մանկան,
 Որ միշտ կըձգտի մեծ, բարի անուան:

Ես միշտ կ'երանեմ այն կայտառ մարդին,
 Որ միշտ կը փայլի գործերով անգին:
 Ես բիւր երանի կը տամ այն քաջին,
 Որ միշտ հետեւող կըլլի Վարդանին:
 Ես միշտ կ'երանեմ այն կըտրիճ ծերոյն,
 Որ հոգի կը տայ իւր ազգի սիրոյն:
 Իսկ թէ չենք ապրիլ մենք այս օրինակ,
 Իրաւ եմ ասում, մեզ և մեր փուչ փառք
 Կ'ողբանք, կ'աւաղենք մենք էլ դառնապէս,
 Ինչպէս որ ողբաց մեր քաջն Արտաշէս:

Սահակ վ. Ամատունի.

3.

Քաջն Վարդան.

Աւարայրի դաշտը ներկեց արիւնդ,
 Կարմիր Վարդան, հզօր Վարդան, քաջ Վարդան.
 Յազգէ յազգ կ'իշուի անմահ անուանդ,
 Կարմիր Վարդան, հզօր Վարդան, քաջ Վարդան,
 Խորտակեցիր ծանր լուծը պարսկական:
 Մեռար, թողիր անմահ անուն լիշատակ,
 Քո գործքերով դարձար բարի օրինակ,
 Դու սուրբ գործի համար եղար նահատակ,
 Անմահ Վարդան, հզօր Վարդան, քաջ Վարդան,
 Խորտակեցիր ծանր լուծը պարսկական:
 Քեզ զրգռեց ջերմ հայրենեաց եռանդը,
 Պաշտպանեցիր Փրկչիդ տուած աւանդը,
 Դուրս վանեցիր Զրադաշտեան աղանդը,
 Դու, վեհ Վարդան, հզօր Վարդան, քաջ Վարդան,
 Խորտակեցիր ծանր լուծը պարսկական:

Աշղղ-Ջիւանի.

4.

Վանեցի գեղջուկի տաղը.

Աղօթարանը բացուեցաւ, ժամանակ է զարթելու,
 Երթամ ախոռ, գոմշուկներս լըծեմ՝ գութան վարելու:
 Դէհ, գոմշուկներ, ելէք, ելէք, արտը երթանք, աշխատինք,
 Հարկ ու խարճի վատէն մօտ է, վօթենք արուն ու քրտինք:
 Հայի գութան, Հայի գութան, որի՞ համար կը ջանաս,
 Ո՞վ քեզիմով կը տանջուի, որի՞ն դու կուշտ հաց կուտաս:
 Այն օր, երբ քեզ ձեռքս առի՝ ազատ օրս կորուցի,
 Անվախ սիրտս վըհատեցաւ, հոգիս Թուրքին մատնեցի:
 Բաւ է, գութան, մեր տանջանքը, համբերութիւնն վերջ ունի,
 Դուն տեսար որ՝ մեր դուշմանը ամօթ, խեղք ու գութ չունի:
 Արի՛ փշրեմ ես քու խոփը, տանք դարբինին կըռելու,
 Կըռենք—կոփենք սուր ու սուսեր՝ դուշմանի դէմ կըռուելու:
 Եղբարք Հայեր՝ առէք խոփը, տըռէք դարբինին կըռելու,
 Կըռել—կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը փրկելու:

Գամառ-Բաթիպա.

5.

Ա յ ծ ե ա մ.

Անհոգ ես, չես գիտեր, ինչ կայ քո մասին,
 Պտըտվում են քո խեղճ անձի վնասին
 Գամբռներով, բարակներով միասին.
 Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս,
 Զագուկներդ ախուր լալիս են, լալիս:

Որսկանը ճրագով քեզի ման կուգայ,
Կուզէ ձեռքերը քու արիւնով լուայ,
Խղճալի, քու տեղակ սար ու ձոր կուլայ.
Փախիւր, այծեամ, փախիւր, որսկանն է գալիս,
Ձագուկներդ տխուր լալիս են, լալիս:

Որսկանը դուժ չունի, կանէ կրակը,
Կամ քեզի կ'սպանէ, կամ քու զաւակը,
Ձուր չի անցնիլ հրացանի դնգակը.
Փախիւր, այծեամ, փախիւր, որսկանն է գալիս,
Ձագուկներդ տխուր լալիս են, լալիս:

Դո՛ւրս մի ելլեր խիտ անտառից դու բնաւ,
Քեզ կ'վիրաւորեն, կ'ստանաս մեծ ցաւ,
Դաշտումը չես ման գար, թէ մտածես լաւ.
Փախիւր, այծեամ, փախիւր, որսկանն է գալիս,
Ձագուկներդ տխուր լալիս են, լալիս:

Աշըզ-Ջիւանի.

6.


Հ ա ս ո յ ի երգը.

Ահա ծագեց կարմիր արև,
Տաք և սլալծառ է օրը,
Դէ, քաշեցէք, սիրո՛ւն եզներ,
Յառաջ տարէք արօրը:
Վարը վարենք, ախօս փորենք,
Խոր ախօսներ հողի մէջ.
Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,
Յորեան դիզենք կալի մէջ:
Կը գայ ձմեռ—մենք վախ չունենք—
Ուրախ կ'անցնի մեր օրը,

Ուտելու միշտ պաշար ունենք,
Լի և կուշտ է մեր փորը:

Դէ, քաշեցէք, սիրո՛ւն եզներ,
Շուտով վարենք արտերը,

Թո՛ղ չ'ասեն մեր դրացիք՝
Ծոյլ են Հասոյի եղբորը:



Օրօրոցի երգ.

Արի, իմ սոխակ, թո՛ղ պարտեզ, մէրին,
Տաղերով քո՛ւն բեր տըղիս աչերին.
Բայց նա լալիս է. դու, սոխակ, մի գալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:

Ե՛կ, արեղաձագ, թո՛ղ արտ ու արօտ,
Օրօրէ տըղիս, քընի է կարօտ.
Բայց նա լալիս է. դու, ձագո՛ւկ, մի գալ,
Իմ որդին չուզէ արեղայ դառնալ:

Թո՛ղ դու, տատրակիկ, քու ձագն ու բունը,
Վուժուժով տըղիս բեր անուշ քունը.
Բայց նա լալիս է. տատրակիկ, մի գալ,
Իմ որդին չուզէ սըգաւոր դառնալ:

Կաջաղակ, ճարպիկ, գող, արծաթասէր,
Շահի զրուցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է. կաջաղակ, մի գալ,
Իմ որդին չուզէ սովազար դառնալ:

Սոխակ.

Թո՛ղ որսըդ, արի՛, քաջասիրտ բաղէ,
Քո՛ւ երգը գուցէ իմ որդին կ'ուզէ...
Բազէն որ եկաւ՝ որդիս լըռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քընեցաւ:

Գամառ-Քաթիպա.

8.

Արի՛ ինձ անգաճ կալ, ա՛յ դիվանայ սիրտ,
Հայա սիրէ, աղաբ սիրէ, ար սիրէ.
Աշխարքըս քունն ըլի, ի՞նչ պիտիս տանի՝
Աստուած սիրէ, հօքի սիրէ, եար սիրէ:

Էն բանն արա՛, վուր Աստուծու շարքումն է,
Խըրատնիրըն դըրած՝ «Հարանց Վարքումն» է,
Երիք բան կայ՝ հօքու, մարմնու կարքումն է՝
Գիր սիրէ, զալամ սիրէ, դավթար սիրէ:

Ե՛կ, արի՛, սիրտ, մի՛ կենա դուն մէ դամաղի,
Հալալ մըտիկ արա հացի ու աղի,
Հէնց բան արա՛, մարթ վըրէդ չը ծիծաղի՝
Խըրատ սիրէ, սաբը սիրէ, շար սիրէ:

Հընպարտութին չի անիս՝ դուր գու քաս Տէրիդ,
Խօնարութին արա՛ կանց քիզ դէվերիդ,
Աստուած դիփունանցըն մին հօքի երիտ՝
Աղկատ սիրէ, ղօնաղ սիրէ, տար սիրէ:

Սայեաթ-Նովա, էրնէկ քիզ, թէ էս անիս՝
Հօքուդ խաթրի մարմնուդ ումըրը կէս անիս.
Թէ գ'ուզիս վուր դատաստան չը տէսանիս՝
Վանք սիրէ, անապատ սիրէ, քար սիրէ:

9.

• Ազնիւ ընկեր, մեռանում եմ,
Բայց հանգիստ եմ ես հոգով.
Իմ թշնամիքս ես օրհնում եմ,—
Օրհնում եմ քեզ Աստուծով:

• Հեռանում եմ, անգին ընկեր,
Զ'գնահատած ոչ ոքից.
Բայց հաւաստեալ անձնանըւէր
Ազգիս մշակ կ'հաշուիմ:

• Ազնիւ ընկեր, չը մոռանաս,
Անդաւաճան, ջերմ սիրով
Ես սիրել եմ իմ հայրենիք,—
Գնա՛ և դու նոյն շաւղով:

Խեղճութիւնը Հայոց ազգի
Կարեկցաբար մտածիր,
Ոսկէ գրքոյկն Եղիշէի
Քաջ առաջնորդ քեզ ընտրիր:

Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան,
Ազատ կամքով ու խիղճով.
Այնտեղ Վարդան, անմահ Վարդան
Իւր խնկելի քաջերով:

Հայրենիք, սեղան սրբութեան—
Ես Աստուծոյ առաջև
Շատ կ'աղաչեմ, շատ կ'արտասուեմ,
Որ ծագէ քեզ նոր արև:

• Իմ մտերիմ, մահըս մօտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգով,
Որովհետև խիղճս արդար է,
Ճշմարտութեան ջատագով:

Ս. Շահազիզեան.

10.

Ի քեզ, Տէր, յուսացայ.

Սաղմոս.

Աստուած իմ, ի քեզ, ի քեզ յուսացայց,
Եւ ի մարդկանէ զի՞ բնաւ երկեայց.

Թողուցուս դու միթէ զիս

Յանկարեկից ցանգ լալիս:

Թէ տարագիր զիս բաղդ չարահամբոյր
Արկ լիմ հայրենեաց յերկիր հեռաւոր,

Ի քեզ ես, Տէր, յուսացայ,

Ընդ խնամովդ զիս պահեմ:

Թէ ընդ բիւր աղէտս իմ չարակն թշնամի
Անախորժ ակնարկեալ դեռ շատ բերկրեսցի՝

Տէր իմ, ի քեզ յուսացայց,

Քեւ ի վիշտս զօրացայց:

Թէ չարիք հազար թափեցին լիմ գլուխ,
Եւ աչք իմ յարտօսր ծփան յորդաբուլիս՝

Զքեզ, Տէր, Տէր, ես կարգամ,

Յողորմութիւնդ զօրանամ:

Թէ եղ ի մտի ընկեր դաւաճան

Ընդ քայլամուր ոտիւքս դնել դարան՝

Ի քեզ ես, Տէր, յուսացայ,

Զշաւիղս իմ դո՛ւ ուղղեմ:

Թէ իմս Հայաստան անմխիթար դեռ

Պաղպաղէ յաչաց արցունս յիւրն աւեր՝

Ասեմ ցնա. օր մի զքո՞

Տէր խղեսցէ քուրձ սգոյ:

Թէ այր անօրէն եհեղ սուրբ զարիւն,

Եւ ձեռն սրբապիղծ քանդեաց զմեր տուն՝

Ասեմ լիս միշտ. օր մի զմեր

Արդար վրէժն առցէ Տէր:

Զի գուլ տապարաւ օր մի կտրել տայ էնն

Զձեռն աւազակ և գլուխ մսեղէն.

Ի Տէր, ի Տէր յուսացայ,

Հաւատամս զոր խօսեցայ:

Քաջիկեան.

11.

Բանաստեղծ-Ուսուցիչ.

(Սմբատ Շահաղիզեան*)

Այն ինչ գործիչ է. ազնիւ բանաստեղծ,

Ուսուցիչ հմուտ, արդարակորով,

Որ սիրուն ազգին ցաւակից անկեղծ,

Սուրբ ճշմարտութեան հզօր ջատագով.

*) Մոսկուայի հայ հասարակութիւնը, 1892 թ. ապրիլի 9-ին, հանդիսաւոր կերպով տօնում է պ. Սմբատ Շահաղիզեանի զրական և մանկավարժական երեսնամեայ փառաւոր գործունէութեան յուբիլեանը և արժէ, որովհետեւ դա մի համակրելի և վսեմ գործ է ազգի ընդհանրութեան համար:

Դրական և մանկավարժական սփերայի մէջ երեսուն տարի գործել, երեսուն տարի աշխատել, մանուկ սրտերի մէջ զիտութեան, դաստիարակութեան, բարոյականութեան սերմեր ցանկրով—ահա այն ծանր խաչը, որը—ինչպէս ասում են—գերմանական համբերութեամբ և վերին աստիճանի տոկունութեամբ կրել է իւր թիկունքի վերայ պ. Շահաղիզեանը: Դրական և մանկավարժական փառքից հրապարակի վերայ երեսուն տարի գործել՝ նշանակում է յաղթող հանդիսանալ

Որի քնարը փափուկ, քաղցրաձայն
Հնչեց մերթ սիրոյ տխուր մեղեդիք,
Մերթ ազատ բողոք ընդդէմ հնութեան
Եւ նորոգ կեանքի կարգաց աւետիք.

Որ խաւարի դէմ զինավառուելով,
Չար բանսարկըւին կոչեց հրապարակ,
Պատառեց դիմակն անդող ձեռներով
Եւ արժանաւոր տարաւ յաղթանակ.

Որ արհամարհեց կեանքի վայելքներ,
Ձոհեց իր մատաղ ուժերը անգին.
Միայն թէ նժգեհ իր եղբարց օգնէր,
Միայն թէ ծաղկէր հայրենի այգին...

ամեն արգելքների, նշանակում է դիմադրած լինել շատ և շատ խոչընդոտների, և մենք այդ տեսնում ենք պ. Շահազիզեանի մէջ: Այդչափ արդիւնաւէտ գործունէութիւնից յետոյ, մենք, անկասկած, գալիս ենք այն եզրակացութեան, որ պ. Շահազիզեանը երբէք և երբէք չ'պէտք է մոռացուի հայ սիրական ազգից՝ իւր մատուցած խնկելի ծառայութիւններով, այն է՝ ազգին տուած ընտիր, քաղաքակիրթ ուսանողանդամներով, և՛ «Լեւոնի Վիշտը», և՛ «Հրապարակախօս Ջալը», և՛ «Ազատութեան Ժամեր» և այլն ողբշունչ գրուածքներով:

Ով կամենում է պ. Շահազիզեանի և նորա յոբելեանի մանրամասն նկարագրութեան հետ մօտիկից ծանօթանալ, թող կարդայ պ. Յովհաննէս Տէր-Յակոբեանի, Մոսկուայում հրատարակած, «Սմբատ Շահազիզեանի երեսնամեայ յոբելեանը» և յարգելի բանաստեղծի հրատարակած «Յոբելեանի տարեդարձ» խորագրերով երկու չքեղ գրքերը, որոնց երկուսի դիմն է 2 ռ. 50 կ. և որոնք բաւական հետաքրքիր նիւթեր են պարունակում իրանց մէջ: Բազումից, յոբելեանի առթիւ, բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ ուղարկուեցան Մոսկուա, որոնցից մինն էր և տողերիս գրողինը՝ հետեւեալ բովանդակութեամբ. «Շնորհաւորում եմ յոբելեար Շահազիզի երեսնամեայ փառաւոր գործունէութիւնը յօգուտ հայկական գրականութեան և մանկավարժութեան: Օրհնում եմ նորա արդիւնաւէտ գործունէութիւնը նաև ապագայում»:

Գ. Ա. Բ. Գրիգորեանց.

Եւ այդ բարեխիղճ, անձնազոհ մշակ
Չըջանաց երբէք հասանել փառքի,
Նա ուխտեց երգել միայն դործ, վաստակ
Եւ արդար հացը անցաւոր կեանքի:

Չըջանաց երբէք հասանել փառքի,
Սակայն պատիւը հետեւեց նրան.
Պօէտ-վարժապետ դարձաւ սիրելի
Մեծին և փոքրին առանց խտրութեան:

Եւ սիրեց ազգը մշակին անկեղծ...
Արդ՝ այդ ի՞նչ մարդ է և կամ ի՞նչ գործիչ,
Ազգին ցաւակից ազնիւ բանաստեղծ,
Մատաղ սերնդի հմուտ ուսուցիչ:

Ընկերներ, եկէք այսօր միանանք,
Մի սիրտ, մի հոգի, մի բերան դառնանք,
Ձայնենք ամենքս ի սրտէ անկեղծ՝
Կեցցէ՛ ուսուցիչ, կեցցէ՛ բանաստեղծ:

Սիրունի.

12.

Ա. Չ. Ո. Լ. Ղ.

Ա. սի՛ աշուղ, ա՛ռ չունգուրըդ, մեզ բան ասա՛ սրտալի,
Կարօտ ենք քու անուշ ձէնին, մի բան ասա՛ սրտալի.
Սրտի խօսք ենք ուզում քեզնից, որ զարթնացնի մեր հոգին —
Ա՛ռ չունգուրըդ, դարգօտ աշուղ, մեզ բան ասա՛ սրտալի:

Գիտենք, որ դու միշտ տանջվում ես հազար ու մի ցաւերով,
Հայրենիքիդ խոր խոցերը դու համրում ես դարերով,
Ձեռ լըւանայ եդ խոցերը արտասուքի ծովերով —
Ա՛ռ չունգուրըդ, ցաւօտ աշուղ, մեզ բան ասա՛ վշտալի:

Լուռ մընալով՝ մեր վերքերին պիտի չանես դու դարման.
Արար-աշխարհք գիտի չըկայ մեր դարդերին չափ-սահման.
Մնջութիւնն էլ նըշան հօ չի՞ մի գովելի յատկութեան.
Ա՛ռ չունգուրըդ, մեզ բան ասա՛, թո՛ղ խօսքդ ըլնի ցաւալի:

Եսպէս խօսքեր շատ ենք լսել, էլ կըլսենք անտրտունջ,
Մեր չըխօսկան ըլելուցն է՛ մնացել ենք անտէրունջ.
Լա՛ւ է ազատ լաց ըլնիլը, քանց դարդ տանիլն անմռունջ.
Ասա՛, լսենք, ի՞նչ անենք որ խօսքըդ կըլնի ողբալի:

Տեսնում ես որմենք թըմրած ենք, քունն անուշ է մեզ թւում.
Ե՛ր ես դու էլ մեզ բօլորիս մաշող քընիցն յաղթըում.
Ա՛ռ չունգուրըդ, տո՛ւր լարերին, կըրակ վառիւր մեր սրտում.
Մեզ ամենիս նոր շունչ տուող մի բան ասա՛ սրտալի:

Յովհաննէս Յովհաննիսեան.

13.

Ա. Ղ. Թ. ք.

Ամեն անգամ, երբ լսում եմ
Ես թշուառի սուգ ու լաց,
Քեզ ծնկաչօք աղօթում եմ,
Ո՛վ Դու մեր Հայր, մեր Աստուած:

Աղօթում եմ, սիրտըս յուզուած,
Աղօթում եւ արտասուում...
Ես աղօթքով անգութ մարդկանց
Քեզնից սէր եմ աղերսում:

Սէր մեծազօր, սէր յաղթական՝
Ոխ, չարութիւն խորտակող,
Սէր փոխադարձ, եղբայրական՝
Մարդկանց ամուր շաղկապող:

Սէր եմ խնդրում, ո՛վ Արարիչ,
Քար սրտերը հալեցնող...
Սէր փրկարար, սէր ըսփփիչ՝
Հէգ, թշուառին կեանք տուող:

Ա. Մատուրեան.

14.

Ա. Լ. Ե. տ. ր. ա. ն.

Ամեն անգամ, երբ թերթում եմ
Ես էջերը սուրբ գրքի,
Միշտ վշտացած մտածում եմ—
Ո՛ւր է սէրը մարդերի,
Որ Փրկիչը սուրբ կտակով
Մարդկութեանը աւանդեց,
Խաչի վերայ իւր արիւնով
Գիր կենդանի դրոշմեց:

Մարդիկ վաղուց մոռացել են
Խաչ ու քարոզ կենդանի,
Ա. Լ. Ե. տ. ր. ա. ն. ուրացել են,—
Ել սուրբ գիրքը գին չունի.
Ամենայն գիրք միշտ կարդում են,
Սիրոյ գիրքը չըկամին.
Ո՛ւր, չըգիտեմ, որոնում են
Բախտը իրանց խեղճ կեանքին...

Յովհաննէս Յովհաննիսեան.

15.

Ընտրութիւն Խրիմեան Հայրիկի
ի Կաթողիկոսութիւն.

(5 մայիսի 1892 թ.).

Այսօր համայն հայութիւնը ուրախացաւ, հրճուեցաւ,
Էջմիածնի սուրբ տաճարից մեծ աւետիք լսուեցաւ.
Վասպուրական երկրի Արծույն վեհ անունը հնչուեցաւ,
Ամեն բերան օրհնէնք կարգաց, սրտեր թնդաց, բերկրեցաւ,
Բոլոր հայոց բարի իղձը կատարուեցաւ, լրացաւ,
Ճշմարտութեան յաղթանակը բարձր ի գլուխ կանգնեցաւ:

Այսօր հայի ինքնաճանաչ լինելն է իսկ հաստատուն,
Ամուր հողի վրայ ոտը դնող ազգն է միշտ կայուն.
Պատգամաւոր սուրբ հարք, եղբարք, մի սիրտ դարձած աննկուն,
Ազգայնութեան պինդ կապերը պահպանեցին եռանդուն.
«Ընտրեմ» բառով հանդէս բերին մի պաշտելի վեհ անուն,
«Հայրիկ» քաղցր անուան տակը հայութիւնը միացաւ:

Այսօր կոչեց ամեն մի հայ. «Կեցցէ Հայրիկ Խրիմեան»,
Լուսաւորիչ Գրիգորի գահին լինի նա արժան.
Երկար տարիք աշխատել է այդ Ծերունին պատմական,
Ամբողջ ազգից ստացել է «Հայրիկ» անուն դուրական.
Ողջամբ հասնի սրբավայրը, առնենք օրհնէնքն հայրական,
Մեր վեհ Կայսեր հաճութիւնով նա ստացաւ մեծ համբաւ:

Այսօր մեր այդ մեծ Հայրիկի արած գործերը պէսպէս
Ամբողջ ազգի աչքի առաջ կրկին գալիս է հանդէս.
Մանկութիւնից նա եռանդով դուրս է եկել ասպարէզ,
Պաշտպանել է ազգութիւնը ու կրօնը, ամեն ծէս.

Թէ ուսուցիչ, թէ քարոզիչ, թէ պատրիարք մշտապէս,
Կեանքը դրած խղճուկ հայի փրկութեանը իսկ գրաւ:

Այսօր Հայոց համազգային մեծ ժողովը աջողակ
Կատարելով իւր յոյսերը, չը թողեց թերի փափագ.
Պատմութեան մէջ այդ արարքը կը մնայ միշտ յիշատակ.
Ընտրեալ Հայրիկը լինի Պետ երկար տարիք շարունակ.
Երգիչ Ջամալիս խնդրում է ազգիս բարի նպատակ.
Լինինք Վեհին թե ու թիկունք, խոհեմ որդիք անգրաւ:

Կեցցէ Հայրիկ Խրիմեան,
Կեցցէ Պարծանք հայութեան,
Բարեսիրտ անզուգական,
Չունեցող համանման:

Մկրտիչ Տալեանց.

16.

Վ եր ջ ի ն Յ ո յ ս.

(օրօր).

Ալէտանջ հոգւոյս միակ մխիթար,
Ծաղկիւր վարդի պէս, փթթիւր սնդադար.
Օրճր, իմ հոգեակ, թանգագին զաւակ,
Դու կեանքիս միակ հզօր աշտարակ:

Գալիս է զարուն, ծաղկում են դաշտեր,
Այրի մայրիկիդ շատանում վշտեր.
Օրճր, իմ հոգեակ, թանգագին զաւակ,
Դու սիրոյս միակ անդին յիշատակ:

Արցունքից խաւրած՝ աչքերս են լալիս,
Երբ անցած օրերս իմ միտս են գալիս.

Օրօր, իմ հոգեակ, թանգագին զաւակ,
Դու աչքիս միակ լուսոյ աշտարակ:

Մահու բաժակից քամում եմ մրուր,
Կեանքովդ կեանք տուր մայրիկիդ տխուր.
Օրօր, իմ հոգեակ, թանգագին զաւակ,
Դու հոգւոյս միակ բարի հրեշտակ:

Աշխատիր լինիս դու բարի պարծանք,
Հայրենի տանդ արժանի ժառանգ.
Թէ մեռնիմ, հոգ չէ, և այն ժամանակ
Անբախտ մայրիկիդ յիշէ շարունակ:

Ս. Փիլոսոֆ.

17.

Մ ա ս ի ս.

1.

Ալեւոր լերան
Սպիտակ գլխին
Եկան դիզուեցին
Չարագոյժ ամպեր.
Ճընշեցին նորա
Պանծալի զագաթ,
Կապարի նրման
Ծանրացան վերան.
Մըռայլեց Մասիս,
Փանդոտեց Մասիս,
Խըստադէմ մի հօր
Ճակատի նրման.
Խաւարեց իմ շուրջ,

Եւ երկիւղ ու դող
Տիրեցին սրբոյս.
Լըռութիւն խորին:

2.

Սըրբազան Մասիս,
Ալեզորդ Մասիս,
Լեզուդ բաց արա
Ձաւակիդ առաջ.
Ինձ յայտնիր, յայտնիր,
Սըրբազան Մասիս,
Թէ ինչո՞ւ արդեօք
Աստրծոյ օրին
Մըռայլում ես դու

Տըխրագին այդքան,
Մինչդեռ լոյս-արև
Ամպերից յետոյ
Դեռ փայլում է հաշտ
Աշխարհիս վերան:
Քո զաւակըն եմ,
Հարազատ որդիդ,
Աչքերիս արցունք՝
Առաջիդ կանգնած.
Աղաչում եմ ես,
Պաղատում եմ ես,
Իմ առջև բացիր
Քո անհուն թախիծ,
Քո սրբոյ խոցեր:

3.

Պատասխան չըկայ.
Լըռութիւն խորին:
Բայց կամաց կամաց
Վերեկից ահա՛
Ականջիս հասաւ
Խըլածայն որսո.
Մի վայրկեան լըռեց,
Դարձեալ մի վայր-
կեան,—
Եւ ճայթեց յանկարծ
Սեպցած երկինք.
Որոտաց-զոռաց
Կատաղի ձայնով.
Եւ արար-աշխարհ
Չարհուրած՝ ասես
Արթնացած քնից՝
Դըղըրդաց խկոյն,

Եւ խոշոր խոշոր
Անձրեւներն յորդ,
Պատառուած երկնից,
Չայրացած ուժգին
Թափուեցին գետին—
Մայր հողի վերայ:

4.

Բարկութեան արդեօք
Դըղըրդին էր այն,
Որ այնքան ահեղ
Որոտաց գլխիս:
Արդեօք ծեր Մասիսն
Կըշտամբում էր ինձ,
Անարժան որդուն,
Յանցանքիս համար,
Մեղքերիս համար.
Թէ՛ լացի, կոծի
Հեկեկանք էր այն,
Որ ելաւ պայթած
Ծերունու կրծքից.—
Չգիտեմ ես այդ:

5.

Ես տեսայ միայն,
Ինչպէս սուրբ լերան
Գագաթից յանկարծ
Վըտակներ ուռած՝
Աղի-ջերմ-առատ
Սըցունքի նրման
Կարկաջով արագ
Թափուեցին ներքև.
Ես տեսայ ինչպէս

Ողբագին ձայնով
Իմ մօտովս անցան,
Դիմեցին հեռու—
Դէպի մայր-Արաքս,
Դէպի մութ ջրեր...
Բայց այն ո՞վ գիտէ,
Գուցէ լեռուն էլ
Ժամանակ առ ժամ
Վըշտանալ գիտէ,

Հառաչել-ողբալ
Եւ մարդկանց նրման
Աչքերից առատ
Արցունքներ թափել,
Ողողել գետին.
Գուցէ այն միայն
Արցունքներն էին,
Որ սարի գլխից
Կարկաջում էին...

Լևոն Մանուկեանց.

18.

Գ ի ւ ղ ա կ ա ն հ ա յ ու ս ու ը չ .

(Նուէր հանգուցեալ Աղ. Արարատեանցին*).

1. Արե դեռ չ'եղած, ուղիղ վեց ժամին,
Ելած ժողովում է աղքատ անկողին.

Վայրկեան մի չորս կողմ յաճում աչքերը,
Արդեօք մնա՞յ անկիւնում կաւէ սափորը:

2. Բաղդաւոր վարպետ, սափորիդ այսօր
Յատակ ծածկում է մի բուռ ջուր պղտոր.
Առաւ բերանը, ձեռքերը շփեց,
Մի կատուալուսայ երեսն էլ արեց:

*) Հանգուցեալ Աղեքսանդր Տէր-Պետրոսեան Արարատեանցը վախճանուել է 1884 թ. դեկտեմբերի 23-ին, մօտ 31 տարեկան—այսպէս ասած—ծաղիկ հասակում: Նա երկար ժամանակ ուսուցչութիւն է արել թէ գիւղերում և թէ գաւառական քաղաքներում, թղթակցել է զանազան լրագրութեանց և ոտանաւորներ է գրել «Սոխակում»:

3. Ապա թէյի հոգ մտածել ուզեց,
Նայեց սափորին, աւելորդ սեպեց.
Մի կտոր չոր հաց, պանիր զերթ չորթան
Նորա նախաճաշ կազմեցին լրման:

4. Շտապաւ կօշիկ, վերարկուն հագաւ,
Շապօյի փոխան կարտուղն առաւ,
Նկուղի շէմքից ելաւ կորիւրան,
Ուղղեց քայլերը դէպ ուսումնարան:

Արագ ընթացքով, հաստատ քայլերով,
Ներշնչուած անհուն ազգային սիրով՝
Դպրոցի դռնից մտաւ խինդ ի դէմ.
«Բարի լոյս, մանկունք, եկէք ձեզ տեսնեմ»:

5. «Վարժապետ, վարպետ» աղաղակելով՝
Ուսուցչի չորս կողմ հաւաքուան սիրով,
Ինչպէս գառնուկներ անուշ մայիւնով
Հովուի շուրջը կազմում են ժողով:

6. Իսպառ մոռացաւ մեր վարժապետը
Թէ թէյի հոգսը, պանիրն էլ հետը,
Թէ մութ և խոնաւ նկուղ-բնակարան,
Թէ քսանհինգ ըուբլի կլոր ամսական:

Մի քանի ըուպէ մտքով վերացած,
Եօթներորդ երկինք կարծեց բարձրացած,

Հանգուցեալ Արարատեանցը, չ'նայելով իւր ուսուցչական ծանր զբաղմունքներին, հրատարակել է և հետեւեալ աշխատութիւնները. «Նրկութումը», «Խղճութեան արգասիք», «Քնարիկ մանկական», «Գիւղական խալիֆայ», «Փնջիկ» և, վախճանումից յետոյ, «Հիմնարկութիւն գաւառական ուսումնարանի»: Նրիտասարդ հանգուցեալը թողել է իւր ամուսինն ու երեք զաւակը աղքատ դրութեան մէջ... Ահա ձեզ ուսուցչի և այն էլ պարտաճանաչ և բարեխիղճ ուսուցչի վերջը... Հանգիստ ու կերացող, ո՞վ ազգի հարազատ զաւակ:

Գ. Ա. Ք. Գրիգորեանց.

Ապա լիշեցի ժամ առաջ անցքը,
Շարժեց գլուխը, հնչեցուց զանգը:

7. Ամբողջ հինգ ձիգ ժամ խելքին զօռ տալով
Եւ ագահաբար փռչի կուլ տալով,
Գիւղական մանկանց սրտում վայրենի
ձգնում է վառել սէրը հայրենի:

8. Ընկերի սիրով նա յափշտակուած,
Վեհ գաղափարով վառուած, տոգորուած,
Աշխարհքի վայելք մոռացած, և կեանք,
Տանում է սիրով ցաւեր և զրկանք:

9. Փռելից դպրոց, խոնաւ բնակարան,
Անկանոն կենցաղ, պարապմունք դաժան
Զգել են արգէն նորա սրտի մէջ
Թոքախտի սերմեր, մահացու, անխիղճ:

10. Հինգերորդ դասը թէւ վերջացած,
Բայց չի դադարում, կարծես չէ յոգնած.
Մինչև սաստկութեամբ սկսած հազը
Ստիպեց նորան թողնելու դասը...

11. Զուխտ ձեռքով ամուր բռնած նա կուրծքը,
Կուլ-տալով կարմիր մուգ ներկած թուփը,
Եւ թոյլ ոտները շարժելով կամաց
Հասաւ բնակարան—նոյն նկուղ նեղ, ցած...

12. Ահա վիճակը մեր հայ ուսուցչի,
Գիւղական անկիրթ մանկան վարժիչի,
Որին նախանձող մարդ հազիւ լինի,
Ոչ իսկ արևում կիզուող բոստան չի:

Ա. Աղ.

19.

Եշի անուան էշ է, յիմարն էշից գէշ է.

Այն անցեալ գիշերն, տասնումէկ ժամին,
Պարզ էր եղանակն, փչում էր քամին.
Յանկարծ սարսափելի ձայն անկաւ տունն,
Սիրտս դողաւ, գնաց աչքիցս քունն.
Ո՛չ փող էր, ո՛չ զուռնայ, ո՛չ թմբուկ, ո՛չ սաղ.
Արդեօք սա տեսի՞լք է, թէ անտուտ երազ:
Վախով խելով կամաց վեր կացայ տեղէս,
Կասես քար կայ կախած ամէն մէկ բեղէս.
Տեսայ դռան միջին մին սև աւանակ,
Ականջներն զլած, կանգնել է մենակ:
Երբ որ ինձ տեսաւ, կրկին բղաւաւ,
Նորա գէշ ձայնիցըն գլուխս ցաւաւ.
Զեռս ընկաւ մէկ մեծ երկաթէ շամփուր,
Այս անկանչ ղոնաղին որքան կարաս, տո՛ւր:
Իմ ձեռս նեղացաւ, ջանս թուլացաւ,
Նորա ձայնն քանի գնաց՝ զըլացաւ.
Ասամ որդին մեռնի սկիզբ գնողիդ,
Աստուած հօրն ողորմի անուն դնողիդ.
Լաւ են անուանել քեզ. էշ ես, որ էշ ես,
Անզգայ հայվան ես, զգուելի լէշ ես:
Յայնժամ անբան էշն, իբրև բանական,
Ահա տեսէք ինչպէս տուաւ պատասխան.
«Թէպէտ ինձ ասում ես՝ էշ ես, որ էշ ես,
Եթէ լաւ մտածես, ինձանից գէշ ես.
Ես չեմ փոփոխում իմ հայրենեաց վարքն,
Զեմ ընկնում մին ուրիշ հայվանաց շարքն,

Մեզի դուք բեռնում էք, խոտ էլ տալիս էք,
 Եթէ որ կորչում ենք՝ ման էլ գալիս էք.
 Մենք ձեր էշն ենք իլել, դուք տերտերների,
 Մենք ժամանակաւոր, դուք միշտ էք գերի.
 Նորանք գիշեր-ցերեկ ձեզ բեռնում են,
 Ի տեղի խոտ տալոյ՝ փող էլ առնում են.
 Ո՛չ ձեզի քորում են, ո՛չ ջուր են տալիս,
 Եթէ կորչում էք՝ ման էլ չեն գալիս.
 Ինչ որ աշխատում էք, նորանց փորումն է,
 Երբէք չի երևիլ, անտակ հորումն է.
 Տուններդ քանդուել ա, դուք չէք հասկանում,
 Մենք անբան էշ գոլով՝ ձեզ ծաղր ենք անում:
 Հինգ նաւակատկին անում է պաշտում,
 Ամենէն մէկ մանէթ չառած՝ չի հաշտում.
 Եթէ որ պատահաւ, մատուց պատարագ,
 Տասնից պակաս մի տալ, կ'անես սրտաճաք.
 Ծնվելիս՝ տո՛ւր, կ'նքվելիս՝ տո՛ւր, քաշվի ջուր,
 Փոքր տաս՝ կանիծի, տունդ կընկնի հուր.
 Տօն օր է՝ տո՛ւր, պաս է՝ տո՛ւր, մեռաւ՝ տո՛ւր,
 Երեխայ՝ տո՛ւր, չափահաս՝ տո՛ւր, պառաւ՝ տո՛ւր.
 Որտեղ տեսնես ոսկով զուգված մին տիկին՝
 Իմացիր որ կուլինի նա տերտերակին:
 Եթէ քարոզ ուզար՝ նա անպատրաստ է,
 Եթէ մէկ մարդ մեռաւ՝ գործին զգաստ է:
 Ոչ թէ քահանայքն ամենն են այդպէս,
 Շատ կան սուրբ քահանայք Աստուծոյ տնտես.
 Ամենայն մարդ պիտի խօսալ տեսածըն,
 Ածական է խօսողներից լսածըն:
 Ահա, տեսնո՛ր, ո՛վ մարդ, որ դու ես էշն,
 Քեզանից խելօք են եղն ու գոմէշն.
 Կայսր Սողոմօնից մնաց մին նզովք,
 Յորժամ որ նա արար անբանից ժողովք,

Մեր ազգն արդ արին, ասան շատ լաւ ենք,
 Ափսոս, անասնոց մէջն ողջից սակաւ ենք.
 Սողոմօնն նորանց տուաւ պատասխան,
 Ասաւ՝ ահա՛ ձեզի յայտնեմ խելօք բան.
 Ձեր ազգն ստեղծուած է երկու տեսակի—
 Մին տեսակն չունի պոչն քամակի.
 Դուք չորս ոտանցի էք, ականջներդ ձիդ,
 Նորանք երկու ոտով ման են գալիս դիդ.
 Նորանք մարդակերպ են, մարդկանց հետ խառն,
 Բայց նոցա վիճակն անչափ է դառն:
 Չուխէն թէ փալանն՝ երկուսն էլ շոր է,
 Մարդումն մարդկութիւն միշտ հարկաւոր է.
 Մենք մեր հայրենական լեզուան ենք զուում,
 Բայց դուք ձեր հայրենեաց լեզուն էք ծուում.
 Շատ կան ձեր միջումն մարդիք միրքաւոր,
 Իրանք հայ են, սիրեն խօսալ թուրքաւոր.
 Նա այնպէս է կարծում մարդ է, կամ հայ է,
 Այնպէս մարդն պակաս, ո՛չ թէ մեր թալ է.
 Եթէ մին պատասխան ունես, տո՛ւր, ո՛վ մարդ,
 Եթէ չունես՝ կասեմ. չօռ ու ցաւ ու դարդ:
 Էշն ո՛չ խօսող է, ո՛չ մարդ խրատող,
 Բայց իմացէք, մարդ չէ ամեն հաց ուտող:
 Ինչ մարդ ի մանկութեան չառաւ ուսումն,
 Ծեր վախտին կու տեսնէք քեանդիր ուսումն.
 Եթէ արջ պարացնողն արջից գիտուն է՝
 Ինչո՛ւ մարդավարի մին արհեստ չունէ.
 Ինչ աշակերտ որ միշտ կարգալից փախաւ՝
 Չափահաս դառնալուց շամբալուդ ծախաւ.
 Կարող եմ մարդ ասել ես իմ Մայիֆին,
 Անօգուտ իշխանաց թո՛ղ կայնի քէֆին:
 Զա՛րկեար, դու էլ եթէ ուսեալ լինէիր՝
 Հոգիդ չէիր ծախիլ, մարմին դնէիր.

Հիմիկ դու իլար այն մօլլին նմանող,
Ինքդ այն բանն անող, այլոց խրատող.
Քառասունից մօտ ես, մինչի ցայժմ, Չարկեար,
Կայքդ է մէկ չաքուճ, մէկ փոքս, մէկ փարկեար:

Արրահամ Մարտիրոսեան.

20.

Ս ա յ Լ ո Ր Դ.

Ահա սուրհանգակի սայլակը
Ուղիղ ճամբով է դուրս-թռչում,
Եւ Վալդայի տխուր զանգակը
Կամարի տակն է ղողանջում:

Արթուն սայլորդըս գիշերուայ դէմ
Իւր վիճակի վերայ տխրեց,
Եւ սիրեկնի աչաց կարօտը
Նա տխրագին ձայնով երգեց.

«Կապո՛ւտ աչեր, կապո՛ւտ աչեր,
Կըտրճիս կեանքը մաշեցիք,
Ինչո՛ւ, ինչո՛ւ, դուք, չա՛ր ոսոխներ,
Ինչո՛ւ սրտերըս բաժանեցիք»:

«Մընաս բարե, իմ տուն հօրական,
Մընաս բարե, իմ սիրական,
Ես կը հանգչիմ գինչ բոց կրակին
Այս անբնակ դաշտի միջին»:

«Արեւիս լոյսը խաւարել է,
Այս աշխարհումն էլ որբ եմ ես,
Մըրտիս կարօտը աղջկայ տեսնելից
Մինչև ի մահ զրկուած եմ ես»:

Այս որ ասաց՝ շարժեց մտրակը,
Երեք ձիանց մէջքին խրվեց,
Իւր սիրեկնի պարզ լիշատակը
Այսպէս երգով նա փարատեց:

21.

Առաւօտեան երգ շինականաց.

Այ մարդ, այսօր շատ քրնեցար, նընջեցիր,
Առաւօտեան հով ժամանակն անցուցիր.

Արեգակը ծովի ծայրէն ծագեցաւ,
Ջերմութիւնը ձորն ու դաշտը փրուեցաւ:

Ընկերներդ վաղ արտերը գընացին,
Ցորեն, դարին գերանդիով հընձեցին,
Խուրճ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նըրտան հանգչիլ կաղնիներու հովումը:

Այ մարդ, վեր կաց սառը ջրով լուացվիր,
Գօտիդ կապէ, գերանդիդ ան, դաշտ հասիր,
Քանի հով է՝ հունձըդ արա՛ արտումըդ,
Հունձըդ հընձէ, մի ծուլանար գործումըդ:

Հունձըդ կապէ, բարդըդ բարդէ, տո՛ւն արի.
Հանգստացիր, երբ քո հունձըդ կատարի.
Բեր գերանդիդ, կախէ պատին քո տանը,
Ես իրիկուան կը պատրաստեմ սեղանը:

Այ մարդ, հերիք, ինչ որ այսօր քրնեցար,
Աչքըդ մէկ բաց, տես թէ ո՞րչափ ուշացար.
Մեր դրացին վաղ անցկացաւ կամուրջէն,
Վաղ լըռել է մեր գըզիրը ձայնելէն:

Ի՞նչ ես պառկել, ի՞նչ ես քընել, սիրական,
Արեգական շողը հասաւ մեր դըրան.

Մի ծուլանար, ժամանակըդ խընայէ,
Այն պիտի մեզ բոլոր ձմեռը կերակրէ:

Ռ. Պատկանեան.

22.

Ուսանող.

(Թարգ. Գերմաներէնից).

Այն ի՞նչ ազգ է, այն ի՞նչ ցեղ է,
Որ միշտ անկախ է,
Որոյ տունը ամեն տեղ է,
Ի՛նչ անփող ուրախ է.
Ուսանողն է այն զուարթ մարդը,
Կենաց քէֆն է նորա ցանկացած բանը:

Այն ո՞վ է արե ծագելիս՝
Ինքն էլ զարթնում է,
Ու քաղցր ձայնով երգելիս՝
Փողոցները չափում է: Ուսանողն է, և այլն:

Ո՞վ երբէք սէրից չի վախում
Ու միշտ հարս ունի,
Եւ իր անճոխ, անպերճ կեանքում
Դարդ ու հոգս չունի: Ուսանողն է, և այլն:

Ո՞վ է միշտ առաջին կըռվում
Հայրենեաց համար,
Փայլուն զինին շիշով կոնծում
Ուրախ, բաց արդար: Ուսանողն է, և այլն:

Եղբարք, գուք որ այն ազգիցն էք,
Գինին պատուեցէք,
Ուսանողական պատիւը
Հաստատ պահեցէք:

Իրաւ. մենք ենք այն զուարթ ազգը,
Կենաց քէֆն է ամենուս ցանկացածը:

Ք. Տ.-Պ. Պատկանեան.

23.

Գարուն.

(Մանկական երգ).

Ահա եկաւ մեր գարուն
Ու զարգարեց դաշտերուն.
Գոյն գոյն ծաղկունք մեզ բերեց
Սիրուն գարուն, մեր գարուն:
Գոյն գոյն ծաղիկներ
Գընանք քաղելու,
Տէրին փառք տալու:

Զմռան չորցած դետինը,
Տեսէք, ինչով է ծածկած,
Կարմիր, դեղին շուշանը
Զորս բոլորքին է սփռած.
Գոյն գոյն շուշաններ
Գընանք քաղելու,
Տէրին փառք տալու:

Մի քայլ յառաջ՝ մենք, իսկոյն,
Տեսնում ենք վարդ գոյնզգոյն.
Վարդի միջին սոխակներ
Երգում են միշտ անհամբեր:

Գոյնզգոյն վարդեր
Գընանք քաղելու,
Տէրին փառք տալու:

Վարդի թփեր կարգ ի կարգ
Բնութիւնից բուսել են,
Իսկ նոցա տակ բարդ ի բարդ
Մանուշակներ բուրում են:

Փունջ փունջ մանուշակ
Գրնանք քաղելու,
Տէրին փառք տալու:

Այսպէս, ահա, ամեն տեղ
Խայտայ, ցնծայ բնութիւն,
Իսկ պանդխտին օտար տեղ՝
Զունի ո՛չ մի բերկրութիւն:

Մի տխրիր, պանդուխտ,
Պահիր քո սուրբ ուխտ՝
Տէրին փառք տալու:

Ա. Գրիգորեանց.

24.

Խ մ բ ե ա կ.

Արկածք Հայոց ժամանակին ընդ անիւ
Փշրին տակաւ մինչդեռ սիրոյ համբուրիւ.
Ուխտեմք ի սէր եղբօր՝ զկեանս դնել զրաւ,
Օ՛ն անդր ի մէնջ այր ընկերին լարել դաւ:

Սլացաւ ի մէնջ բաղդըն անհամբուր,
Արդ նոր բաղդիս քաղցր է համբուր,
Եղբայր զեղբայր գգուէ սիրով,
ձօխն աղքատին մատչի գլխով:

Էանց գիշեր՝ արդ առաւօտ,
Ի ցօղ ժպտին Մասեաց սրօտ.
Եւ վառ ի վառ շողշողելով,
Լոյսն արեգին ծրփայ ի ծով:

Հապա, մանկունք,
Վեհ քաջազունք,
Ի գլուխ պսակ
Ի յաղթանակ:
Առեալ նուագս,
Եւ արաքս արագս.
Օ՛ն փութասցո՛ւք,
Օ՛ն երգեսցո՛ւք:
Սէր և գութ
Մեր պսակ,
Առ մեր բաղդ
Հրաւիրակ:
Յնծասցեն,
Որք լսեն
Թէ՛ «Ուր Հայ,
Զիք՝ անդ վայ»:

Եղիազար Մէլիքեան.

25.

Ո Ղ Բ Զ Ո Լ Ղ Ա Յ Ե Գ Լ Ո Կ.

Ափսոս քեզ, Հայոց խեղճիկ ժողովուրդ,
Յիրուցան ելաք անմեղ, անխորհուրդ.
Գերի գնաման աք դէպ ի Խորասան,
Քաղցած ու ծարաւ, տրկլոր, թշուառական:

Խարիւր ու խաղար ցաւի դիմացաք,
Զեր քաղցրիկ երկրէն ոտք դուրս չ'դրաք,
Խիմի ձեր խօր մօր գերեզման թողաք,
Տներն ու ժամերն ուրիշի տուաք:

Էն սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղքերներն,
Քաղցրիկ ջրերն, ձեր շէն գեղերն
Ո՛ւմն աք թողման դուք, որ գընաման աք.
Էսպէս կը լինի՞, որ մոռանում աք:

Վախում ամ էնպէս մտքերնուցդ ընկնի,
Ինչքան որ ողջ աք՝ մտքերնուդ չ'ընկնի,
Բարի ձեր որդւոց, թոռանց պատմեցէ՛ք,
Էսպէս խալրենիքն քանդած թողեցիք:

Մասիսի անունն, Նոյայ տապանի,
Արարատ դաշտի, սուրբ Էջմիածնի,
Մեր Խոր Վիրապի, սուրբ Գեղարդ, Մուղնի,
Չմոռանան մինչ ի օրն դատաստանի:

Աչքըս կուրանար, շլինքս կոտրուէր,
Խեղճ Հայաստան, քեզ էսպէս չ'տեսներ.
Թէ մեռած էի, ինձ երանի էր,
Քան թէ կենդանի՝ աչքըս բաց տեսներ:

Ստեփան վարդապետ.

26.

Ն կ ա ը ի չ.

Ահնապիշ, անձայն խորհուրդ ճակատիդ,
Պատանի, ո՛ւր ես մըտքով մոլորած.
Ներկ ու վրձիններ ցիր ցան առաջիդ,
Վշեայ կըտաւը քու հանդէպ փրռած:

Շո՛ւռ տուր աչերըդ, նայէ դէս ու դէն,
Տես, քեզ ծաղրում է անմիտ ամբօխը.
Զարթիւր, սիրելի, այդ անուշ քրնէն,
Գոնէ մի անգամ հանէ քու ոխը:

Բայց դու ներում ես նոցա վեհ հոգով,
Խուլ ես աշխարհի ունայն շըշուկին...
Յանկարծ աչերըդ փայլեց սուրբ շնորքով,
Հըսկայի սիրտըդ թընդաց խիստ ուժգին:

Առիւ վրձինը, թաց արիւ ներկով,
Շունչ տըւիր անշունչ կոպիտ կըտաւին.
Երկնից խորհուրդը մեկնեցաւ քեզմով,
Քեզ անկարելին անյայտ է բնաւին:

Սէր, ատելութիւն, հանճար, բարութիւն
Տըւիր պատկերին մատիդ շարժուածքով,
Ինչ որ չի յայտնեց ճարտարի լեզուն,
Դու պարզ յայտնեցիր անձայն խօսուածքով:

Ապշեց ամբօխը, վազեց, յառաջեց
Քու կենդանագիր պատկերի դիմաց,
Ծնկաչոք զմուռս ու հալուէ խնկեց,
Գոչեց մեծաձայն. «դո՛ւ է իմ Աստուած»:

Բայց, ա՛խ, քու անքուն ժամերու ճիգը
Քանի մի արծաթ հազիւ գին դըրին.
Ստեղծողդ դարձար քու խեղճ խրրճիթը,
Ակեր շարեցին շուրջ քու պատկերին:

Ռ. Պատկանեան.

27.

Ե ը գ մ ե ո ա ն ո ղ ը ն կ ե ը ի .

«По синимъ волнамъ океана» երգի եղանակով.

Ազնիւ ընկեր, ինչո՞ւ այդպէս
Թողնում ես ինձ վշտալի
Ու չես կամում դու քո սրտի
Գաղտնիք յայտնել մի առ մի:

Ահա ես քո միակ ընկեր,
Վերջին համբոյր քեզ տալով՝
Դարձնում եմ քեզ իմ այս խօսքեր
Արտասուլից աչերով։—

«Իմ սրտակից ազնիւ հոգի,
Թըռիւր ահա դու շուտով
Դէպի Փրկիչ քո Յիսուսի,
Նորա բարիք տեսնելով։

Հանգիւր այնտեղ, այն սուրբ երկրում,
Դարէ ի դար ցնծալով,
Պատճառ, քո բաղձն այն աշխարհում
Պիտի ժպտայ խայտալով։

Պիտի քո բաղձ ոստոստելով
Ժպտայ այնտեղ, որտեղ որ
Շատ սոխակներ քաղցրիկ ձայնով
Կերգեն և՛ քեզ ամեն օր։

Իսկ ես ուխտում ու պատրաստ եմ
Չմոռանալ քո գործեր
Եւ քո անուն պահելու եմ
Շատ շատ օրեր, տարիներ։

Ա. Գրիգորեանց.

28.

Վ ա ն ե ց ի ո Ր Բ ի ե Ր Գ Ը .

Ա՛րև, ա՛րև, դո՛ւրս ելիւր,
Աչքըդ, ունքըդ ինձ ցոյց տուր.
Ցուրտից ջանքս դողում է,
Չըպլախ որբիս տաքացո՛ւր։

Հօր ու մօրքս սպանաւ
Քաֆիր թուրքը. ո՛ւր դընամ.
Փարա չունիմ փատ առնեմ՝
Օջաղ վառեմ, տաքանամ։

Ա՛րև, ա՛րև թէ՛ղ արա,
Բուք-բօրանը զալիս ա.
Էսօր ցրտից որ մեռնեմ՝,
Էլ արևըդ ընչի՛ս ա...

Սիմէօն Սափարեանց.

29.

Բ ա գ ու ի «Մ ար դ ա ս ի Ր ա կ ա ն Ը ն կ ե Ր ու Թ ե ա ն»
16-րդ տարեդարձի առիթով։

(15 մայիսի 1880 թ.).

Այսօր ուրախ, պարզ սրտով
Տարեդարձ Ընկերութեան—
Օր Հիմնարկութեան
Տօնում ենք երգով,
Գեղեցիկ հանդէս
Մենք կատարելով։
Փնօք, փնօք, փնօք, փնօք.
Կեցցէ՛ «Մարդասէր»
Մեր «Ընկերութիւն»,
Կեցցէ՛։

Մենք երբէք չենք մոռանալ
Ազգաշէն գործեր Սորա,
Այլ միշտ ցնծալով
Կ'սօսենք երգով,

Գեղեցիկ հանդէս
Մենք կատարելով:
Փառք, փառք, փառք, փառք.
Կեցցէ՛ «Մարգասէր»
Մեր «Րնկերութիւն»,
Կեցցէ՛:

Ա. Գրիգորեանց.

30.

Երգ Բաքոսի կամ Բարեկենդանի.

Այսօրին մեծ կարասին
Բոլորտիքն են բազմեր.
Աւագ իշխանք, մեծ պարոնայք
Ժողովք են հոն կազմեր.
Այո՛, այո՛, ժողովք են հոն կազմեր:

Սաստիկ է վէճն, մեծ է խնդիրն,
Զոր հոն տեղ կը խորհին,
Թէ ինչ կերպով դարման մ'ընեն
Հիւանդ մեր աշխարհին.
Այո՛, այո՛, հիւանդ մեր աշխարհին:

Մէկն աս կ'ըսէ, մէկն ան կ'ըսէ,
Կը ծագի լոյսն առտուն.
Ինչ լսեցէք, տեա՛րք, կը կանչէ
Աւանին պետն արթուն,
Այո՛, այո՛, աւանին պետն արթուն:

Թող թագն առնու, կ'ըսէ Բաքոս,
Ու փառօք ապրի շատ.
Իսկ ցնծութիւնն ըլլայ զըշխոյ
Եւ գահն ալ յԱրտաշատ.
Այո՛, այո՛ և գահն ալ յԱրտաշատ:

Այսպէս մեզի նոր ցնծութեան
Արևներ կը ծագին.
Առողջ կ'ըլլայ մեր ժամանակն
Եւ նոր մեր աշխարհին,
Այո՛, այո՛, և նոր մեր աշխարհին:

Եփրեմ վ. Չազրծեան.

31.

Ք ա հ ա ն ա յ .

Այն ո՞վ է կանգնած ամբիոնի վերայ,
Դողդողուն ձեռքերն երկինք ամբարձած,
Գթառատ աչերն լի արտասուներով,
Բազմութեան ուշքը դէպի նա դարձած,
Որին ամենը հալը են անուանում,
Ծանօթ, անծանօթ հաւասար յարգում,
Որի լոկ խօսքը օրէնք է նոցա,
Սրտի գաղտնիքը նորան են յայտնում:
— Քահանայ է նա, քաւող մեղքերու,
Միջնորդ Աստուծոյ մարդկան ազգի հետ,
Հովիւ է անխոնջ Քրիստոսի հօտին,
Երկնաձիր գանձին նա է արթուն դէտ:
Երբ մենք թաթախուած Ադամայ մեղօք
Եկանք այս աշխարհ լըցեալ ցաւերով,
Ո՞վ սրբեց, մաքրեց մեր հին վերքերը,
Ո՞վ մեզ սփոփեց իւր սուրբ խօսքերով.
Կամ՝ երբ ժանտախտած, ընկած մահճումը՝
Մըտատանջ, անյայտ մահ էինք խնդրում,
Պանդխտի նըման ամենից թողած,
Ո՞վ մեզ առաջին հասաւ օգնութիւն:
Կամ՝ երբ մոլորուած զառներու նըման
Կոյր վաղում էինք դէպի խորխորատ՝

Ո՞վ արդեօք այն օր փրկեց մեզ մահից,
 Դիւական զրբէն Հանեց անարատ:
 Կամ՝ երբ մեղսալիւ աչքերըս բընաւ
 Չենք համարձակում երկինք ամբառնալ,
 Ո՞րին կանչում ենք միջնորդ հաշտութեան,
 Ումո՞վ յոյս ունինք թողութիւն ստանալ:
 Եւ կամ՝ ըզբաղած ունայն գործերով,
 Մոռցել ենք Աստուած, կըրօն, սուրբ հաւատ,
 Ո՞վ է մեր տեղը մեր մեղաց համար
 Արտասուենք թափում աչքէն յորդառատ:
 —Քահանան է այն և միշտ քահանան,
 Մեր միջնորդ, հովիւ քաջ և աղօթիչ,
 Որբոց հայր, եղբայր աղքատ մուրացկին,
 Արտասուաց սրբող, յանցանաց քաւիչ:
 Ե՛կ, պատուենք, եղբայրք, այդ սուրբ քահանան,
 Սիրենք միշտ նորան մանկական սիրով,
 Որ ամբողջ գիշեր իւր որդւոց վերայ
 Պատրաստ է հըսկել անքուն աչերով.
 Նա բոլոր կեանքը զոհեց մեզ համար,
 Չուզեց փառք, պատիւ, զբօսանք աշխարհի.
 Քանց սուրբ քահանան էլ ո՞վ կարող է
 Արդեօք մեզ համար լինել հայր բարի:

Ռ. Պատկանեան.

32.

Տ ա ռ օ ն ց ի Հ ա յ ի ա ռ տ ա ս ու չ ք ւ .

Արդեօք ե՞րբ լինի, ո՞վ Տէր Արարիչ,
 Որ մենք ազատուենք մոլեռանդ թուրքից.
 Դարերէ ի վեր կրեցինք վշտեր,
 Դարձան ամայի հայոց շէն գիւղեր:

Ազգեր, ձեզ մատաղ, հասէք հայերին,
 Արէք մի դարման մեր արնոտ վերքին:
 Մի կողմից հարկը, միւսից՝ սով ու ջարդ.
 Ո՞ւմը գանգատինք, որո՞ւ բանանք դատ...
 Հայերը մեռան. Օսմանցու սուրը
 Խզեց խեղճ հայի ազգութեան կապը:
 Ազգեր, ձեզ մատաղ, հասէք հայերին,
 Արէք մի դարման մեր արնոտ վերքին:
 Թողինք մեր աշխարհ, եղանք ցիր ու ցան,
 Թէ կայք և թէ գոյք տուինք օտարին.
 Հաւերիս տապան, սրբերի շիրիմ
 Յանձնեցինք մոլի մեր ոխերիմին:
 Ազգեր, ձեզ մատաղ, հասէք հայերին,
 Արէք մի դարման մեր արնոտ վերքին:
 Տաճիկը խլեց մեզմէ գութանը,
 Չարքեազ ու քիւրդը՝ մեր սիրելիքը.
 Ի՛նչ հասած արտեր, ծաղկաւետ դաշտեր,
 Եղան ոտնակոխ վանք ու տաճարներ:
 Ազգեր, ձեզ մատաղ, հասէ՛ք հայերին,
 Արէք մի դարման մեր արնոտ վերքին:
 Հարկը բաղմացաւ, պահանջը շատցաւ,
 Ասպատակութիւնք գիւղ, քաղաք քանդեց.
 Ի՛նչ տուն, ի՛նչ շէնքեր, ողջը աւերաւ,
 Մի՞թէ լուսինը սուրբ Խաչին յաղթեց:
 Ազգեր, ձեզ մատաղ, հասէ՛ք հայերին,
 Արէ՛ք մի դարման մեր արնոտ վերքին:
 Մեր հարուստ իշխանք եղան հացմուրաց,
 Անթիւ երէցներ կարօտ տաճարաց.
 Բողբոջ մանուկներ անմայր մնացին,
 Խանդաղատ ծնողք՝ առանց զաւակաց:

Ազգեր, ձեզ մատաղ, հասէք հայերին,
 Արէք մի դարման մեր արնոտ վէրքին:
 Մեռնելն է դժուար, ապրիլ չենք կարող,
 Ղուբանի որդիք մեզ ողջ կը թաղեն.
 Հայը չունի տէր*, գէթ մի պաշտպանող,
 Ո՞վ տայ խրախոյս մեկնել ձեռք սրին:
 Ազգեր, ձեզ մատաղ, հասէք հայերին,
 Արէք մի դարման մեր արնոտ վէրքին:
 Ազգեր, գերի ենք, տուէք փրկութիւն,
 Մեր քրտանց արգիւնք թո՛ղ մենք վայելենք.
 Մի՞թէ չէք ուզում մեր սուրբ օրհնութիւն,
 Զեր կենաց համար աղօթող լինենք:
 Ազգեր, ձեզ մատաղ, հասէք հայերին,
 Արէք մի դարման մեր արնոտ վէրքին:

Կարապետ Յովհաննէսեանց.

33.

Երգ ուրախութեան.

Աստուած բարի տայ Մահմեդին,
 Լաւ բան է մտածել,
 Որ սաստել է ժողովրդին
 Գինի չ՛գործածել.
 Թէ չէ՛ քրիստոնեայք ծարաւու կ'կոտորվէին:

*) Ռուսահայը—խնօք Աստուծոյ—ունի տէր, ունի և պաշտպանող. դա Ռուսիայի Կայսր երիտասարդ Նիկոլայ Ալեքսանդրովիչն է, Որի յաղթական դրօշակի տակ գործում է հայութիւնը՝ ինչ որ գեղեցիկն է, օգտակարն է և վայելուչն է, յիշելով Նորա Նախնիքներից արտայայտած խնայողութիւնը և պաշտելի խօսքերը, թէ. «Да развивается повсюду и съ новою силою стремление къ просвѣщенію». Ահա Ռուսահայի դէմիկը—ահա նորա նշանաբանը:

Գ. Ա. Բ. Գրիգորեանց.

Օրն մի շիշ խմել խրատում
 Բժիշկն Հիպոկրատ.
 Ո՞վ այս դեղագրին հնազանդում,
 Կին է, ո՛չ տղամարդ.
 Բայց իմ բարի խորհուրդն էն է՝ մի գաւ դարդակել:
 Վարդապետ Լիւտերն ասէ
 Մի իմաստութիւն.
 Ո՞վ գինու համը չէ տեսել,
 Ուղարկել գժատուն.
 Պատճառ, բնութեան բարիքն արհամարհում է:
 Հայաստանին են պարտական
 Ամեն գինի խմող,
 Այն տեղ Նոյ, նախահայր մարդկան,
 Քամել է խաղող,
 Երբ Արարատ սարից իջաւ, ջրհեղեղից յետոյ:
 Գոհութիւն մատուցանեմք քեզ,
 Բաքոս ծերունի,
 Եւ 'ի պատիւ քո դարդակեմք
 Մի մի շիշ գինի,
 Որ մեզ առատ հունձ պարգևես օրհնեալ խաղողի:

Մ. Փ.

34.

Ի՞նչ է մեզ պակաս.

(Նուէր օր. Գայիանէ Յովհաննիսեանին).

Առաւօտ կանուխ հայի երեխայք
 Դըպրոց են վազում զըլարթ ու արագ,
 Հըլու, ուշագիր սովորում են համար,
 Պատրաստում աննիւթ գանձ ազգի համար:

Բըթամիտ տըղայ Հայ շատ տեսած կաս,—

Ի՞նչ է մեզ պակաս:

Հէնց որ ժամկոչը զանգակը հընչեց,

Դեռ լուս ու մուրթ է. մեր հայը բացեց

Դուքան ու դազգեհա՛հ: Զեռքումը արագ

Շարժում է ասեղ, սըղոց և ուրագ:

Հայ արուեստաւոր ծոյլ շատ տեսած կաս,—

Ի՞նչ է մեզ պակաս:

Տես, տես, գլորվում է բըլուր ահագին,

Դա է բեռնակիր պանդուխտ Մըշեցին.

Արուն-բրտինքով, հայրական գըթով

Տուն-տեղ պահում է հայի ամօթով:

Անպիտան մըշակ դու շատ տեսած կաս,—

Ի՞նչ է մեզ պակաս:

Ժամի խորշումը կայ գետնատարած

Մի խըղճուկ այրի, մատաղ, սեազգեաց,

Աչքը արտասուք, սիրտն յուսով լըցուած,

Իր սուրբ հաւատին պինդ ապաւինած:

Կրօնազուրկ Հայ կին դու շատ տեսած կաս,—

Ի՞նչ է մեզ պակաս:

Բերդըն անառիկ կայ սարի վըրան,

Անթիւ թընդանօթք են նորա պաշտպան,

Հայ քաջ զօրականք նորան մօտեցան,

Անառիկ պարիսպ գետին գլորեցան.

Լօրիս* այլազգեաց մէջ շատ տեսած կաս,—

Ի՞նչ է մեզ պակաս:

*) Լօրիսը, այդ Պետական հանճարեղ և իմաստուն Կոմս Միքայէլ Տարիշևեան Լոռու-Մէլիքեանցը, ցաւելով պէտք է ասել, այլ ևս չ'կայ... Նա իւր վերայ դրած բարձր և վսեմ յանձնարարութիւնները վեհանձն կերպով կատարելով և արժանանալով Կայսերական առանձնաշնորհութիւններին և Նորա առատ և հարուստ չքանչաններին, 1888 թ. դեկտ. 13-ին կընքում է իւր մահկանացուն Ֆրանսիայի Նիցցա քաղա-

Ամայի դաշտ է: Դարերէ 'ի վեր

Նորա մէջ կային վայրագ դազաններ,

Հէնց որ հայերի ոտքն այնտեղ հասաւ,

Ամայի վայրը Աստծու դրախտ դարձաւ:

Շնորհազուրկ հայեր դու շատ տեսած կաս,—

Ի՞նչ է մեզ պակաս:

Դարերէ 'ի վեր հայն է հալածուած.

Ի՞նչու: Էնդուր, որ շատ է աչքաբաց.

Լումայ լումայով գումար ժողովեց,

Անթիւ դըպրոցներ ամեն տեղ հիմնեց:

Հայի պէս խելօք շատ ազգ տեսած կաս,—

Ի՞նչ է մեզ պակաս:

Ձէ, հայը չունի իւր մէջ զիժ թերի,

Ամեն գործի մէջ հըմուտ է, արի.

Հայեր, չի լինիլ անտեղի գովեստ,

Թէ ձեզ անուանեմ խելօք, ժիր, համեստ.

Միայն կըմընայ ձեզ իրար սիրել—

Ու աշխարհ ատել:

Գամառ - Քամիպա.

35.

«Какъ у нашихъ у воротъ» երգի եղանակով.

Ս.Հ.ճ մեր տան առաջին

Ջըրով լիքը մի լիճ կայ,

Տրա լի լա, տրա լի լա,

Ջըրով լիքը մի լիճ կայ:

քում՝ 63 ամաց հասակի մէջ... Գնա, գնա, ո՛վ Պետական քաջ զինուոր և հայութեան պարծանք առաքինի մարդ, գնա այժմ էլ վայելիր երկնքի յաւիտենական փառքը, երկնքի յաւիտենական պատիւը և անվախճան ուրախութիւնը: Բայց աղօթի՛ր Աստուծուն, որ Նա փոխարինէ քեզ մի այլ Լօրիսով՝ դարձեալ Կայսերական Դահլիճ օգտակար լինելու, դարձեալ Նորա շահերը քաջ-քաջ պաշտպանելու:

Գ. Ա. Ք. Գրիգորեանց.

Փեսայացուն ձին բերեց,
Մեր դըրան մօտ ջուր տուեց:

Տրա լի լա, տրա լի լա,

Մեր դըրան մօտ ջուր տուեց:

Փայտից կապեց իւր ձիուն,

Խընդրեց աղջրկան սիրուն:

Տրա լի լա, տրա լի լա,

Խընդրեց աղջրկան սիրուն:

«Սիրոն աղջիկ, իմ հոգի,

Խընդրեմ նըժոյգ ձիս պահի:

Տրա լի լա, տրա լի լա,

Խընդրեմ նըժոյգ ձիս պահի:

Խընդրեմ նըժոյգ ձիս պահի,

Նըժոյգս հազարներ արժի:

Տրա լի լա, տրա լի լա,

Նըժոյգս հազարներ արժի:

Որ չը պոկի իւր սանձը,

Որ չը կոտրի իւր թամբը:

Տրա լի լա, տրա լի լա,

Որ չը կոտրի իւր թամբը»:

Թարգ. Կ. Տէր-Դաւթեանց.

36.

Արի Աստուած հարցն մերոց,

Որ ապաւենդ ես նեղելոց.

Հաս օգնութիւն ծառայից քոց,

Լեր օգնական ազգիս Հայոց:

Տէր, ողորմեա՛. Տէ՛ր, ողորմեա՛. Տէ՛ր, ողորմեա՛:

Միջնորդութեամբ սրբոյ խաչիդ,

Եւ անարատ սուրբ ծնողիդ,

Յիշեա՛ զհեղումն արեան Փրկչիդ,

Ե՛լ ի խնդիր փոքու հօտիդ:

Տէ՛ր, ողորմեա՛, և այլն:

Զի գիտացաք մեք հաւաստեալ,

Որ չափ մեղաց մերոց լցաւ.

Ուստի Տէրդ մեր բարկացաւ,

Առ ի խրատել զմեզ զարթեալ:

Արդ անկանիմք առաջի քոյ,

Գոչեմք մեղայ Տեառնդ մերոյ.

Դարձո՛ ի մէնջ զցասումն քոյ,

Վասն անսպառ գթութեան քոյ:

(Յաւելուած).

Ի քէն հայցեմք մեզ օգնութիւն,

Ամենասուրբ Երրորդութիւն.

Տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն,

Քրիստոնէից ազատութիւն:

37.

Ա՛յ ս եւ ա մ պ ե ռ...

Ա՛յ ս եւ ա մ պ ե ռ, վնյ ս եւ ա մ պ ե ռ,

Սիրտըս պատեց ս ե ու մ ու թ...

Եարաբ ի՞նչ էք դուք ինձ բերում—

Դարնան անձրե՛, թէ՛ կարկուտ...

Յուսով-լուսով արտ եմ ցանել,

Արիւն թափել ու քրտինք,

Ողջ սուրբերին մօմ եմ վառել,

Աղօթք արել... որ երկինք

Արտիս նայի, տունս խնայի,

Կեանք տայ, օր տայ իմ հացին.

Վնյ բալէքիս... Աստուած չանի,

Թէ որ անհաց մընացին...

Այ սե ամպեր, ի՞նչ էք գոռում.
Սիրտըս պատեց սե ու մութ...
Ետքաբ ի՞նչ էք արտիս բերում—
Գարնան անձրև, թէ՛ կարկուտ...

Ալեքսանդր Ծատուրեան.

38.

Կ ա լ ա ն ա լ ո Ր Ը.
(Լերմոնտովից).

Այս, բայց արէք իմ մութ բանտի
Փակ դռները—տուէք լոյս.
Տուէք ինձ մի սեւաբաշ ձի,
Եւ սեւաչեայ մատաղ կոյս:
Մատաղ կուսին ջերմ գրկելով,
Առաջ մի լաւ կը պաչեմ,
Ապա դէպ դաշտ՝ ձի նստելով,
Ես քսմով պէս կը թռչեմ:

Բայց, ան, բարձր է իմ պատուհան,
Բանտիս դռան պինդ փականք.
Եւ հեռու է կոյս սեւաչեան,
Քաշուած իւր ճոխ ապարանք.
Եւ բարի ձին կանաչ դաշտում
Մենակ, անսանձ արածում,
Եւ ուրախ է, և՛ թռչկոտում,
Եւ պոչն օդում խաղացնում:

Մենակ եմ ես—տխուր, դարդոտ,
Իմ չորս բոլոր—մերկ պատեր.
Լոկ կանթեղն է շուրջս աղօտ
Սփռում մարող, թոյլ շողեր.

Եւ լսում եմ, լսում միայն
Գիշերային լուռ ժամում
Լուռ պահնորդի քայլերի ձայն
Բանտիս դռան յետևում:

Ալեքսանդր Ծատուրեան.

39.

Հ ա Ղ ա Ր Ծ Ն Ի վ ա ն ք ի չ ա դ ի Ր Ը. (*)

Ահա մի չադիր մեծ և փառաւոր,
Քսան-ուրթ երկար ու ծուռ սիւնաւոր,
Տնկած Հաղարծնի մեծ վանքի դրան,
Որ կոչի ըստ գրոց իբրու թէ «վրան»:

Գոյնզգոյն քրդի քեչեքով պատած,
Վերուստ մինչ ի վայր խառն կարկատած,
Լուսամուտք նորա անթիւ, անհամար,
Որ միշտ տեսանես պարզ երկնից կամար:

*) Հաղարծինը մեր հուշակաւոր վանքերից մինն է, ուր երկար տարիներ վանահայրութեան պաշտօն է կատարել մեր ալեղարդ և անվաստակ աշխատաւոր, այժմ 'ի Տէր հանգուցեալ, Պօղոս վարդապետ Տէր-Մարգարեանցը և 700 դեսեատին տարածութեամբ անտառներ պաշտպանել յօգուտ այդ իսկ վանքի: Տարիների ընթացքում այդ անուշադրութեան մասնուած անշուք և կիտաւեր դարձած մենաստանը, Վահագիաւ Հայրիկի հոգածութեան շնորհիւ և հանգ. Պօղոս վ. աշխատութեամբ, այժմ իւր վայելուչ տեղն է բռնում և բաւականութիւն պատճառում ուխտաւոր—հիւրերին: Պատկերը լրացած կ'լինի, եթէ ասեմ, որ պատմական Հաղարծնի ճանապարհը, որ տանում է դէպի վանքը, թէպէտ տեղ-տեղ անհարթութիւններ է ներկայացնում, սակայն նա այնքան հրաշալի, այնքան գեղարուեստական է, որ դու, իսկոյն, մոռանում ես պատահող անյարմարութիւնները և, յախտակուած բնութեան ճոխ ստեղծագործութիւններով, հէնց ուզում ես շարունակել

Թէ երկինք թափեց մի թեթեւ հեղեղ՝
Այնտեղ կ'տեսնես սաստիկ ջրհեղեղ.
Թէ որոտալով արձակեց կարկուտ՝
Գլուխ պահելու չունիս ել ու մուտ:

Թէ մի ճալթ հանեց հանդերձ կայծակով՝
Լոյս կ'թափանցէ հազար մի ծակով.
Թէ յանկարծ ցրտեց, փրթեց առատ ձիւն՝
Սար կ'ձևանայ ամեն մի անկիւն:

Թէ որ ցերեկով կիտուեցին ամպեր՝
Նստի՛ր, կե՛ր, խմի՛ր, քնի՛ր ու համբեր.
Թէ պարզեց օդը, արեց տաք արև՝
Փախի՛ր, մի մնար, տո՛ւր մնաս բարև:

Գնալ և գնալ: Այո, կրկնում եմ, զմայլում ես այդ գեղադէշ տեսարաններով, որովհետեւ գէպի վանքը տանող ամբողջ ճանապարհը դու գնում ես խիտ, հովասուն և կոյս անտառի միջով. անտառի, որ յիշեցնում է և ապացուցանում, թէ Աստուած կայ և բնութեամբ: Մի քանի քայլ ես, և ահա տերևազարդ ծառերի բացուածքներից թափանցում եմ քո սրտի և քո հոգու մէջ վանքի դմբէթների հնադարեան խաչերի չորերը, և դու, բանաստեղծի հետ, իսկոյն մրմնջում ես.

«Փայլեսցի խաչ Քրիստոսի
Ի լոյս ճակատ հայ-ազգի:
Եկայք, եղբայրք, միաբան
Լիցո՛ւք զՏեառնէ գոհաբան»:

Բացի ս. Աստուածածնի եկեղեցուց, ուր ժամերգութիւն և պատարագ է լինում, կան և՛ ս. Ստեփաննոսի և՛ մի այլ, որի անունը չեմ յիշում, մատուռները, նոյնպէս և զանգակատուն կոչուած նախկին հին և ընդարձակ եկեղեցին, որի առաստաղի չորս անկիւնները հայկական գրամների նկարներով են զարդարուած: Պատելով սրբալիպերը և հոգեկան կուշտ մխիթարութիւն զգալով, ուխտաւոր-այցելուն խորը, շատ խորը տպաւորութեան տակ վերադառնում է իւր բնակավայրը, օրհնելով Հայոց Վահագնաւ Հայրիկին, որ այնքան սրտտես աչքերով հսկում և պահպանում է նախնեաց խնկելի նշխարները:

Գ. Ա. Բ. Գրիգորեանց.

Թէ յանկարծ մենակ ոտքդ դուրս դրիր՝
Ինչ որ պատահի, պատիժդ է, կրի՛ր.
Կատաղի շներ, որ մսից պաս են,
Օտարականի արեան կ'սպասեն:

Թէ ներս-դուրս անես մութը գիշերներ,
Որ կողմից ուզես, կ'բացուին դռներ.
Թէ լուսին, աստեղք փայլին երկնքում՝
Կարդա՛ ու գրէ՛ նորա քունջերում:

Թէ տասն աշտանակ շարես չորս կողմը,
Հերիք է նրանց մի բարակ հողմը.
Թէ, Աստուած չանէ, լինի փոթորիկ՝
Ձեռ տեսնի վրան, այլ օդապարիկ:

Ահա մի հրաշք, մի նոր տեսարան,
Ուր ո՛չ մի կողմից չիք պատսպարան.
Չ'գիտեմ սորան էլ ի՞նչ անուն տամ,
Բացի կոչելուց փորձութեանց դարան:

Ի սէր Քրիստոսի, հայր-Պօղոս, արի՛,
Ընդունիր որդւոյդ խորհուրդը բարի.
Քանզէ ու ցրուէ այս քրդի աւար,
Քո ձեռքով կանգնէ մի նոր տաղաւար:

Թէ ոչ՝ աղաչեմ, տո՛ւր ինձ արձակում,
Թո՛ղ Աստուած տայ քեզ բարի վայելում.
Հիւրասէր Հօրդ այսքան ինչ վաւեր
Քո Սիմէօնից բա՛ւ է ի նուէր:

Սիմէօն Փիլիպպոսեանց.

40.

Հ օ Ր Խ ո ս տ ու մ ր .

(Բօլգարական մարշի եղանակով).

I.

Արևը ծագեց, ճրգիք, վեր կացեք,
Մանգաղը առնենք, արտը շտապենք,
Ցորենները հնձենք,
Սալերը բարձած՝ կալը հասցնենք:
Կալում կրկասենք, թեղը կըքամենք,
Մաքուր ցորենը հորը կըլցնենք,
Ձմեռ երբ որ կըգայ,
Անուշ գաթալ ձեզ համար կըթխենք:

II.

Տղայք վազեցին, արտը հնձեցին,
Սալերը բարձած՝ խուրձը կրեցին,
Ցորենը կասեցին
Ու տոպրակներով տանը շարեցին:
Եկաւ ջրօրհնենք, մայրը վեր կացաւ,
Թոնիրը վառեց ու խմոր հուսեցեց,
Տղաների համար
Մեղր ու կարագով գաթաներ թխեց:

Կ. Կ. Մելիք-Շահնաղարեանց:

41.

Մ ա ն կ ա կ ա ն Թ ո Թ ո վ ա ն ք .

Աշխարհիս վերայ մէկը կար միայն,
Որ ինձ սիրում էր հոգևով անարատ.
Նա իմ մայրիկն էր, իմ անուշ Ագին,
Հոգուս ու մարմնուս ծնող հարազատ:

Միտքս թռչում է միշտ դէպի երկինք,
Երբ որ լիշում եմ մայրիկիս անուն.
Այդ նորանից է, որ չեն երկրային
Ոչ նորա ըստինք, ոչ նորա լեզուն:

Նա ինձ կաթ տուաւ, տուաւ և լեզու,
Մինը քան զմիւսն աւելի անուշ.
Մէկով իմ փափուկ մարմինն էր սնվում,
Միւսով զարգանում իմ հոգին քնքուշ:

Ի՜նչ կայ այնքան քաղցր ու սննդարար,
Որքան անարատ կաթն է մայրական,
Ո՛վ կարէ խօսիլ այնպէս սրտաբուլիս,
Ինչպէս որ մայրն է թոթովում մանկան:

Կարծես հիմա էլ տեսնում եմ մօրըս.
Ես իբրեւ մանուկ գրկումն եմ ահա.
Նուրբ շրթունքներին զարկում է մատով,
Որ իւր հետ ձայնեմ «աղո՛ւ» կամ «ատա՛ն»:

Ես թոթովում եմ, հրճվում է մայրըս,
Իմ մէջ տեսնում է շնորհքի նշան.
Ձար աչքից ազատ պահելու համար՝
Վերաս կարում է պէսպէս թալիսման:

Ղ. Աղայեանց.

42.

Ե Ր Գ.

Ա՛խ թէ երկինք գէթ մի վայրկեան
 Լսէր կրճքիս հառաչանք,
 Փայլէր ինձ սուրբ ազատութեան
 Վառ, կենսատու արեգակ.

Ա՛խ թէ և ես կարենայի,
 Որպէս արծիւ, անարգել
 Գէթ մի րոպէ ազատ կեանքի
 Ազատ օգուտ սաւառնել.—

Որպիսի՛ ջերմ, լի փափագով
 Կարօտ պայծառ երկնքի
 Կը թռչէի ես խնդալով
 Դէպ Հայրենիքս անձկալի:

Դէպ այն երկիր նուիրական,
 Ուր սահեցան անխրոով
 Չքնաղ օրերն իմ մանկութեան
 Լի զբախտային սուրբ սիրով:

Դէպ այն երկիր երջանկալից,
 Ուր մայրիկըս նազելի
 Իւր ջերմ զրկում պարգևեց ինձ
 Ե՛ւ կեանք, և՛ սէր, և՛ հոգի:

Ուր առաջին ես զգացի
 Ե՛ւ սիրոյ վիշտ, և՛ հրճուանք,
 Ուր ես անյագ ճաշակեցի
 Կեանքի վայելք ու զգուանք...

Ա՛խ Հայրենիք, երկիր չքնաղ,
 Ե՞րբ պէտքէ իմ խեղճ հոգին

Հանգչէ անդորը, հանգչէ խաղաղ
 Քո կենսաբոյր վարդ կրճքին:

Ալեքսանդր Մատուրեան.

43.

Ա Ր Վ Պ.

(Ժողովրդական մոտիւններ).

Արա՛ղ, տակը մի փօրէ,
 Առանց դըրան նա խոր է.
 Արա՛ղ, փընտրածըս ինձ տուր,
 Կամ թէ աստ, նա ո՛ւր է:

Ջիւան բալէս կըտրիճ էր,—
 Տանը նըստել կ'ամաչէր.—
 Եկաւ որ անցնի զընայ—
 Ճամփէն կըտրելն ամօթ չէր:

Արա՛ղ, արդեօք դու գիտե՞ս,
 Որ անհոգի մի գետ ես.
 Աչքերըդ փակ, կատաղի,
 Մուրազով մարդ կը խեղդես:

Մութ ջըրերիդ ծալերում
 Բալիս հայեացքն եմ տեսնում.
 Որդեկորոյս մի մայր եմ,
 Արա՛ղ, քեզ եմ անիծում:

Արա՛ղ, քո ջուրը վարար,
 Մի տար ցաւերըս իրար,
 Արա՛ղ, եթէ դու կարաս՝
 Վերջին շունչըս բալիս տար...

Ա.Թ. Խնկոյեանց.

44.

Ա. ր ա ր ա տ ե ց ւ ո ց ա յ գ ե թ ա ղ.

«Երկինք զուարթ ակնարկէ» երգի եղանակով.

Ահա, տղէք, իմ այգին,
Որ յանձնում եմ ձեր խղճին.
Ծալուորք, շուտ շուտ ծալ կ'անէք,
Թաղուորք, ժիր ժիր կը բանէք.
Ապա թէ ոչ՝ եկող տարի
Տէր չենք լինիլ խաղողի:

Դէ՛ թումբ բռնէք, ա՛յ Սահակ,
Մելիք, Մելքոն, իմ Միսակ,
Մատը բռնէք շատ քնքոյշ,
Որ չ'ջարդէք անղզոյշ.
Ապա թէ ոչ՝ եկող տարի
Տէր չենք լինիլ խաղողի:

Դո՛ւք էլ, թաղուորք, քնացի տուէք,
Հող ու բէլաթ վըրէն գրէք.
Միայն գիծ գիծ մողու պէս
Ինչ կ'տեսնէք, չը կոտորէք.
Ապա թէ ոչ՝ եկող տարի
Տէր չենք լինիլ խաղողի:

Դէ՛, տղէք ջան, ջալդ արէք,
Բահով, ձեռքով պինդ ծածկէք
Թումբ ու շրջան ու տախտակ,
Մատ ու կուղբակ, ամեն ծակ.
Ապա թէ ոչ՝ եկող տարի
Տէր չենք լինիլ խաղողի:

Աստուած պահի ձեր արև,
Թէ որ ցից է մին մին թուփ,
Խոտ ու խճմար ու տերև
Վըրէն գրէք իբրև խուփ.
Ապա թէ ոչ՝ եկող տարի
Տէր չենք լինիլ խաղողի:

Վերջապէս,

Ասում եմ ձեզ,

Երբ կապում է թաղւորը
Ծալի ծէրը բէլաթով,
Ծալի ծէրը ծալւորը
Պէտք է հո՛ւ պ տայ իւր բթով,
Որ բէլաթի տակ ծալերը
ձկուեն, ճկուեն մի շարքով:

Ապա ինքն ծալւորը,
Աչքը տնկած թաղւորին,
Պիտի հսկէ անդադար
Համ բէլաթին, համ ծալին,
Եւ թէ ո՞նց է նա ժիր թաղում
Իւր պինդ խեղդած մեռելին:

Երբ թաղւորը դիփ իստակ
Ծալը մինչև քօքի տակ
Թաղեց, պրծաւ քրտնամուխ,
Ապա ծալւորը թաղւորին
Պիտի ձայն տայ սրտաբուլիս.—
«Ջան, ապրի՛ս, մեռնեմ թևերի՛դ»,
Ապա ձեռք տայ միւս ծալին:

Օրհնեալ լինիք,

Սիրելիք,

Ձեր տուած խէրն ու վաստակ
Պիտի լինին այս մենակ,

Որ մատ, դաշնակ ու կուգրակ
Չ'ընկնեն ցրտի, բքի տակ.
Ապա թէ ոչ՝ եկող տարի
Տէր չենք լինիլ խաղողի:

Ահա այս է այգեթաղ,
Որ հեշտ բան չէ, և ոչ խաղ:

Եթէ այսպէս կը թաղէք
Շողակաթիս շէն այգին,
Կ'տամ ձեզ քառսուն կոպէկ,
Օրհնելով ձեզ սրտագին.
Իսկ թէ այսպէս դուք չ'թաղէք,
Հէջ չ'երևաք իմ աչքին:

Սահակ վ. Սմատունի.

45.



Ա. ր. դ. ե. օ. ք.

«Երբ ալեկոծ ծովի վերայ» երգի եղանակով.

Արդեօք, եթէ սիրուն ծաղկունք
Ինձ վիրաւոր գիտնային,
Կը սփռէի՞ն անոյշ բուրմունք,
Իբր սփոփանք իմ սրտին:

Արդեօք, եթէ մեր սոխակներ
Ինձ թոյլ, հիւանդ կ'արծէին,
Կը յօրինէի՞ն սիրուն երգեր՝
Սփոփելու իմ հոգին:

Արդեօք, եթէ ջինջ աղբիւրներ
Իմ դարդերը լսէին,
Կը յօրինէի՞ն լացեր, կոծեր՝
Չայնակցելու իմ ողբին:

Արդեօք, եթէ Հայոց աղջիկ
Ինձ վշտահար գուշակէր,
Կը նուիրէ՞ր լուկ-մնջիկ
Ինձ իւր անկեղծ սիրտն ու սէր:

Ախ... երբ խեղճիս կանաչ դաշտեր
Մեռած լինին տեսնելիս,
Կը հիւսե՞ն արդեօք ծաղկանց փնջեր՝
Զօնել անշուք դադաղիս:

«Լուկ - Մնջիկ».

46.


Հ ա յ հ ե ղ ի ն ա կ ի ա ղ օ թ ք ք .

Աստուած, չեմ խնդրում քեզնից դափնիներ,
ձառեր, յօբէկան, ուղերձ, հեռագիր,
Փառաւոր թաղում, մահից լետոյ սէր—
Այդ ողջն ինձ կըտայ հայրենի երկիր...

Մի բան է խնդիրքս, ո՛վ Տէր երկնաւոր,
(Այդ բանն ինձ ազգըս երբէք չի տալու).
Տո՛ւր ինձ կըտոր հաց, կամ այնպէս շընորհ,
Որ կարողանամ օգո՛վ ապրել ու...

Ալեքս. Ծատուրեան.

47.



«Ա. յ ի մ Ա. ր ա ղ ».

(Պար-երդ).

Արազն էկաւ լափին տալով,
Ժէռ քարերին, ափին տալով,

Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը,
Զոր գլուխըս տափին տալով:

Ա՛յ իմ Արազ, ջուրըդ վարար,
Սիրուն եարիս եարաբ տեսար.
Ես չը հասայ իմ մուրազին,
Արազ, եարաբ կարօտս առար:

Ամպերն ընկան Մասիս սարին,
Կարօտ մնացի ես իմ եարին.
Աստօժ սիրես, էրուած սրտիս
Ջուղաբ բերես էկող տարին:

Քշերն անքուն գիր կը գրեմ,
Արտասունքս գետ կը շինեմ.
Արազ, ծէգը ջրիդ չ'առած,
Իմ սև դարդը քեզ կը բերեմ:

Կասես շողքը քարին ընկաւ.
Կրակն իմ սրտիս մէջ ընկաւ.
Կամար ունքից, թուխ աչքիցը
Ցաւն իմ ջիւան ջանին ընկաւ:

48.

Հ ն ձ ւ ո ը ն ե ը.

(Մանկական խաղ).

Ահա եկաւ խոտ հարողը,
Ուսին դրած գերանդին.
Բոլոր խոտը սա հարել է,
Բան չի թողել մեր հանդին:
—Ա՛յ խոտ հարող, աստ տեսնենք,
Դու ի՞նչպէս ես խոտ հարում.

—Այսպէս ահա, լաւ նայեցէք,
Ես այսպէս եմ խոտ հարում.

Հէպ, հօպ,
Հէպ, հօպ:

—Ա՛խ, ի՞նչ լաւ է, եկէք սովրենք,
Մենք էլ այդպէս խոտ հարենք—

Հէպ, հօպ,
Հէպ, հօպ:

* * *

Ահա եկաւ մեր հնձողը,
Զեռքին փայտէ մատնոցներ,
Պատրաստել է սուր մանգաղը,
Պէտք է հնձէ մեր արտեր:
—Հնձող եղբայր, աստ տեսնենք,
Դու ի՞նչպէս ես հունձ անում.
—Այսպէս ահա, լաւ նայեցէք,
Ես այսպէս եմ հունձ անում.

Հէպ, հօպ, հէպ,
Հէպ, հօպ, հէպ:

Ա՛խ, ի՞նչ լաւ է, եկէք սովրենք,
Մենք էլ այդպէս հունձ անենք.

Հէպ, հօպ, հէպ,
Հէպ, հօպ, հէպ:

Ղ. Աղայեանց.

49.

Ջրօրհնեաց երգ(*).

(Ղարաբաղի ժողովրդական լեզուով).

Ալէլուեա, ալէլուեա,
 Էս ա եկանք էս կըտօրս, ալէլուեա,
 Սառալ ա տըրէխներս, ալ.
 Էս կըտօրս չուրըք սըռէ, չուրըք ոննէ, ալ.
 Ծօծը գըլխէն ծալած զուժաշ, ալ.
 Ծօխը քինեց հէնց բիւրիւշիւմ, ալ.
 Թուրունն ա կեարմուր եխծէ, ալ.
 Պողերն ա վառված աստղեր, ալ.
 Կուտանան ա թառ երդօնէկ, ալ.
 Հացերն ա կեօրծած խաչեր, ալ.
 Ծըհանն ա ոսկէ շիշակ, ալ.
 Տէփն ա աւիտարան, ալ.
 Ծըկոտէչն ա քաշկու մաններ, ալ.
 Հացթօխն ա փօնջ մնէշակ, ալ.
 Քրիստուոճ քինեց Դրախտինը, ալ.
 Դազանը խուրըցըրուց, ալ.
 Կըթնախբիւրը փլխըցըրուց, ալ.
 Աջի կըռան աւիտարան, ալ.

*) Սոյն երգը երգելիս—ինչպէս ասում է սոյնանման երգերի ժողովող հ. Խ. Վ. Դ.—այսպէս են անում. «Երեք հոգի վեր են բարձրանում կըտուրը, հերթին կանգնում. երկու հոգի պըկօ են ածում, իսկ մինը ճրագը ճուարանով կախ է անում և երգում: Երգից յետոյ բաժին ստանում—ձու, ևդ, բըրնձ, ալիւր, աղ, չիր և փող»: Ի դէպ, մենք չուսում ձեռնամուխ կ'ընենք մի հրատարակութեան, որ բաղկացած կ'ընի միայն տեղական և ժողովրդական երգերից և լեզենդաներից:

Ձախի կըռան սաղմոսարան, ալ.
 Լալան եկը լըղըցըրուց, ալ.
 Ալէլուիան ուրիւնցըրուց, ալ.
 Զեր տօնը շէն, ձեր տօնը շէն, ալ,
 Զեր խուխոցը անուժը հի՛նչ ա.
 Հըվազին նման շըտանան.
 Գետէն նման ըրկընանան,
 Ծառէն նման ճէղնը տան.
 Քաշ կռակլաւ ձեր գիւշմանէն աչքը տիւս օնէ.
 Կիւլը ոննան փռնէ քաշ անէ.
 Ա՛ տնատար, փայլը բերէք ալէլուան տանէ:

50.

Պ ա ը - ե ը դ .

(Ա ը և ա մ ա ն ու կ ի ց).

Փոխ առ փոխ.

—Աղջըկէք, պա՛ր բռնեցէք,
 Արմիկի երես գովեցէք.
 Ա՛յ երես, շարմաղ երես,
 Դու մեզ չըթողնես սևերես:
 Բարձր սարէն պաղ ջուր կուգայ,
 Արմիկի երես կը լուայ.
 Ա՛յ երես, արև երես,
 Քո շափաղով մեր սիրտ կերես:
 —Աղջըկէք պա՛ր բռնեցէք,
 Արմիկի աչեր գովեցէ՛ք.
 Ա՛յ աչեր, սիրո՛ւն աչեր,
 Արևի պէս փայլուն աչեր:

«Արմիկի աչերն արեգակ,
Մեզի կուտայ լոյս ու կրակ.
—Ա՛յ աչեր, նախշուն աչեր,
Մեզի համար հսկուն աչեր»:

—Աղջըկէ՛ք, պա՛ր բռնեցէք,
Արմիկի կռներ գովեցէք.
Ա՛յ կռներ, ուժեղ կռներ,
Դուք կը շարժէք մեծ մեծ լեռներ:

Արմիկի կռներն է գերան,
Կը պատառի վազրի բերան.
—Ա՛յ կռներ, գթո՛տ կռներ,
Դուք կը բանաք մեր փակ դռներ:

—Աղջըկէ՛ք, պա՛ր բռնեցէք,
Արմիկի հասակ գովեցէ՛ք.
—Ա՛յ հասակ, բա՛րձր հասակ,
Քեզ վայելէ կաղնի պսակ:

Արմիկի հասակն է սօսի,
Շուքը մեղանից չը պակասի.
—Ա՛յ հասակ, չինա՛ր հասակ,
Ո՛վ չի տար քեզ թագ ու պսակ:

(Միասին եւ բռնկոտելով)

Ո՛վ պատուեց վազրի բերան,
Արմիկ պատուեց վազրի բերան, հայ...
Վազրի բերան—ահա՛ այսքան—
Ժանիքները մէկ-մէկ գերան, հայ...
Ապրի՛ Արմիկ, ապրի՛ շատ օր,
Իր թշնամին ընկնի գլոր, հայ...

Ղ. Աղայեանց.

51.

Յ ա ու ն ջ.

(Նմանութիւն).

Արձակ, համարձակ միմեանց տանք ձեռքեր
Եւ յառաջ դիմենք բոլորս միասին.
Եւ թո՛ղ գիտութեան գըրօշակի տակ
Մեր գաշնակցութիւն զօրանայ կըրկին:

Մենք չենք կանգնելու մեզ համար կուռքեր
Ո՛չ երկրի վերայ և ո՛չ երկրնքում.
Եւ աշխարհային բոլոր փառքերին
Բընա՛ւ տալու չենք երկըրպագութիւն:

Մենք կը քարոզենք սիրոյ ուսումը
Մեծատուն մարդկանց, չըքաւորներին.
Եւ դորա համար հալածանք կը կրենք,
Ներելով ցնորած թըշնամիներին:

Երանի՛ նորան, որ միշտ մրցման մէջ
Տարժան հոգսերում է կեանքը մաշել,
Ե՛ւ ծո՛ղլ, խորամանկ ծառայի նըման
Իրան տաղանդը գետին չէ թաղել:

Թո՛ղ մեզ ուղեցոյց աստղի փոխարէն
Սուրբ ճշմարտութիւն լուսափայլ վառուի.
Եւ հաւատացէ՛ք, որ ազնիւ ձայնը
Այս աշխարհի մէջ ի գուր չի անցնի:

Ո՛ւնկն դէք, եղբարք, ձեր եղբօր ձայնին.
Քանի որ թարմ ոյժ է մեր մէջ եռում—
Մենք յառաջ դիմենք, ինչ էլ որ բաղդը
Պատրաստած լինէր մեզ ապագայում:

Գր. Խալաթեանց.

52.

Ա. ռ. Ա. տ. ռ. ի. կ. Մ. ե. զ. պ. ո. լ. ե. ա. ն.

Աղջիկ տեսի, աղջիկ սիրուն,
Անունն էր Ա. տ. ռ. ի. կ.

Աչեր ունէր սև սաթի պէս՝
Փայլուն գեղեցիկ:

Անմեղուժեան տիպար էր նա,
Լուսնի պէս պայծառ,

Կամ մանիշակ տերևոց տակ՝
Փայլուն վառ ի վառ:

Գեղեցկուժեան տեսակներն
Անթիւ, անհամար:

Գաղտնիք է սա վեհ բնութեան՝
Անհուն ու ճարտար:

Թէ որն արդեօք տեսակներէն
Ունի մեծ համբաւ:

Այս մասին ալ ճաշակներն
Անթիւ են, անբաւ:

Իմ կարծիքով ճիշդ գեղեցիկ
Նա է, որ ունի

Հոգւոյն ցոլքը գէմքին վրայ՝
Նշան անհունի:

Փոքրիկներու յատուկ է այս՝
Շնորհք գեղանի:

Թէ կան մեծեր մանկան գեղով՝
Իրե՛նց երանի:

Այս վճիռը տուաւ Յիսուս
Վեհ ու ազգեցիկ:

Չ'եկաւ մէկն Յիսուսի պէս՝
Անհուն գեղեցիկ:

Մ. Ե. Մ.

53.

Ի շնորհաբեր գալուստ

Աստուածընտիր Հայրապետի և Ծայրագոյն Պատրիարքի

Տ. Տ. ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ամենայն Հայոց. (*)

Յ Ր Պ.

Բարեաւ, որ գաս աջով Բարձրեալ,
Բարեաւ եկ Քո և օրհնեալ. } 2.
Դու խոստացեալ աստղ ըստ յուսոյ
Ընծայեցար յԱստուծոյ:

Քան զարուսեակ լուսապայծառ } 2.
Ի Գահ սրբոց ծագեցար.
Պայծառացի Տուն Աստուծոյ
Ի շնորհաբաշխ ճաճանչ Քո:

Օրհնեալք ի Քեզ որդիք Քոյին
Նոր օրհնութիւն օրհնեսցին.
Կեցցե՛ն Քե միշտ. կեցցե՛ս, կեցցե՛ս,
Հայրիկ, ի մեզ Դու կեցցե՛ս:

Մկրտիչ Պալեան.

*) Վեհափառ Հայրապետը, Տփլիսից, սեպտեմբերի 7-ին, ուղևորվելով, ժամանում է ս. Էջմիածին 1894 թ. նոյն ամսի 13-ին: Վաղը դարպասից սկսվում է եկեղեցական թափօրը մեծ հանդեսով: Նորին Վեհափառութիւնը, մոնելով տաճարը, հանում է վեղարը, չոքում է Իջման տեղի առաջ և, մօտ երկու րոպէ այդպէս ծնկաչոք մնալով՝ արտասովում է...

Գ. Ա. Ք. Գրիգորեանց.

54.

Օրօրոցի երգ՝ իմ մի հատիկ որդու վերայ.

Բիւլբիւլն զարթնել է վարդին ծոցումն,
Դէ, ննջի՛ր, սիրելիս, ասում եմ լն՛ լն՛.
Դու զառնիշան նախշած օրօրոցումն,
Դէ, ննջի՛ր, մարալս, ասում եմ լն՛ լն՛:

Եօրդանչեդ ալիսարայ, բաւթով զարդարած,
Դօշակդ զանաւուզ բանդուում կարած,
Բարձդ գեղին աթլադ, զուլից լքցրած,
Դէ, ննջի՛ր, սիրելիս, ասում եմ լն՛ լն՛:

Իստակ գիւլաբաթուն կապանքիդ քողն,
Տասն ու չորս տարեկան է նորա գործողն,
Մանր ալմաստներով ականջիդ օղն,
Դէ, ննջի՛ր, սիրելիս, ասում եմ լն՛ լն՛:

Հարիւր մատաղ մորթամ, մինչի քեզ ճարեցիմ,
Թասակիդ զանազան ոսկիք կարեցիմ,
Ինչքան ինձի նեղացրար՝ անէծք չարեցիմ,
Դէ, ննջի՛ր, մարալս, ասում եմ լն՛ լն՛:

Տէրն քեզ պարգևի հարիւր տարի կեանք
Անուանդ զարդարեն ալլքն գովասանք,
Խելօք որդի իլնես ծնողացդ պարծանք,
Դէ, ննջի՛ր, հոգեակս, ասում եմ լն՛ լն՛:

Մայիֆի Սերովբէն քեզի կնքաւոր,
Պսակդ տեսնալին էլած ուխտաւոր,
Աստուած քեզ նորա հետ պահի բախտաւոր,
Դէ, ննջի՛ր, մարալս, ասում եմ լն՛ լն՛:

Ձեռիդ խաղալիքն է կենացս թելն,
Մին օր առանց քեզի տանի ինձ սելն,
Ջարկեարի միայնակ Ռափայէլն,
Դէ, ննջի՛ր, սիրելիս, ասում եմ լն՛ լն՛:

Արրահամ Մարտիրոսեան.

55.

Երգ ու գնացք զօրացն Հայոց ընդ Վահանայ
Մամիկոնեանի Շաւարշան դաշտին վրէժք.
Օ՛ն անդր յառաջ.

Բնմ. փորոտան բարձուտ բոմբիւնք յԱյրարատեան դաշտն
ի վայր,

Արի արանց արիւնք յեռանդն առատանան ի հրազայր.

Հրաւէր Հայրենեաց հրուսակի՝նդ հանուր,
Հոգիք Հայկազանց բորբոքին ի հուր.
Որք երկնաւորի պսակին էք կարօտ
Ու որ երկրաւորիս փառաց երկնահորդ:
Հապ՛ ճն արի արանց մանկունք,
Հայրենավրէժքդ Հայկազունք,
Հապ՛ ճն ի զէն գունդագունդ
Յեռեալ ի պար թունդ ի թունդ՝
Ի զէն ի վրէժ, ճն անդր յառաջ,
Ի զէն ի վրէժ, մի ձախ մի յաջ,
Օ՛ն անդր յառաջ մի ձախ մի յաջ,
Օ՛ն անդր յառաջ, յառաջ յառաջ,
Հապ՛ ճն յառաջ:

Հայկեան փանդուանց որոտընդոտ դռնչին բարբառք մար-
տազու,

Դառնակոռոջ անդրաձայնէ պարսիկ կերկեր ի շեփոր.

Շարժեն հրեշտակք թւըս լուսադողդողս,
 ձիւաղք ճուճաղաց կայտունն ի դրժոխս.
 Շուինդըն շանթառաք զեթերօք փարի,
 Սարսափեն սանգարք ի խօլ խաւարի:
 Հապ' զն արի արանց մանկունք,
 Հայրենավրէժքըդ Հայկազունք,
 Հապ' զն ի զէն գունդագունդ
 Յեռեալ ի պար թունդ ի թունդ՝
 Ի զէն ի վրէժ, զն անդր յառաջ,
 Ի զէն ի վրէժ, մի ձախ մի յաջ,
 Օն անդր յառաջ, մի ձախ մի յաջ,
 Օն անդր յառաջ, յառաջ յառաջ,
 Հապ' զն յառաջ:

Հ. Ղ. Ալիշան.

56.

✓ Ը ն կ ե ր.

Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն
 Փայլեցնում է արևի պէս պատկերը մարդուն.
 Ինչ մարդ ունենայ իւր մօտը հաւատարիմ ընկեր՝
 Յերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն:

Կեանքդ նուիրես ընկերի լաւին՝ քիչ է դարձեալ,
 Այնպէսն է հոգեկան լուսատու լապտերը մարդուն.
 Ընկեր եմ ասում, Աստուածավախ, ճշմարիտ ընկեր,
 Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն:

Թշնամիները իւր վերայ զաւած ժամանակը՝
 Կտրիճ, հարազատ ընկերն է սուսերը մարդուն.
 Ով որ ունենայ մտերիմ ընկեր, Զիւան-աշըդ,
 Զի սպիտակիր ամենեւին մէկ հերը մարդուն:

57.

Բաժակներ առնունք, եղբարք,
 Լիք լիք բաժակներ գինով,
 Կարմիր ու ճերմակ գինի
 Մեզ լինի անուշ համով:

Բերներու տանէնք անվախ,
 Զէ դա խառնած կամ խարդախ,
 Նեկտար է և ոչ գինի,
 Խըմենք, մեզ անուշ լինի:

Արաքսայ ջրով ցողած,
 Հայոց արևով հասած,
 Հայոց աղջիկ է քաղել,
 Քընքոյշ ձեռներով քամել:

Այս բերքն է Հայոց երկրին,
 Հայաստան տընկած Նոյէն,
 Անմահ երկնային գինին
 Նա խմեց, երբ իջաւ Սարէն:

Այս անոյշ գինին խմողը
 Սրտէն թող հանէ ոխը.
 Ամենքս էլ ասենք «ամէն»,
 Որ շատ տայ մեզի ամ էն:

Թ. Պատկանեան.

58.

Երգ ուսանողաց.

Բաւական է մեզ մտաց զբաղմունքն,
 Մենք ևս ունինք մեր համոզմունքն,

ձաշուցն առաջ մեխած սովորել,
Իսկ այնուհետեւ բաժակին նուիրել.

Խմենք, եղբարք, գինի:

Կեցցես դու, չաստուած գինարբեցուլթեան,
Կեցցէ և քո գիւտ այժմ և յաւիտեան.
Յողնած մարմինս դու զօրացնում ես,
Երբ պարապմունքից դադարում եմ ես.

Խմենք, եղբարք, գինի:

Արդէն նստած գինէ տաճարում,
Ուխտաւորները խմիչք են զոհ բերում.
Կարմիր արիւնը նուիրական թասին,
Հաճելի է շատ մեր ծեր Բաքոսին:

Խմենք, եղբարք, գինի:

Հարկաւոր է շուտ ուխտատուն շտապել,
Տասերկու ժամ ճիշտ կաթիլ չեմ ըմպել,
Ծոմապահուլթեանս վարձը թող լինի
Մի շիշ Երասխայ վարդագոյն գինի:

Խմենք, եղբարք, գինի:

Ահա թասերով զանգահարում են,
Գինի պաշտելու մեզ հրաւիրում են.
Ո՛վ պատարագին փոքր ինչ ուշանայ,
Մի լիք շիշ գինի պատիժ կ'ստանայ:

Խմենք, եղբարք, գինի:

Ուրեմն միմիայն ես եմ մնացել,
Որ աղօթատուն դեռ չեմ գնացել.
Երթամ համբուրեմ շուտով տակառին,
Սուրբ և անարատ Բաքեայ պատկերին:

Մ. Փ.

59.

Բաբէ, քանի՞ հրաշափառ
Հիւսեն երկինք հանգէս պայծառ,
Մինչ արեգին ճաճանչավառ,
'Ի լոյս շողշող 'ի տես կայտառ:

Եւք բորբոքէ զանսիւն կամար,
Եւ 'ի համբոյր յար բարերար,
ձեպէ ահա՛ բնութիւն 'ի լար,
Ամանորոյ 'ի մուտս բարօր:

Զօնեւ պարգևս յէից կաճառ,
Ո՛ հրաշալեաց շնորհին անճառ,
Փառք Բարձրելոյն, փառք անդադար
Վեր ուղղեսցին օրհնաբարբառ:

Դու վեհափառ հայր պատուական,
Դու յոյս Հայոց, դու սէր Հայկեան,
Դու տէր և պետ անդուգական,
Փայլին արդեամբք մեզ 'ի պարծանս:

Քոյդ սխրալի գործք աննման
Յոլորտս հնչեն յոյժ բարձրաձայն,
Ուստի արժան հրրճուանք 'ի խանդ,
Կըրկին են Հայք յորդիսդ համայն:

Յաւուր սերկեան ամանորեան
Հայցել լեթերց զամբարուլթեան
Արգասաբեր յօգուտս Հայկեան,
Եւ շնորհի պսակ բարօրութեան:

Զի կեցցէ՛ միշտ երջանկափառ կենօք
Պայծառ յամս յար կեցցէ՛ Գէորդ
Կաթողիկոս իբրեւ զարփին ճաճանչավառ,

Կեցցեն անյաղթ Հայկազն որեար
Անփորձ և զերծ յոսոխաց չար:

Կեցցէ, կեցցէ Հայուլթիւն,
Յար կենդանասցի Հայոց աշխարհ,
Կեցցէ, կեցցէ մեծապայծառ
Եկեղեցի սուրբ պերճափառ,
Այս ուխտս Հայոց 'ի սիրտս 'ի վառ:

Վահրամ վ. Մանկունի.

60.

Ա. շ. զ. ի. ե. ը. դ. ը.

Բարձր, ձիւնոտ սար կայ դաշտում,
Դաշտի միջին—սիրուն աղջիկ.

Երբ լուսնեակը ծագաւ սարում՝
Քաջը հեծաւ ձին գեղեցիկ:

Ա. փսոս աչեր՝ ինչպէս երկինք,

Ա. փսոս հասակ՝ ինչպէս եղնիկ:

Քրջեց եկաւ դաշտին հասաւ,

Հայ աղջրկան թամբին առաւ,—

Աստղոտ գիշեր՝ ինչպէս աչեր,

Անուշ հովեր՝ կուսի մազեր:

Ա. փսոս աչեր՝ ինչպէս երկինք,

Ա. փսոս հասակ՝ ինչպէս եղնիկ:

Բարձր, ձիւնոտ սար կայ դաշտում,

Դաշտի միջին—սիրուն աղջիկ,

Առաւօտը մայրն է զարթնում,—

Ձկայ իրան սիրուն Աստղիկ...

Ա. փսոս աչեր՝ ինչպէս երկինք,

Ա. փսոս հասակ՝ ինչպէս եղնիկ:

Յովհաննէս Կոստանեանց.

61.

✓ «Խանում էւա ջան».

Բերդեցը դուրս էլայ, Ալադեազ տեսայ,
Խանում էւա ջան,

Աբարան աչքերիս դուման ա դառել.

Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով, ¹⁾

Լալով, ողբալով, քեօջ ու բարխանով, ²⁾

Խանում էւա ջան: ³⁾

Ոջխարն էսդին կարծայ, էնդին գառները,
Կանչըցեր ա ծաղիկները, ծառները:

Արի էրթանք քու ման գալած արտերը,
Քեզի տեսայ, թաժացաւ իմ դարտերը:

Ձեռ ու ոտս կապին՝ բերդը դրեցին,
Չուխայ, շալուար լալով տունը բերեցին:

Ես Աղէկն եմ Չամուլեցի մէկ ջիւան,
Տուլթազ էղայ ըստուց չարի երևան:

62.

✓ Բ. օ. յ. ը. դ. բ. ա. ը. ձ. ը.

Բօյդ բարձր, սալբի չինար,
Աչքդ նաշխուն, ունքդ կամար,
Դուն ստեղծուել ես ինձ համար,
Անգիւն ծաղիկ իմ նոր բուսած:

(1, 2, 3) Իւրաքանչիւր երկու տողից յետոյ կրկնել այս տողերը:

Գոյնդ նման է մարմարի,
Հագեիդ շորերն է յարմարի,
Դուռն ես վարդը այս աշխարհի,
Անգիւն ծաղիկ իմ նոր բուսած:

Քեզ տեսնելը ինձ մեծ մահ է,
Հոգիս հանեմ տամ քեզ պահէ,
Ինձնից եղած ինձի շահ է,
Անգիւն ծաղիկ իմ նոր բուսած:

Ես քեզ տեսայ ծաղկանց միջին,
Աղաչեցի ես իմ Փրկչին,
Որ չըկարէ յոյսն իմ վերջին,
Անգիւն ծաղիկ իմ նոր բուսած:

Գիշեր, ցերեկ նստայ լալով,
Աղի արտասուենք թափելով.
Ինձի թողել ես տանջուելով,
Անգիւն ծաղիկ իմ նոր բուսած:

63.

Գ ե զ ջ կ ու հ ու ե Ր զ Ը .

Բարձր սարին հաւ չի հասնում,
Միայն անուշ հովէ փչում.
Իսկ այն բարձրում աստղերու հետ
Լուսաւորչայ վառ է կանթեղ: (*)

Մատաղ հոգուդ, սրտոտ աղբէր,
Այն կանթեղը՝ քեզ թուր ու թև:

*) Ժողովրդական աւանդութիւն կայ, որ Արագածի վերայ միշտ
վառ կախուած է ս. Գրիգոր Լուսաւորչի կանթեղը:

Սարի կրճքում լիքն է ակներ,
Այդ ակները—աղբիւրներն են.
Ակն ու աղբիւր՝ իմ քաղցր աղբեր
Փափագ սրտիս շողն ու ցօղն են:
Էրնէկ, աղբէր, քեզ սիրողին,—
Ե՛րբ կը հասնիս քո մուրազին:

Հարաւ կողմից ամպ է գալիս,
Ամպ է գալիս, տերեւ դողում,
Խըփուելով է զանգակ—ծաղիկ,
Աքաղաղն էլ շատ է կանչում.

Անձրեւ կուգայ—ոսկի կուգայ,—
Իմ աղբէրս սէր է, չկայ:

Լուսոյ աստղը հէնց դուրս եկաւ—
Սրտոտ քաջը ալ ձին հեծաւ.
Զարկեց քաշեց,—փախաւ տաք ձին,
Կռուի գնաց կէս գիշերին:

Էրնէկ, աղբէր, քեզ սիրողին,—
Ե՛րբ կը հասնիս քո մուրազին:

Խապար չկայ հեռու տեղից,—
Քաջի սրտում դադար չկայ,
Վաղուց է որ կտրայ քնից,—
Մեր թշնամուց հանգիստ չկայ:
Վաղուց է որ կտրայ քնից,
Խապար չկայ հեռու տեղից...

Յովհաննէս Կոստանեանց

64.

Գ ե ղ ա մ ա յ ծ ո վ ա կ (*).

Գեղամայ ծովակ, Գեղամայ ծովակ,
Ա՛խ, որչափ քաղցր է՝ քո սուրբ յիշատակ.
Քանի անգամ որ՝ ես ավել անցայ,
Անյագ աչքերով՝ վրադ նայեցայ:

Հայոց աշխարհի՝ բարձրութեան վերայ՝
Հայելի ես դու՝ յստակ բերեղեայ,
Երկնքի կամար՝ սիրուն կապուտակ
Փայլում է քո մէջ՝ կոհակ առ կոհակ:

Արեգակ, լուսին՝ երկնից բարձունքէն,
Եւ աստեղք ամեն՝ կապոյտ կամարէն
Խաղում են ծածան՝ ալիքներիդ հետ՝
Գեղ տալի դէմքիդ՝ գեղ առնում դէմքէդ:

*) Յարգելի հեղինակը, իւր ոտանաւորների հետ ուղարկած մի նամակի մէջ, գրում է մեզ, ի միջի այլոց, և հետևաբար. Դուք խմբագիր էք այն երգերու հաւաքածոյին, որ կրկնուի «Ս ո խ ա կ Հ ա յ ա ս տ ա ն ի»: Արժան կրհամարիմ զրկել Ձեզ քանի մի երգ՝ Ձեր Երգարանին մէջ զետեղելու համար: Թերևս Դուք ուրախ երգեր կըսիրէք, բայց Ձեզ զրկուած երգերն տխուր են. քանզի պանդուխտն, որ հեռի է իւր սիրած տեղերէն և դէմքերէն, կարող չէ՝ երբէք ուրախ լինել, երբ չ'տեսներ նա այն հողն ու ջուրը, այն սարն ու ձորը, այն հովիտն ու բլուրը, այն ծառն ու անտառը: Երբ չ'տեսներ իւր արենակիցները, իւր մանկութեան խաղակիցները, իւր ուսման ընկերակիցները, իւր զուարթութեան և տխրութեան մասնակիցները, իւր խորհրդոց ու զգացմանց հաղորդակիցները: Ա՛խ, մանաւանդ, երբ չ'տեսներ այն աղբերակն ու վտակն, այն գետակն ու ծովակն, այն վանքն ու դղեակն, այն խաչքարերն ու մատուռներն, այն չիլիմներն ու դամբարաններն, որոնք հարիւրաւոր յիշատակներ կը դարձուցա-

Ո՛վ դու գեղանի՝ ծովակ Գեղամայ,
Առաջին անգամ՝ որ ես քեզ տեսայ,
Մի առաւօտ էր՝ անամպ, անմշուշ,
Փչում էր հովիկ՝ մեղմիկ ու անուշ:

Երբ երևեցաւ՝ դէմքդ շողշողուն,
Ջինջ արեգակով՝ օծուած փալփլուն,
Սիրտս թրթռաց՝ հոգիս յուզեցաւ,
Արտասուաց ցօղով՝ աչքս լցուեցաւ:

Չորս ընկեր էինք՝ մի կառքում նստած,
Մեր փափազն էր ուխտ՝ սիրուն Հայրենեաց.
Հեկեկում էի ես՝ լուռ էին ընկերք,
Կառքն սահում էր՝ դէպ ՚ի ծովեղերք:

Առաջինն էր որ՝ ծով էինք տեսնում.
Ծովն էր Հայրենի՝ մեր սիրտն էր յուզում.
Յուզում էր մեր սիրտ՝ Սեանայ կղզին,
Որ բարձրանում էր՝ մէջ տեղ ծովակին:

Տխուր է տեսքն՝ ամայի, լռին,
Մնացած ստուեր՝ նախնի դարերին,

նեն իւր յիշողութեան մէջ. երբ այս ամենը չ'տեսներ, ինչպէս կարող է նա ուրախ լինել: Երբ Արտաշէս կրհարցնէր թէ, «Ընդէր տրտում և տխուր են երեսք քո, Նէեմիա». նա կը պատասխանէր՝ «Ընդէր ո՛չ տրտում և տխուր լինիցին երեսք իմ, զի քաղաք և տուն հօր հեռի են յինէն»: Ամեն պանդուխտներու ձայնն է այս, ամեն նոթերհներու հառաչանքն է այս, և անս իբրև արձագանք այս հառաչանաց, կը զրկւիմ Ձեզ երգերս, որպէս զի նոքա, որ ձայնս չեն լսել, սրտիս խորոց անգիտակ են, գոնէ ձայնիս արձագանքները լսեն, որոնք թէ և ամբողջ սիրտս չեն ներկայացներ, բայց կը յուսամ, թէ կ'ազդեն ամենի վերայ, որոց սիրտը կը բարախէ տակաւին Հայրենեաց քաղցր յիշատակներով: Նոքա կը զգան թէ ինչ անհունութիւն կը պարունակէ պանդխտին սիրտը իւր սիրուն Հայրենեաց նկատմամբ»:

Նէեմիա.

Անդ, ուր թագաւորք՝ իշխանք քաջազունք
Աղօթում էին իբրեւ միանձունք:

Անդ, ուր ալէլուք՝ անոյշ բուրումներ
Անուշում էին՝ Հայոց եթերներ.

Անդ այժմ կային՝ երեք ճգնաւորք
Սևազգեստ եղած՝ իբրեւ սղաւորք:

Յիշատակն արդեօք՝ անցած փառքերուն
Ազգում էր նոցա՝ ճնշած սրտերուն,
Թէ տխուր պատկեր՝ ներկայ օրերուն,
Պատկերանում էր՝ նոցա աչքերուն:

Այդ ես չ'զիտեմ՝ Տիրոջն է յայտնի,
Իսկ իմ զգացածս՝ չեմ պահում գաղտնի.
Այդ սևուկ վանքի՝ սևուկ ճգնաւոր
Երջանիկ է քան պանդուխտ փառաւոր:

Գեղամէն անցանք՝ շատ տեղեր տեսանք,
Արտասուօք թողինք՝ մեր տեղը դարձանք.
Անցան տարիներ՝ անցան շատ դէպքեր,
Վերստին տեսայ՝ Գեղամայ ափեր:

Զմրան գիշեր էր՝ և ձիւնով ծածկուած
Թէ ծով, թէ ցամաք՝ լուսով ողողուած.
Մենք շատուր էինք՝ կառքերէն իջած,
Գնում էինք ոտով՝ ուղին էր սառած:

Ա՛խ, դարձեալ 'ի տես փայլուն ծովակին,
Տրոփում էր սիրտս՝ յուզուելով ուժգին.
Քանի մեծ ես, Սէր, Հայրենի երկրին,
Որ հուր ես շնչում՝ սարսուղ մարմնին:

Սարսուռով անցանք, սարսուռով դարձանք,
Գեղամայ սաստիկ՝ ձմեռն էլ տեսանք.
Ի՛նչ հով էր փչել՝ ես էլ չըզիտեմ,
Յօտար հող անցայ՝ եղբարքս փնտռեմ:

Տարիներ եկան, տարիներ անցան,
Օտարութեան մէջ՝ ոսկերքս հալեցան.
Շատ երկիր տեսայ, շատ ծով ու ցամաք,
Զըմուռցայ երբէք՝ Գեղամայ ծովակ:

Հրճք էր թէ փորձ՝ իմ սրտիս համար,
Չեմ կարող պատմել՝ լեզուաւս տկար.
Միայն ասում եմ, որ Տէր Բարեբար
Առաջնորդեց ինձ՝ իմ սիրած աշխարհ:

Տեսայ Աղստե, տեսայ Դիլիջան,
Տեսայ իմ ծովակ, տեսայ ես Սևան.
Առի թաշկինակ՝ ծածկեցի երես,
Զը տեսնէ ընկերս՝ իմ ցօղոտ աչերս:

Անսիրտ մարդ էր նա՝ կարող էր ծաղրել,
Եւ զիս մի լալկան՝ տղայ համարել.
Անսիրտն ի՛նչ կըզգայ՝ այն հուր հայրենի,
Որ վառում էր զիս իբրեւ մօրենի:

Ո՛հ, կան անսիրտներ, ճիւղղ դաւաճան,
Թէ Ազգիդ համար՝ լինիս պատմաբան,
Թէ սիրովն այրիս՝ արտասուես, երգես,
Իբրեւ ոճրագործ՝ կը մատնեն զքեզ:

Շատ օրեր չ'անցան, դարձայ ես մինակ,
Տեսայ վերստին իմ սիրուն ծովակ.
Գեռ նոր էր ծագում՝ գարնան արեգակ,
Հնչում էր զեփիւռ՝ զով ու անուշակ:

Կանանչ արտերու ծածան ալիքներ
Կարծես թէ ծովու՝ էին կոհակներ.
Շարած ու ցօղած՝ հոյլ հոյլ ծաղիկներ
Շողշողում էին իբրեւ գոհարներ:

Ել չը կարացի տիրել իմ սրտին,
«Կառքը կանգնեցուր», ասացի Սարգսին.

Իջայ ես կառքէն, բարձրացայ 'ի վեր,
Սարգիս շոյում էր՝ իւր յոգնած ձիեր:

Նայեցայ չորս կողմս, մարդ չէր երևում,
Կար մի աչք Վերին, որ ինձ էր նայում,
Գլխարկս հանի՝ ընկայ 'ի գետին,
Քսեցի երեսս՝ թարմ ծաղիկներին:

Ծաղկանց շաղերէն՝ աչացս ցօղերէն
Կազմեցաւ անոյշ բալասան հովէն.

Օծեցաւ գլուխս՝ օծեցաւ երես,
Զովացաւ սիրտս՝ զովացան աչերս:

Շատ խոր հառաչներ՝ շատ աղաղակներ
Բղխեցան սրտէս՝ բարձրացան 'ի վեր.
Ո՛հ, երանի՜ թէ՛ իմ այն հառաչանք
Հայ սրտերու մէջ՝ գտներ արձագանք:

Յանձնեցի Տիրոջ անձս ու հայրենիք,
Սրբեցի աչերս արտասուքով լիք.
Քաղեցի ծաղիկ զանազան գունով,
Թղթապանիս մէջ շարեցի կարգով:

Եկայ հեծայ կառք՝ յածեցի աչերս,
Երկրին էր բարևս՝ երկնքին աղերս.
Կառքն գնում էր՝ հեռանում ծովէն,
Սիրտս էր անբաժան՝ հայրենի հողէն:

Անբաժան է սիրտս՝ այս պահուս անգամ,
Որ օտար երկրում՝ երգում եմ Գեղամ.
Լալով թրջում եմ՝ ծաղիկներս չորցած,
Որ 'ի հայրենեաց՝ աւանդ եմ բերած:

Երգում եմ Գեղամ, ողբում եմ Սեան,
Երկուսն էլ դարուց՝ մեծ հանգիստարան.
Մինն բնութեան գեղոյ տեսարան,
Միւսն անշուք բեկոր՝ շքեղ հնութեան:

Եթէ պատահի՝ մի օր վերստին
Հողն համբուրել՝ հայրենի երկրին՝
Սեանն է երգչիս՝ սիրած ճգնարան,
Անդ ապրիլ, մեռնիլ՝ սիրով Հայութեան:

Նէսմիա. (Մ. Ե. Մ.)

65.

Վ երջին Գարուն.

Գարունն է եկել նախշուն թևերով,
Նախշուն թևերը պէսպէս ձևերով.
Գոյն գոյն ծաղիկներ՝ կարմիր ու սպիտակ,
Վարդ, մեխակ, շուշան անուշ հոտերով:

Երկինք ու երկիր քեզ տօնեն, գարուն,
Զի ես քան զամեն եղանակ սիրուն.
Նա անձրև ցօղէ առատ ի վերէն,
Դա օրհնել տայ քեզ եկւոր հաւերուն:

Ոսկի արևը փայլէ քեզ վերէն,
Կենսաբեր հովը փրչէ 'ի լերէն.
Ա՛խ, ազնիւ գարուն, եղանակ սիրուն,
Արդեօք դու ի՞նչ բաղդ բերիր ինձ Տէրէն:

Գլխաքարշ երթամ ի պարտէզ այգուն,
Ա՛խ ու վախ քաշեմ ես անդ օրն ի բուն.
Զիկայ ինձ հանգիստ, ցնծութիւն սրտիս,
Ես վաղ եմ մոռցել զի՛նչ անդորր է քուն:

Մեռած պատանքած գետնին կեանք տուար,
Տերևթափ ծառին ստուերախիտ արար,
Քեզ թռչնոց երամ հանդէս կանչեցիր,
Ի՞նչ մենակ խեղճիս էսպէս մոռացար:

Առաջ գնա, գորուն, դէպ հիւսիսն ի խոր,
Գնա կանանչցո՛ւր դու անդ սար ու ձոր.
Որոց անհամբեր քեզ կան՝ տո՛ւր բարև.
Քուրախ գալստեամբ նոցա զուարճացո՛ւր:

Կու գաս գալ տարի, դու ինձ կը գտնես
Ո՛չ ի մեր այգին և ո՛չ ի պարտեզ,
Այլ անգարթ քընով հողի տակ պառկած,
Գերեզմանաքար մի վրաս կը տեսնես:

Ռ. Պատկանեան.

66.

Գիւղական աղջիկ եմ ես զամբիւղաշէն,
Եկեալ աստ զամբիւղօք ի Հայոց երկրէն,
Յուսամ, զի հայ տիկնայք և պարնայք հընդկաց
Բարձր գին տայցեն իմ սիրուն զամբիւղաց.
Ա՛ն զամբիւղ (3) յօտար աղջկանէս:

ԶԱրարատ, զԵփրատ և զՏիգրիս թողի,
Միայնակ շրջիմ ասա յեզերս Գանգէսի,
Պանդուխտ եմ, օգնեցէք անտէրունչ անձինս,
Զի ծնողք ձեր յառաջ աստ պանդուխտ էին:
Ա՛ն զամբիւղ, և այլն:

Զամբիւղք իմ են յարմար ասղնեգործութեան՝
Պահել անդ զմատնոց, զթել, զասղսման.
Իմ ձեռօք եմ գործեալ ես զամենեսեան,
Երբ խաշինք և գառինք իմ զինե խայտան:
Ա՛ն զամբիւղ, և այլն:

Գանձք բազումք, ցաւք բազումք կան յայսմ աշխարհի,
Պէտք սակաւք, ցաւք սակաւք կան յիմում երկրի,
Զայգի մի ունէի՝ զամբիւղ գործէի,
Լոկ կաթամբ և պտղով երջանիկ էի:
Ա՛ն զամբիւղ, և այլն:

Աստ սերկեիլ, ծիրան և խաղող չի կայ,
Բայց միայն ադայ, բիլայ և քիլայ.
Ա՛խ, ե՛րբ իցէ, զի արժանի եղեց վերըստին
Ճաշակել զպտուղս իմոյ պարտիզին:
Ա՛ն զամբիւղ, և այլն:

Ապա դուք, լա՛ւ տիկնայք՝ զամբիւղս իմ առէք,
Գիւղական աղջկանս սիրով օգնեցէք,
Զի դարձեալ յերկիր իմ հանդերձ ձեր շնորհօք՝
Զերախտիս ձեր առեալ՝ գովեցից բազմօք.
Ա՛ն զամբիւղ (3) յօտար աղջկանէս:

67.

Ա. և մ. անկունք Գողթան.

Գողթան մանկտի, ահա՛ ձեզ
Շքեղ փառաց ասպարեզ.
Օ՛ն, փութացէք, խո՛ւմբ կազմեցէք,
Պսակ անթառամ մնայ ձեզ:

Գիտէ՛ք ոյք են ձեր նախնիք.
Բանաստեղծից էք որդիք,
Որ քնարով, ոսկի լարով
Հայրենիքին փառք բերին:

Դուք ամենից էք զրկուած,
Փառքեր ունիք, բայց կորած.
Հայ եղբայրներ են մերկ, քաղցած,
Եւ հայրենիք մ'աւերած:

68.

Անձուկ հայ մանկանց Կ. Պօլսեցւոց.

Գիշեր ցերեկ կ'հառաչեմ,

Ա՛խ, Հայաստան, քո սիրուդ.

Նախնի փառաց վեհ քաջերուդ

Լոյսն է մարէ, ի՛նչ օգուտ:

Կարօտ մնանք սարիդ, դաշտիդ

Եւ ոսկեգոյն արեւուդ.

Միայն առ Տէր այս պաղատիմք,

Որ ունենայ առ մեզ գութ:

Գիտնայ և բաղդն, զի հայ մանկունք

Չեն դիմանար այս ցաւուն,

Քեզի համար մեր աչերից

Հոսէ արցունք զօրն ի բուն:

Քեզի միայն մենք կ'իշեմք,

Թէ քուն ըլլամք, թէ արթուն,

Տրտում, տխուր միշտ քեզ երգեմք

Այրած հոգով մեր կեանքում:

Շատ ուհիներ թէպէտ տեսանք,

Բայց մեր սրտեր քեզ սիրեց,

Ո՛հ, չեմք գիտեր առաւօտուն

Մեր ցաւն ի՛նչպէս քեզ տիրեց:

Քո բերդերուդ արդեօք սև քօղ

Անդթաբար ո՞վ ծածկեց,

Ա՛խ, ո՞վ էր նա, որ մեզ քեզնից

Գերւոյ նման իսկ զրկեց:

69.

Ա. ր մ ե ն ու հ ի.

Գեղեցիկ Արմենուհի, դու իմ սրտիս հատոր,

Ո՛հ, ի՛նչ խորհրդաւոր է քո սէրի կոչումն.

Ի զո՛ւր ես դասում անձդ տղամարդերիցն ստոր,

Քեզանից է սպասում Հայն իր վերահնչումն:

Ընտանեկան կենցաղում իրաւունքի տէր ես,

Ամեն մի անդամն տան՝ քեզ պատվում, մեծարում.

Ամուսնական վիճակում մտերիմ ընկեր ես,

Օրինակ ես գովութեան ամենայն աշխարհում:

Թագիդ վերայ մի ակը չի երևում «չկայ»,

Որ տայ Հայ տանտիկնոջը առանձին շքեղութիւն,

Քեզ վայել է ներկայում մի այլ նոր առարկայ,

Լուսաւորութիւն ասեմ, ո՛հ, լուսաւորութիւն:

Միմիայն թէ քո Հայկական մտաց արշալոյսն

Պէտք է Մասեաց դազաթից իր ծագումն առնի.

Խորթ ուսմունքներից չ'կայ Հայ մայրութեան յոյսն,

Այս անուշ մահադեղն բնաւ դեղաթափ չունի:

Արմենեան քո ծնունդը ձեռը ծնօտին լալիս,

Արձակի՛ր կրթութիւնդ խաւարի կապանքից.

Ով որ մարդկային ազգին կեանք ու սնունդ է տալիս՝

Ազգայնութիւն նմանապէս կ'ծնանի նորանից:

70.

Շատ խմողն ագահ է, հարբելն յատուկ
մահ է.

Գինետունքն քիչ պիտէին, որ գինին մղղւոր ունենար,
Խմողն փառք ու պատիւ, ծախողն հազար ունենար:

Հալալ է խելօքներին, ո՛չ թէ լիմար հարբեցողին,
Եարաբ էն հարբեցողն չի՞ ափսոսում տուած փողին,
Համարձակ քուֆր է տալիս իրան բարի կամեցողին,
Կարծելով մեծ բանի է՝ թասն է խփում փարչի կողին.
Ո՞վ կասի ունկ է խուլին, աչք է կուրին, ոտք է կաղին.
Ես կասեմ՝ խուլացնում է, կուրացնում է աչքը սաղին,
Շատ խմաւ՝ կուլ կորցնի, ում որ ինչ հնար ունենայ:

Հարբածի պատուած շորն իրան աչքին լաւ կերևի,
Խաշիլին հալուայ կ'ասի, հատիկն փլաւ կերևի,
Եթէ ասես ողորմի հօրդ՝ նորան կուլ, դաւ կերևի,
Տուն կուգայ՝ ջահիլ կինն շատ ամենապառաւ կերևի,
Արեւելքն՝ արեւմուտք, հիւսիսն՝ հարաւ կերևի,
Թէ ասես փոքր քնիր, մրափիլն ցաւ կերևի,
Կուլվազի ետ գինետուն, թէ գնալոյ ճար ունենայ:

Երանի՜ էն խմողին, որ իրան խելքն չափում է,
Հարբելն միտ բերելիս՝ ահուգողով սարսափում է,
Երբեմն իւր թամահին գինեխառ ջրով խաբում է,
Ով որ ագահ լակում է, այնպէս էլ ագահ լափում է,
Անքնար պար է գալիս, սատանէն մօտիկից ծափում է,
Ում դռնից որ ներս մտաւ՝ տան տիրոջ միսն թափում է,
Յօժար է, որ դուրս գցի, հինգ թուման զարար ունենայ:

Ջաւրկեար, այլոց խրատար, բաս ինքդ էլ փոքր խմէս,
Եթէ մին կուժ պատահի, չէս դադարիլ, որ չի քամես,
Խուսկն նիսեա ես ծխում, բայց գինետան փողն տամ ես,

Եթէ իսպառ չի խմես՝ Մայիֆի հետ բարեկամ ես,
Խմելուս՝ անկուշտում ես, չի խմելուս՝ շատ անհամ ես,
Լըվել ա քառասուն տարիդ, աշխարհի զովղերից խամ ես,
Քեզ նմանն փողի տեղ բալքա զահրումար ունենայ:

Արրահամ Մարտիրոսեան.

71.

Գ ա Ր Ն ա ն ե Ր Գ.

Գարունն եկաւ շողշողալէն,
Հետն էլ բլբուլ զընգզնգալէն,
Աստղէ վզնոց՝ ցոլցլալէն.
Բարով եկար, ծիւլ գարուն:

Բարով եկար, անո՛ւշ գարուն,
Դո՛ւք էլ, վարդեր, բլբուլներ.
Ա՛խ, ո՛ւր մնաց կեանքս նշխուն,
Ո՛ւր է սէրս, բլբուլներ...

Ե՛լ տեսար ինձ, նշխուն գարուն,
Տեսար, թէեւ դեռ կ'ապրիմ,—
Բայց, վա՛յ, գարուն, որ սիրտս արուն՝
Կ'ապրիմ, կ'ապրիմ ու կ'ապրիմ...

Դ. Դեմիրձեան.

72.

Հիւանդին մըմուռն ը առ թռչնիկն. (*)

1.

Պարնանային սիւք ցողաթե
Ահա վերջին տըւաւ բարե.
Ջերոտ աւուրց հասաւ խորշակ,
Թառամեցոյց խեղճ մանուշակ.
Վարդ և շուշանըն լուսաթոյր
Ահա զանոյշ կորուսին բոյր,
Եւ իմ աչքեր արտասուագին
Հետըզհետէ կը նըւաղիւն...:

Թըռչնիկ իմ սիրուն,

Մօտեցաւ աշուն.

Երբ հասնի ձմեռ,

Ողջ գըտնէս զիս դեռ:

*) Սա գրականութեան մէջ մի գոհար է, որ հանգուցեալ Սըրբազանը, զգալով իւր վաղաժամ մահը, իւր սրտի և հոգու քնարի տխուր և մեղամաղձիկ մըմուռնի տալու թրուածեան տակ գրում է այն «Հիւանդին մըմուռնը առ թռչնիկն» ուշագրաւ ոտանաւորը՝ իւր մահից քանի մի շաբաթ առաջ... Գրում է, այո, գրում է, բայց անօթի... բայց գալիս... բայց յուսահատ... Ո՛ւր են—հը—նորա վառվառն, նորա սրտաշարժ երկերով սիրահարուածները... Բոլորը, հա, բոլորը մոռացութեան են տուել բազմաշարժար հերոս-հեղինակին... Ա՛խ, դուք, անսիրտներ... Մինը, միմիայն մինը կատարեց իրան յանձնարարած սուրբ կոտակը. դա, ոտանաւորիս մէջ յիշուած, «սիրունիկ թռչնիկն» է, որ—ձմեռը հասնելուն պէս—էլ «հէք բանաստեղծին» չ'գտաւ... Սակայն, սաւառնելով դէպի հասարակաց գերեզմանատունը և պտոյտներ կատարելով՝ գոհարութեամբ էր զանազանում հոգեւոյս Սըրբազան Նար-Պէի գերեզմանը շատ անշուք, շատ անշուն, շատ հասարակ հոգակոյտ գերեզմաններից...

Գ. Ա. Բ. Գրիգորեանց.

2.

Ո՛հ, ալ չունի սիրտս ոչ մի յոյս,
Մարի՛ ճըրագ թըռուաւ հոգւոյս,
Եւ տերեւոց մէն մ'ի թօթափ
Կարծեմ աւուրց իմ պակսի չափ.
Իմ կարճ կենաց մէն մի վայրկեան
Քայլ մ'ալ վարէ զիս ի տապան...:
Կ'ըզձամ նորէն տեսնել զԱպրիլ...
Բայց, ո՛հ, կուզեմ ես դեռ ապրիլ:
Թըռչնիկ իմ սիրուն,
Մօտեցաւ աշուն.
Երբ հասնի ձմեռ,
Ողջ գըտնէս զիս դեռ:

3.

Երբ նորաբոյս գարուն զուարթ
Գայ ի ճակատ պըսկազարդ,
Պիտի կըրկնես դու հըրճուագին
Ըզճըռուողիւն քո զառաջին.
Պիտի տեսնես բլուրն ու անտառ
Եւ ոստոստես ծառէ ի ծառ.
Բայց ես տի ոչ տեսնեմ, աւաղ,
Ո՛չ վարդ, առուակ և ոչ քո խաղ...:
Թըռչնիկ իմ սիրուն,
Մօտեցաւ աշուն.
Երբ հասնի ձմեռ,
Ողջ զիս գըտնէս դեռ:

4.

Սիրուն թըռչնիկ, քիչ օրէն, ահ,
Յիմ սիրելեաց կը բաժնէ մահ...



Վերջին անգամ քո դալալիկ
ես կը լրտես մեկամաղձիկ...
Գուցէ քընած հողոյս վերեւ
Ուրուր, լ'ագռաւ սաւառնեն թեւ.
Լըսուին բուին գուցէ եղերք,
Այլ սըրտառուչ, ահ, ո՛չ քո երգ...:
Թըռչնիկ իմ սիրուն,
Երբ դաս ի գարուն,
Մարդիկ զիս մոռնան...
Յիշէ՛ գիմ տապան:

Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ.

73.

Հ ա յ ու խ տ աւ ո Ր ի ն.

Գնաս բարով, հայ ուխտաւոր,
Երանի՛ քեզ, այ ուխտաւոր,
Որ կարօտով ու սիրառատ.
Ուխտ ես գնում դէպ Այրարատ:—
Ձեփիւռներով, ծաղկանց բոյրով,
Ինչպէս ծընող սիրագորով,
Քեզ կ'ողջունեն զմրուխտ հազած
Գեղամ սարերն և Արագած,
Եւ կարօտած աչքի նման
Քեզ կըժպտայ վճիտ Սևան,
Որ լեռների շուքերի հետ
Յար կըխաղայ ալեօք վէտ-վէտ,
Կը փալկըլի ծըփանքներով,
Կը յօրինի լոյսերի ծով:

Հապա այն սարն, այն սար-հսկան,
Այն սարերի սարն և արքան,
Կապոյտ երկնի ծոցը մըտած,
ձերմակ գլուխն ամպեր փաթթած,
Ահա կանգնեց ծանր ու տրտում
Քո առաջին ու քո սրտում...
Է՛ նա արդէն քանի սև դար
Պերճ գագաթովն իր ձիւնափառ
Շողշողում է, փալատակում
Եւ ուխտաւոր հայի հոգում
Հսկարտութեան ծնում թունդեր,
Եւ սիրելի երազ՝ թէ դեռ
Այն երկնահաս Մասեաց կատար,
Ուր հին տապանն առաւ դադար—
Այս էլ չիշխր աղօթքիդ մէջ
Կարօտ հոգով հայրենատենչ
Եւ լաւ դիտէ դու սրտագող
Հայոց անուան այն վեհ կոթող:

Հէնց խոնարհես աչքերդ ցած—
Լայն դաշտի մէջ, առջևդ յանկարծ
Մառախուղից իր խաչի հետ
Կըբարձրանայ սուր-սուր գմբէթ,
Որ կըխօսայ մարդու հոգուն—
«Խաղաղ ու թիւն ամենեցուն»...
Այնտեղ արեան, դարերից վեր
Երկնաքարոզ, հուժկու ձայներ
Սահակ Պարթև, Ներսէս Մեծին
Խաղաղութիւն քարոզեցին:
Այնտեղ լցուած անեղ հոգով
Աստուածային իր տեսիլքով
«Էջմիածինըն ի Հօրէ»,
Որ Հայաստան լուսաւորէ...

Սիրուն է տեսքն այն լրճակին,
Տաճարը սուրբ, լեռուն ահագին,
Բայց աւելի մեծ ու շքեղ
Արծիւ Հայրիկ ունենք այնտեղ,
ձերմակահեր և հոգեհուր,
Հսկայատիպ կանգնած ամուր,
Ինչպէս կաղնին Լիբանանի,
Այդտեղ արթուն կանգնել է նա
Լուսաւորչի շիրմի վերայ,
Բազուկն հպարտ յենել կողքին,
Կանգնել է մեծ և ահագին,
Եւ արծիւի աչքերն հնոց
Սեւեռել է կողմերն Հայոց...
Ահ, ուխտաւոր, Աստուած սիրես,
Եւ իմ կողմէ Աջն Համբուրես:

Յոսիաննէս Թումանեանց.

74.

У т н н - о р з н т п. (*)

«Գինանք պազենենք սուրբ մեռոնը,
Գինանք պազենենք մեր Մայր-Աթոռը,
Հայոց՝ այսօր է մեծ տօնը»:
Գայիս, գայիս են ուխտաւորք...:

*) Միւռնն-օրհնութիւնը մեր եկեղեցական հանդէսներէ, այսպէս ասած, թագն ու պսակն է. որովհետեւ այդտեղ է լինում Հայոց Հայրապետը, Նորա սուրբ Աջով ու Խաչովն է կատարվում Սրբալոյս Միւռննի սրբազան խորհուրդներն ու արարողութիւնները, և Նորա Հայրապետական հոգեզմայլ քարոզութեամբ և օրհնութեամբն է մխլթարվում հայ ժողովուրդը, հայ ուխտաւորը, և, առհասարակ, ամեն մի անհատ, ամեն մի այցելու: Եւ հէնց այդ է պատճառը, որ երբ

Հնչեց յանկարծ զանգակն ուժգին,
Նրա բարձր ղողանջն երկար
Իմաց տուաւ ժողովրդին՝
«Ժամանակն է, եկէ՛ք տաճար»:

Ահա շարժվում է խուռն ամբոխ,
Շարժվում անվերջ վրայ խռնում,
Վեր-վար գալիս գնում փոփոխ,
Եկեղեցու դռներ բռնում:

«Ե՞րբ պիտի գայ Կաթողիկոսն,
Որ տաճարիս դռներ բանան,
Ե՞րբ պիտի գայ Կաթողիկոսն,
Որ Համբուրենք օրհնած կաթսան»:

Ահա եկաւ Հայրապետը,
Մեր Վեհափառ ու ծերունին,
Լուսաւորչայ սուրբ Աջն հետը՝
Օրհնում է իւր ժողովրդին:

լավում է Միւռոն-օրհնութեան հանդէսի հոգեգումարճ լուրը, ամեն կողմից, աշխարհի ամեն ծայրերից, սրտատրուի շտապում, գալիս են հայու-
թեան սլարծանաց պարծանք Ս. Էջմիածինը՝ բաւականութիւն տալու
իրանց սրտի և հոգու բարոյական քաղցին և ծարաւին: Ներկայ Վե-
հափառ Հայրիկը իւր անդրանիկ, իւր առաջին Միւռոն-օրհնութեան
փառաւոր հանդէսը կատարեց 14-ն սեպտեմբերի 1897 թ., տասնեակ
հազար ժողովրդի ներկայութեամբ, որոնք, ամեն մի տեսակէտով բա-
ւականութիւն ստացած՝ մինը միւսի առաջը կտրելով, համբուրում էին,
չրթուղնքներն այրելու չափ, Սրբալոյս Միւռոնի կաթսան և գցում իրանց
աջահամբոյր-նուէրները: Ապա այդ սարի պէս կանգնած ժողովուրդը,
ստանալով Հայոց 82-ամեայ ծերունագարդ Հայրապետի, Տ. Տ. Մկրտիչ
սիրեցեալ Վեհափառ Հայրիկի սուրբ օրհնութիւնը, ցանկանում էր
Նորան մի-բլիչ էլ առողջութիւն, մի-բլիչ էլ երկար կեանք, մի-բլիչ էլ
սրտաշարժ խօսքեր՝ ի փառս հայկական եկեղեցու, հայ ժողովրդի,
հայ հասարակութեան և հայ մանկական աշխարհի:

Գ. Ա. Ք. Գրիգորեանց.

Իսկ ժողովուրդը ջերմեռանդ
Խաչակնքում է երեսին,
Հայ-քրիստոնեայքը Հնազանդ
Երկրպագում են միասին:

Էջմիածնայ եկեղեցուն
Ահա փակ դուռը բացուեցաւ,
Եկեղեցին է ողջ լեցուն...
Ժամ-պատարագը կանգնեցաւ:

Տասն և երկու եպիսկոպոս
Սեղանն ելան զգեստաւոր.
Եւ ալեգարդ Կաթողիկոս
Նորանց միջին է փառաւոր:

Նա ձեռքն առաւ սուրբ Գեղարդը,
Լուսաւորչայ սուրբ Աջն ու Խաչ,
Խաչակնքեց Տիրոջ մարդը,
Մեռոն օրհնեց սուրբ ու կանաչ:

«Գնանք պազնենք մեր Մայր-Աթոռք,
Գնանք պազնենք սուրբ մեռոնը»:
Գալիս պազնում են ուխտաւորք.
Այս է Հայոց՝ մեր մեծ տօնը...:

Մ. Աբեղեան.

75.

Հ ա յ ո ց ա ղ ջ ի կ.

Դու տեսել ես երկնքումը
Պայծառ լուսին ծագելիս,
Կամ թէ կանաչ տերեւի մէջ
Կարմիր ծիրան փայլելիս:

Դու տեսել ես ծաղկոցումը
Կարմիր վարդը փլթլթած,
Շուշան, մեխակ ու նունուֆար
Զորս բոլորքը պար բըռնած:

Բայց լուսինը խիստ խաւար է
Հայ աղջկայ առաջին,
Ծիրան, մեխակ ու նունուֆար
Զարթեն նորա մէկ պաշին:

Երկու թըշին վարդ են նստել,
ձերմակ ճակտին՝ մէկ շուշան.
Ժպիտը բերնից ցած չի գալիս,—
Անմեղուլթեան է նշան:

Տես, նա առաւ կարմրելով
Իր ընկերից դահիրան,
Դրըմդըմբեցուց փափուկ մատով
Ու ըսկըսեց լեզգինկան:

Նազուք մէջքը ծառի նման
Տատանում է գեղեցիկ,
Մէկ թըռչում է նա անգուման,
Մէկ գընում է խիստ հեզիկ:

Հալվում է խեղճ կտրիճների
Սիրտը՝ նորան տեսնելով,
Ծերը իրան անիծում է,
Որ ծերացաւ խիստ շուտով:

Ռ. Պատկանեան.

76.

Ս ե պ հ ա կ ա ն ու թ իւ ն.

Դու դեռ գանձում ես, ո՛վ թշուառական,
Ամուր սընդուկում ակունք պատուական.
Բայց դորանց փայլուն, անհուն ճոխութեան
Մի յուսալ բնաւ, չեն քո ս ե պ հ ա կ ա ն:

Ամբողջ տարին է քեզ համար գարուն,
Ծփում ես, ինչպէս գետակ փրփրուն,
Մարմարեայ շինուածքդ շքեղ, զարդարուն,
Դոքա նոյն գունակ չեն քո ս ե պ հ ա կ ա ն:

Հագնում ես մաքուր, մետաքսեայ շորեր,
Միշտ զբօսնում ես սիգաւէտ ձորեր,
Թէեւ վարում ես երջանիկ օրեր՝
Բայց դոքա դարձեալ չեն քո ս ե պ հ ա կ ա ն:

Փարթամութեան մէջ վարում ես կեանքդ,
Ոսկի պաշտելն է քո միակ ջանքդ,
Այս կարճ շրջանում ուրախ հրճուանքդ
Մի՞թէ կարծում ես քո են ս ե պ հ ա կ ա ն:

Ո՛չ, չեն սեպհակաւն այդ բոլոր փառքը,
Դորանց իշխողն է միայն աշխարհը.
Խաչիկ, թէ յիշես ո՛ւր են մեր հարքը—
Կ'ասես. «Գերեզմանն է իմ ս ե պ հ ա կ ա ն»:

Աշտարակեցի Խաչիկ.

77.

Լ ր ա գ ր ե ռ ի ը ն թ ե ռ ց ու մ ը ց յ ե տ ո լ ւ ւ ր .

(ՊԼԵՇԵՆԻՅ).

Դառն սրտով միշտ կարգում եմ ես այն էջերն արնալից,
Ուր ոգեվառ մեզ պատմում են խռովութիւններ աշխարհիս.
Որքան ծաղր է տեսնել մարդիկ՝ մի օջաղից, մի տանից
Մռայլ գէմքով, խէթ հայեացքով իրար վերայ նայելիս:

Ես սիրում եմ իմ հայրենիք, սիրում խորին, ջերմ սիրով,
Եւ ողջ հոգով նորան յաւէտ բախտ, արեւ եմ փափագում.
Բայց և ուրիշ խեղճ ազգերին ես չեմ նայում ատելով.
Թշնամութիւնն ինձ օտար է—նա տեղ չունի իմ կրծքում.

Ո՛չ գովասանք ահեղ մարտի, ո՛չ արնաների ճոխ դափնին
Հոգեզուարճ հիացմունքով չեն բորբոքում իմ արին.
Ես ջերմաջերմ աղօթքներով աղերսում եմ Բարձրեալին,
Որ երկնառաք սէրն հալածէ մարդկանց սրտից չարութիւն.

Աղօթում եմ, որ աւերիչ, դաժան օրերն յաւիտեան
Գնան, կորչին—և մոռացած վրէժ, նախանձ ու չարիք,
Բոլոր ազգերն անշահ սիրով, խոնարհ Փրկչի վեհ ուսման՝
Եղբայրանան, կազմեն մի մեծ, հզօր, ազատ ընտանիք:

Ալեքսանդր Ծատուրեան.

78.

Ս. չ ե ռ .

(Ն ու է թ օ թ . Մ . . . ի ն).

Դու տեսել ես սրբավայրում
Կանթեղ վառած սեղանին,
Ուր նա աղօտ լոյս է սփռում
Հեզ Տիրամօր պատկերին:

Կամ գիշերը դու տեսել ես
 Շեշտ կայծակը շանթելիս,
 Սար ու անտառ նկատել ես
 Նորա փայլից դողալիս:

Դու տեսել ես խուլ աղմուկով
 Հեղեղուած գետն յուզուելիս
 Եւ ամբերից հառաչանքով
 Տուն ու աւար գերելիս:

Այդպէս էին այն աչերը,
 Որոց անյագ սիրեցի,
 Եւ ի՞նչ... նորանց սլաքները
 Ինձ շանթեցին—գերեցին...

Յակոբ Յակոբեանց.

79.

Ս. Է ջ մ ի ա ծ ի ն.

Պարեր եկան, դարեր անցան, Է՛ջմիածին,
 Քո հիմն անշարժ ու անսասան, Է՛ջմիածին,
 Չես ձեռակերտ դու մարդկեղէն ու առօրեայ,
 Դու շողակաթ լուսոյ Խորան, Է՛ջմիածին:

Խաւարի մէջ դու վառուեցար որպէս կանթեղ,
 Վառ պահեցիր մեր սրտերում կայծն երկնային.
 Անփառունակ ստրուկ երկրի դու լուսադեղ
 Անշէջ փարոս ազատութեան, Է՛ջմիածին:

Յրուած հօտի դու ժողովող անփոյթ փարախ,
 Հաստատ լինի թող մեզ վերայ քո հովանին.
 Գրիգորի սուրբ օրհնութեամբ ծաղկիւր խաղաղ,
 Փառք ապաւեն մեր աննըման, Է՛ջմիածին:

Յ. Յովհաննիսկան.

80.

Յայցելութիւն Տ. ՄԱԿԱՐԱՅ ՎԵՀ. Կաթողիկոսին
 Ամենայն Հայոց ՚ի Բագու.

(22 հոկտ. 1888 թ.)

Ելցո՛ւք հապօն, ելցուք խոնարհ ՚ի յողջոյն,
 Մեք ՚ի համբոյր ելցուք Օծեալ սուրբ Աջոյն.
 Զի Հայրս մեր ահաւասիկ խնամոտ
 Շնորհէ հրճուանս իւրոց որդւոցս անձկոտ:

Օ՛ն մատիցուք ՚ի սուրբ Նորին օրհնութիւն,
 Ե՛ւ քաջալեր գտցուք, Լ՛ սէր, Լ՛ աւիւն.
 Նորայն գեղցի սիրտն անբաւ գորովով
 Յերգս մեր, ՚ի խինդ և ի բերկրանս յուով:

Կեցցէ, գոչեմք, կեցցէ Հայր մեր Տէր Մակար,
 Զերմ մաղթանաց ձայն հնչեցին անդադար.
 Հովուապետիս մերոյ պահեմ, Տէր, զկեանս՝
 Հօտին իւրոյ սիրեցելոյ ՚ի սփովանս:

Հ. Ղուկասեան.

81.

Ա. ր բ ե ց ո ղ ի կ տ ա կ ը.

Եղբւ՛րք, ուժից ընկած պողազրով
 Էլ աւելի չեմ կարող խմել.
 Կարելի է, որ մեռնեմ շուտով,
 Ուզում եմ շուտով կտակս ձեզ յայտնել:

Ինձ այն գինետանը թաղեցէք,
Ուր շատ անգամ հարբել եմ.
Գերեզմանս այնպէս փորեցէք,
Որ տակաւի տակին պառկեմ:

Ոտներս պատի կողմն ուղղած,
Բերանս լինի լուլի տակ.
Երկու ձեռնով ունենամ բռնած
Ս.հագին գինով լի բաժակ:

Թաղման հանգեսս մի կատարէք
Պատարադով, զանգակներով.
Դիակիս վերայ գինի թափեցէք,
Բաժակները չըրըխկացնելով:

Գերեզմանիս վերայ քար չ'դնէք,
Տակառն արձան է ինձ արժան.
Կպրով միայն չորս խօսք գրեցէք՝
«Հարբեցողի է սա տապան»:

Գերեզմանիս տեսութիւն գալով
Շուտ շուտ, ինչպէս լաւ ընկերներ,
Իմ խեղճ հոգուն ողորմի տալով՝
Կոնծեցէք լիք լիք բաժակներ:

Բայց դեռ քանի հոգիս բերանումս է,
Տուէք, եղբարք, ինձ մի շէշ գինի.
Ամօթ է, որ մահու հրեշտակը
Գայ և ինձ հարբած չ'գտնի:

Թարգ. գերմ. Գ. Բարխուդարեանց.

82.

Ա. ս. տ. ո. լ. ծ. ո. յ. Գ. ո. վ. ե. ս. տ.

(Թարգմ.).

Երբ սկսվի օր, Ստեղծողը գովիր,
Գովիր եռանդով, երբ զարթի երկիր.
Արևի ծագման գովիր դու նորան,
Աստուած կընդունէ միշտ սէրի ընծան:
Գովիր դու Ստեղծող, երբ փայլէ ծաղիկ,
Երբ բզգէ մեղուն, երբ երգէ թռչնիկ,
Այս դաշնակցութեամբ բարձրացրու քո ձայն,
Մօտ և ամեն տեղ է ուշք Աստուածային:
Գովիր Արարիչ, երբ կէսօր կանդնէ,
Գովիր և գիշեր, — նա կ'նշմարէ,
Թէ ցայգ, թէ ցերեկ քո անկեղծ նուէր,
Քո աղօթք, եռանդ, ջերմ սրտիդ ձայներ:

Իշխան Բագրատունի.

83.

Կ. Ի. Լ. Ե. Կ. Ի. Կ. Ի. Կ.

Երբ որ բացուին դռներն յուսոյ,
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ.
Զքնաղ երկինս մերս Արմենիոյ,
Երբ փայլէ իւր քաղցրիկ օդեր:
Երբ որ ծիծառն ի բոյն դառնայ,
Երբ որ ծառերն հագնին տերև,
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Սշխարհ որ ինձ ետուր արև:

Տեսի դաշտերն Ոնուրիոյ,
 Լեռն Լիբանան և իւր մայրեր.
 Տեսի զերկինս Իտալիոյ,
 Վենետիկ և իւր Կոնտոլներ:
 Կղզի նման չիք մեր Կիպրեայ,
 Եւ ոչ մէկ վայր է արդարեւ.
 Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
 Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
 Ուր ամենայն իղձ կ'աւարտի.
 Հասակ մը ուր հէգին ի տենչ,
 Յիշատակաց իւր կարօտի:
 Յորժամ քնարս իմ ցրտանայ,
 Սիրոյն տալով վերջին բարեւ,
 Երթամ ննջել յիմ Կիլիկիա,
 Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

84.

Կ ե ն ա ց բ ա ժ ա կ .

Եղբարք, մի շուրջ ժողովեցէք,
 Քաջ Հայոց կերպի կոնծեցէք,
 Բաժակներըդ դարդըկեցէք
 Մեր Հայ ազգի կենացը:

Հայոց երիտասարդներուն,
 Հայրենիք պաշտպանողներուն,
 Որոց անկումն էլ սուրբ է մեզ—
 Այս բաժակը նըւիրենք:

Հայ աղջիկներու կենացը,
 Որք միայն Հայ մարդ կու սիրեն,

Միշտ իրանց մաքուր կու պահեն.—
 Այս բաժակը դարդըկենք:

Արանց, որ մեր սիրտն գրաւում են,
 Մեզ զգօն ճամբով վարում են.
 Որոց կեանքը մեզ օրինակ,—
 Մի երրեակ «կեցցէ» ասենք:

Եղբարց, որք այժմ աւարտել են,
 Մեր ուխտի անդամ եղել են,
 Որոց ուխտը միշտ սիրում է,—
 Այս բաժակը նըւիրենք:

Եղբարց, որք դարդից ազատ են,
 Մահուան Հանգիստ վայելում են,
 «Ողորմի Հոգուն» ասելով՝
 Այս բաժակը նըւիրենք:

Բայց որ դեռ գինին փայլում է,
 Ու մեզ իրան մօտ կանչում է,
 Բաժակներըդ դարդըկեցէք
 Բոլոր Հայի կենացը:

Ռ. Պատկանեան.

85.

Ն ու է ը «Հ ա յ ա ս տ ա ն ի Ս ո խ ա կ ի ն».

«Մաղես հեղիկ» երգի եղանակով.

Երգիր, Սոխակ Հայաստանի,
 Քո քաղցրաձայն երգ սիրալի:

Թռիւր, պատմիր դու, մեր Սոխակ,
 Հայոց ազգին այս յիշատակ:

Ս ո խ ա կ .

Երգի՛ր նոցա այս մեր հանդէս, (*)
Որ տօնում ենք մենք սիրապէս:

Ասան, խումբ խումբ հայ զաւակներ
Երգեն ահա այս մաղթանքներ:—

«Կեցցէ՛ մեր այս Ընկերութիւն,
Որ տալիս է մեզ կրթութիւն:

Կեցցէ՛ն Սորա վեհ Անդամներ
Ազնիւ գործքով, շատ տարիներ»:

Ա. Գրիգորեանց.

86.

Ե ր ա զ.

Ես լսեցի մի անուշ ձայն,—
Իմ ծերացած մօր մօտ էր:
Փայլեց նշոյլ ուրախութեան,
Բայց ափսոս, որ երազ էր:

Կարկաչահոս աղբիւր այնտեղ
Թաւալում էր մարգարիտ.—
Նա յստակ էր որպէս բիւրեղ,
Այն երանգ էր ցնորամիտ:

Եւ մեղեդին տխուր, մայրենի
Յիշեց մանկութեան օրեր.—
Մօրս համբոյրն ես զգացի,—
Ա՛խ, ափսոս, որ երազ էր:

*) Գրուած է 1872 թ. Բագուի Հայոց «Մարդասիրական Ընկերութեան» իններորդ տարեգարձի առթիւ և երգուած է, նոյն տօնի հանդիսում, Հայոց երկսեռ դպրոցի ուսանողներին:

Կուրծքին սեղմեց կարօտագին.
Աչքերս սրբեց—շատ թաց էր,—
Բայց արտասուք զնո՛ւմ էին...
Ա՛խ, այդ ինչո՛ւ երազ էր:

Ս. Շահաղիզեան.

87.

Կ ո յ ր ե ռ գ ի չ ը.

Երկու աչքով կոյր ծերունին,
Ձեռը տուած իւր որդուն,
Մի հասարակ ջութակ ձեռին
Ման է գալիս տանից տուն:
Նա անկարող աշխատելու
Եւ հազիւ հազ քայլելով,
Իւր անձն, որդին կերակրելու՝
Հայ է մուրում երգելով:
«Ահա, հայրիկ, ասաց տղան,
Մեծ տան առաջ ենք կանգնած.
Երգի՛ր այս տեղ, բնակիչք այս տան
Հարուստներ են անկասկած:
Եւ կանգնած է պատուհանում
Շատ գեղեցիկ մի տիկին,
Այնպէս քաղցրիկ ցած է նայում,
Նա մեզ կրտայ հացի գին»:

Կոյր երգիչը ածել սկսեց
Մի շատ տխուր եղանակ,
Եւ թոյլ ձայնով այսպէս երգեց
Նա միևնոյն ժամանակ:
«Ո՛վ պարոններ և տիկիներ,

Ողորմեցէք ծերուկիս.
 Արդէն անցան շատ տարիներ,
 Ինչ հանգել է լոյս աչքիս:
 Եւ ինձ համար պայծառ լուսով
 Երբեմն արեւ փայլում էր,
 Եւ հրաշալի բնութեան շրջով
 Եւ իմ աչքը զմայլում էր:
 Սակայն իմ հին մեղքի համար
 Տէրը պատժել ինձ վճռեց,
 Եւ այն օրից թանձր խաւար
 Աչքերիս վրայ նա սփռեց:
 Նորա վճիռը միշտ արդար է,
 Չեմ գանգատում նորանից.
 Մարդերի սիրտը կարծր քար է,
 Գանգատ ունիմ նոցանից:
 Աստուած շնորհեց ինձ մի դստրիկ,
 Գեղեցկուլութեամբ չկար հատը.
 Բայց անօրէն և չար մարդիկ
 Խլեցին ինձնից իմ բաղդը:
 Զայնիկ ունէր քաղցրահնչիւն,
 Սիրտը բարի և քնքուշ.
 Ինքը աշխույժ, ինչպէս թռչուն,
 Բարքով համեստ ու անուշ:
 Սաստիկ աղմուկ, մի մութ գիշեր,
 Վեր թռցրեց ինձ խոր քնից,
 Ես լսեցի աղջկաս ձայնը.
 «Հայրիկ, օգնիր, տարան ինձ»:
 Յուսահատված վազում էի
 Խարխափելով դէս ու դէն.
 Ա՛խ, ես օգնել կարող չէի,
 Եւ ծեր էի, կոյր, անզէն:
 Եւ այն օրից մնացի անտէր,

Պատմում եմ ցաւս աշխարհին.
 Կոյր աղքատին, ո՛վ պարոններ,
 Մի խնայէք հացի գին»:

Սիրուն կինը կարեկցութեամբ
 Պատուհանից լսում էր,
 Արտասուքը առատութեամբ
 Նա աչքերից թափում էր:
 Նա վեր առաւ իւր քսակը
 Եւ ցած գցեց ծերուկին.
 «Ահա, հայրիկ, իմ խեղճ հայրիկ,
 Ահա, ա՛ռ քեզ հացի գին»:
 «Ա՛խ, այդ ձայնը ինձ ծանօթ է»,
 Կանչեց ծերը դառնագին.
 «Դստրիկ, տուածդ հացի շատ է,
 Դա դադաղիս կը լինի գին»:

Վերջին անգամ երգեց ծերը,
 Միւս օր նորան թաղեցին
 Նոյն արծաթով, որ ըստացաւ
 Իւր աղջկանից հացի գին:

Գ. Բարխուդարեանց.

88.

Ուսանող.

Երբ որ հողից մարդ դարձայ,
 Երբ Աստուածանից հարցայ,
 Թէ ի՞նչ վիճակ ես ուզում.
 Ասի՝ ուսանողութիւն:

Աստուած ուզեց զարդարել
 Ինձ, դիպայ շորեր կարել.

Ասի՛ էն դու կանանց տո՛ւր,
Ինձ մի նըշանազգեստ տո՛ւր:

Կապտածըղի գըգակ տո՛ւր,
Մէջքէս կապէ հատու սուր.
Մառանուժըս լաւ գինի
Թո՛ղ միշտ անպակաս լինի:

Իմ սիրելի նազելին
Մնայ ինձ միշտ հաւատարիմ.
Փըղըշտացի ախոյեան,—
Տէս իմ սուրն է իմ պաշտպան:

Ո՛վ չի իլել ուսանող,
Լաւ է, որ միշտ մընար հող,
Քանց Աստուծոյ լոյս արեն
Անասնոց պէս վայելէր:

Ո՛վ չի կոնծել երգելով,
Ընկերաց հետ պաշուելով,
Նա չըգիտէ ցնծութիւն.
Եղնակ սրտին, վնջ հոգնէն:

Ով չի երգուել ընկերաց՝
Պաշտպան լինել հայրենեաց,
Վերջին արիւնը թափել,
Հայրենիքը ազատել.

Մեզնից էնպէսն հեռանայ,
Լոյս աշխարհից վերանայ.
Թո՛ղ անասնոց կարգն ընկնի,
Թո՛ղ մեր մէջ նա չի մըտնի:

Ի. Պատկանեան.

89.

Թ ա տ ր ո ն ա կ ա ն ե ր գ. (*)

«Արիացիր, զո՛նեայ» երգի եղանակով.

Եկա՛ք, ընկերք, սիրապէս
Կատարելու մի հանգէս.

Ահա՛ շըքեղ տեսարան:

Շնորհիւ Ռուսաց Արքային՝
Մենք ազատ ենք գլխովին—

Սիրել մեր Ազգ և Կըրօն:

Թո՛ղ, ուրեմն, իմ Հայեր,

Արիանան ձեր սրտեր՝

Գովել մեր հայրենիքը:

*) Այս երգը երգուած է Բագուի Հայկական Թատրոնում, երկրորդ ներկայացման ժամանակ, «Իվերդիսմանի» միջոցին, 1871 թ. յունվարի 23-ին: Ի դէպ. Բագուի Հայկական Թատրոնի սկիզբը դրուած է (թող յանդգնութիւն չլինի ասելու) տողերիս գրողի նախաձեռնութեամբ, և իմ, և տեղիս Ռէպլական Գիմնազիօնի ուսանող՝ անմուանալի ընկերներիս մասնակցութեամբ և Հայոց «Մարդասիրական Ընկերութեան» խորհրդական Ժողովի մեծապատիւ անդամների նիւթական օժանդակութեամբ:

Առաջին ներկայացումը, այն է՝ «Դալալ-Ղադօն», Փուղինեանցի և «Իշխրուան Սարըր Խէր է» Գ. Սունդուկեանցի, տրուեցաւ Ն. Կրասինիկեանցի, ծովի ափին գտնուող, նոր շինութեան մէջ, 1870 թ. դեկտեմբերի 28-ին, բարեգործական նպատակով:

Առաջին պիեսայի մէջ մասնակցում էին հետեւեալ գիմնազիստ ուսանողները. Դալալ-Ղադօի դերը կատարում էր Աւագ Գրիգորեանց (իմ նուաստութիւնս), Սինդուկեանցը՝ Աղեքսանդր Քալանթարեանց, Կիլիկիլինը՝ Գրիգոր Մարդուկեանց, Յարոյինը՝ Նիկողայոս Շահնազարեանց, Ժամսուկինը՝ Վասիլյ Աւարեանց, Յըրվատաձէինը՝ Ղևոնդ Տէր-Օհանեանց:

Պատճառ, նորա սուրբ հողը,
Միրգ և՛ պտուղ և՛ ջուրը
Օրհնեալ է մեր Արարչէն:
Դէ՛, ուրեմն, շուտով մենք
Հայ ազգի կենաց խրմենք.
Օ՛ն, մի ծափահարութիւն:

Ա. Գրիգորեանց.

90.

Բ ն ու թ իւ ն.

(Թարգմանութիւն).

Ես շատ կը սիրեմ փայլուն աստղերը,
Բայց ո՛չ թէ այն լայն կապոյտ երկնքի.
Չէ, չէ, աւելի կուզեմ, կը սիրեմ
Փայլուն աստղերը կուրծքի վըրայի:

Ես շատ կը սիրեմ լսել խշխշոց,
Բայց ո՛չ թէ ծառի խիտ տերեւներու.
Չէ, չէ, աւելի կուզեմ, կը սիրեմ
Խշխշոց խոշոր նոր թուղթ փողերու:

Երկրորդ պիեսայի մէջ.

Օսկան Պետրովիչի դերը՝ Գասպար Ետրուքեանցը, Մարթայինը՝ Աղեքսանդր Բալանթարեանց, Կէկէլինը՝ Սարգիս Մալաֆէեանց, Յարութիւն ձարտարովինը՝ Գրիգոր Մարդուրեանց, Քէտիսէինը՝ Ղևոնդ Տէր-Օհանեանց: Ռէժիսորի պաշտօնը, ըստ մեր խնդրանաց, կատարում էր Ղզաբեցի պատուական երիտասարդ պ. Պետրոս Յարութիւնեան Ասլանեանց:

Ներկայ 1902 թ. դեկտ. 28-ին լրանում է Բագուի Հայոց թատրոնի սկզբնաւորութեան 32-ամեայ տարեդարձը: Հրաւիրում ենք այդ մասին հայ թատրոնասէրների ուշադրութիւնը՝ մի բարեգործական նպատակով տօնել այդ օրը:

Գ. Ա. Բ. Գրիգորեանց.

Ես շատ կը սիրեմ սուս-փուս թռչնոց,
Բայց ո՛չ թռչունի, որ չունի դադար.
Չէ, չէ, աւելի կուզեմ, կը սիրեմ
Սրտիս թռչնոց անուշիս համար:

Ես շատ կը սիրեմ, որ կըլ-կըլ վազէ,
Բայց ո՛չ թէ առուն բարձրէն դարիվար.
Չէ, չէ, աւելի կուզեմ, կը սիրեմ,
Որ նըռան գինի վազէ բկէս վար:

Ես շատ կը սիրեմ հովըն բարալիկ,
Բայց չըզիտենաք թէ օտար երկրի.
Չէ, չէ, ես միայն կուզեմ, կը սիրեմ
Քաղցր, անոյշ հովն մեր Հայաստանի:

Մկրտիչ Ալիսանեան.

91.

Ե՛կ, Տէր Յիսուս, ողորմեա՛ մեզ,
Ողորմութեան ժա՛մ է արդէն:

Ե՛կ, Բարեխնա՛մ, ա՛յց արա մեզ,
Այցելութեան ժա՛մ է արդէն:

Ե՛կ, Մարգասէր, փրկեա՛ զմեզ,
Փրկչիդ շնորհաց ժա՛մ է արդէն:

Ե՛կ, Բաղմագո՛ւթ, խնայեա՛ ՚ի մեզ,
Խնամող սիրոյդ ժա՛մ է արդէն:

92.

Ս ի ռ ե ց է ք մ ի մ ե ա ն ց.

Ես տաճար մտալ... «Սիրեցէք միմեանց»
Լսվում էր բեմից քարոզ փրկչաւանդ,

Եւ ստուար շարքեր՝ բարեպաշտ մարդկանց
Աղօթում էին այնտեղ ջերմեռանդ։

«Սիրեցէք միմեանց»... Օ՛ր, վսեմ ուսմունք,
Որ միշտ կրկնվում ես միայն տաճարում.
Եւ միայն այնտեղ անչար զգացմունք,
Գուցէ, զարթեցնում մարդկանց սրտերում...

Շատ եմ փափագած, որ լսեմ ես քեզ
Ե՛ւ կեանքում—հեռու տաճարի բեմից,
Բայց ի զմեռ փափագ... Դու հալածուած ես
Ե՛ւ մարդկանց սրտից, և՛ կեանքի շեմից...

Ալեքսանդր Մատուրեան.

93.

Ե թ է շ ո ղ մ ը Ը Լ Լ ա մ ե ս . . .

(Մանկապարտեզի երգ անգլիերէնէ).

Եթէ զիս աննըշան
Մի շող ընէ Հայր Աստուած,
Կը փընտրեմ մի շուշան
Շուք տեղ մոռցուած.
Անոր ծոցն քնքուշիկ
Հոսեմ լոյս շնորհաց,
Որ վերցնէ մեղուշիկ
Գլուխը խոնարհած։

Եթէ ես ըլլամ շող,
Իսկոյն կ'երթամ մութ ու ցած
Տուներու մէջ մաշող
Անթիւ թշուառաց.

Կը փայլեմ մինչև որ
Ցամքին արտասուք,
Եւ տունէն սըգաւոր
Հեռու երթայ սուգ։

Յ. Թ. Գալսեան.

94.

Մ ե Լ ո դ ի ա .

(Ֆրուզից).

Գիրք ելից, գլ. Ժդ. 15: Միքիա, գլ. բ. 10.

Ե՛ւ աչքըդ պայծառ, և՛ քայլըդ հաստատ,
Ե՛ւ ձայնըդ առողջ... Օ՛ր, անգր իմ անգին,
Էլ ի՛նչ ես այդպէս տխուր, յուսահատ
Գըլուխ խոնարհած՝ կանգնել կէս ճամբին։
Դու միայնակ չես, անգր իմ սիրելի,
Տես քո որդիքը ահա խմբովին
Քո գիրկն են դարձել՝ վառ յոյսերով լի.
Սեղմի՛ր դու նոցա քո ծերուկ կրծքին
Եւ համբերելով ամեն դառնութեան,
Սիրտըդ յուսավառ, անվախ, անսասան
Գնա՛ դու առաջ,
Ա՛գգ իմ չարատանջ։

Գնա՛—հին երգի ձայնին ունկնդիր,
Քեզ գալիք փրկող դարերն են կանչում.
Քեզ որոտ, կայծակ ձայնում են, «զարթի՛ր».
Քեզ փոթորիկը վեհ հիմն է երգում։
Գնա՛—թո՛ղ յոգնած, ալեգարդ գլխիդ
Ամպեր և մրրիկ որոտան ուժգին,

Ուրախ ժպիտը վսեմ երեսիդ՝
 Լի՛ յուսով նայիր դու ապագային.
 Գիտեմ, վիճակըդ դառն է, թունաւոր,
 Բայց դու անվհատ, ազգ իմ ալեւոր,
 Ա՛զգ իմ ցաւատանջ,
 Գընա՛ միշտ յառաջ:

Ալեքսանդր Մատուրեան.

95.

✓ Ծ ի ր ա ն ի .

Ես մէկ ծառ եմ ծիրանի,
 Հին արմատ եմ անուանի.
 Պտուղներս քաղցրահամ,
 Բոլոր մարդկանց պիտանի:
 Հին ծառ եմ արեւելեան,
 Զունիմ որոշ այգեպան.
 Տունկերս ամեն երկիր
 Ընկած են բաժան բաժան:

Արեւելքում ինձ տնկեց,
 Երբ որ Աստուած ստեղծեց,
 Ասաց—աճէ, բազմացիր—
 Մի այգի էլ ինձ տուեց:

Ուղարկեց մի այգեպան,
 Հարաւից հսկայ իշխան.
 Այն հսկայի անունով
 Կոչուեցայ ծառ Հայկական:

Զորս հազար տարուայ ծառ եմ,
 Արմատս պինդ՝ կայտառ եմ,

Թէպէտ ոյժս պակաս է,
 Բայց անունով պայծառ եմ:

96.

Պ ա ն դ ու խ տ Մ շ Ե ց ու Ե ր գ Ը .

Եօթն օր, եօթ գիշեր
 Շախկամնի գօտիս թումշեր,
 Եար մզիկ դըռնէն դուրս չելնա,
 Փշուրմի սիրտ մըզիկ խովնայ—
 Վալլէ, վալլէ, վալլէ, վալլէ...
 Երթամ Ստամբօլ,
 Դատիմ փարա բօլ,
 Իմ եարի խամար
 Առնիմ ջուխտ մի սօլ.
 Արի, եւր, արի,
 Խռով մի կենայ,
 Աստուորիս բան՝
 Եւր, մզիկ չի մնայ:

Վայ, սանխէր Կիվկիվ,
 Դու գացիր ի Մուշ բարով,
 Ել չըս յիգայ հազար տարով,
 Խարս պարկե, տղայ բերէ,
 Առջընեկ լէ գուլթան կու վարէ—
 Վալլէ, վալլէ, վալլէ, վալլէ:
 Քամբախ Բուլանըխ
 Ի՜նչ անուշ գեղ է,
 Երկուսս մէ շապիկ՝
 Փողպատնի նեղ է,
 Եարիս մէ պագնի

Սրտիս ի դեղ է.

Արի, եւոր, արի...

Մկօրսի քամբախ էրկրէն

Խաբրիկ մէ էկեր—

Թ' Տաճիկ լցուեր գեղ,

Զըմմէն թալներ ու տարեր,

Վայլէ, վայլէ վայլէ, վայլէ:

Խայեր, վախ, խայեր,

Շիւար էք մացեր,

Զիմնաք մըր էրկրի

Լացերն ու թացեր:

Արի, եւոր, արի...

97.

Հ ա յ ա ս տ ա ն ի բ ե ռ ք ե ռ ը.

Ես ման եմ գալիս իմ ցաւից խեղդուած,
Բայց զարնանազարդ տեսքը բնութեան
Փայլում է այստեղ հրաշքով պսակուած.—
Գովասանեմ քեզ, կանաչ Հայաստան:

Զմայլեր, ըզմայլեր, իմ միակ ընկեր,
Ո՛րքան շքեղ է բնակարանը Հայի,—
Զարմանալի չէ, որ նախնիքը մեր
Կարծեցին լինել դրախտն Եդեմի:

Թէ կամիս տեսնել Արարչապետի
Հրաշագեղ գործը ու ճարտարութիւն,—
Ե՛կ Հայոց աշխարհ. առաջին օրի
Նա կ'առաջարկէ քեզ գեղեցկութիւն:

Ի՛նչ ակնահաճոյ տեսարաններով
Առատաբաշխած են դաշտավայրեր.

Ի՛նչ ոսկէնկար բուսականներով
Խնկահոտում են այստեղ հովիտներ:

Կախուած է գոհարն—ողկոյզ խաղողի.
Ծորում է հիւթը սաթի շիթերով,
Եւ սիրուն թռչնակ մի գաղտագողի
Հիւսում է բունը այստեղ մեծ հոգսով:

Փայլում է գեղին-կարմրագեղ ծիրան,
Քողարկուած կանաչ թրփերի հովով.
Լցուած է այստեղ ներդաշնակութեան
Նոր այգ աւետող կաքաւի երգով:

Վառվում է չըքնաղ, ոսկեփայլ նուռը,
Որի նեկտարով արձակում է լայն
Թաթար խաների դըրախտի դուռը,
Երբ անոյշ բուրմամբ ծխում է կալիան:

Հոյակապ աշխարհ, այստեղ վառ սալոր,
Այնտեղ սերգելի՛ խոնարհած երկիր.
Տերեւի տակից ժպտում է խնձոր,
Մի թուշը ոսկի, իսկ միւսը կարմիր:

Ես երգ եմ երգում, գո՛հ է իմ հոգին.
Մեղմ խոխոջում են անհոգ առուներ.
Ինձ նկարում է նոցա ապակին,
Վառ այգեստանի քաջառողջ բերքեր:

Եւ ճեղքուած դուռդ ման, և շամամ նարինջ,
Եւ ոսկի փշատ, և գեղձը թուրինջ,
Եւ ելեքաբերոն մեղր քիշմիշի.
Եւ խոշոր յակինթ քաղցր հաչաբաշի:

Հեռու է մահը. ես կեանք եմ շնչում.
Շարժում են վարդեր կանաչ ոստերով,
Ե՛ւ հոտ են բուրում, և՛ խունկ են ծխում,
Զքնաղ տեսարան ինձ ընծայելով:

Թէ Եւրոպայի բոլոր մեծագնի
Պատրաստած իւղերն և օծանելիք,
Եւ անոյշ ջրերն այն ախորժելի,
Թափէիք այստեղ, այս չնաշխարհիկ

Վարդերի վերայ,— ո՛վ, ես չեմ սըտում,
Որ սոցա ամբոս, սոցա վառ ոգին
Հետք թողելու չէր մի ակընթարթում.
Ինքը բուրուկելով կը մտնէր ձեր հոգին:

Ի զո՛ւր է, ի զո՛ւր, թէ խօսքով յարմար
Ցանկայի նկարել բիւրեղ ջրվէժներ,
Որ, ազամանդեայ կապելով կապար,
Սրսկում են այստեղ դալարուն մարգեր:

Բի՛ւր պտուղների յաջողակ խառնուած:
Բի՛ւր ծաղիկների բիւր գունով հիւսուած:
Թէ արձակ հովիտ, թէ ամայի ձոր—
Եւ ամէն տեղ այդ զարդեր մեղրածոր:

Պատուական աշխարհ, ես չունեմ գրիչ,
Որով գովեց քեզ քո մեծ նկարիչ:—
Այո՛, Փարպեցի, մեծ է քո լեզուն,
Երբ Արարատի տեսար մեծութիւն:

Ինչո՞ւ ամէն թուփ, թէև խիստ դալար,
Դողում է, կարծես, ոսոխի ձեռից.
Խեղճիկ, ծածկուել է նորա ոսկէգար,
Խեղճիկ, դողում է նա արտասուքից:

Ուսո՞ւմ և ուսո՞ւմ մեզ հարկաւոր է,
Ուսումը անէ թո՛ղ մեզ բախտաւոր.
Ուսումը Հային թո՛ղ բուսուցանէ
Մի բարի վիճակ և կեանք փառաւոր:

Ս. Շահազիզեան.

98.

Երգ ամուսնութեան.

Երբ առաջին կոյսն և առաջին տղան
Առաջին անգամ մին մինու դրախտում տեսան,
Էն ի՛նչ օր եղած է, ախ, և ի՛նչ տեսարան.
Ի՛նչ նշանտուք, ի՛նչ պսակ, հարսանիք աննման.

Այո՛, ամուսնութիւն, դո՛ւ ես աննման,
Ձկայ մեծ խորհուրդ քեզ նման, քեզ նման:

Ազամ էր Եւայ նոր հարսին նոր փեսան,
Փեսաւէրք՝ սերովբէք, քերովբէք վեցթեւան,
Նուազածուք՝ հրեշտակապետք քառակերպեան,
Երգասացք, պար-երգուք՝ հրեշտակք վերնական.
Այո՛, ամուսնութիւն, դո՛ւ ես աննման,
Ձկայ մեծ խորհուրդ քեզ նման, քեզ նման:

Էն հարսանեաց զարդեր մարգրիտ, ոսկի չէին անբան,
Այլ անմեղութիւն, զգեստ և զարդ անզուգական,
Որով զարդարուած երկու սիրական՝
Վայելում էին միշտ պտղոց սեղանն ատինական.

Այո՛, ամուսնութիւն, դո՛ւ ես աննման,
Ձկայ մեծ խորհուրդ քեզ նման, քեզ նման:

Քրիստոս զնաց հարսանիք Կանայ Գալիլեան,
Դարձեալ պատուեց խորհուրդն ամուսնութեան,
Ջուրն գինի փոխելով՝ օրհնեց հարսն ու փեսան
Ի սէր և ի պատիւ բոլոր մարդկութեան.

Այո՛, ամուսնութիւն, դո՛ւ ես աննման,
Ձկայ մեծ խորհուրդ քեզ նման, քեզ նման:

Սոխակ.

Դէ, է՛ Ուստայ Գէորգ Բարխուտարեան,
Դու էլ սրտով օրհնէ, գովէ մի բերան
Էս խնճոյից զարդն—հարսն ու փեսան,
Որ զաւակներով ծլին, ծաղկին, ծերանան.

Այո՛, ամուսնութիւն, դու ես աննման,
Չ'կայ մեծ խորհուրդ քեզ նման, քեզ նման:

99.

Շնորհաւորական նոր տարւոյ
Առ Գրիգոր մանուկ Ա. Գաւանդեան.

Երկինք մեզ տուաւ՝ նոր տարի, նոր օր,
Որ ի մեր նախնեաց՝ կոչի ամանոր.

Այս օրն կ'ուտեն՝ պտուղ նորանոր,
Իրար կը մաղթեն՝ տարի շնորհաւոր:

Ես էլ խորհեցայ՝ լաւ տանձ ու խնձոր
Ղրկել քեզ նուէր՝ սիրո՛ւն Գրիգոր.

Սակայն դեռ չ'ունիս՝ ատամներ բոլոր,
Որ մանրես, ծամես՝ մրգեր մեղրածոր:

Գիտեմ, ասացի, իղձեր բիւրաւոր
Չ'եմ կարող պահել՝ իմ սրտիս ի խոր.

Ձօնեմ ես հապա՝ մի ձօն ոտնաւոր,
Որ մեծնայ, կարգայ՝ արթուն Գրիգոր:

Ա՛հ, գիտեմ որչափ ունիս սիրողներ,
Եւ քանի՛ քանի՛ նոր նոր անուններ.

Գիգօ ու Գոգոլ՝ և շատ տիտղոսներ
Կը բարդեն վրագ՝ նոր կնքահայրեր:

Թէ Գոգոլ ձայնեն և թէ Գիգոլի,
Է ճաշակ սիրոյ և չէ խոտելի.

Բայց անուն մի կայ՝ շատէն գովելի,
Որ ես տուած եմ և այն է Ուժլի:

Ուժլի կոչման տակ՝ կայ իմաստ խորին,
Որ է ուժով լի՝ ի յաղթել չարին.

Երբ յաղթես չարին՝ կը տիրէ բարին.
Այս է կամք վերին՝ հօր երկնաւորին:

Այս ուժըն կըտայ՝ մարդուն մեծ կորով—
Լինել զօրաւոր՝ բարի գործերով.

Չէ որ մեր բաղձանք՝ բանիւ ու գրչով
Է որ դու մեծնաս՝ ուժով ու խելքով:

Արդարեւ ունիս՝ դու հայր Արտաշէս,
Եւ մայր՝ Մաքրուհի՝ խոհեմ, սրատես,
Սոքա բնական՝ են կեանքիդ տնտես
Եւ աչք Անեղին՝ պաշտպան հեռատես:

Բայց գիտցիր, ունիս՝ մի հայր հոգեւոր,
Սեռակ վեղարով՝ կեանքով կրօնաւոր.
Չէ նա բանաստեղծ՝ ճոխ տաղանդաւոր,
Բայց իւր ձօնածն է՝ ի սրտէ բոլոր:

Ընդունէ իւր ձօն՝ իբրեւ լիշատակ,
Կարգա՛, երբ մեծնաս՝ որ լինիս գիտակ,
Թէ մի վարդապետ՝ ալեօք սպիտակ,
Սիրով մանկութեան՝ հիւսեց այս պսակ:

Մ. Ե. Մ.

100.

Ա. Ն. Ճ. Ո. Կ. ա. Տ. Է. ր.

«Ո՞վ է մարդ, որ կեցցէ և ոչ տեսցէ զմահ»:

Սաղմոս ձր.

Երբ իմ թուի աչեր, ժպիտ քաղցրապէս
Դեռ նոր եմ տուել իմ հօր լոյս երես,

Երբ իմ մօր առաջ իմ լեզու, բերան
Դեռ նոր եմ բացել իբրև երգարան՝
Ինձ մի տուր դեռ մահ, ո՛վ Տէր բարերար,
Գուցէ ես շատին լինեմ մըխիթար:

Երբ իմ մանկութեան թողած խանձարուր,
ձեմուճ եմ ազատ դաշտ, հովիտ, բլուր,
Եւ իմ խնդութեան ճիչ ու աղաղակ
Դեռ նոր են առնում վարդ ու մանուշակ՝
Ինձ մի տուր դեռ մահ, ո՛վ Տէր բարերար,
Թո՛ղ, որ ես տեսնեմ, ի՞նչ է այս աշխարհ:

Երբ ձեռքս առած գրքերի կապոց,
Դեռ նոր եմ գնում, գալիս հայ դպրոց,
Եւ անհոգ, զուարթ, սրտով եռանդոտ
Դեռ նոր եմ առնում ուսման համ ու հոտ՝
Ինձ մի տուր դեռ մահ, ո՛վ Տէր բարերար,
Գուցէ ես շատին լինեմ օգտակար:

Երբ ծոցս դրած գիտութեան պաշար,
Դեռ նոր եմ մտել մեր Հայոց աշխարհ,
Եւ սիրով, անխռով իմ ուսման բարիք
Դեռ նոր են առնում ինձնից հայ որդիք՝
Ինձ մի տուր դեռ մահ, ո՛վ Տէր բարերար,
Գուցէ ես շատին տամ խելք ու հանճար:

Երբ իմ վաստակեալ և անգօր ձեռքեր
Դեռ նոր են կանգնում դպրութեան շէնքեր,
Դպրութեան շէնքեր՝ որ իմ հէգ ազգին՝
Պիտի ընձեռեն բարութիւն անգին՝
Ինձ մի տուր դեռ մահ, Աստուած աստուծոց,
Գուցէ շատ բարիք թափեմ ես իւր ծոց:

Երբ ես շրջում եմ շէն, քաղաք և գեղ,
Ես ի՞նչ վատութիւն չեմ տեսնում այնտեղ,

Էլ չեմ հովանում, երբ ոմանք ազատ
Ձեն յարգում անգամ հայութիւն, հաւատ.
Ինձ մի տուր դեռ մահ, ո՛վ Տէր բարերար,
Գուցէ ես շատին լինեմ փրկարար:

Երբ իմ փրկարար խրատ ու յորդոր
Դեռ նոր եմ կարգում հայերին բոլոր,
Որ ատեն զեղիս կեանք, ատեն մոլութիւն
Ե՛ւ գաղտ և՛ յայտնի չ՛աւրեն միմեանց տուն՝
Ինձ մի տուր դեռ մահ, ո՛վ Տէր բարերար,
Գուցէ ես պէտք գամ շատ հայի համար:

Երբ դու ինձ անհուն շնորհք ես տուել,
Ու ինձ նրանց մէջ լողորդ ես դրել,
Ես էլ այդ շնորհք, երբ թղթի թևով
Դեռ նոր եմ հանում մարդկութեան յորդ ծով՝
Ինձ մի տուր դեռ մահ, ո՛վ Տէր բարերար,
Թո՛ղ, որ դեռ գըրեմ իմ ցաւոց տուժար:

Երբ օր խիստ զուարթ և օր յուսահատ
Մաշում եմ կեանքս առողջ կամ հիւանդ,
Եւ իմ մէջ անզուսպ բարի ձգտումներ
Ուռել են, փռուել իբրև մի Եփրատ՝
Ինձ մի տուր դեռ մահ, ո՛վ Տէր բարերար,
Մինչև ես նոցա չ՛ածեմ ՚ի կատար:

Այլ երբ կը հասնեմ ես խոր ծերութիւն,
Եւ ինձ կը տանջեն տառապանք և քուն,
Երբ իմ բարեւաւ ըղձեր, նպատակ
Գլխիս կը կապեն գովութեան պսակ՝

Յայնժամ, Տէր անմահ,

Ապա տուր ինձ մահ:

Սահակ վ. Ամատունի.

101.

Աղէն տանն է.

— Զարմանք բան է՝ հէնց գիտենաս
Աղէք տանը չին նստում.

Իսկի չէլաւ, վուր մի գըթնիմ

Աղալօին իր տընում:—

— Մի արմընա, պարոն Սարգիս,
էս աշխարքի ադաթին.

Իշխանք, գանա, դու խաբար չի՛ս,

Վուր քասիբին կու ատին:

Ա՛ռ օրինակ՝ թէ մեծավուր,

Ապալետնիրը ուսին,

Գալ դըրան մօտ, հարցնէ աղին,

«Տանն է». — տանն է, կօսին:

Նըրա էգնից մի փէշաքար,

Էլի էն նօքրին հարցնէ.

«Տանն է աղէն». կընծին տալով

Խեղճին իսկոյն դուս կօնէ:

Թէ աղի մօտ լաւ շուրերով

Կուգաս՝ տանը կու գըթնիս.

Վայ թէ չուխէդ հնացած է,

Լաւն էն է, տունն չի մըտնիս:

Թէ սսլօպով աղջիկ պարոն

Կուգայ՝ թող ներս հրամայէ,

Թէ ղաթիպով պառաւ Զալօն

Հարցնէ՝ կօսին տանը չէ:

Թէ վուր ձեռիդ քիսա բըռնած,

Պարոնին փուղ բերիլ իս,

Փառք ու պատուով ներս մըտնում իս,
Գլխի վըրայ տիղ ունիս:

Թէ դուքանդար իս, հիսաբով

Փուղի էգնից իս էկի,

«Տանն է աղէն». կօսին— հալա

Ժամիցը տունն չի էկի:—

Էս է հիմիկուայ ադաթը—

Կուգիս ջիգրից տըռաքի.

Թէ քասիբ իս, ջուրը նընկի,

Թէ խօջա իս՝ տոնն մըտի:

Ռ. Պատկանեան.

102.

Զարթիր, սիրտ իմ վշտահար,

Նոր առաւօտ քեզ ծագեաց,

Պարք մուգայից շուրջ գըլ

Պահեն զգահոյսդ յարհաւրաց:

Պանծա՛ դիւցազն մեծ արքայ փառօք,

ձեմս առեալ յերթս քո երգով,

Ո՛չ արև, ո՛չ լուսին, ո՛չ աստեղք, ո՛չ երկին

Հասանին քոյդ փառաց, յաւերժացիր:

Ուրախութեան օր է այս.

Բերկրեալ սրտից դեռահաս.

Պարք մուգայից շուրջ գըլ

Պահեն զգահոյսդ յարհաւրաց:

103.

Ա ռ Յ ի ս ու ս .

Ջձայն մանկանցս, ով Տէր Յիսուս,
 Լճւր, որոց դու միայն ես յոյս.
 Է՛ջ զերդ ի սուրբ քո ի սեղան,
 Եւ ի սրտից մեր բազմարան.
 Քեզ ծարաւեալ ոգիք են մեր,
 Արբճ զմեզ անոյշ քո սէր:
 Լճւր մեզ, Յիսուս, լճւր զմեր ձայն.
 Դու զԱզգս օրհնեա՛ւ և զվարժարան:

Տես, Տէր, մտաց մեր զխաւար,
 Եւ ծագեա՛ն զլոյս քո հոգեվառ,
 Տես ի մեր սիրտ ախտից զհոյլ,
 Յառաքինի ի ջանս եմք թոյլ,
 Տճւր մեզ զշնորհ քոյին հօր,
 Զի մի ի կրից պատրիմք մօլոր:
 Լճւր մեզ, Յիսուս, լճւր զմեր ձայն,
 Դու զԱզգս օրհնեա՛ւ և զվարժարան:

104.

Զ ի ն ու ո ը ի ե ը գ .

(Թարգմանութիւն).

Զինուորիս երգերը, եղբ՛րք, լսեցէք,
 Աշխարհիս բաները լաւ ճանաչեցէք:

Մէկն ունի մեծ տներ, միւսն գիւղ ունի,
 Միայն խեղճ զինուորը ոչինչ բան չունի:

Շորերը թանգագին, փորը միշտ քաղցած,
 Տճւր ձիուն միշտ դարի, ինքդ կեր չոր հաց:

Թէ քաջ պատերազմես՝ կ'տան մեծ պարգև,
 Թէ ոտքդ կորցնես՝ կ'ասեն մնաս բարև:

Ո՛ւր գնամ ես մենակ աշխարհքիս վրան,
 Ահա՛ քեզ լաւ վաստակ քսան մէկ տարուան:

Գ. Դողոխեանց.

105.

Զ ա ն գ ի .

Զանգին կուգայ, Զանգին եկաւ զընդալով, զնգալով,
 Բաղ ու բաղչի միջէն կուգայ՝ հանգ առնելով, մանգալով,
 Ալագեազի սարէն կուգայ փրփրալով, սօթ տալով,
 Սրտիս խորքէն ելել կուգայ վռազ վռազ զնգալով...

Էս ի՞նչ տեսակ ցաւ կայ սիրտս, անտուն դարիպ եմ դարձել,
 Հալա՛լ Զանգի, տուն տեղ թողած՝ քեզ հետ ընկեր եմ դարձել,
 Անգին մօրս մենակ թողած՝ ժէռիդ ծոցին եմ կպել,
 Սիրտս մուրատ, սիրտս կարօտ մի անբուն հաւք եմ դարձել...

Փուս ու դուման կելնի սարէն. վայ, վայ, չ'լինի ձիւն եկաւ,
 Դաշտ ու դուրան, ճար ու ճամբայ չ'լինի՝ իրան տակ առաւ.
 Զանգի, Զանգի, մատաղ ձէնիդ, մեր սարից մի ծաղիկ բեր,
 Անգին մօրս արտըսունքը, — անգին մօրէս խաբ՛ւր բեր. —

Քուրիկներիս, ընկերներիս սրտի սէրը պոկէ բեր,
 Վառուած սրտիս, կարօտ սրտիս, ախ, Զանգի ջան, մի դեղ բեր,
 Ժողովրդեան երգն ու մրմունջ, վիշտն ու տրտունջ շո՛ւտինձբեր,
 Զրիդ ձէնին, ջրիդ երգին մատաղ ըլիմ, Զանգի ջան...

Դումանն առաւ սարի չորս գին. դումանն առաւ իմ սրտիս,
 Զանգին կուգայ Ալագեազէն զընդալով, զնգալով,

Սրտիս ցաւին դարման չըկայ, խապար չըկայ իմ երկրէն...
Ես հնց մնամ անհայրենիք, ես հնց մնամ անընկեր...

Յովհաննէս Կոստանեանց.

106.

Շ ու շ ա ն ի կ.

Է՛ր հեռանաս քո մայրենի աշխարհից,
Կարօտ թողուս սերտ բարեկամք քեզանից.
Մեր ամենիս դու մայր էիր գթառատ,
Արդ հեռանաս, մեզ մութ պատէ անփարատ:

Քո սուրբ ձեռք մեր վերքերը շատ անգամ
Լուանայիր, դեղ դնէիր ամէն ժամ.
Քո մազերից ոլորէիր վերակապ,
Քո բոլոր կեանքն ազգիդ համար էր ազապ:

Արդ Հայոց զօրքն իւրեանց մօրից որբանայ,
Վրաց ազգը քո խնամօք պերճանայ.
Հայաստանը զրկի իւր սուրբ Շուշանից,
Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից:

Ուր որ երթաս, ուր որ լինիս, տիրուհի,
Մեր սիրտ, հոգին քեզ հետ տանիս, մաքրուհի,
Գնաս բարեաւ, մեր լոյս հաւատ քեզ ընկեր.
Աջն ու խաչը քեզ պահապան զօր գիշեր:

Յ. Կարինեանց.

107.

Ն ա լ ա վ ա ը.

— Է՛յ, նաւավոր, ի՞նչ ես անում,
Ո՛ւր ես նստում դու նաւակ.

Սև ամպեր են, տէս, բարձրանում,
Դէպի երկինք կապուտակ:

Հորիզոնն էլ մութով պատած,
Հեռվում ամպն է որոտում.
Նայիր, ծովն էլ կամաց-կամաց
Պարզ երեսն է կնճռոտում...

— Է՛հ, աղա՛ ջան, դարդ մի արա,
Ծովափին եմ ես ծնուել.
Մեծացել եմ ծովի վերայ,
Ծովի ջրով միշտ սնուել:

Մանուկ օրից շատ եմ տեսել
Ե՛ւ փոթորիկ, և՛ աղէտ.
Ծովն է ինձ միշտ օրօր ասել.
Նոր չեմ ծանօթ ծովի հետ:

Հայր ունէի—ծովում կորաւ,
Որսի ելած մութ գիշեր.
Նորան ալիք լափեց, կերաւ.
Նա ձկնորս էր անվեհեր:

Ծովում կորցրի երկու եղբայր,
Նաւավարներ ինձ նրման.
Որ իմացայ—երկինք, աշխարհ,
Ասես, գլխիս փռւ եկան...

Է՛հ, աղա՛ ջան, դարդ մի անիլ,
Թէ ծովն ինձ էլ կուլ կը տայ.
«Կուժն ամեն օր ջուր չի բերիլ»...
Ամեն բանի վերջը կայ...

Կեանքը լաւ է... բայց ի՞նչ արած...
Համ էլ մահից ի՞նչ փախչեմ...
Ծովն է տալիս մեզ կեանք ու հաց,
Ծովի տակ էլ կը հանգչեմ...

Ասաց, շարժեց նա թիակներ,
Եւ, բարձրաձայն երգելով,
Քաջ սլացաւ ծովի խորքեր,
Սև ալիքներ ճեղքելով:

Ալեքսանդր Մատուրեան.

108.

Ուրախ երգ.

Ե՛հ, եղբայրներ շատ վշտացանք,
Բաւական է, բաւական.

Այսպէս հօ շուտ կը ծերանանք—
Ո՞վ է ապրում մեզ նման:

Հերիք, որքան արցունք թափուեց
Մեր վշտալի աչերից,
Հերիք, որքան յուսով խաբուեց
Մեր խեղճ հոգին դառնալից:—

Մեր երգերը լեղի դարձրինք,
Մեր սրտերը—սգատուն.
Միայն ցաւ ու վիշտ երգեցինք,
Ուրախ և ո՛չ մի հնչիւն:

Ո՛չ, մեր ողբով դարման չ'արինք
Տանջուող եղբօր ցաւերին,
Մեր գանգատով կեանք չը բերինք
Ցաւում հեծող աշխարհին:

Ե՛հ, ի՛նչ մնաց... թողնենք, թողնենք
Վայն ու սուգը մահաբեր,
Ուրախ տաղեր արիք երգենք,
Սիրոյ ժամեր, վառ գիշեր:

Գուցէ մի ժամ, գէթ մի վայրկեան
Վիշտ ու շղթայ մոռանանք,
Մեր հոգու մէջ լուռ-մունջ մնան
Խոհեր, ձգտում, դաւանանք:

Արշակ Աթայեանց.

109.

* * *

Ե՛յ, կանանչ ախպէր, դուն բարո՞վ եկար.
Դուն բարո՞վ եկար, իմ կանանչ ախպէր: (*)

Մով-մանուշակով ծաղկուն սարերէն
Արտուտն ու արօս ինձի ձէն տուին.
Ու գարնան անուշ արև ոսկեղէն
Ինձի ձէն տուին՝ սար ու ձոր ելնեմ:
—Երանի՛կ ձեզի, սարե՛ր ու ձորե՛ր,
Նշխուն հագերէք գարնան զուքսերով.
Ա՛խ, սիրտս մեռաւ ծով-դարգերի մէջ,
Գարնան զուքսերին մնաց կարօտով:
Ա՛խ, սարե՛ր, ձորե՛ր, դո՛ւք առաջուանն էք,
Բլբուլ ու բաղե՛ր, դո՛ւք առաջուանն էք.
Ա՛խ, մենակ ես եմ փոխուեր ու չորցեր,
Բլբուլ ու վարդե՛ր, դուք առաջուանն էք:
Ա՛խ, ես եմ փոխուեր ու աշխարհի մէջ
Ղարիբ ու հիւանդ ճամբորդ եմ դառեր.
Ճամբես մոլորեր, կերթամ փշի մէջ,
Սարե՛ր ու ձորե՛ր, դուք առաջուանն էք:

*) Մեր ժողովուրդը գարնան գալը «բարո՞վ եկար, կանանչ ախպէր» ասելով է ողջունում, իսկ ձմրան գալը, «բարո՞վ եկար, ճերմակ ախպէր»:

Կեանքիս աղբուրը մարդիք քամեցին,
 Իմ փայ—աշխարհը դարձրին մութ զնդան,
 Ա՛խ, սիրտս ու հոգիս հալ ու մաշ արին.
 Ու ծաղիկ-կեանքիս փորին գերեզման:
 Կ'երթամ փշի մէջ, գերեզման կերթամ՝
 Աշխարհից կարօտ ու սիրուց կարօտ.
 Ա՛խ, տանեմ սիրտս, տանեմ գերեզման.—
 Աշխարհից կարօտ ու սիրուց կարօտ
 Ազիզ մեռելս տանեմ հողին տամ...

Է՛յ կանանչ ախպէր, կուգաս գալ տարի,
 Ու գերեզմանս մամուլ կը զուքես.
 Իմ կանանչ ախպէր, գալդ միշտ բարի,
 Խեղճ գերեզմանս մտքէդ չը քցես...

Աւ. Իսահակեան.

110.

Ի ք ա ջ ն Վ ա ր դ ա ն .

«Ընդ ամենայն երկիր ել բարբառ նորա և
 մինչև ի ծագս աշխարհի են խօսք նորա»:

Սաղմոս.

Թէ որ ամպերէն ուրախ, համարձակ
 Գան գլուխ հանեն սուրբ Մեսրոպ, Սահակ,
 Եւ հարցնեն ինձնից, թէ ո՞վ է Վարդան,
 Որին ո՞չ երկրում, ոչ վերև տեսան.
 Ես էլ ձայն կըտամ բոլոր աշխարհին,—
 Վարդան երբ ծնաւ, նոքա մօտն էին:

Թէ թուղթ և մատեան ձեր առաջ հանեն
 Անոնգեան սուրբ հարք տաճարաց բեմէն,

Եւ հարցնեն ձեզնից, թէ ո՞վ է Վարդան,
 Որ իւր Վարդ անուն՝ փոխել է Վարդան.
 Դուք էլ ձայն տուէք բոլոր հայերին,—
 Վարդանիս անուն նոքա կրնքեցին:

Թէ որ Վարդանիս նազելի մայր, տատ
 Այսպէս խեղճ սրբից խօսեն անընդհատ,
 Թէ ո՞վ էր այն քաջ, սէգ, գեղադիտակ,
 Որին չըտուին ոչ կաթ, ոչ խըրատ.
 Ես էլ ձայն կըտամ բոլոր աշխարհին,—
 Վարդան մեծացաւ հէնց նոցա ձեռքին:

Թէ ձեր տանեաց շուրջ բոլորին ծիծառք,
 Ու երգուեն ձեզ թէ, իրենց նախահարք
 Ամեն ծածքի տակ դրին բոյն, դարան,
 Միայն Վարդանի տանիք շուռն չ'առան.
 Դուք էլ ձայն տուէք բոլոր հայերին,—
 Վարդանիս բերան նոքա երգ դրին:

Թէ Աւարայրից Արսէն և Արտակ
 Հայոց գընդերից բերեն ինձ նամակ,
 Որի մէջ երգուեն, թէ Հայոց քաջին
 Չեն ծանօթ բընաւ հայ զօր, զօրավարք.
 Ես էլ ձայն կըտամ բոլոր աշխարհին,—
 Վարդանիս ընկերք այդ քաջերն էին:

Թէ դարիւ դարիւ Եդեսի գետեր
 Գան մըռմըռալով ծեծեն ձեր կողեր,
 Եւ հարցնեն ձեզնից, թէ ո՞վ էր Վարդան,
 Որից Եդեսին բարև չըտարան.
 Դուք էլ ձայն տուէք բոլոր հայերին,—
 Վարդան թէ ապրեց՝ նոքա ջուր տուին:

Թէ որ վանքերից ձայն տան անդադար
 Անոյշն Եղիշէ ու ճարտարն Ղազար,

Եւ հարցնեն ինձնից, թէ ո՞վ է Վարդան,
Որին չըտեսած՝ հոգեվարք եղան.
Ես էլ ձայն կըտամ բոլոր աշխարհին.—
Սէր մեր Քաջի հետ իրենք կապեցին:

Թէ որ ձեր հանդէպ գլխով ալեւոր
Մեր սեպուհ սարեր կանգնեն գլխակոր,
Ու այս ձեռքս, որ իրենց ծնկան
Երբէք չէ ննջել իմ անոյշ Վարդան.
Դուք էլ ձայն տուէք բոլոր հայերին,—
Վարդան զօրացաւ նոցա թուերին:

Թէ որ Արտազից տխուր ու տրտում
Դէպ ինձ դարձ առնեն շուշան ու քրքում,
Եւ ասեն այսպէս, թէ ինչո՞ւ Վարդան
Հետ հայոց քաջաց չ'ելաւ Շաւարշան.
Ես էլ ձայն կըտամ բոլոր աշխարհին,—
Վարդան նոցա ծոց տուեց իւր հոգին:

Բայց թէ մեր տիկնայք հայոց աշխարհին
Յառնեն համբաւեն, որ քաջ Վարդանին
Ոչ մարտի կրկէս, ոչ ի մէջ քաջաց
Տեսան խաչ ձեռին մահաշունչ ընկած,
Դուք էլ ձայն տուէք բոլոր հայերին,—
Վարդան երբ մեռաւ՝ նոքա գոյժ բերին
Հայոց աշխարհին:

Հայոց աշխարհին, որ միայն Վարդան
Իւր հետ հեծեծանք քաջեց անբաժան.
Հայոց աշխարհին, որ միայն Վարդան
Տաք արիւն թափեց նորա փրկութեան.
Հայոց աշխարհին, որ միայն Վարդան
Իւր ժանտ թշնամիք դըրեց գերեզման.
Հայոց աշխարհին, որ միայն Վարդան՝

Իւր մաքուր ժամեր, իւր լեզու, հաւատ
Տուեց մեզ խրատ, պահել անարատ:

Իսկ թէ հայ Մուսայք տաղերով պնդեն՝
Երկինք երկիր էլ վկայ մէջ բերեն,
Որ հայոց սըրտի սեղանի վերայ
Երբէք չէ տօնուել անուն Վարդանայ.
Որ ճշմարիտ հայ՝ չէ եղել Վարդան,
Եւ ոչ էլ հայոց եղել է պաշտպան.
Ես էլ ձայն կըտամ բոլոր աշխարհին,—
Որ այդ անձ արբշիւ, այդ անձ անօրէն
Չէ եղել Վարդան, այլ Վասակ Սիւնին:

Մահակ վ. Ամասունի.

111.

Երգ Ուսանողաց.

Թուէնք դէպի լոյս, գիտութիւն՝
Ազատութեան մենք դրօշակով.
Թուէնք, այո՛, դէպ մարդկութիւն՝
Սէր, միութեան քնքոյշ սրտով:

Трай-рай ли-ламъ, мои друзья!
Սէր, միութիւնն է մեզ ընծայ:

Սիրենք, ընկերք, կրօն, ազգութիւն,
Որ նմանինք «Ոսկի» դարուն,
Պատճառ, տուեց ազատութիւն
Մեզ Վեհ Կայսրն և ամենուն:

Трай-рай ли-ламъ, мои друзья!
Դիտութիւնն է մեզ միշտ ընծայ:

Կեցցեն հայոց վարժարաններ,
Որք տալիս են մեզ կրթութիւն.

Կեցցե՛ն նոցա հոգատարներ
Եւ իմաստուն պեղազոգներ:

Трай-рай ли-ламъ, мои друзья!
Հայոց աշխարհն է մեզ ընծայ:

Ա. Գրիգորեանց.

112.

Հ ա յ Ր ե ն ի ք.

Թէ իմս Հայրենեաց քնար սգաւոր
Հեծէ տխրագին՝ իմ հոգիս է այն.
Թէ նորա բեկբեկ թելեր վշտաւոր
Խօսի ողբաձայն՝ իմ սրտիկս է այն:

Թէ Հայ մուսային սրտառուչ նուազ
Դեռ կ'եղերերգէ՝ հառաչանքս է այն.
Թէ Հայաստանի սև բաղդին հագագ
Հայ աղեկտուր՝ հեծեծանքս է այն:

Թէ իմս Հայրենեաց կիսամեռիկ շունչ
Դեռ լսի տխուր՝ իմ ողբերս է այն.
Թէ լռիկ մնջիկ հեծէ անշըշունչ,
Ո՛հ, անկարեկիր իմ լալիքս է այն:

Եւ Հայկայ փառաց յօժար ողբերգուն
Հարազատ լացողն իմ ձայնիկս է այն.
Չորս հազար տարուան պարծանաց դարուն
Արձագանգ տուողն՝ աղաղակս է այն:

Իմ Հայաստանիս ցաւերուն հատոր
Ահա այս մաշած իմ կուրծքս է այն.
Սև սև թերթերուն էջ՝ սրտակոտոր
Արտասուօք գրուած՝ իմ աղիքս է այն:

Թէ բանաս կարգաս արիւնոտ դաշտեր
Վարդագոյն ներկուած՝ իմ կողերս է այն.
Թ'աչքէ անցընես շամփրած նիզակներ
Մահահոտ ցցուած՝ իմ թիկունքս է այն:

Թէ Հայկ և Արամ, Վարդան, Վահաններ
Ինկած տեսանես՝ իմ ուժըս է այն.
Թէ զէնք, թէ զրահ, թէ սուր, թէ սուսեր
Փշրած կոտորած՝ ոսկորներս է այն:

Թէ արեամբ ներկեն ակունք եղեմին
Նշխար քաջերուն՝ իմ բիւրս է այն.
Թէ քաղցր ու ամբիժ ալիք եփրատին
Լեղի են դարձեր՝ արտասուքս է այն:

Թէ վճիտ գետերն, աղբերքն արծաթի
Լալիք առուակեն՝ երսկներս է այն.
Թէ Տիգրիս, Գեհուկն, Փխոն մօնչեն՝
Թէ պղտոր գնան՝ իմ արիւնս է այն:

Թէ սառնամանիք ձմրան բքբեր
Լեռներն է պստեր, իմ գագաթս է այն.
Եւ քաղցրիկ զեփիւռն անուշակ հովեր
Ցրտագին փչեն, իմ շնչիկս է այն:

Թէ վտակ վտակ ցօղէ գլխշատակ
Չայս տրտմավաստակ, աչքերըս է այն.
Թէ սրտաձայնիկ երգէ զՀայաստան,
Կանչէ զՀայաստան՝ անկեղծ սէրս է այն:

Թէ մթին խորշերն ու ձորեր լռեն,
Սևերով ծածկին՝ մենաստանս է այն.
Թէ ողբ կը կարդան վայրերն եղեմին,
ձնշած լերդերուս արձագանգն է այն:

Եւ Հայաստանիս հողերը ուխտիւ
Պինդ սիրով գրկողն՝ իմ ձեռքերս է այն.

Թէ կը համբուրեն կաթողին խնդիւ՝
Ո՛հ, մայրակարօտ շրթունքներս է այն:

Եւ Հայոց լեռանց ցուրտ շուքերուն տակ
Ընկած ապարադէ՛ իմ ճակատս է այն.
Մասեաց սուրբ քարերն իւր բարձն ու պսակ
Դրած սգաւոր՝ գլուխիկս է այն:

Եւ կիսակործան տաճարն հայրենի
Սե սուգ է պատեր՝ տաղաւարս է այն.
Ուր շիջելավառ կանթեղ դեռ հիւծէ
Նուաղ առ նուաղ՝ իմ լոյսըս է այն:

Ուր տխուր նստեր, մաղերն են ծածկեր
Իւր սեռիկ աչքեր՝ սիրականս է այն.
Ձեռքերն ի ճակատ, կռնակն ի հողեր,
Յուսով կռթռներ՝ Հայաստանս է այն.
— Գերեզմանս է այն:

Ուր երբ տեսնեմ զիմ հէգն Հայաստան
Ի մէջ իւր փառաց՝ իմ բաղձանքս է այն,
Յայնժամ թող մեռնիմ յիւր ծոց մայրական,
Զիմ վերջին շնչոյս միակ ուխտս է այն:

Սիմոն Հայկ Մ. Յէլէկեան.

113.

Թէ ծխաքարը ձեռիս
Սենեակումըս նստած եմ,
Քընթիցս ծուխ հանելիս,
Կարծում եմ թէ իշխան եմ:

Երբ քամին ծուխըս փչի,
Ես պինդ ծիծաղում եմ,
Ասում եմ՝ մեր գործերը
Էսպէս անցաւոր են:

Ազնիւ խոտ, դու զօրութիւն,
Կեանք ու ուժ ես ինձ տալի.
Ա՛խ, կարնայի քեզ գովել,
Ինչքան սիրտըս է տալի:

Ո՛վ երկինք, տո՛ւր էս խոտին
Դու արեւ, և անձրեւ շատ,
Եւ սորա մշակողին
Օրհնութիւն, կեանք ու բաղդ:

Մենակութեան ժամանակ
Դու ինձ լաւ ընկեր ես,
Թէ իմ սիրտս նեղանայ՝
Քեզ կ'առնեմ ես ձեռքս:

Թանկ ես, թո՛ւրքի ծխախոտ,
Հարուստներու բան ես,
Հոգիս էլ տամ՝ քեզ կ'առնեմ
Ու կ'ածեմ զըրպանըս:

Ինչքան էլ դատարկ լինի
Փողերիս քըսակը,
Պէտք է անպակաս լինի
Բերնիս ծըխաքարըս:

Ո՛ւսանող, ա՛ռ ծըխաքարըդ,
Շուտ կ'անցնի քու կեանքը,
Ու ծխելով միտք արա,
Ունայն է աշխարհը:

Ք. Տ.-Պ. Պատկանեան.

114.

Վանեցոս ամենօրեայ երգը.

(Բերլինի դաշնադրութեան 61-րդ յօդուածից յետոյ).

Թուրքը հասաւ... Ելեմ-էրթամ
Եղնուկներս հաւաքեմ,
Տանեմ անոր անկուշտ աչքից
Մի խալուած տեղ պինդ պահեմ:

Տասը-քրսան ջուխտ եղներից
Մնացեր է երկու հատ.
Անոնց ալ, հա, շուտ իմ ձեռնից
Կ'առնու Քիւրդը անհաւատ:

Հերու կըրակ տուեց-վառեց
Տուն ու տեղըս-տեղերըս.
Մալ ու միւլքըս բիւթիւն խըլեց,
Տարաւ կոյս աղջիկներըս:

Արսէնիս ալ (ախ, պալա-ջան)
Անօրէնը ըսպանեց,
Հարեանիս մենձ աղջրկան
Աչքն ճամպոււմ նա թողեց...

Հօ-հօ-հօ, շոտ արէք, եղներ,
Հեռանանք, կորչենք սա տեղէն.
Հըրէն Թուրքը... Հըրէն Քըրդեր
Կըգան ուղիղ մեր վըրէն...

Ձէ, եղնուկներ... Հոս կայնեցէք.
Թո՛ղ ձեզ տանի Օսմանլին.
Ասկէ ետեւ ալ ո՛ւմ համար
Պիտի վարէք դուք գետին.

Խեղճ Արսէնիս, աղջիկներո՛ւս,
Թէ տանըս չորս պատերուն,
Անոնք մեռան, տունըս այրուեց,
Ղազաբի գայ Օսմանլուն.

Բարբա՛դ ըլլա թուրքի տունը,
Թախտը ջարդուի Սուլթանի,
Բալքա հայու մարած աստղը
Գէնայ վաղուան պէս փայլի...

— Հայու Աստուած, անգո՛ւթ Աստուած,
Ալ ո՛ր ատեն պիտ' լըսես
Մեր աղօթքը, մեր ողբ ու լաց,
Մեր աղաղակ աղէկէզ...

Սիմէօն Սափարեանց.

115.

Յ ո յ ս.

Թո՛ղ փրչէ քամին պաղ պաղ երեսիս,
Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թո՛ղ գայ,
Ո՛րքան որ կուզէ՝ թո՛ղ կատղի հիւսիս,
Յուսով եմ, վաղ-ուշ գարունը պիտ գայ:

Թուխպը թո՛ղ պատէ երկինքը պայծառ,
Թանձըր մառախուղ երկիր թո՛ղ փակէ,
Տարերք աշխարհիս խառնուին իրար,
Յուսով եմ, վաղ-ուշ արեւ պիտ ծագէ:

Գամառ - Բաթիպա.

116.

Տաղ ի դիմաց իւրաքանչիւր Հայկազնուոյ
առ Հայաստան.

«Ա՛ռ զամբիւղ» երգի եղանակով.

Թշուճու Հայաստան, տունն ատելութեան,
Փութակ բժշկել ըզվէրք քո բնութեան,
Քանզի ցաւն այն չունի դեղ ու ճար,
Որ գաղտ հասանի վերին ուժգնութեան:
Ո՛հ, ո՛ւր ես, ո՛հ, ո՛ւր ես, ո՛հ, ո՛ւր ես,
Աննման Ներսէս: (*)

Ի սէր քո կրեաց բազում աշխատանք,
Ետես շատ լաւ օր և շատ անարգանք,
Որդիքը, իբրև Կայէն ոխացեալ՝
Հասուցին նմա վիշտ և ստգտանք:
Ո՛հ, ո՛ւր ես և այլն:

*) Հանգուցեալ երջանկայիշատակ Ներսէս հինգերորդ հայկական
Կաթողիկոսը ծնուած է 1770 թ. մայիսի 1-ին, Աշտարակ գիւղում:
Ներսէսը, որի մկրտութեան անունն էր Թորոս, որ իւր պապի անունն
է, 7 տարեկան հասակից սկսած՝ սովորում է Ս. Էջմիածնի ժառանգ-
գաւորաց Դպրոցում 13 տարի, և 20 ամաց հասակում աւագ սարկա-
ւագ ձեռնադրվում իւր կնքահայր Գալուստ արքեպիսկոպոսից, Ներ-
սէս վերակոչուելով և ապա—քանի մի տարուց յետոյ—վարդապետ:
Ներսէսի գործունէութիւններին նայելով, իբրև հոգևոր անձն, նա միան-
գամայն արժանաւոր էր իւր վեհ կոչման մէջ, իբրև դաստիարակիչ,
իբրև քարոզիչ և իբրև բարեկարգիչ առաջնորդ: Իսկ տեղը եկած ժա-
մանակ, նա համ քաջ զօրապետ էր, համ էլ հեռատես քաղաքագետ:
Այսպէս,—օրինակի համար,—երբ 1826 թուին սլաւոնիները մեծ բազ-
մութեամբ յարձակվում են Ռուսական Հայաստանի վերայ և հետզհե-
տէ գրաւում Շուշի, Գանձակ, Շամախի և այլ քաղաքներ, մեծամեծ
միասններ պատճառելով Ներսէսը, որ այն ժամանակ եպիսկոպոս էր և

Վատ արարք նոցա էին անսահման,
Ձեռ Յուդայ նմա եղեն դաւաճան,
Ապերախտութիւն նոցին յայտնապէս
Իջոյց զնա ի մութն գերեզման:
Ո՛հ, ո՛ւր ես և այլն:

Կորուսիր գահըդ, կորուսիր թագըդ,
Խաւարեցաւ քո լոյս արեգակըդ,
Այնպիսի որդի՝ էլ չես գտանել,
Որ նա ուղղէ քո վատ վիճակըդ:
Ո՛հ, ո՛ւր ես և այլն:

Նա էր միմիայն որդիդ պարգերես,
Յոյս չ'կայ մէկն էլ ծնանի այնպէս.
Դարք և ժամանակք շատ կըլրանան՝
Որ հառաջանօք կ'ասես. «Ո՛հ, Ներսէս»:
Ո՛հ, ո՛ւր ես և այլն:

Թո՛ղ, որ իմ վկայս լինի Սէյեադը,
Քրիստոնէական կրօնին հաստատը,
Որ ըստ փրկչական անսուտ հրամանի՝
Լաւն անցել է, մնացել է վատը:
Ո՛հ, ո՛ւր ես և այլն:

Պետրոս Մաղանեան.

առաջնորդ Թիֆլիսի վիճակին, հայ քաջերի մի խումբ կազմելով և ին-
քըն էլ նոցա պարագլուխ հանգիստանալով՝ դուրս է գալիս պարսից դէմ
և ոչնչացնում նոցա արշաւանքը: Երբ, 1843 թուին, Յովհաննէս Կաթո-
ղիկոսը վախճանվում է, Ներսէսը, ազգի միաձայն հաւանութեամբ,
արժանանում է Կաթողիկոսական Գահին, և իւր գեղեցիկ և՛ ընտիր և՛
ազգօգուտ գործերով յաւերժացնում իւր անունը, 14 տարի հայ եկե-
ղեցու և ազգի բարօրութեան և լուսաւորութեան համար հողալով և աշ-
խատելով: Սորա Հայրապետութիւնը, իւր ժամանակ, «Ոսկեղէն Դար»
կարելի էր համարել հայերի համար, բայց ի՞նչ անես, 1857 թուի փե-
տրվարի 13-ին կնքում է իւր բազմարդիւն կեանքը, սուգի մէջ թող-
նելով Հայոց ազգը:

Գ. Ա. Բ. Գրիգորեանց.

117.

Զ ի ն ու ո Ր ի ե Ր Գ.

Թուրի իմ նժուգ, սըլացիւր շուտով,
Տա՛ր ինձ ցանկալի կռուի փոթորիկ,
Կըռուի մէջ միայն ես արեան գընով
Կը փրկեմ իմ խեղճ, ստրուկ հայրենիք:

Տա՛ր ինձ այն աշխարհ—անցեալում հըզօր,
Պանծալի վայրը իմ քաջ պապերի,
Ուր, աւանդ, դժբախտ եղբայրս այսօր
Իւր կեանքն է ողբում՝ օտարին գերի...

Անցան շատ դարեր, անցան շատ տարիք,
Ազգըս շատ ապրեց քաղցրիկ յոյսերով.
Բայց նորան երբէք չըժպտաց երկինք,
Զրտեսաւ նա կեանք խաղաղ, անվրդով:

Միշտ լուռ ու խոնարհ անողորմ բախտին,
Երկար սպասեց նա կեանքի դարնան.
Բայց նորա առջև ոսոխ թշնամին
Իւր սրով փորեց կեանքի գերեզման...

Դէ՛հ, թուր, նժուգ, սըլացիւր շուտով,
Տա՛ր ինձ ցանկալի մարտի փոթորիկ,
Մարտումն է զինուորն իւր արեան գնով
Ազգին պարգևում յաղթութեան դափնիք:

Ալեքսանդր Մատուրեան.

118.

«Ո՞վ այսուհետեւ զմերս յարգեսցէ զուսումն, հիվ
ուրախացի ընդ յառաջադիմումին աշակերտիս».

Մով. Խոր. գ. կը.

Թէ՛ գիւղ, թէ՛ քաղաք, աւան ամայի
Բացինք դպրոցներ ամենայն տարի.
Ե՛ւ թուղթ, և՛ մելան, գրիչ և գրքեր
Տուինք հայ աղջկայ և տղի ձեռքեր.
Մինչ դպրոցասէր մենք չունինք մարդիք՝
Ո՞վ պիտի յարգէ մեր վաստակ և ճիգ:

Մեր գլուխ, մեր անձ տուինք քարէ քար,
Մտանք հանճարեղ իմաստնոց կաճառ,
Սովրեցանք պէս պէս լեզու և ուսում,
Որպէս զի պէտք գանք հայ դպրոցներում.
Երբ մեր արժանիք ճանաչող չունինք՝
Ո՞վ պիտի յարգէ մեր ուսման բարիք:

Ամեն օր կանուխ դպրոց անդադար
Դիմում ենք կրթել մեր միտք և հանճար,
Որպէս զի երբեմն մեզնով անսասան
Ծաղկէ ու ծլէ բոլոր Հայաստան.
Երբ մեզ քաջալեր չունինք մարդ ընտիր՝
Ո՞վ պիտի յարգէ մեր ուսում և գիր:

Արեւելք, Հիւսիս, արեմուտք, հարաւ,
Ուր որ տարաբաղդ Հայը ոտք դրաւ,
Իբրեւ առաջնորդ նորա կոյր կեանքի,
Շնչել ենք իւր մէջ ազնիւ սիրտ, հոգի.
Մինչդեռ անտարբեր են մեր ժողովուրդ՝
Ո՞վ պիտի յարգէ մեր խօսք և խորհուրդ:

Աշխարհիս վայելք առ ոտն կոխած,
Ամեն տառապանք աչքի տակ առած,
Գրում ենք, տպում պիտանի, ընտիր
Քարտեզներ, մատեանք ու շատ լրագիր.
Մինչ ընթերցասէր մենք չունինք մարդիք՝
Ո՛վ պիտի յարգէ մեր տաղանդ ու ձիրք:

Ելանք, շրջեցինք ամբողջ Հայաստան,
Գծեցինք նորա աւերք ցիր ու ցան,
Գծեցինք նորա բարձրաբերձ լեռինք,
Ծառ ու ծով, ծաղիկ և չքնաղ երկինք.
Մինչ Հայրենասէր մենք չունինք մարդիք՝
Ո՛վ պիտի յարգէ մեր վաստակ ու ճիգ:

Ամուլ եզներով դաշտեր չոր, խոպան
Ընդ միշտ հերկում ենք, ցանում ցանք ու ցան.
Գինեբեր այգիք, պարտեզք մրգաբեր
Դարձեալ մեր ձեռքով են ծաղկել, աճել.
Մինչ գնահատող մենք չունինք մարդիք՝
Ո՛վ պիտի յարգէ մեր բերք, արմտիք:

Տապար, խոփ, մանգաղ, հատու սուր ու զէնք
Քաջ կռել, կոփել ամենքս գիտենք.
Գիտենք նրբաթել և հիւսել կտաւ,
Կամ կարել ազնիւ հանդերձ և հալաւ.
Բայց ո՞վ մինչ ցայսօր ելաւ ի հանդէս
Եւ գովեց, յարգեց մեր արհեստ և մեզ:

Ո՛վ ժիր, գործունեայ Հայ ազգի մշակք,
Դուք մի գանգատիք, թէ ձեր ջան-վաստակ
Չ'յարգեց, գովեց աշխարհի առաջ
Ո՛չ տէր, ո՛չ ծառայ և ո՛չ իշխան քաջ.
Ձեր ճգանց փոխան՝ այդ պատիւ, յարգանք
Մարդիք ձեզ կ'տան ճիշտ այն ժամանակ,
Երբ դուք ձեր վսեմ լեզուով հայախօս,

Ուսմամբ, արհեստով տիրէք մինչ Տօրոս.
Երբ դուք Հայաստան չափէք ծայրէ ծայր,
Մարդիք նենգ, արդար կրթէք հաւասար.
Երբ դուք սրբութեամբ ձեր ամբիժ հաւատ
Մինչ ձեր վերջին շունչ կ'պահէք անխախտ.
Յայնժամ կ'թողնէք աշխարհում համբաւ,
Ինչպէս Մեսրոպըն էլ հէնց այդպէս արաւ
Ու այնպէս մեռաւ:

Սահակ վ. Ամատունի.

119.

Ա. Լ. Հայրիկն Խրիմեան.

Թո՛ղ բարձրացնեն ճռինչ, աղաղակ
Թութակ, կաջաղակ,
Միակ վայելուչ, միակ սրտառուչ
Երգիչն է Սոխակ:
Թո՛ղ վայեն բուեր, ագռաւներ անթիւ,
Հազար հաւ ու ճիւղ,
Ամենից մեծը, ամենից բարձրը—
Է ազատն Արծիւ:
Թո՛ղ տան՝ ո՛ւմ կուղեն՝ մանեակ, մատանիք,
Նշաններ, դափնիք,
Միակ արժանին, միակ սիրելին
Կը մնայ Հայրիկ:
Հայրիկ, ո՛հ, Հայրիկ, քո քաղցր անուան
Լինիմ ես դուրբան,
Սիրե՛մ այն հողը, որ ծնաւ քեզ պէս
Հրեշտակ պահապան:
Ո՛վ Տէր, պահպանիր Դու մեր Հայրիկին,
Քո հաւատարմին,

Անպակաս արա մեր գրվածքներից
Նրա հովանին:

Ղ. Սողոմոնյան.

120.

Ի մ Հ ա յ ե ղ ք օ Ր Ը .

Թէ միտք ունիս քո կոչումը մեծարել,
Քո մարդկային պարտքը սիրով կատարել,—
Ինչ գեղեցիկ, թէ քո չափով, հայ եղբայր,
Ջանաս ազնիւ գործքերով քեզ զարդարել:

Եւ որպէս մարդ ազնիւ, ամբիժ, պիտանի,
Դու մարդկութեան պիտի լինիս ընտանի.
Ընկած տեղը օգնես մարդին անխնայ,
Ինչ ազգութեան, ինչ կրօնի պատկանի:

Հարկաւ, գիտես, այս օրէնքը բնական.
«Սիրել մարդին», դա էր պատուէր Տիրական.
Բայց թէ թողնես քո ընտանին անխնամ՝
Չեմ անուանիլ քեզ մարդ խոհեմ, բանական:

Քո ընտանիդ—քո Հայ ազգն է, իմացիր,
Ամենից շուտ նորան օգնել մըտածիր,—
Որովհետեւ՝ նա քեզ ծնաւ, կեանք տուեց,
Դու էլ նորա պատիւը մի մոռացիր:

Ո՛չ թէ պատիւ, անգամ գոյքդ թանգագին,
Կորած չէ, թէ՛ դու նուիրես քո ազգին.
Հայրենիքիդ, Ազգիդ համար, թէ լինի,
Կեանքդ զոհիր, ինչպէս Վարդան, Գարեգին:

Ով և լինիս... թէկուզ ընտրեալ Ազգապետ,
Դպրից սկսեալ՝ մինչ գերընտիր Հայրապետ,—

Վաճառական, արհեստաւոր, երկրագործ,
Ազգիդ գործում պիտի լինիս կարապետ:

Ինչպէս Նէեմ Հայրենասէր, միաբան
Կը նորոգէր այն աւերակ Հրէաստան,—
Դո՛ւ էլ, եղբայր, դարձիր նոյնպէս մի Նէեմ,
Թո՛ղ քեզանով վերածնի մայր Հայաստան:

Յովհ. Բուշուրէզեանց.

121.

Դ ա շ ն ա կ Հ ա յ կ ա կ ա ն Թ ա տ Ր Ո Ն Ի, ո Ր Ի Խ ա ս գ Ի ւ Ղ .

Դամանակաց՝ անցից՝ վսեմ կրթարան
Եւ նոր դիպաց՝ նոր զգացմանց կարգադիր:
Ահա մեզ նոր՝ արդ կ'կանգնի տեսարան
Թէ կրթութեան՝ թէ հաճոյից արգադիր:
Հոս ձայն կուտանք մենք ծաղկաւից
Հայաստանի սուրբ դաշտերուն
Եւ կ'ցրուի սրտից թախիժ,
Երբ հայրենեաց յիշեմք զանուն:

Ո՛վ սուրբ Հայաստան,

Փառաց օթեան,

Որբ զաւկըներդ հոս

Քեզ պիտի ողբան:

Հոս երազ՝ անմահ

Քո նախնի փառաց

Մեզ պիտի վառէ

Ի սէր հայրենեաց:

Մայրիկ Հայաստան,

Փառաց գերեզման,

Որբ որդիքդ այրիդ

Հոս պիտի ողբան:

Կ'վերածնին հոս ոսկի դարք,
Հոս տեղ մտքեր կրնան սրուիլ.
Կ'շտկուին հոս անկիրթ բարք,
Հոս և ծիծաղ կրնայ գտուիլ:

Ո'վ սուրբ Հայաստան,

Քաջաց օթևան,

Հոսկէ որդիքդ հոն

Գիրկդ պիտի դան:

Հոս ոճ Հայ լեզուին

Նոր զարդ՝ ձև կառնու,

Կեանք անմեղ լ'երկինք

Կազդեն սրտերու:

Քաղցրիկ Հայաստան,

Մեր հարց օթևան,

Ծոցդ որդիքդ, որ դան՝

Է՞ր պիտի ողբան:

Գ. Գ. Զ.

122.

Մ ր մ ու ն ջ ս ի ր ո յ .

«Հուսնակ զիշեր» երգի եղանակով.

Իմ կեանքիս մէջ չեմ մոռանալ բնաւին

Ո՛չ իմ վարդը, ո՛չ իմ սէրը, ո՛չ լուսին,

Քեզ, ո՛վ լուսին...

Դէմքդ պայծառ, սիրտդ ուրախ, կաթողին,

Նազես, ճեմես, փայլ, գգուանք տաս աստղերին,

Ա՛յդ աստղերին:

Բայց ինձ երբէք չես հարցաներ, չես փնդուեր...

Գնա՛, լուսին, հոգ չէ, գնա՛, մի՛ լսեր...

Ո՛հ, մի՛ լսեր...

Կըզայ մի օր՝ դատի կելլենք միասին,

Դու կ'ամաչես, դու կըզղջաս ցաւագին,

Ո՛հ, ցաւագին:

Լուսնեակ, խնդրեմ, չըցաւիս դու ինձանից,

Վիրաւոր եմ, դարման կուզեմ քեզանից,

Ո՛հ, քեզանից:

Ո՛չ զոք ունիմ ինձ գթացող, ինձ օգնող,

Ցաւերս շատ, վերքիս չկայ դեղ դնող,

Ո՛հ, դեղ դնող:

Ա՛ռ դու, լուսին, ա՛ռ իմ աչաց արտասուքը,

Որ ծովացաւ քան զՈվկիան մեծ ծովը,

Ո՛հ, մեծ ծովը:

Եղիշէ վարժ. Մեծատունեանց.

123.

Պ ա ր - ե ր գ .

(Վայլս).

Ի խումբ ի պար,

Հայրենասէր պանդուխտ Հայք,

Ի թինդ մեր ոտից թո՛ղ Մասեաց բարձունքն:

Ահեղագոյ,

Առ Հայս հանուր տան գանգիւն,

Հրաւէր կարդալ Հայ դիւցազներուն:

Ի խումբ ի պար,

Ո՛վ հայրենեաց քաջ որդիք,

Մեր ոտից տրոփիւն բարէ թնդացուց:

Սոխակ.

Ակնկալու,
Հայ սրտերն բոցակէզ,
Յաղթական փառաց խմբել զհանդէս:

Ս. Պ. Պ. Փափազեան.

124.

Պ ա Ր Ն ա խ ա Ր ա Ր ա ց .

Ի զուր են, ի զուր, բռնաւոր,
Ըսպառնալիք քո ամենայն.
Ոչ, քո շղթայք չեն զօրաւոր
Յընկճել զոգիս մեր հայկական:

Զմարմին՝ միայն զայս մարմին
Կարես գերել քեզ ի նախատ.
Սակայն ոգիք մեր երկնային՝
Սիրտք հայկազանց են միշտ ազատ:

Ազատ են, ազատ մեր լեզուք,
Մաղթել զշանթս արդարութեան
Ի գլուխ ձեր, ո՞վ արիւնարբուք,
Որ աւերէք զՀայաստան:

Ի դժոխս անկցին թշնամիք,
Անհետացին մինչ յաւիտեան.
Կեցցէ՛ն Արքայ և Հայրենիք,
Կեցցէ՛ անմահ մեր Հայաստան:

Խորէն եպիսկոպոս Գալֆայեան.

125.

Ի՞նչով պէտք է մեր սրտերը ազնուացնենք,
Եւ մեր միտքը փալլուն լուսով պայծառացնենք.
— Ինքնակրթութեամբ միայն, ինքնակրթութեամբ:

Ի՞նչով պէտք է մեր ծնողացը ուրախացնենք,
Ընկերաց մէջ ազնիւ, բարի անուն վաստակենք.
— Առաքինութեամբ միայն, առաքինութեամբ:

Ի՞նչով պէտք է մեր բաղձանքին հասնենք,
Ամեն տեսակ դժուարութեանց հեշտութեամբ յաղթենք.
— Զանասիրութեամբ միայն, ջանասիրութեամբ:

126.

Ի մ Հայրենիքն ունի լեռներ.

Իմ Հայրենիքն ունի լեռներ՝
Մինչև երկինք բարձրացած,
Եւ այն լեռներն ունին հանքեր՝
Մեր աչքերից թագնւած:

Ապառաժո՛տ իմ Հայրենիք,
Ծածկուած անթիւ լեռներով,
Ե՛րբ կը բանաս անգին քո սիրտ՝
Լիքը ոսկով, արծաթով:

Լևոն Մանուէլեանց.

127.

Պ ա Ր տ է զ .

Իբրև Արաքս, ես հոսում եմ,
Ո՛ւր է պահապանդ, պարտէզ.
Զը ջրելուդ ափսոսում եմ,
Ո՛ւր է պահապանդ, պարտէզ:
Ահա անգութ արեգակը
Քո մէջ լցնում է կրակը,

Այրում է մինչ քո յատակը,
Ո՛ւր է պահապանդ, պա՛րտէզ:

Պտղատու ծառդ չորացաւ,
Եւ անունդ ստորացաւ,
Մի՛թէ բաղդը քեզ մոռացաւ,
Ո՛ւր է պահապանդ, պա՛րտէզ:

Ձը կայ քեզ նման վարդարան,
Բայց վարդերդ օտարք տարան.
Սոխակներդ ո՛ւր կը կարդան,
Ո՛ւր է պահապանդ, պա՛րտէզ:

Պահապանդ տկարացաւ,
Մի՛թէ քո բաղդը կուրացաւ,
Անգոր թշնամիդ զօրացաւ,
Ո՛ւր է պահապանդ, պա՛րտէզ:

Պահապանդ պարտաճանանչ
Տկարացաւ, ո՛վ մեծասքանչ,
Թառամեց բոյսերդ կանանչ,
Ո՛ւր է պահապանդ, պա՛րտէզ:

Պտղատու պարտէզ էիր,
Իմ նախնեաց ասպարէզ էիր,
Ծառդ միշտ կանանչ կ'ուզէիր,
Ո՛ւր է պահապանդ, պա՛րտէզ:

Ինձի վարձել է քո տէրդ,
Որ ժողովեմ ծառաներդ,
Նորոգեմ հնացեալներդ,
Ո՛ւր է պահապանդ, պա՛րտէզ:

Պայծառ Տրդատեանս մենակ
Քո մասին ողբում եմ անյազ.
Մինչև երբ մնաս աւերակ,
Ո՛ւր է պահապանդ, պա՛րտէզ:

128.

«Ծ ա մ թ ե լ».

— Իմ գլխու ֆութէն կիտամ, ⁽²⁾

Դէ խանա ծամթելն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

— Իմ գլխու չամբար կիտամ, ⁽²⁾

Դէ խանա ծամթելն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

Եար ունի, եար ունի,

Եարսի եօթ ախպէր ունի.

Եար ունի, եար ունի,

Եօթ լէ դացած բանելու.

Եար ունի, եար ունի,

Նախրագնէն ուռի ծառ.

Եար ունի, եար ունի,

Խնձոր թալեմ, արի՛ տար.

Եար ունի, եար ունի,

Խնձորի կէս խածած էր.

Եար ունի, եար ունի,

Չորս բոլորն արծըթած էր.

Եար ունի, եար ունի,

Աղբէրս ուզեց չը տուի.

Եար ունի, եար ունի,

Անուշ եարի խրկած էր. ^(*)

*) Իւրաքանչիւր ութ տողից յետոյ, մի տուն եւ լլի սրա նման պէտք է յորդորակ ասել:

— Իմ խաքի շապիկ կիտամ, ⁽²⁾

Դէ խանա ծամթելն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

— Իմ դօշի սրտնոց կիտամ, ⁽²⁾

Դէ խանա ծամթելն ի ծովէն:

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

— Իմ թևի թևնոց կիտամ, ⁽²⁾

Դէ խանա ծամթելն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

— Իմ վզի վզնոց կիտամ, ⁽²⁾

Դէ խանա ծամթելն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

— Իմ յերսի ճըթիկ կիտամ, ⁽²⁾

Դէ խանա ծամթելն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

— Իմ սերսուկի ծամեր կիտամ, ⁽²⁾

Դէ խանա ծամթելն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

Իմ մէջդան ճակատ կիտամ, ⁽²⁾

Դէ խանա ծամթելն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթելն ի ծովէն.

— Իմ կամար ունքեր կիտամ, ⁽²⁾

Դէ խանա ծամթելն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

— Իմ ֆինջան աչքեր կիտամ, ⁽²⁾

Դէ խանա ծամթելն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

— Իմ մեղրիկ բերան կիտամ, ⁽²⁾

Դէ խանա ծամթելն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

— Իմ բոլոր յերես կիտամ, ⁽²⁾

Դէ խանա ծամթելն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

— Իմ շարմաղ ձեռներ կիտամ, ⁽²⁾

Դէ խանա ծամթելն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

— Իմ սիվտակ դօշ քե կիտամ, ⁽²⁾

Դէ խանա ծամթելն ի ծովէն:

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

— Իմ բօյն ու բուս լէ կիտամ, ⁽²⁾

Դէ խանա ծամթելն ի ծովէն.

— Լողվորի մէկ լէ ես եմ,

Չեմ խանա ծամթելն ի ծովէն:

— Իմ ծամի ծանտրութենէն ⁽²⁾

Ծամթելս կտրե ընկե ի ծով.

Իմ ծամթելն խան տո՛ւր ի զիս,

Քո ջըհել արևն յաբով:

— Իմ ջուխտակ աչիւ վրայ, ⁽²⁾

Ծամթելդ խանեմ իտամ քըզի.

Ե՞բ կիտա յըն օրն Աստուած,

Օր էրանեկ իտան մըզի:

129.

✓ «Ինչինար եար ջան».

Ինչինար եար ջան,	Էս եանը փուշտա,
Փուշինար եար ջան,	Էն եանը փուշտա,
Ո՛վ էր բան ասե,	Ախպէրս էկաւ,
Սիրական եար ջան:	Ոտներին չուտտ ա:
Էս եանը քամի,	Ինչինար եար ջան,
Էն եանը քամի,	Փուշինար եար ջան,
Արազի վրէն	Թէ կառնես մարջան,
Բանըմ ա գեամի:	Քե կասեմ եար ջան:
Էս եանը նուշ ա,	Էս եանը պատ ա,
Էն եանը նուշ ա,	Էն եանը պատ ա,
Կողբեցին էկաւ,	Քաղքցուն կ'առնեմ,
Կարմրաթուշ ա:	Որ փողը շատ ա:
Էս եանը մուխ ա,	Էս եանը բուլբի,
Էն եանը մուխ ա,	Էն եանը բուլբի,
Աղբէրս էկաւ,	Քաղքցին էկաւ,
Հագինը չուխա:	Հագինը չուլբի:
Արազի վրէն	Էս եանը պոպոք,
Բանըմ ա լօղկա,	Էն եանը պոպոք,
Սիրածս էկաւ,	Քաղքցին էկաւ,
Գլխին շլապկա:	Հագինը սապոք:

130.

Երգդատարկ տկճորի.

Ի՞նչ բանի ես դու նման,
Երբ դատարկ ես, տկճոր ջան.

Այդ պատկերիդ պէս տգեղ
Զկայ, կարծեմ, ուրիշ բան:

Երկար վիզդ կռացած,
Լայն կողերդ նեղացած,
Փորդ մէջքիդ պինդ կպած,
Ողջ անդամով չորացած:

Քեզ ամեն մի սիրող Հայ
Լալով կ'ասէ. «վնյ վնյ վնյ,
Լաւ էր թէ կոյր ծնէի,
Քան քեզ այսպէս տեսնէի»:

Ատելի ես, ո՛վ տկճոր,
Ընկած այդպէս ցամաք, չոր,
Սիրելի ես, պաշտելի,
Երբ փորդ է գինով լի:

Ուրեմն, տիկ, աղաչեմ,
Կռնամ պորտդ պաչեմ.
Ե՛կ դու կեանքիս խնայիւր,
Փորդ միշտ լիքը պահիր:

Այո՛, պահիր փորդ լիք,
Պահիր, պահիր մէջքդ դիք,
Տոտիկներդ տուուզ, ձիգ,
Ո՛վ տիկ, լաւ տիկ գեղեցիկ:

Առանց գինույ կեանք չկայ,
Ներկայ վիճակդ վկայ.
Խմիւր, տիկ ջան, նոր կեանք առ,
Կլկլոցիդ Հան բարբառ:

Բերանդ բաց, տկճոր ջան,
Մատաղ գնամ քո անուան.
Բաց, բաց, լցնեմ գինի նոր,
Կրկին կակղի քո չոր փոր:

Ս. Փիլիպպոսեանց.

131.

Ի ննջմանէդ արքայական, զարթիւր, նազելի իմ, զարթիւր,
 Եհաս նշույն արեգական, զարթիւր, նազելի իմ, զարթիւր
 Պատկեր սիրուն տիպ բոլորակ,
 Լրացելոյ լուսնոյն քատակ,
 Ոչ գտանի քեզ օրինակ. զարթիւր, և այլն:
 Այդ քո տեսիլդ զոր դու ունիս,
 Արար ծառայ քեզ զգերիս,
 Արեւակէզ գուցէ լինիս. զարթիւր, և այլն:
 Ղաբին սրտիւ քանի կոծամ,
 Է՞ վարդ կարմիր և անթառամ,
 Տես թէ զիարդ խղճալի կամ. զարթիւր, և այլն:
 Տապ և խորշակ ժամանեցին,
 Զթերթք գեղուդ այրել կամին,
 Գանդի էանց գիշերն մթին. զարթիւր, և այլն:
 Է աննման իմ գովելիս,
 Ի մէջ ականց գեղ քո մատնիս,
 Ի ռահեակ սոյն թուականիս, զարթիւր, և այլն:

132.

Վ ա զ ո Ղ ջ ը ի ն .

Իստակ ջուր վազուկ, արդեօք ի՞նչ կ'լինէր,
 Որ քո ալիքներ տանէր իմ ցաւեր,
 Կամ ի՞նչ կ'լինէր, թէ իմ վիշտ ու լաց
 Ինչպէս ծուխ օդում ցրուէին յանկարծ:
 Կամ ինչո՞ւ համար ուրախութիւնը
 Թուջում է շուտով, մընում է ցաւը.

Թո՛ղ քո ալիքներ ցնդեն իմ վշտեր,
 Լուանան սիրտս թո՛ղ քո մասնիկներ:

Սիրտս խոցուած է զանազան կողմից,
 Արիւն ու շարաւ կթափի երակից.
 Լուա՛, մաքուր ջուր, սրբէ ինչպէս հուր,
 Թո՛ղ փայլի սիրտս, չը մնայ մի մուր:

Դու սրբեցիր ինձ՝ երբ որ ես ծնայ,
 Ես քո մէջ իստակ ձեռքով թաղուեցայ.
 Դու լուացող ես հոգու ու մարմնի,
 Լուա՛ իմ սիրտս, թո՛ղ քեզ պէս փայլի:

Թո՛ղ մաքուր լինիմ, ինչպէս դու սուրբ ես,
 Թո՛ղ ողջ աշխարհին երեւիմ քեզ պէս:

Միքայէլ Նալբանդեանց.

133.

Ն ու է ը Ա շ ու ղ ի ն .

Ի՞նչու չես երգում անգութ բժշկին,
 Որ անտարբեր է իւր ազգի վերքին.
 Նրա ի՞նչ պարտքն է, թէ մեռնին մարդիկ.
 Նրան փողն է պէտք քաղցր, անուշիկ:

Ի՞նչու չես երգում այն գիտնականին,
 Որը վառուած է գիտութեան լոյսով,
 Բայց իւր տաղանդով, խօսքն ու զրոյցով
 Զի ազգում մարդկանց հոգուն ու մարմնին:

Ի՞նչու չես երգում այն նկարիչին,
 Որի վրձինը մեծ հուշակ ունի,
 Բայց Հայոց երկրի աւերակները
 Կարօտ է մնում հանճարեղ զրէին:

Ի՞նչու չես երգում այն օրիորդին,
Որը ապրում է մայրաքաղաքում,
Որը իւր խելքով ու ճարտար լեզուով
Սիրահար է միշտ օտարի լեզուին:

Ի՞նչու չես երգում խանի հարեմում
Բռնի փախցրած գերի հայ կոյսին,
Որի բոցավառ աչերի միջից
Վրէժ ու կայծակ, կրակ էր ցայտում:

Ի՞նչու չես երգում այն պարտիզայանին,
Որը չի ցանում գարնան ծաղիկներ.
Գարնան ծաղկունքի անուշ բուրմունքով
Զարթնէին մեր մէջ նոր ոգի, նոր սէր:

Ի՞նչու չես երգում հիւսիսից փչող
Մրրիկ, փոթորիկ, սառնամանիքներ,
Որոնք քանդում են, բրիշակ անում
Ջրատար ազգի անշուք խրճիթներ:

Ի՞նչու չես երգում, աշուղ սիրելի,
Մեր արնոտ կեանքի խոր խոր խոցերը.
Դու էլ մեզ նման լռիկ ու մնջիկ
Մի՞թէ մնացիր օտարին գերի:

Դու էլ մեզ նման, աշուղ պատուական,
Սգաւոր դարձար ազգիդ վշտերին,
Դէն դրիր քնարդ, չունգուրդ ուժգին.
Մի՞թէ ե՛ք մէջ մեռաւ վառ հոգին:

Թող տուր քո սուգդ, աշուղ սիրելի,
Լաց, արտասուքով աշխարհ չի շինուի.
Վեր առ քնարդ, լարերին խփիր,
Դուցէ այդ ձայնից մեր հոգին գարթնի:

Վարդան Եղիազարեանց.

134.

Ղ օ 2 մ ա.

Խմ անվարքութիւնս աշխարհի վերայ
Զայն արձակեց երգի, քնարի նման.
Մտածելով վաղուան համարի վերայ,
Շուարեալ եմ անյոյս շուարի նման:

Անցաւոր կենաց մէջ զարդով մանեկայ,
Անուշ ծաղկով, անուշ վարդով մանեկայ,
Ինձ թուի՝ շնորքով, վարքով մանեկայ.
Սխալեցայ լիմար արդարի նման:

Քառասուն և եօթը անցուցի ամը,
Զիմացայ, ի՞նչպէս է աշխարհի համը,
Մոռացայ Մովսէսի բերած պատգամը,
Պահեցի ծրարեալ քանքարի նման:

Տխուր և տրտում եմ, ինչպէս սգաւոր,
Մարմնովս հարուստ եմ, հոգով չքաւոր,
Ոչ գոյ ինձի նման անդարձ մեղաւոր,
Շրջող աշխարհի մէջ խաւարի նման:

Գործովս ամբարիշտ միայն և ոչ հեզ,
Գաբրիէլն եմ, Տէր իմ, աղաչեմ զքեզ,
Զի դու ես կեանք, յարութիւն, յարձ և զմեզ
Զորքօրեայ մեռեալ Ղազարի նման:

Գաբրիէլ Մելիքեանց.

135.

Հ ա յ ո ց գ ի ն ի.

Լցրէք, եղբձրք, ձեր բաժակները,
Եւ քաջ պարպեցէք.

Այսպէս զինին բոլոր աշխարհումը
 Դուք զըտնելու չէք:
 Ո՛չ թուրքի է այս և ո՛չ Մաճառի,
 Ո՛չ Ֆրանսիայի.
 Թո՛ղ ուրիշն օտար զինի խմի,—
 Մերն է հրաշալի:
 Շամպայն զինին—կանացի զինի է,
 Այդ մեր զինին չէ,
 Խմել, կոնծել թէև կարելի է,
 Բայց սիրելու չէ:
 Խըրիմի զինին լաւ գոված զինի է,
 Բայց այս էլ այն չէ.
 Ճաշից յետոյ խմել կարելի է,
 Բայց երգելու չէ:
 Կախեթու զինին պատուական զինի է,
 Թէև Հայոց չէ.
 Բայց ափսոս, որ օտարի է,
 Նոյեան տընկած չէ:
 Երասխի մօտ՝—այնտեղ է մեր զինին,
 Օրհնեալ է Երասխ.
 Երասխի մօտ ամենքն են զեղեցիկ,
 Ամենքն են ուրախ:
 Այդ զինին պարգևեց մեզ Աստուած,
 Ու զրախտից հանեց,
 Երբ հայ Նոն, աշխատանքից մաշուած,
 Նորան աղաչեց:
 Նոն իմաստուն մարդ եղած պիտի լինի,
 Որ այդպէս ճարտար
 Նա ճմլեց, քամեց, խմեց մեր զինին
 Ու շինեց տակառ:
 Ուրեմն, եղբ՛ւրք, բաժակն լքցրած է՝
 Ջամբեցէք անվախ.

Թէ լսենք որ՝ մէկը շատ տըխրած է՝
 Նրան զինի կը տանք:

136.

Ս Ի ր ո յ Զ ո հ ե ր .

Լըճի մէջ նաւակը
 Մեղմ հողմով կը տանի,
 Նորա մէջ նըստած է
 Սիրահար պատանի:
 Պատանին ձեռքն ունի
 Կիթարայ ու կերպէ,
 Իսկ քամին կը փախցնու
 Նաւակը եզերքէ:
 Լըճակի մէջը կայ
 Քարաշէն մի ամրոց,
 Սիրուհւոյ բնակարան,
 Հանապազ փակ ու գոց:
 Պատանւոյ նաւակը
 Դէպ ամրոց կը վազէր,
 Ուր նորա անձկալին
 Սըրտատրոփ կըսպասէր:
 Մեղմ հովը աւելի,
 Աւելի սաստկացաւ,
 Երկինքը թուխպ պատեց,
 Փոթորիկն բարձրացաւ:
 Ալիքի լեռները
 Գոռալով կըծըփան,
 Պատանին աներկիւղ
 Կը նուազէ կիթարան:
 Լուսինը ամպերու
 Տակերէն երևցաւ,

Սոսկալի աղէտի

Պատկերը բացուեցաւ:

Կէս ճամփուն ալիքը

Նաւակին խրփուեցան,

Նաւակը փըշրեցին,—

Յոյս չիկար փըրկութեան:

Պատանին աչքերը

Լուսնեակին բարձրացուց,

Կիթարի լարերը

Նա ուժգին հընչեցուց.

«Տօր վերջին խօսքերըս

Անձկալույս, ո՛վ լուսին,

Որ քաղցրիկ անունըդ

Յիշելով՝ կըմեռնիմ»:

Դադրեցաւ փոթորիկ

Ու ալիք պառկեցան,

Ջրրի վրայ կըտորտանք

Նաւակի երեցան:

Սիրուհին սըրտատրոփ

Նայեցաւ լըճակին,

Հասկացաւ դառնութիւն

Իւր անբաղդ վիճակին.—

«Իրարմէ բաժնեցին

Մեզ աշխարհ և այս կեանք,

Գէթ մահով այսուհետ

Ջրրի տակ միանանք»:

Ասաց—և աղաղակ

Բարձրացուց նա ուժգին,

Գըլորուեց, զոհ եղաւ

Անկըշտում ծովակին:

Գամառ-Բաթիպա.

137.

✓ Ծ ն ն դ ե ա ն ե ռ դ.

Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի: Ծընաւ նոր արքայ՝ ի Բեթղեհէմ քաղաքի. որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ: Անբաւելին երկնի և երկրի՝ ի խանձարուրս պատեցաւ. ո՛չ մեկնելով ի հօրէ, ի սո՛ւրբ այրին բազմեցաւ:

Այսօր ցնծան երկինք ի վերոստ մեծապայծառ աւետեօք, և արարածք ամենայն զգեցան Հանդերձ փրկութեան: Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս որդին Աստուծոյ, և հրեղինաց բազմութիւնքն յերկնից յերկր վայր իջեալ: Ի հօրէ ծագեցար լուսաւորել զսրարածս. անդարութեան արեգակն Տէր փառք քեզ:

«Շարական».

138.

Խաղաղութիւն Զեզ.

(Թովմաս Մուրից, ազատ թարգմանութիւն).

Խաղաղութիւն Զեզ, սո՛ւրբ մարտիրոսներ,
Որ կռուի դաշտում ընկաք անվեհեր.
Դուք ջուր ու ցամաք արեամբ ներկեցիք,
Որ ձեր արիւնով փրկէք հայրենիք.
Դուք սուր առնելով՝ սրով կամեցաք
Փշրել բռնութեան շղթան ու կապանք.

Սոխակ.

Բայց, աւանդ, ձեզ Հետ մեռան ձեր ըղձեր...
Խաղաղութիւն ձեզ, սուրբ մարտիրոսներ:

Խաղաղութիւն ձեզ, ազգի քաջ որդիք,
Սև հողն է այժմ ձեզ առել իւր գիրկի.
Ձեր արեամբ ցողած սար ու դաշտերում
Ահա խնդալից նոր կեանք է եռում.
Փթթել է դարձեալ գարուն ծաղկաւետ,
Բայց, աւանդ, դուք էլ չէք փթթիլ յաւետ...
Ցուրտ գերեզմանն է ձեզ առել իւր գիրկի,
Խաղաղութիւն ձեզ, ազգի քաջ որդիք:

Խաղաղութիւն ձեզ, հերոս եղբայրներ,
Թող չը վրդովուեն ձեր սուրբ ոսկորներ.
Ձեր վերջին կամքը՝ «անէծք թշնամուն» —
Մենք միշտ կը պաշտենք որպէս սրբութիւն.
Անէծք ու վրէժ — դոքա մեր միակ
Կը լինեն կեանքի հզօր նպատակ...
Քնեցէք խաղաղ, հերոս եղբայրներ,
Թող չը վրդովուեն ձեր սուրբ ոսկորներ:

Ալեքսանդր Ծատուրեան.

139.

Ձ օ ն. (*)

(Ռաշտի «Մարիամեան» Օր. Դպրոցի բացման առթիւ).

Խինդ ու ցնծութեամբ տօնենք մենք Հանդէս,
Գիտութեան կաճառն կանգնի մեզ ի տես.

*) Սոյն «Ձ օ ն» գրուած և երգուած է Ռաշտի «Մարիամեան» օրիորդական դպրոցի բացման հանդէսին, նոյն դպրոցի աշակերտուհիներէն: «Ձօնիս» մէջ յիշուած ալեգորիք բարեբարը, թող ներուի մեզ ասելու, Ղարաբաղցի պ. Աղաւէլ Յովսէփեանցն է, մի պատուական,

Փառք Բարերարին միշտ երախտագէտ
Ձօնենք անմոռաց այժմ և յաւետ:
Փառաց այս կոթող՝ անջինջ իշատակ,
Թող կանգնի յաւերժ գերթ դափնեայ պսակ.
Պսակ անթառամ, անբիծ, անարատ
Ծածկեն մեր վեհ Հօր ալեգարդ ճակատ:
Իսկ մենք մանկական անարատ շրթամբ
Թոթովեմք մաղթանք առ Տէր բարձրեալ —
Կեանք բարեբաստիկ և անդորր վիճակ
Տո՛ւր Բարերարին մեր վեհ ալեգարդ:
Կեցցէ՛, միշտ կեցցէ՛ մեր ալեգարդ Հայր,
Կեցցէ՛ այժմ, յաւետ մեր վեհ Բարերար:

Յակ. Ղազարեան.

140.

Մ ր մ ու ն ջ Պ ա ն դ խ տ ի ն .

Ծովի դէմ նստած՝ երգ էի երգում,
Սիրտս էր յուզուած՝ և հոգիս տրտում.
Ծովն ծփում էր՝ շառաչներ հանում,
Սրտիս հառաչն էլ՝ օգուժն էր ցրվում:

մի ազնիւ և համեստ գործակատար, որ իւր երկար տարիների հալալ վաստակով մի փառաւոր դպրոցական չէնք է կառուցանում Ռաշտի մէջ 1899 թ. և պատճառ դառնում հարիւրաւոր օրիորդների դաստիարակութեան և գիտութեան սուրբ գործին: Պ. Յովսէփեանցը տեսնում է իւր կառուցած լուսոյ և գիտութեան տաճարը, տեսնում է նորա միջի փոքրիկ փոքրիկ մանուկներին, լսում է նոցա թոթովանքը, նոցա աղօթքի մրմունջը, և՛ սրտով և՛ հոգեով ուրախանում: Այդ է համարիտ բարեգործութիւնը, պ. Յովսէփեանց, որ կատարել էք ձեր կենդանութեան ժամանակ և հասել ձեր սուրբ նպատակին. կեցցէ՛ք միշտ այդպիսի բարեակէր և մարդասէր զգացմունքով, ազնիւ Բարերար:

Գ. Ա. Բ. Գրիգորեանց.

Ծովի ալիքներ՝ զարնելով ժայռին,
Յետ էին սահում՝ մէջ անտակ ծովին.
Սրտիս ալիքն էլ՝ բաղխում էր կրճքիս,
Փշրում, փշրվում՝ վերք տալով լերդիս:

Ի՞նչ էր մրմռում ծովն ծածանուտ,
Ես չէի կարող լինել խելամուտ.
Բայց իմ ալեծուփ սրտիս խոր ծփանք
Էր իմ հայրենեաց տխուր հեծեծանք:

Ես երգում էի երգն պանդխտին՝
Սիրուն «Ծիծեռնակ» ընկեր նժգեհին.
Գեղամայ ծովակ հայրենի երկրին
Պատկերանում էր աչքիս առաջին:

Միտքս թռչում էր յԱրագած, Մասիս,
Սիրտս քաշում էր հայրենեաց մագնիս.
Ալեծուփ էր ծով՝ ալեծուփ հոգիս,
Ունկնդիր չըկար հայրենի երգիս:

Օտարն ի՞նչ կըզգար՝ թէ քանի նուազ,
Քանի տարիներ երգով «Ծիծեռնակ»
Հնչած են սարեր, հնչած են դաշտեր,
Ոգի զգեցած բիւրաւոր սրտեր:

Ի՞նչ վիշտ անհնար երգողին համար,
Երբ օտար է ինքն, օտար իւր քնար.
Երբ չըկան ընկերք, չըկան լսողներ,
Որ իր հետ բաժենն բաղձանք ու վշտեր:

Ա՛խ, երգ, ասացի, հոգւոյս արձագանք,
Պանդխտի սրտին միակ սփոփանք,
Մինչև երբ արդեօք ես պիտի երգեմ,
Հայրենի սիրով հալուիմ ու մաշուեմ:

Երբ այս հառաջանք սրտէս դուրս թռան,
Յողոտ աչերէս շիթեր թորեցան.

Թորեցան կաթ-կաթ, գրկիս մէջ ընկան,
Հող չէր հայրենի, որ ցողեն, թանան:

Նայեցայ ծովին, նայեցայ հովին,
Նայեցայ երկնից կապույտ կամարին.
Ա՛խ, Տէր, գոչեցի, խնամող վերին,
Ձէ որ Դու Տէր ես ծով ու ցամաքին:

Ձէ որ Դու գիտես, որ այս ծով անհուն
Չունի այնքան խոր ալիքներ սահուն,
Որչափ սրտիս խորք շարժուն, երերուն
Յիշատակ ունի անցած օրերուն:

Մի՛թէ հայրենի սարեր ու ձորեր
Ել պիտ' չըլսեն իմ երգ ու տաղեր,
Գէթ մի ժամ, մի օր իմ աչաց ցողեր
Պիտի չըթրջե՞ն նախնեաց շիրիմներ:

Կ'աղաչեմ Բեզ, Տէր, տո՛ւր ինձ գէթ մի օր
Երգել ու կանչել սրտովս բոլոր
Այն հողին վերայ, այն երկնից ներքև,
Ուր աչքս տեսաւ առաջին արև:

Անդ, ուր տօնեցաւ Հայոց Ամանօր,
Ուր երգեց մայրս ինձ համար օր օր.
Անդ թո՛ղ ամփոփին ոսկերք պանդխտին,
Որ կարօտն առնուն հայրենի հողին:

Նէեմիա. (Մ. Ե. Մ.)

141.

Երգ պանդուխտ պատանեկի.

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,

Դէպի հօր, ինձ աստ,
 Թռչում ես այդպէս արագ:
 Ախ, թըռիւր, ծիծեռնակ,
 Ծընած տեղս—Աշտարակ,
 Անդ շինիւր քո բունը
 Հայրենի կտուրի տակ:
 Անդ հեռու ալեւոր
 Հայր ունիմ սգաւոր,
 Որ միակ իւր որդուն
 Սպասում է օրէ օր:
 Երբ տեսնես դու նորան,
 Ինձնից շատ բարեւ արան,
 Աստ թող նստի լայ
 Իւր անբաղդ որդու վերայ:
 Դու պատմէ՛ թէ ինչպէս
 Աստ անտէր ու խեղճ եմ ես,
 Միշտ լալով, ողբալով՝
 Կեանքս մաշուել, եղել է կէս:
 Ինձ համար ցերեկը
 Մութ է շրջում արեգը,
 Գիշերը թաց աչքիս
 Քունը մօտ չի գալիս:
 Ասիւր, որ չի բացուած՝
 Թառամեցայ միացած,
 Ես ծաղիկ գեղեցիկ՝
 Հայրենի հողից զրկած:
 Դէհ, սիրուն ծիծեռնակ,
 Հեռացիւր, թռիւր արագ
 Դէպ ի Հայոց երկիրը,
 Ծնած տեղս—Աշտարակ:

Գ. Դորոխեանց.

142.

✓ Ջան գիւլում, ջան ծաղիկ,

Ծառիս տակը մանիշակ, ջան գիւլում, ջան ջան,
 Իմ եարը քանց քեզ շիշակ, ջան ծաղիկ, ջան ջան.
 Ութ թումանիցն անց կենամ, ջան գիւլում, ջան ջան,
 Քեզ կանեմ եարիս մշակ, ջան ծաղիկ, ջան ջան:

Ջաղացի դուռը տաշած,
 Աղլըխիս գիւլը քաշած.
 Կեռ կեռ ունքերիդ մեռնեմ,
 Ոսկի ղալամով քաշած:

Անձրեւ եկաւ շաղալէն,
 Ուռու տերեւ դողալէն.
 Հրէս եկաւ իմ աղբէր,
 Ալ ձին տակին խաղալէն:

Կանգնել ես ախա բախա,
 Լաչակիդ տուտը կախ ա,
 Սեւ տղայ, սպիտակ աղջիկ,
 Բռնել էք իրար ետխա:

Արևն ընկաւ մեր պատին,
 Արքայութիւն իմ տատին,
 Հոգիդ դատուի, այ տատի,
 Ինձ խի՞ տուիր կունատին:

Սարէն կ'գայ ձիաւոր,
 Մեր տունը չարդախաւոր,
 Հրէս եկաւ իմ աղբէր,
 Երեք օրվան թագաւոր:

Սարի թրթնջուկ թաղա,
 Ջաւզ ու մեխակ քեզ մաղա.

Ինձ պէս նազանի աղջիկ՝
Քեզ պէս տղին հնց սաղայ:

Ջրի վերայ սազ պլտի,
Իմ օրդակը զազ պլտի,
Ի՞նչ եմ անում թուլինդին,
Իմ եարը Շահաբազ պլտի:

Նախրատափին խնկի ծառ,
Խնձոր քցեմ՝ արի տա՛ր,
Ուրբաթ, շաբաթ քեզ մօհլաթ,
Լոյս կիրակի արի տա՛ր:

Մի բարձ եմ արել, իմն ա,
Մինն էլ եմ արել, իմն ա,
Գեանջու քարուանն գալիս ա,
Միջին թաւադն էլ իմն ա:

Մեր դրան առաջին մի դարան,
Աղջկերքն եկան, նի դառան,
Կուռս տարայ, որ բռնեմ,
Շարած մարդարիտ դառան:

Աղջիկ, աղջիկ, ա՛լ աղջիկ,
Աչքերդ չալ չալ, աղջիկ,
Դու մեր տանը հարս պլտես,
Իմ քերը քեզ տալ, աղջիկ:

Իմ աղբէրը սարումն ա,
Շուին գօտկածալումն ա,
Աղբէր ջան, շուիդ ածա՛,
Քիրդ Լօռուայ քարումն ա:

Տեղ եմ քցել՝ փոթ կ'տայ,
Բարձ եմ դրել, սոթ կ'տայ,
Մեռնեմ միջի քնողին,
Անոյշ խնկահոտ կ'գայ:

Ես աղջիկ եմ, ա՛լ կուզեմ,
Այս ծալուծալ կուզեմ,
Որ տունը որ ես մտնեմ,
Ոսկին սարէսար կուզեմ:

Աղբէր, հանաքիդ մեռնեմ,
Ոսկէ դանակիդ մեռնեմ,
Ճամբայ երթող շէկ աղբէր,
Դուքան բազարիդ մեռնեմ:

Ա՛յ տղայ, դու բաղի միջին,
Ոտներդ շաղի միջին,
Կանչի կանչելուդ մեռնեմ,
Ես եմ քո հաղի միջին:

Մեր տան յետնէն մի մառան,
Տղերքն եկան՝ յետ դառան,
Ձեռս տարայ թէ բռնեմ՝
Դիփ լալ ու մարջան դառան:

Ես աղջիկ եմ՝ ալ կուզեմ,
Բոխչաւ ծալէծալ կուզեմ,
Երբ որ եարիս տուն կ'երթամ՝
Գօտիկս թիրմա շալ կ'ուզեմ:

143.

Խ ո ս տ ո վ ա ն ու թ իւ ն .

Ծնուած եմ հայ՝ իմ հարազատ հայ մօրից,
Բամբակի մէջ քնքուշութեամբ մեծցել եմ.
Ձեն սլացել «հայրիկ», «մայրիկ» իմ բերնից՝
Երբ շուրթերս առաջին անգամ բացել եմ...
Օրօրօցիս շուրջը կային դայեակներ,
Հայաստանի ձեռով չէի կապկապած,

Ինձ սընանում, տաճում էին այլ մայրեր,
Մօրս երգը ես իմ կեանքում չեմ լրսած...
Թէ ես խորթ եմ, անզգայ եմ իմ եղբարց՝
Մեղաւորն է կրթութիւնը իմ ծնողաց:

* *

Գեղափթիթ իմ մանկական Հասակը
Անց է կացել մի խորթ ծծմօր գրկերում,
Որ իւր կաթով տալիս էր ինձ իւր բարքը
Եւ հոգ տանում իմ մանկական օրերում...
Իսկ իմ ծնողը(*) գիշեր ցերեկ բացակայ,
Մանկան թողած՝ պարերումն էր քաշքշվում,
Հանդէսներին, լստօներին միշտ ներկայ,
Ես էլ օտար մի մօր գրկում միշտ մաշվում.
Եթէ այսպէս ատում եմ ես Հայ եղբարց՝
Մեղաւորն է կրթութիւնը իմ ծնողաց:

* *

Մանկութիւնից սովորած եմ միշտ գործածել
Հարուստ զարդեր, պերճ ու շքեղ ակնեղէն,
Մարմնիս վերայ յիմար բաներ տարածել,
Սիրել զարդը, ունայնութիւն, ոսկեղէն.
Օտարազգի տիկիններով մեր տունը
Իրիկուններ խաղի համար լքցրած,

*) Թէ՛ ինչքան բնական և ինչքան անհրաժեշտ է ծնող-մօր կաթը և նորա սնուցանելն ու պահել-պահպանելն իւր հարազատ մանուկին՝ այդ մասին ցանկացողներին կ'առաջարկէի կարդալ, և ուշադրութեամբ կարդալ մեր սիրեցեալ Վեհափառ Հայրիկի բազմախորհուրդ և օգտաւէտ «Իրախտի Ընտանիք» գրքի մէջ, «Մայր և Դայեակ» վերնագրով ուշադրաւ և գեղեցիկ գրուածքը:

Կտրած էին իւրեանց խաղով իմ քունը,
Շրուալլութեան իւրեանց կեանքը նուիրած.
Եթէ այսպէս շուալլ եմ ես հռչակուած՝
Մեղադրում եմ ուղղութիւնը իմ ծնողաց:

* *

Կրթութիւն եմ ես ստացել բարձրագոյն,
Գիմնազիօնից Համալսարան եմ անցել.
Լեզուս պերճ է, մտքեր ունիմ գերագոյն,
Մինչև անգամ Եւրօպա եմ գնացել.
Մի՛թէ գրիչս պիտանի է իմ ազգին,
Դարման տալու նորա ցաւին, մտածմանց,
Ջգուելի՛ է այդպէս գործերը աչքին,
Որովհետև այս հոգին են թելագրած.
Թէ անպէտք եմ ես իմ ազգի՛ն, իմ եղբարց՝
Մեղադրում եմ ուղղութիւնը իմ ծնողաց:

* *

Հայ կոչուիլը ինձի համար ամօթ է,
Ինձ չէ շարժում ճշինչ մի ցաւ ազգային,
Կրօնը սխալ, լեզուն կոպիտ և խորթ է,
Այսպէս եմ ես վերաբերվում միշտ Հային...
Ծաղրալի է, թէ Հայն ունի փառք անցած,
Կամ քաջութիւն, հոգի ու սիրտ ռազմական.
Ինձ թըւում է, որ նա գետնումն է թաղած
Անյուսալի ուրախ օրեր յաղթական...
Եթէ այդպէս Հայն է աչքումս ստորացած՝
Մեղադրում եմ ուղղութիւնը իմ ծնողաց.
Որովհետև անպիտան եմ իմ եղբարց՝
Շատ լաւ կը լինէր, որ չը լինէի ստեղծուած:

144.

Երգի մահ Տրդատայ.

(Օջելիայի երգի եղանակով).

Կորուստ անդարձ ողբանուէր,
 Կորուստ անվերջ տրտմութեան,
 Հայոց ազգը մնաց անտէր,
 Աւանդ բաղդիդ, Հայաստան:
 Լացէք, լացէք թշուառացած,
 Լացէք, որդիք Թորգոմայ,
 Ահա տեսէք անշնչացած
 Սուրբ մարմինը Տրդատայ:

145.

✓ Կապոյտ երկնքում
 Աստղեր են փայլում,
 Այլ և լուսնակը.
 Ամենից սիրուն,
 Ամենից փայլուն
 Է արեգակը:
 Կանաչ դաշտերում
 Եւ այգիներում
 Ծաղիկներ կան շատ.
 Բայց չէ ոչ մինը
 Վարդի նմանը,
 Նա է բնութեան զարդ:
 Սիրուն աղջիկներ,
 Ինչպէս ծաղիկներ,
 Ամեն տեղ շատ կան.
 Բայց իմ ընտրածը,

Սրտիս սիրածը
 Հրեշտակի է նման:

Գ. Բարխուդարեանց.

146.

Կրամբա մբուլի.

(Թարգ. ռուսերէնից).

Կրամբամբուլին էս էն օղին է,
 Որ մեզի քաջ ծանօթ է,
 Որոյ համը չի տեսնելը
 Ուսանողին ամօթ է.
 Բայց հանապազ, իմ սիրելի,
 Մենք կոնծում ենք կրամբամբուլի:

Հայրս անդադար ինձ գրում է.
 «Որդի-ջան, շուտ աւարտէ,
 Տես, գրերդ լաւ սերտէ,
 Ժամանակդ արագ անցնում է».
 Բայց նորա պարոն որդին
 Կոնծում է կրամբամբուլի,
 Կրամբամբուլիմբամբուլի, կրամբամբուլի:
 Թէ դարդն ու հոգսը ինձ նեղում է,
 Թէ իմ քէֆը տեղը չէ,
 Թէ աղջիկը ինձ խաբում է
 Ու հաւատարիմ չէ՝
 Կ'ասեմ՝ աղջիկ, իմ նազելի,
 Քու տեղ կ'սիրեմ կրամբամբուլի:

Թէ լերդս ու թոքըս իմ մաշուել է,
 Գլուխս էլ սաստիկ ցաւում է,

Թէ որ խմելն ու քէֆ անելը
Բըժիշկն ինձ արգելում է,
Բայց ինչ ցաւ կ'ուզէ ըլի,
Ես կ'կոնծեմ կրամբամբուլի:

Երբ մայրս ինձ մի հարս ճարել է,
Ասում է որ՝ պըսակուեմ,
Եւ պարտքն ու կարգը ինձ ստիպել է,
Որ ես ճաշ ու քէֆ սարքեմ,
Ես ճաշի տեղ, իմ սիրելի,
Կ'առնում առատ կրամբամբուլի:

Բայց երբ կուգայ կեանքիս վերջը,
Մահս-էլ առաջիս տեսնեմ,
Օղին կածեմ բաժակիս մէջը,
Հոգեհանիս-էլ կ'ասեմ.
Վերջին անգամ, իմ պատուելի,
Ե՛կ տուաքացնէք կրամբամբուլի,
Կրամբամբամբուլի կրամբամբուլի

Քերովքէ Պատկանեան.

147.

Պանդուխտ առ կռուունկն.

Կռոճնկ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
Կռոճնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս.
Մի՞ վազեր՝ երամիդ շուտով կը հասնիս.
Կռոճնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:
Թողեր եմ ու եկեր իմ մըլքերս ու ալգիս.
Քանի որ անի կ'անեմ՝ կու քաղուի հոգիս,
Կռոճնկ, պահ մի կացի՛ր, ձայնիկդ ի հոգիս.
Կռոճնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Քեզ խապար հարցնողին չես տանիր տալապ,
Ձայնիկդ անուշ կուգայ քան զջրի տօլապ.
Կռոճնկ, Պաղտատ իջնուս կամ թէ ի Հալապ,
Կռոճնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Սըրտերնիս կամեցաւ, ելանք գընացինք,
Այս սուտ աստընուորիս դարդերն իմացանք.
Աղուհացկեր մարդկանց կարօտ մընացանք.
Կռոճնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Աստուած, քեզնէ խնդրեմ մուրվէթ ու քէրէմ,
Ղարիբին սիրտն է խոց, ճիկերն է վէրէմ.
Կերած հացն է լեղի ու ջուրն է հարամ.
Կռոճնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Ո՛չ ըզլուր օրն գիտեմ, ո՛չ ըզկիրակին.
Ձարկած է զիս շամփուրն, բըռնկած կըրակին.
Այրիլըս չեմ հոգար, ձեզնէ կարօտ եմ.
Կռոճնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Պաղտատու կուգաս, կ'երթան ի սէհրաթ,
Թըղթիկ մի գըրեր եմ, տամ քեզ ամանաթ.
Աստուած թող վրկայ լինի քո վըրադ.
Տարեալ հասուսցես զայդ իմ սիրելեաց:

Գըրեր եմ մէջ թըղթիս՝ թէ հոս մընացի,
Օրիկ մի օրեր զաչերս չըբացի.
Սիւրելիք, ձեզնէ կարօտ մընացի.
Կռոճնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Աշունն է մօտեցեր, գնալու ես թէտպիր.
Երամ ես ժողվեր հազարներ ու բիւր.
Ինձ պատասխան չ'տուիր, ելար գնացիր.
Կռոճնկ, մեր աշխարհէն գընա՛, հեռացի՛ր:

148.

Ի մ կ տ ա կ ւ. (*)

Կէանքիս մէջ մի հատ սին փառք ունեցայ—
Սուրբ Էջմիածնում թաղուել ցանկացայ.
Սիրական իմ ազգ, թէ Աստուած սիրես,
Այս իմ մի հատիկ իղձըս կատարես:

Գամառ - Քաթիպա.

*) Ամօթ չի լինի հարցնել. ինչու հանգուցեալ Ռափայէլ Պատկանեանի (Գամառ-Քաթիպայի) դիակը, գէթ նորա աճիւնը չեն ամփոփում նորա ցանկացած տեղը, Ս. Էջմիածնում: Միթէ, հշմարիտ, զգալի չէին նորա սրտի խորքից հառաչանքով դուրս թռած խօսքերը դէպի իւր «սիրական ազգը», որ իւր մի հատիկ, այո՛, հէնց մի հատիկ «իղձը» կատարելով՝ Ս. Էջմիածնում թաղէին... Հանգուցեալ Պատկանեանը գիտէր, չատ լաւ գիտէր, որ հայերը, առ հասարակ, ընդունակ չեն իրանց գործիչներին, ըստ արժանւոյն, պահելու, պահպանելու: Բայց գիտէր և այն՝ որ նոքա աւելի ընդունակ են լաւ թաղելու, լաւ դամբանականներ ասելու, և՛ ոսկեփայլ, և՛ արծաթափայլ, և՛ այլ բազմափայլ պսակներ դնելու... Ահա այս էր պատճառը, որ նա միայն և միմիայն իւր թաղման սուրբ կտակն է աւանդում իւր «սիրական ազգի»:

Ի՞նչ նշանակութիւն ունի հոյակապ արձանը, երբ նորա վերջին ցանկութիւնը, վերջին կամքը չէ՛ իրագործվում... երբ նորա և՛ սրտին, և՛ հոգուն մօտիկ, չատ մօտիկ միակ «իղձը» չէ՛ կատարվում... երբ նա հանգիստ չէ...

Գ. Ա. Ք. Գրիգորեանց.

149.

Ռ ա փ ա յ է լ Պ ա տ կ ա ն ե ա ն ի խ ր ա տ ւ .

1890 թուականին Ռափայէլ Պատկանեանը Բագու էր: Այդտեղ ես տեսայ նորան: Միջահասակ, գլուխն ալէզարդ, դէմքն ածիլած, աչերը ժպտալից, շարժումներն աշխոյժ, քայլուածքը կայտառ. այսպէս էր Ռափայէլ Պատկանեանը: Իսկ նորա իւրաքանչիւր խօսքից ու իւրաքանչիւր յայտնած մտքից դեռ երիտասարդական խանդ ու աւիւն էր հնչում: Ինձ թուում էր՝ թէ Պատկանեանը նորից կրիզախէր Մայր-Արաքսի ջրերը յուզելու, մէջքն ուռցնել տալու, փրփրացնելու: Բայց հայի սիրտը յուզող ու վրդովող երգերի հեղինակը այսօր այլ ևս չըկայ...

Ասուպ չէր նա, որ երեւաց և առանց հետք թողնելու անյայտացաւ. լուսաստղը չէր, որ պայծառ արեգակի դիմացը հանգչէր. նա կենսատու ճառագայթներով լի արեւ էր, որ կեանք տուեց Հայաստանի հողում թաղած հիւթալի սերմերին, ծաղիկ ու պտուղ տուաւ, որոնց հոտը դեռ բուրում է և որ կըբուրէ շատ երկար:

Առաջին անգամ էի ծանօթանում Պատկանեանի հետ և այդ առաջին տպաւորութիւնը երբեք չեմ մոռանալ... Նա պերճաբան էր, աշխոյժ և հարցախնդիր: Ակնոցների յետեւ ծածկուած վառվռուն աչերը կատարեալ բանաստեղծի ժպիտ էին ցոլացնում, իսկ լայն ու բարձր ճակատը վկայում էր, որ նա է եղել այն խիզախ պատանին, որ վրդովել է Մայր-Արաքսի դարեւոր նիրհը և նորոգել նորա բերաւոր ցաւերը:

— Իմ ոտանաւորներից դու ձրն ես սիրում, հարցրեց նա ինձ:

Սոխակ.

Ես շուարեցայ և բերանիցս իսկոյն դուրս թռցրի. «բոլորը»:

— Բայց չէ, որն է նոցանից աւելի լաւը և քեզ համար աւելի դուրեկանը, հարցրեց նա կրկին:

Ճշմարիտն ասած՝ ես բոլորն էլ սիրում էի և սիրում եմ Գամառ-Գաթիպայի բանաստեղծութիւնները, ուստի կըրկնեցի իմ նախկին պատասխանը:

Պատկանեանը յանկարծ լռեց: Ես չըխանգարեցի նրա լռութիւնը: Նա սկսեց կամաց կամաց շշնջալ.

«Բայց կուզէի թողնել այստեղ մի արձան,

Որ դարէ դար մնար ամուր, անկործան»:

Ես ժպտացի և ասացի նրան. պ. Պատկանեան, դուք արդէն այդպիսի արձան թողել էք, դուք Պուշկինի ու Դերժաւինի նման համարձակ կարող էք երգել. «Անձեռագործ ես ինձ արձան կանգնեցի»: Եւ մի՞թէ դուք կը կասկածէք, որ «Մայր-Արաքս»-ը անմահ է, նորա հետ անմահ և նրա սիրահար բանաստեղծը, մի՞թէ Եւրոպային բողոք կարդացող և Մասիսն ու Ղազիբէկը թնդացնող գրչին կըմոռանայ Հայոց աշխարհը:

— Կըմոռանայ, ասաց նա յուսահատական ձայնով. կըմոռանայ, այո՛, Հայի ոգևորութիւնը ըռպէական է. նա իւր գործիչներին յարգում է ըռպէական տպաւորութեան տակ, նա շուտ է կորցնում իւր տպաւորութիւնը, հետեապէս և շուտ մոռանում իւր գործիչներին: Բայց թողնէ՛ք, ասաց Պատկանեանը և խօսքն իսկոյն փոխեց, դարձաւ ինձ նորից և հարցրեց.

— Դու տեսնել ես ս. Եղմիածինը:

Նրա հարցն այնքան յանկարծահաս էր, որ ես նախ շփոթուեցայ, ապա ամօթահար պատասխանեցի.

— Ոչ:

— Այդ ի՞նչ ես ասում, բացազանչեց նա, ի՞նչպէս կարելի է քսան տարի ապրել աշխարհի երեսին և այդ տարի-

ների ընթացքում մի անգամ էլ ս. Եղմիածին չը գնալ. ամօթ, ամօթ այն հային, որ երկու, երեք տարին մի անգամ Եղմիածին ուխտ գնալը իւր համար սրբազան պարտք չի համարիլ: Ոչինչ չունինք. Եղմիածինն է մնացել, գգուեցէք Եղմիածինը. համատարած ազգի միակ պատուարն այսօր նա է, գնացէք յաճախ, համբուրեցէք այն սուրբ քարերը, որ իւր սուրբ ձեռքով կանգնել է այնտեղ Հայաստանի Լուսաւորիչը: Ձեր եղբայրներին, քոյրերին ու ձեր զաւակներին սովորեցրէք Եղմիածին ուխտ գնալ, Եղմիածնայ քարերը համբուրել: Հայն իւր որդու օրօրը Եղմիածնի անունով պիտի երգէ, Հայի ամեմամեծ երգումը Եղմիածնայ անունով պիտի լինի, Հայի տունը, այգին, նրա արտն ու գութանը Եղմիածնայ անունով պիտի օրհնուին: Ամօթ և խայտառակութիւն Հայերին. այդ միակ ժառանգութիւնը, Եղմիածինը, նրանք այնպէս անշուք են պահում, որ տեսնելիս լաց ու արտասուք է պատճառում: Բայց այնտեղ, այն սուրբ կամարների տակ դեռ հնչում է Մեծն Գրիգորիոսի անունը. ձեր հայեացքը, ձեր ուշքն ու միտքը միշտ դէպի այնտեղ, դէպի Եղմիածինն ու Մասիսին արէք: Սիրեցէք Եղմիածինը, Մայր Աթոռը, Աթոռակալը:

Ապա Պատկանեանը խօսեց մեր վաճառականների, ուսուցիչների, հեղինակների և հոգևորականների մասին: Որքան էլ ուզում էի երկար խօսել «Մայր-Արաքսի»-ի հեղինակի հետ և որքան էլ նա ոգևորուած ու զգացուած խօսում էր, այնու ամենայնիւ հարկաւոր էր նրան հանգիստ տալ. սրտի անհուն բերկրութեամբ սեղմեցի նրա ձեռքը և հեռացայ, որոճալով հայ մեծ բանաստեղծի խրատը. «Սիրեցէք Եղմիածինը, Մայր Աթոռը, Աթոռակալը»...

Արշակ Կայծունի.

150.

Կ է Ս զ Ի Չ Ե Ր.

Կէս գիշեր է, մռայլ գիշեր. մենակ նստած սենեակում
Մտածում եմ—և բիւր վշտեր սիրտս ու հոգիս են մաշում...
Մտածում եմ—շուտով արդեօք, դու, արշալոյս ոսկեվառ,
Կը հալածես երկրին տիրած դժնատեսիլ այս խաւար:

Բայց մռայլը գիշերային, մռայլ թանձր, անթափանց
Ամենուրեք, ամենայն տեղ իւր թևերն է տարածած.
Եւ տխուր է մայր երկիրը, տխուր որպէս սգաւոր,
Նա տանջվում է խաւարի մէջ՝ կարօտ օրուան լուսաւոր:

Տխուր է և՛ իմ խեղճ հոգին, մռայլ որպէս այդ գիշեր,
Նորան հալում և մաշում են ազգիս ցաւերն ու վշտեր.
Եւ նա տանջվում, տառապում է մայր երկրի պէս ցաւազար,
Խղճուկ ազգիս նա երկնքից աղերսում է օր պայծառ...

Կէս գիշեր է, մռայլ գիշեր. մենակ նստած սենեակում
Մայր երկրի հետ և՛ ես տխուր լոյս օրուան եմ սպասում...
Օ՛հ, հանդարտուի՛ր, գո՛ւ խեղճ երկիր և դու սիրտ իմ խռովայուզ,
Ահա՛ մըռայլն հալածվում է... քաջայաղթ է արշալոյս...

Ալեքսանդր Շատուրեան.

151.

Բ ա յ ա Թ Ի ք.

Կապուտակ ձին նստել եմ,

Արաղին մօտեցել եմ.

Ա՛րազ, ինձ մի ճամբայ տո՛ւր,

Մասիսին կարօտցել եմ:

Անի, անի, անի, Անի,
Քանդողիդ տունը քանդուի,
Քեզ որ ազգը չ'պահեց,
Մէկ սուգ անողն ի՛նչ անի:

Ունիս բազում նահատակ,
Պարկեւ են սև հողի տակ,
Քեզ պէս քաղաք չէր լինի,
Ափսոս, եղար աւերակ:

Երեսըդ բայ ու ետ տո՛ւր,
Երբ ուզենաս, հոգիս ան,
Թո՛ղ մէկ հողդ, անի, մտնեմ,
Էն վախտը սէրդ էլ ետ տար:

Բաղդը մեզի հալածեց,
Երկրէ երկիր տարածեց,
Մենք էլ մի երամ էինք,
Դէպքը այսպէս հարուածեց:

Ա՛խ, Հայաստան, Հայաստան,
Մընացիր անդատաստան,
Այլոց օթեան դառար,
Ո՛ր են քո Արամ, Տիգրան:

Երկնքի կանանչ կարմիր,
Ա՛յ սիրուն կանանչ կարմիր,
Լերգս ու թոքս չորցել է,
Սար ու ձոր կանանչ կարմիր:

Կանանչ են, անի, սար ու ձոր,
Ձէնս բարակ, սիրտս խոր,
Հոգիս էլ տամ՝ չես լսիլ,
Ի՛նչ ես ընկել սար ու ձոր:

152.

Ձ ա յ ն.

Կան յիշատակներ՝ կեանքի հետ կապուած,
Յիշողութեան մէջ՝ խոր տպաւորուած.
Անցնում են օրեր՝ անցնում տարիներ,
Մնում են նոքա՝ յաւէտ անմոռաց:

Կայ տասն տարի՝ ներկայէս առաջ,
Էի մի գիւղում՝ անվիշտ, անհառաչ,
Այս ամարանոց՝ Կարմիր-Հող անուն,
Ձերձ էր աղմկէ՝ խաղաղ, անշառաչ:

Կար մեր տան հանդէպ՝ մի քօշկ շատ սիրուն,
Ուր բնակում էր մի Պէյ մեծանուն.
Ունէր նա կայտառ՝ զաւակ մի հատիկ,
Խաղում էր զուարթ՝ Եմին էր անուն:

Բարձրացաւ մի օր՝ քօշկէն աղաղակ,
Որ գոյժ էր մահուան՝ մանկան գեղունակ.
Ննջած էր Եմին՝ ի նինջ վաղահաս,
Պատած էր լալիւն՝ պերճ քօշկն համակ:

Եկան կարդացողք՝ ծանօթք տխրամած,
Հանեցին թաքուտն ճոխ շալով ծածկած,
Երբ յուղարկաւորք՝ փոքր ինչ հեռացան,
Քօշկէն լսուեցաւ՝ մի ձայն սրտազգած:

Սուր ու թափանցիկ՝ այս ձայն լալագին
Ազդում էր սառսուռ ամեն լսողին.
Մայրն էր աղեկէջ՝ սրտով նետահար,
Աղաղակում էր՝ անի, Եմին, Եմին:

Վանդակով հիւսուած մեծ պատուհանէն,
Խոր հառաչանաց՝ այս տխուր ձայնէն

Հեկեկում էին՝ ամեն դրացիք,
Այն ու վանք քաշում՝ անցորդք համօրէն:

Լսած էի շատ՝ լալկանաց ձայներ,
Եւ եղերամարց՝ ողբեր ու կոծեր,
Ձէր անձն իմ ցնցուած՝ երբէք այսքան խոր,
Ինչպէս Եմինի՝ մօր ձայնէն կերկեր:

Աչերս էին թաց, միտքս վերացած,
Իսպառ մոռացած անցած ու դարձած,
Որչափ հզօր է՝ ձայնին զօրութիւն,
Որ մարդ դառնում է՝ զերդ մագնիսացած:

Գրեմ, ասացի, քանի մի տող բան,
Թողում յիշատակ՝ սիրողք թող կարդան.
Գրածս լինի պարզ նկարագիր,
Թէ ի՞նչ դեր ունի՝ ձայն յԱրարչութեան:

Դեռ չէի գրած՝ երկու, երեք տող,
Ուրախ նուազաց՝ հնչեցաւ մի փող.
Ահա քեզ աշխարհ՝ ասացի ինքնին,
Մի տեղ խինդ ու թիւնդ՝ մի տեղ լաց ու դող:

Թողի գրիչս՝ սաստիկ վրդովուած,
Եւ իմ այս փափագ՝ անկատար մնաց.
Անցան տարիներ՝ անցան շատ դէպքեր,
Ձայնին յիշատակ՝ մնաց անմոռաց:

Այսօր կան նորէն՝ պատեհ առիթներ,
Գրով աւանդել՝ իմ սրտիս իղձեր,
Ունիմ բնակարան՝ ես բարձանց վրայ,
Որոյ առջև կան՝ խիտ առ խիտ ծառեր:

Ամեն առաւօտ՝ հետ արշալուսին
Ձարթնում են հաւքեր՝ երգում միասին,
Սոխակին ձայնն յաւէտ ինձ ծանօթ,
Շարժում է սրտիս թելեր միասին:

Երբեմն էր ձայն մօր՝ այսօր սոխակին,
Նաև խոխոջանք՝ յոյժ մերձ վտակին
Մորմոքում են զիս՝ ձեռքս առնուլ գրիչ,
Լոյս հանել ինչ կայ՝ սրտիս յատակին:

Ո՛հ, քանի՜ մեծ է՝ իմ լանդուզն ձեռնարկ,
Քանի՜ անթիւ են՝ ձայներու տեսակ,
Քանի՜ ք բնական, քանի՜ ք կերտական,
Ո՛վ կարէ լինիլ՝ ամենուն գիտակ:

Ձայն ունի Աստուած՝ ձայն տիեզերական,
Ձայն ունին հրեշտակք՝ ձայն օրհներգական,
Ձայն ունին մարդիկ՝ և բիւր եղանակ,
Ձայն ուրախական, ձայն եղբրական:

Ձայն ունի ծով՝ կոծով շառաջման,
Ձայն ունի ցամաք՝ հողմայոյզ հնչման.
Ձայն ունի երկիր՝ ձայն ջուրց մրմնջման,
Ձայն ունի երկինք՝ ահեղ որոտման:

Ձայն ունին թռչունք՝ և ձայն անասունք,
Ձայն ունին հովիտք՝ ձայն լերինք բարձունք,
Ձայն հեղիկ մեղմիկ՝ ձայն սաստկահնչիւն,
Ձայն ունին միջատք՝ ձայն ունին սողունք:

Ո՛հ, որչափ շատ են ձայնից տեսակներ,
Մանաւանդ օրհնած՝ Հայ լեզուի բառեր,
Որ այնքան պատշաճ՝ մէն մի էակաց
Յօգած են սերտիւ՝ ձայն ու անուններ:

Ո՛ր միսն պատմեմ՝ արծիւին ծվալ,
Ծտին ծլվլալ՝ թէ ճպռան ճռուալ,
Կարկաջ կաջղակին՝ դալլալ պլպուլին,
Սոսաւիւն սօսեաց՝ թէ թռչնոց թռուալ:

Կան նաև պէսպէս՝ տեսակներ գործեաց,
Խելքով ու ձեռքով՝ հնարուած, կերտուած.

Ահա քեզ սրինգ՝ բամբիւ և թմբուկ,
Ծնծղայ, տասնաղի՝ հնուց մնացած:

Ահա քաղցրալուր՝ տաւիղ, փող, ջութակ,
Վին և երգեհոն՝ քնար ու դաշնակ,
Սոյն նուագարանք, ձայնէ փոխ առած,
Են երգոց համար՝ մի մի օժանդակ:

Որքան հրաշալիք, մնացած եմ ապշած,
Տիեզերք համայն՝ բանիւ ստեղծուած,
Ունի ձայն ու բան՝ ունի և բարբառ,
Դարձած է ինքն իսկ՝ բան համատարած:

Բան ջերմ գոհութեան՝ և բան ցնծութեան,
Բարբառ արտասուաց՝ բարբառ հեծութեան,
Մրմունջք աղօթից՝ և ձայն նուագաց,
Հրճուանք ծննդեան՝ և թախիժք մահուան:

Ձայն պարուց, թմբկաց՝ և երգ հարսնեկան,
Աղաղակ ողբոց՝ և լալեաց կական,
Գողգես գոչում են՝ միշտ միանուագ,
Թէ չէ յաշխարհի՝ երջանկաց կայան:

Ա՛հ, զրաւում են սիրտս՝ այսքան բարբառներ,
Միտքս յածում է՝ անսահման վայրեր,
Լսում եմ անհուն՝ մի համերգութիւն
Օգոց բարձունքէն՝ ծովուց յատակներ:

Համերգ անքննին՝ համայնատարած,
Ուր բաժին ունի ամեն արարած,
Մեծ Արուեստագէտն՝ իւր ճարտար մատամբ,
Այս նուագարան՝ այսպէս է լարած:

Ո՛հ, որչափ գոհ եմ՝ ես իմ Արարչէն,
Որ չէ զրկած զիս իւր պարգևներէն.
Համերգութեան մէջ՝ իմ յաւէտ սիրած,
Ձայն ու եղանակ՝ սրտով զգացած,

Է Երեքսրբեան երգն սրբասաց,
Եւ անուշ օրօրն մօր սրտէ բղխած:

Գիտեմ, որ Դու, Տէր, հսկում ես անքուն,
Ձը կայ քեզ համար՝ ոչ մի ձայն թագուն,
Գիտեմ, չ'անհետիր՝ ձայնս ի համերգին,
Որ միշտ կրկնում եմ՝ չոքած ու կանգուն:

Աղաչում եմ, Տէր, իմ սրտիս խորէն,
Հնչեն, թող հնչեն, հսկէ վերէն.
Ձայն Երեքսրբեան՝ Հայու Տաճարէն,
Օրօր մայրական՝ Հայու Որրանէն:

Նէսմիա (Մ. Ե. Մ.)

153.

Նշանագրութեան զգացմունքը.

(Սիրոյ հոգին).

Կրակ վառուեց իմ սրտում,
Միտս եկար, հոգի ջան.
Բոցեր ելաւ իմ սրտում,
Քեզ յիշեցի, հոգի ջան.
Աշխարհիս մէջ ինձ ընկեր
Քեզ ընտրեցի, հոգի ջան:
Հուրիններից ինձ բաժին
Դու ինձ ընկար, հոգի ջան:
Եդեմ կոչուած գրախտից
Գեղեցիկ ես, հոգի ջան.
Ծաղկած դարնան պատկերից
Դու շատ բարձր ես, հոգի ջան:
Աստղիկի գեղն էլ սուտ է
Դէմքիդ առաջ, հոգի ջան.

Արևի տեսքն էլ սուտ է
Քո առաջը, հոգի ջան:
Աղջիկներից նազելին
Դու ես միայն, հոգի ջան,
Գեղեցկութեան թագուհին
Այն էլ դու ես, հոգի ջան:
Սէր կցօլայ աչերիդ,
Իմ սրտիս սէր հոգի ջան,
Վարդ կփայլի այտերիդ,
Իմ վարդագեղ հոգի ջան:
Մեղր կծորի բերանէդ,
Անուշախօս հոգի ջան,
Լոյս կշողայ ճակատէդ,
Շուշանագեղ հոգի ջան:
Հազարի մէջ մէկ հատ ես,
Չքնաղագեղ հոգի ջան,
Բիւրերի մէջ գովուած ես,
Իմ աննման հոգի ջան:
Քո ոտնակոխ տեղերում
Վարդ կծաղկին, հոգի ջան,
Քո շունչ առած պարզ օդում
Սէր կ'բուրեն, հոգի ջան:
Քեզ հետ սիրոյ լուծն առնել՝
Ես վճռել եմ, հոգի ջան:
Քեզ հետ ապրել ու մեռնել՝
Ես ուխտել եմ, հոգի ջան:

Գրիգոր (այժմ ա. քահ.) Մանդակունի.

154.

Մ ե ղ ա յ ք ե զ, Ա ս տ ու ա ծ.

(Շատերից մէկի խոստովանանքը).

Կուշտ եմ և առողջ, կեանքից բաւական,
Սեղանըս առատ, ճաշըս պատուական,
Բայց թէ ի՞նչպէս եմ այդ կեանքին հասած—
Այդ մի հարցընէք... Մեղա՛յ քեզ, Ա՛ստուած...

Շատ կարճ միջոցում ես հարուստ դառայ,
Հողեր, կալուածքներ, կառք ու ձի առայ,
Բայց թէ ի՞նչ փողով, ի՞նչպէս վաստակած—
Այդ մեր մէջ մընայ... Մեղա՛յ քեզ, Ա՛ստուած...

Տներ շինեցի շքեղ, փառաւոր,
Ապրում եմ մէջը, ինչպէս թագաւոր,
Բայց քանի՜ մարդու ես տուն եմ քանդած—
Այդ մի հարցընէք... Մեղա՛յ քեզ, Ա՛ստուած:

Խանութ բացարի, գործ սկսեցի,
Կարճ ժամանակում մեծ գանձ դիզեցի,
Բայց քանի՜ անգամ ես կոտոր եմ ընկած—
Այդ մեր մէջ մնայ... Մեղա՛յ քեզ, Ա՛ստուած...

Կեանքում ես գտայ մի «ազնիւ ընկեր»,
Գործիս մէջ դրեց տասնեակ հազարներ.
Բայց վերջը... վերջը նա քաղցած մընաց,
Իսկ ես կշտացայ... Մեղա՛յ քեզ, Ա՛ստուած...

Ես միշտ ասում եմ և միշտ քարոզում.
«Աղքատն էլ մարդ է, ուտել է ուզում».
Բայց քանի՜ մարդ եմ ես աղքատ թողած—
Այդ մի հարցընէք... Մեղա՛յ քեզ, Ա՛ստուած...

Երբ տեղն է գալիս՝ սուրբ եմ ձեւանում,
Ժամում ծնկաչոք աղօթք եմ անում.
Բայց հոգիս վաղուց սատանին ծախած՝
Աշխարհք եմ խաբում... Մեղա՛յ քեզ, Ա՛ստուած...

Թէ մէկը պատուիս դիպչի աշկարայ,
Ես կրակ կը թափեմ այդ մարդու վերայ.
Բայց ծածուկ ինչքան ես թուք եմ կերած—
Այդ մեր մէջ մընայ... Մեղա՛յ քեզ, Ա՛ստուած...

Է՛հ, բաւական է գլուխներդ տանեմ,
Ախրը «զորն ասեմ, զորն խոստովանեմ...»,
Ոտով ու գլխով մեղքի մէջ թաղուած
Ես մի հըրէշ եմ... Մեղա՛յ քեզ, Ա՛ստուած...

Ալեքսանդր Ծատուրեան.

155.

«Օրհնեալ Տէր, ուսո՛ ինձ զարդարումիւնս քո».

Ժամագիրք.

Հանել եմ աշխարհ իմ կտրիճ որդիք,
Ո՛չ գիտեմ օրէնք և ո՛չ հօր պարտիք,
Որ նոցա այնպէս մարդեմ ազգիս մէջ,
Որ որդունք չըլնեն, այլ խելօք մարդիկ.
Ինձ արդարութիւն՝ ուսո՛, օրհնեալ Տէր,
Որ նոցա կըրթեմ ճըմարիտ հայեր:

Սովորում են, այո՛, անդուլ, անձանձիր
Հայ աղջիկ, տղայ՝ ինձնից ուսում, գիր.
Բայց ես անզօր եմ ձիր, շնորհ, տաղանդ
Քո պէս լիովի տալ նոցա աւանդ.
Ինձ արդարութիւն՝ ուսո՛, օրհնեալ Տէր,
Որ նոցա կըրթեմ բարձրակիրթ հայեր:

Ձերթ ձագ թևիս տակ առել են ծուար
Ծանօթ, անծանօթ, ազգական, եղբայր.
Բայց ես դեռ չունիմ այն ձեռք կառավար,
Որ նոցա խաղաղ պահեմ հետ իրար.
Ինձ արդարութիւն՝ ուսո՛, օրհնեալ Տէր,
Որ նոցա կըրթեմ միաբան հայեր:

Վատթար մոլութիւնք զերթ մռայլ ամպիկ
Պաղ պաղ ոտներով իջան իմ տանիք.
Տանեացս վերեւէն դէպ իմ ընտանիք,
Ու բաժին տուին նոցա պիղծ չարիք.
Ինձ արդարութիւն՝ ուսո՛, օրհնեալ Տէր,
Որ նոցա կըրթեմ բարեպաշտ հայեր:

Դէպ մեր սուրբ ժամեր, դէպ իմ ազգ անզօր
Չունիմ ըզգօն սիրտ, գործեր փառաւոր.
Չունիմ վառ բորբոք իմ մէջ այն հաւատ,
Որով շատ սրբեր ելան Քո գրբախտ.
Ինձ արդարութիւն՝ ուսո՛, օրհնեալ Տէր,
Որ արդար գործեր հանեմ Քո յեթեր:

Ապրում եմ ազատ, անկարգ, անհաշիւ,
Ո՛չ գիտեմ հօր յարգ, ո՛չ ծերի պատիւ,
Ուր որ ոտք դրի բարութեան փոխան,
Կախեցի այնտեղ չարութեան ոստայն.
Ինձ արդարութիւն՝ ուսո՛, օրհնեալ Տէր,
Որ գործով ցոյց տամ, թէ եմ հայասէր:

Թէ շէն գիւղերում, թէ ձոր, յանապատ
Իմ կըտրիճ ձեռքից կորան մարդիկ շատ,
Հաւր Քո սարերին, կապոյտ ծովերին,
Ի՞նչ չեմ ես զոհել իմ չար կըրքերին.
Ինձ արդարութիւն՝ ուսո՛, օրհնեալ Տէր,
Որ ողջ հայ անուն բերեմ Քեզ նուէր:

Դաւով, քրտութեամբ մինչ ցրբանտ և մահ
Գերել եմ ի զուր մարդիկ անխընայ.

Թէ իմ վատութիւն դաս հանել հանդէս՝
Ինձ չար կըգտնես քան բիրտն Հերովդէս.
Ինձ արդարութիւն՝ ուսո՛, օրհնեալ Տէր,
Որ ես էլ սիրեմ Քո պաշտած սուրբ սէր:

Կորութիւն, նախանձ, անվերջ ծուլութիւն
Մաշեցին իմ կեանք, քանդեցին իմ տուն.
Ես քանց այն թռչուն՝ խեղճ եմ և թշուառ,
Որ չունի դադար և առատ պաշար.
Ինձ արդարութիւն՝ ուսո՛, օրհնեալ Տէր,
Որ ես էլ յարգեմ աշխատանք և սէր:

Ա՛յ իմ պաշտելի, ա՛յ ազնիւ հայեր,
Աստուած պինդ պահի ձեր կեանք ու արև.
Թէ որ միշտ այսպէս ձեր յանցանք և զիղջ,
Ձեր վատթար գործեր, ձեր հոգի և խիղճ
Բանաք անդադար Օրհնեալի առաջ
Ու ձեզ յոգնութիւն խնդրէք Իւր սուրբ խաչ,
Կերդնում ձեր յարև, որ Օրհնեալն Իւր յԱջ
Միշտ Իւր եթերից կ'օրհնէ ձեր որդիք,
Ու նոքա կըլնեն ճըշմարիտ մարդիկ.
Կ'օրհնէ հայրաբար ձեր տղետ մանկտիք,
Ու նոքա կըլնեն բարեկիրթ մարդիկ.
Կ'օրհնէ զթութեամբ ձեր ազգ, համազգիք,
Ու նոքա կըլնեն միաբան մարդիկ.
Կ'օրհնէ մշտապէս ձեր տուն, ընտանիք,
Ու նոքա կըլնեն բարեպաշտ մարդիկ.
Կըլսէ ընդ միշտ ձեր խնդիրք, մաղթանք,
Ու անհետ կանէ ձեզնից տառապանք.
Կըտայ ձեզ երկար, երջանիկ օրեր,
Ու դուք չէք լինիլ ապաբաղդ հայեր.
Կըտնկէ ձեր մէջ սէր, արդարութիւն,
Ու դուք կուենաք ամբիժ հայ անուն:

Ապա թէ կ'ապրէք անարդարութեամբ,
 Ու դեռ կըզործէք չարիք ձեր ձեռամբ.
 Ապա թէ անզեղ լ'ապրէք ընդունայն,
 Ու կըվրդովէք արդար Եհովայն,—
 Են իսկ ձեր բաժինք չարիք ահաւոր,
 Որպիսին կրեց Անին փառաւոր:

Սահակ վ. Ամատունի.

156.

Երբ Մեծին Վարդանայ.

Հուր բարկութեան համայն հայոց.
 Բորբոքեալ զերդ բոց բարկաճաթ.
 Ու կայծականցըս բիւր բիւրոց,
 Ձարթոյց ի մարտ սարս սառնապատ:
 Ձի՛ վարանիմք արդ աստ, եղբարք,
 Դատարկ ձեռամբ, դատարկ ձեռամբ.
 Ձեռամբ յԱրտազ, Տղմուտ, զն դրոյդ, 'ի դրոյդ
 Ի դրոյդ թուչիմք սլանամք, սլանամք, սլանամք:
 Հուր զէն ի ձեռին
 Եւ վրէժ ահագին
 Սպասեն և կան
 Քաջք Արշակունեան
 Եւ յոր երկինք հանդիսատես
 Ձաշխոյժ նախնեաց հեղու ի մեզ.
 Հապ զն քաջք քաջաց
 Ընդ Սասան կուրծս
 Մխեսցուք մկունս
 Ուժգին ի հարուած:

Ռ. Սէտէֆան.

157.

Համեստափայլ կոյս, սրտիդ սրբազան
 Դու լսում ես քո վառ զգացմունքին,
 Բայց և՛ ուղեղիդ լուրջ դատողութեան,
 Որոնք միացած քեզ քո ընտրեալին
 Արժան են դատում և ամուսնական
 Առարկում են քեզ կապը ցանկալի:

Բայց նախ քան քո այդ կեանքիդ եղակի
 Երջանկութեանը ժամը մօտեցած
 Եւ բազմախորհուրդ օրհնուած բաժակի
 Քաղցրը և դառը արդէն վայելած,
 Ես կամիմ ասել քեզ խօսք քանի մի,
 Եւ դու լսիր ինձ, քնքոյշ արարած:—

Երբ որ երջանիկ կը գայ ժամանակ՝
 Դու մայր կը լինիս մի սիրուն մանկան,
 Որին անդադար կը սեղմես անյադ
 Խանդաղատալից կուրծքիդ մայրական,
 Եւ համբոյրներդ նորա անապակ
 Կը հանդէսն դէմքին հրեշտականման.

Երբ որ նա պայծառ իւր աչիկներով
 Կը նայէ դէմքիդ ժպտող երջանիկ,
 Կը գրկէ վիզդ ու ձեռնիկներով
 Կը սեղմէ այտիդ իւր սիրուն այտիկ
 Եւ նորաբարբառ իւր անմեղ լեզուով
 Արդէն թոթովել կըսկսէ «մայրիկ»,—

Ո՛հ, ուսիր նորան մեր քաղցրաբարբառ
 Մայրենի լեզուի ախորժ հնչիւններ,

Սոխակ.

Ուսիր այդ լեզուով աղօթել, կարդալ,
Այդ լեզուով խօսել իւր զգացմունքներ,
Այդ լեզուով յայտնել և ուրախանալ,
Այդ լեզուով միայն, այդ լեզուով տխրել:

Ուսիր դու նորան, որ երկնքում կայ
Գերագոյն Մէկը, որին կոչում են
Խելօքներն «Աստուած», որի ինքնակայ
Տնօրէնութեամբը կառավարվում են
Մարդիկ և աշխարհ. որի մշտակայ
Սուրբ աւանդները—հաւատ, յոյս, սէր են:

Ապա այնուհետ, երբ նա մեծանայ,
Յուզիր աշխարհը իւր գեղ ու տգեղ
Երևոյթներով: Ուսիր շրջակայ
Հրաշալի բնութեան օրէնքը անշեղ:

Ուսիր պատմութիւն. պատմիր մեծատառ
Նորա վեհ մարդկանց գործեր պանծալի.
Պատմիր ամօթով և գործերը դառ
Հայրենակործան դաւաճանների:

Եւ երբ որ կը գայ ժամ օրհասական
Եւ հայրենիքը կը կանչէ մարդիկ,
Յայնժամ քո բոլոր քնքոյշ մայրական
Զգացմունքները թող մնան լռիկ
Եւ խօսէ միայն ազգասիրական
Վառ զգացմունքը սիրոյ անդրանիկ:

Եւ պատմիր նորան թէ ինչ անպատում,
Բայց և վայրենի երջանկութիւն կայ
Վառ պատերազմի ամեհի դաշտում,
Ուր մարդիկների կուրծքերի վերայ
Արեան սոսկալի վարդեր են բուսնում
Եւ ուր փառքի մօտ գրուած է և մահ:

Եւ այնուհետև դէմ և յանդիման
Թշնամու զօրքին ուղարկիր նորան...
Եւ պարծիր, խնդա՛, երբ նա յաղթութեան
Դրօշը արիւնոտ կը բերէ ծածան.
Իսկ եթէ մեռած կը բերեն նորան,
Ո՛հ, մայր, պարծիր, լա՛ և օրհնիր նորան:

Միքայէլ Հեղեան.

158.

Շ ու շ ա ն ի կ.

«Հայոց աղջիկներ» երգի եղանակով.

Հայոց սիրուններ, դուրս եկէք մէլդան,
Աշխարհ տեսնի ձեր սիրուն թամաշան:
Հայոց սիրուններ, ասէք ձեր հօր, մօր՝
Շուշան է պտրում Վրաց թագաւոր:
Հայոց սիրուններ, ծաղկի՛ ձեր Շուշան,
Վրաց թագաւոր՝ Վրաց չէ հաւան:
Վրաց սիրուններ, ի՛նչ սիրուն Շուշան
Հայոց աշխարհից քաղեց ձեր Արքայն:
Վրաց սիրուններ բաց արէք ճամբան,
Հրէն գալիս է ձեր թագուհին աննման:
Վրաց սիրուններ, ո՞վ կարէ չափել
Այն բարակ ունքեր, սե սե մեծ աչքեր:
Այն մարմար երես՝ սե մազի միջում,
Կարծես զիշեր է, լուսնեակ է ծագում:
Վառվում է վառվում իւր կոլոր թուշեր,
Ո՞նց Գողթան կարմիր գինու բաժակներ:
Հայոց Շուշանիկ, քո բոլոր ղուրբան,
Ծալվում է մէջքդ տաք մոմի նման:
Հայոց դրախտի ի՛նչ թուշուն ես դու,

Որ քեզ տանում ես խելք ու միտք մարդու:
Այն թեթև ոտերդ, թե առած ուսերդ
Թռչում են Մցխէթ, ծփալով մազերդ:
Հայոց Շուշանիկ, օտարանում ես,
Ել չես տեսնիլ քո Հայրենեաց երես:
Հայոց Շուշանիկ, գընաս դու բարով,
Հաստատ մնաս միշտ դու քո հաւատով:
Գողթան երգիչներ, հնչեցէք ձեր սազ,
Հարս փեսայ դառան Մասիսն ու Կովկաս:
Գողթան երգիչներ, ձեր ձայնին մատաղ,
Երգէք, պար բռնեն Կուր գետն ու Երասխ:

Սամուէլ Գիւլղատեանց.

159.

Գ ե Ր Ի Յ ո յ ն.

Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թռչում եմ դէպի քեզ հոգւովս անդադար.
Բայց, աւանդ, այս բանտում փակված եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կռվում և ես:
Հանապաղ տանջուեցայ քո ճակատագրով,
Սրտումս շղթաների ձայներ կրելով...
Ձեմ կարող մոռանալ իմ ազգ հարազատ,
Ա՛խ, կամ ոչնչանալ, կամ լինիլ ազատ:
Քաջ ընկերներովս հեշտ է ինձ կռվիլ,
Եւ սուրբ գործքի համար քաղցր է մեռանիլ,
Բայց, աւանդ, այս բանտում փակված եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կռվում և ես:
Ձը գիտեմ, ի՞նչպէս է կռիւն հրդեհովում,
Ես չունիմ ոչինչ լուր, բայց լուրն է թռչում...

Տարվում է միշտ համբաւ սպանութեան ահեղ,
Թափվում է ազգ-արիւն, բայց ես չեմ այն տեղ:
Ա՛խ, քո ազատութիւն փոթորկի մէջ է,
Եւ վառ արշալուսով քո օր կարմրում է...
Թո՛ղ այս տեղ չարչարվիմ անծանօթ կապված,
Միայն քեզ, Հայրենիք, տեսնեմ ազատուած:

Յովհաննէս Բուշուբէզեանց.

160.

Հայոց աղջիկներ՝ ձեր հոգուն մատաղ,
Երբ միտս էք գալիս՝ ասում եմ ես ան,
Հալվում եմ, հալվում օտարութեան մէջ.
Ա՛խ, սիրտըս խորվում, ցաւիս չըկայ վերջ:

Երբ կարմիր գինին բաժակումս ածած՝
Սեղանիս վըրայ առաջս է դրած՝
Աչքըս ակամայ վըրան եմ ձըգում,
Ձեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում:

Տեսնում եմ և, ան, միտքս է մոլորվում,
Դառն արտասուքով աչքըս պըղտորում,
Կարծում եմ բոլոր աշխարհն մըթնեց,
Արեւն-էլ խաւրեց, էնդուր որ տխրեց:

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մեռնեմ,
Ձեր սիրուն աչերն էլ երբ կըտեսնեմ,
Էն սե սե աչերն՝ սե ունքով պատած,
Կարծես՝ երկնային զալամով քաշած:

Էն սե սե աչերն, որ շատին սպանեց,
Բայց էլի շատին գըժոխքից հանեց,
Ես-էլ կենդանի տեղովս եմ մեռած,
Առանց կըրակի էրուած, խորոված:

Ել էրբ կրտեսնեմ ես ձեզ ման-դալիս,
 Բաղ ու բաղչայում սէյրան անելիս,
 Ինչտեղ ամօթից վարդն-էլ է դեղնում,
 Երբ-որ ձեր կարմիր թըշերը տեսնում:

Բըլբուլն էլ վարդից ձեր ձայնը լսելիս՝
 Թըռչում է, թըռչում, ամպերում կորչում
 Եւ իր Արարչի տեսածն ասելիս
 Փառք քեզ, Տէր Աստուած, փառք քեզ է կանչում:

Հայոց աղջիկներ, ի՞նչ անուն տամ ձեզ.
 Թէ՛ հրեշտակ ասեմ՝ հրեշտակ չեմ տեսել,
 Թէ՛ մարդ անուանեմ՝ բեղամաղ կ'անեմ,
 Ուրեմն ի՞նչ անեմ, մոլորուած եմ ես:

Մոլորուած եմ ես օտար աշխարհում,
 Հաւատն-էլ օտար, օտար և լեզուն,
 Աղջիկն-էլ օտար ու ձեզ չի նրման,
 Հայոց աղջիկներ, դուք էք աննրման:

Ձեր սէրն է միայն սըրտումս պահած,
 Ձեր սիրով միայն եմ ես կենդանի,
 Ձեր սէրը միայն էս կեանքս մաշուած
 Օտարութեան մէջ դեռ կըպահպանի:

Գէորգ Միրիմանեանց.

161.

Պ ա ը - ե ը գ .

Հայկազունք, պար բռնենք,
 Թե ի թե, օն, ելնենք,
 Յնծութեան ձայներով
 Եւ զուարթ սրտերով:

Զի ահա՛ ՚ի նոր բաղդ
 Զայն կուտայ երկինք արդ,
 Ի սուրբ կոչում ուխտեմք հաստատ
 Անձնուէր գոլ պատրաստ:

Ս. Պ. Պ. Փափաղեան.

162.

Ե ը գ ծ ա ղ կ ա ց ա ն ի .

«Ծիծեռնակի» եղանակով.

Հատիկ, դո՛ւ, իմ հատիկ,
 Ահա մուծ քո տընիկ.
 Արեգից զրկվելով՝
 Ննջիր աստ, դո՛ւ, խղճիկ:

Ահա ես կը ծածկեմ
 Քո երես սառ հողով.
 Գերեզման կը շինեմ
 Քեզ համար՝ իմ ձեռով:

Եթէ դու լինէիր
 Բանախօս կենդանի,
 Գուցէ ինձ կ'ասէիր
 Տխուր բան այսպիսի.

«Զրկվելով արեգի
 Շողշողուն վառ լուսից,
 Ել ի՞նչ կեանք այսպիսի
 Պիտ' կըրեմ այս բանտից»:

Հատիկ, դո՛ւ, իմ հատիկ,
 Մի տխրիր հոգալու.

Այստեղ է շատ փափկիկ
Եւ հանգիստ՝ քրնելու:

Շուտով դու կը զարթնես
Գեղեցիկ ոստերով
Եւ կըրկին կըլինես
Նոյն ծաղիկ՝ նոյն հոտով:

Հատիկ, դձև, իմ հատիկ,
Դէհ, լըսիր իմ խօսքին,
Որ կ'ասեմ ես այժմիկ
Մի առ մի գըլխովին.

—Նոյնպէս ինձ կըսպասի
Այդպէս մութ գերեզման,
Որ մարդիկ տխրալի
Հառաչեն իմ թաղման:

Ես այնտեղ ննջելով՝
Կըսպասեմ մեծ յուսով,
Երբ Փրկիչ ինձ ձայնէ.
«Վեր կացիր, Գրիգորէ»:

Թարգմ. Ա. Գրիգորեանց.

163.

Հ ա յ ո յ Լ ե զ ու .

Հայոց լեզու, Ադամայ լեզու,
Նախ էիր մայր գիտութեանց դու,
Ընդէր եղեր աւերակի բու.
Դու շատ հին ես, թանգագին ես,
Թագուհին ես լեզուաց և ազգու:

Դուռն իմաստից ընտիր տառերով,
Զոր եգիտ Մեսրոպ Հոգւովն Սրբով,
Լեզուաց միջին մէկ ընդարձակ ծով.
Դու շատ հին ես, թանգագին ես,
Թագուհին ես լեզուաց և ազգու:

Յայտնի կոչէ սուրբ գիրք Ծննդոց՝
Թէ քեւ Եւային խաբեաց մէկ չար օծ,
Մեզ վիճակած եղև դառնութիւն և կոծ.
Դու շատ հին ես, թանգագին ես,
Թագուհին ես լեզուաց և ազգու:

Օտար ազգաց կոշտ լեզուները
Հասուց լրութեան ազգային սէրը.
Աղաւաղեցին քեզ քո հայերը.
Դու շատ հին ես, թանգագին ես,
Թագուհին ես լեզուաց և ազգու:

Հայք կորուսին գայիսոն, թագ, գահ,
Սէյեադ, մնացել է միմիայն անմահ
Լեզուն՝ որ ազգի է վահան, զրահ,
Դու շատ հին ես, թանգագին ես,
Թագուհին ես լեզուաց և ազգու:

Պետրոս Մաղաթեան.

164.

Ես Հայոց ազգին մէկ բան եմ ուզում,
Եւ այդ մէկ բանն է—հիմնաւոր ուսում:

Հայոց երգերը, սէրն և գինին
Մեր շրջանիցը անպակաս լինին.
Ապրինք պարզ սրտով, միաբան, ուրախ,
Միայն չար բանից ունենանք մենք վախ:

Եղբւորք սիրելիք, մեր սրտերու մէջ,
Ինչպէս երկնային արեգակ անշէջ,
Թող պահէ հաստատ երկնային Տէրը
Անգին հայրենեաց բոցավառ սէրը:

Կեցցէ մեր հաւատ, երգենք միաբան,
Մեր ազգայնութեան միակ պահապան,
Նորա մոռացող, ուրացող հային
Անուանենք ընկեր մատնիչ Յուդային:

Կեցցէ յաւիտեան մեր գանձ թանգագին—
Մեր հայոց լեզուն քաղցրիկ նորածին.
Թող նա զօրանայ, ծաղկի և աճի
Ապահովութեամբ Աստուծոյ Աջի:

Հայոց երգերը, սէրն և գինին
Մեր շրջանիցը անպակաս լինին.
Ապրինք պարզ սրտով, միաբան, ուրախ,
Միայն չար բանից ունենանք մենք վախ:

165.

Վարդան Մամիկոնեանի երգը.

Հիմի էլ լըռենք, եղբարք, հիմի էլ,
Երբ մեր թըշնամին իր սուրն է դըրել,
Իր օրհասական սուրը մեր կըրծին,
Ականջ չի դընում մեր լաց ու կոծին,
Ասացէք, եղբւրք Հայեր, ի՞նչ անենք,
Հիմի էլ լըռենք:

Հիմի էլ լըռենք, երբ մեր թըշնամին
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,
Ջընջեց աշխարքից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը.

Խըլեց մեղանից թագ և՛ խօսք և՛ զէնք.—
Հիմի էլ լըռենք:

Հիմի էլ լըռենք, երբ մեր թըշնամին
Խըլեց մեր սուրը—պաշտպան մեր անձին,
Մըշակի ձեռքիցն էլ խփը խըլեց,
Այդ սուր ու խփից մեր շղթան կըռեց,
Վա՛յ մեզ, շղթայով կապած գերի ենք,—
Հիմի էլ լըռենք:

Հիմի էլ լըռենք, երբ մեր թըշնամին
Սոսկալի գէնքը բըռնած մեր գըլխին,
Կուլ տալ է տալիս արտասունք առատ,
Աղէխարշ բողոք վարուց ապիրատ.
Մեր գլուխը լալու եփրատ ուր պըտուենք,—
Հիմի էլ լըռենք:

Հիմի էլ լըռենք, երբ մեր թըշնամին
Լիրբ գոռոզութեամբ լցրած իր հոգին,
Արգարութեան ձայնն հանած իր սրտից,
Արտաքսում է մեզ մեր բընիկ երկրից,
Պանդուխտ, հալածեալ եղբարք, ուր դիմենք.
Հիմի էլ լըռենք:

Հիմի էլ լըռենք, երբ մեր թըշնամին,
Անգոհ մեր բերած ծանր զոհերին,
Իւր լիրբ, նըզոված ձեռքը կարկառեց,
Ազգութեանս վերջին կապը պատառեց.
Հայի կորուստը մօտ է, ի՞նչ անենք,—
Հիմի էլ լըռենք:

Հիմի էլ լըռենք, երբ մեր թըշնամին,
Արհամարհելով մեր փառքն ազգային,
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գառնազգեստ գալլին մեզ գլուխ դըրաւ,
Սուրբ խորան չունինք, արդ ուր աղօթենք,
Հիմի էլ լըռենք:

Հիմի էլ լրուենք՝ մարդիկ ի՞նչ կ'ասեն,
 Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,
 Ձեն ասիլ, որ Հայք արժանի էին
 Այդ ստորկական անարգ վիճակին.
 Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,-
 Մինչև երբ լրուենք:

Թող լրուէ մունջը, անգամալոյծը,
 Կամ՝ որոց քաղցր է թըշնամու լուծը,
 Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
 Ե՛կ անվախ ելնենք թըշնամու առաջ,
 Գոնէ մեր փառքը մահով յետ խըլենք-
 Ու այնպէս լրուենք:

Ռ. Պատկանեան.

166.

Հնչեսցեն լարք զեղգեղ ի սուլ,
 Քնարաց Հայոց սփերաց,
 Եւ ի Մասեաց ձայնք ծն անգուլ
 Երգովք ախորժ մաղթանաց:
 Դըրուատեսցին ի քաղցր ի նուազս
 Ազգանուէր գործք սիրալիք,
 Հուշակ հարցեն երկրի ցծազս,
 Փառաւոր անուն քաղցրիկ:
 Երկարեսցին աւուրք կենաց
 Տեառն Գէորգեայ մեր պետի: (*)

*) Երջանկայիչատակ Գէորգ Զորբորդ Կաթողիկոսն Ամենայն Հայոց վախճանուել է 1882 թ. դեկտեմբերի 6-ին: Նորա պեանքի և նորա իմաստուն ու փառաւոր գործունէութիւնների հետ ծանօթանալ ցանկացողներին կ'հրաւիրէի կարգաւ «Սոխակի» հինգերորդ հատորի մէջ՝ 186—195 երեսները:

Գ. Ա. Ք. Գրիգորեանց.

Եւ հիւսեսցին թագ պարծանաց
 Մեծարդիւն Հայրապետի:

Օ՛ն, Հայաստան, խինդ ի դէմս, խինդ ի դէմս
 Կաց օրհնաբան ի հանդէս, ի հանդէս,
 Զգեցի՜ր հանդերձ ծիրանիս,
 Եւ տո՛ւր լուղերձ զաւետիս:

Հոգեհատոր իմ որդիք,
 Գտի ահա՛ պաշտպան հրգօր,
 Եւ պաշտելի հայրենիք
 Պանծասցի ի Տէր Գե՛որգ:

Վահրամ վ. Մանկունի.

167.

Հրաւէր դէպ ի ուսումնարան.
 (Նուէր հայ մանուկներին).

Հայոց մանուկներ, փոքրիկ կտրիճներ,
 Վշտահար հոգուս միակ բժիշկներ,
 Վեր կացէք շուտով, բացէք ձեր աչքեր,
 Տեսէք ի՞նչ քաղցրիկ երգում են ծտեր:

Արեն էլ ահա՛, գարնան վարդի պէս,
 Բացել է իրա փայլունակ երես,
 Եւ վարդակարմիր ճաճանչներ պէսպէս
 Սփռել, զարդարել դաշտեր գեղատես:

Ահա՛ արտուտը, սիրուն սոխակը,
 Իր ձաղուկներով և ծիծեռնակը
 Թռչում են ուրախ կապուտ երկնի տակ
 Եւ երգում իւրեանց երգը ներդաշնակ:

Տեսէք, մինչ անգամ և մըջիւնները
 Մաքրում են շտապով իւրեանց բները,

Նոքա շինում են շտեմարաններ՝
Զրմեռուայ Համար ածելու սերմեր:

Դուք էլ, մանուկներ, վեր կացէք շուտով,
Զեռք ու երեսներդ մաքրեցէք ջրով,
Եւ դէպի երկինք պարզած աչքերով՝
Աղօթք կարդացէք ջերմեռանդ սրտով:

Մանուկներ, խնդրեմ, ձեր արդար բերնով
Եւ քանի կաթիլ ջերմ արտասունքով՝
Խնդրեցէք Փրկչից, որ խեղճ Հայ ազգին
Միշտ պահէ անփորձ իւր թւի տակին:

Խնդրեցէք Փրկչից սրտով և հոգով,
Որ իւր փրկարար մաքուր արիւնով
Ձրէ՛ չորացած Հայ ազգի այգին,
Որ տայ արժանի պտուղ իւր Հօտին:

Խնդրեցէք Փրկչից, անմեղ մանուկներ,
Ա՛խ... մեր մէջ ցանէ միութեան սերմեր,
Որ սիրենք միմեանց որպէս եղբայրներ,
Մի սիրտ, մի հոգի լինինք ողջ Հայեր:

Խնդրեցէք Փրկչից, որ պահէ Հաստատ
Մեր Սուրբ Աթոռն՝ ի Վաղարշապատ,
Տայ պայծառութիւն մեր եկեղեցուն,
Յարատեութիւն մեր մաքուր Կրօնին:

Աղօթքից յետոյ՝ դուք զուարթ սրտով
Հարկաւոր գրքեր ժողովէք շտապով,
Դէպ ուսումնարան արագ քայլերով
Վազեցէք իսկոյն ուսման փափագով:

Այնտեղ են բոլոր ձեր ընկերները,
Այնտեղ ձեր բարի վարժապետները,
Վարժատունն է ձեր առաջին մայրը,
Վարժապետը—ձեր բարի ծննդաբեր:

Թագաւոր, իշխան..., տղայ թէ աղջիկ,
Այս մեծ աշխարհում, թէ մեծ, թէ փոքրիկ,
Ուսումով միայն Հասան մեծ փառքի,
Ուսումն է ճրագ Համայն աշխարհքի:

Վարդնի.

168.

Ա. Ղ Ջ Կ ա յ Ե ր Գ.

Հստ եղանակին

Ты душа-ль моя, красная дѣвица,
Ты звѣзда-ль моя, ненаглядная.

Հանգիստ, իմ անոյշ, անցար, գնացիր,
Միայն վերք անբոյժ սրտումս թողեցիր,
Սոխակն գեղեցիկ կանաչ պարտիզում,
Երգելով քաղցրիկ ինձ չէ գրաւում:

Քեզանով միայն երջանիկ էի,
Տիկին ինքնիշխան ինձ կարծում էի.
Յերեկը մենակ փակուած սենեակում,
Ողբում եմ անյագ, ո՛չ ոք չէ լսում:

Դիշեր է գալիս—մահիճ եմ մտնում,
Տրտում է հոգիս, քունս չէ տանում.
Մազեր թուխ, երկայն, աչեր գրաւիչ,
Ի՛նչ հասակ, ի՛նչ ձայն, ի՛նչ հոգի կտրիճ:

Ո՛հ, սիրտս այրուած, ողջ քեզ է կանչում,
Ողջ քո անմոռաց անունդ լիշում.
Անգհւթ. ինձ խաբեց, ուրիշին սիրեց,
Ա՛խ, նա ինձ դեռ վաղ պատրաստեց դադադ:

Ս. Շահազիզեան.

169.

ձ ա մ ք ի ն.

Հայրենիքիս վառ երազով՝
Գիշերն ինձի քուն բերեց,
Եարաբ հով էր անուշ ձենով
Խորունկ քնէս ձէն տուեց.
«Վեր ել, ճամբորդ, դարձիւ ախպէր,
Բարի լուսը բացուեր է.
Երազիդ մէջ շատ ես լացեր,
Աչքներդ թրջեր է...»

Արեւն ելաւ ցոլցլալով
Աղօթարանի պալատէն,
Սև թևերը թափ ծափ տալով՝
Հաւքեր կ'անցնին երկնքէն:
Ղարիւպ հաւքեր, դարդոտ հաւքեր,
Ես էլ դարդլու ճամբորդ եմ.
Կեցիք, հաւքեր, մէկ տեղ երթանք,
Ես էլ ձեզ պէս դարիւպ եմ...

Ա՛խ, մեր գեղեր—տեղերն կերթամ,—
Էնոնց շատ եմ կարօտեցեր.
Թռչնած սրտով՝ դարդլու կ'երթամ,—
Գէօզալ եւր եմ կորուցեր.
Գողտուկ լալով՝ սիրտս էլման
Արտըսուքով լցուեր է.—
Ազիզ մօրս, ջանքիս կերթամ,—
Աշխարհ ինձի մոռցեր է...

Դերենիկ Դեմիրձեան.

170.

✓ «Հ ա ք ը ը ք ա ն».

Հաքըրբան, ջանէ ջան,⁽¹⁾
Հաց եմ թխել գարի ա,
Իմ եարը սափարի ա,
Եւր ջան, սափարիդ ղուրբան,
Խօսքերդ շաքարի ա:

Պուճուր աղջիկ սեւաւոր,
Խալիսի դռները սավոր,
Գնա՛, մէրդ կանչըմ ա,
Թո՛ղ ինձ չանէ մեղաւոր:

Ծառատակին ջուխտըմ դօչ,
Մինը փնջած, մինը ո՛չ,
Աստուած, դարգեահիդ մեռնեմ,
Մընին կ'տաս, մընին ո՛չ:

Լուսնեակը պահ ա մտել,
Անուշ եարս չեմ գտել,
Աչքս արտասուք լցուած՝
Ես տեղաշոր չեմ մտել:

Բաղիդ մէջ կայ երկու ծառ,
Տղայ, արի ինձի տա՛ր,
Աստուծուն մատաղ կ'անեմ
Երկու շիշակ, երկու գառ:

Շատ մի անի վար ու ցած,
Ես քեզ վաղուց եմ տեսած,

1) Կրկնել իւրաքանչիւր տան սկզբին:

Մենք իրարու նման ենք,
Մէկ խնձոր էրկու կիսած:

Նոր տնկած բաղի բար ես,
Մեզի թաղա նուբար ես,
Անունիդ մեռնեմ, ջիւան,
Աշխարքին բարբար ես:

Փափաղդ ծուռ ես դրել,
Գօտիկդ նուռ ես դրել,
Ծոցումս դեղին ոսկի
Դու էրկու բուռ ես դրել:

171.

Առ Խրիմեան Հայրիկ.

Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիք,
Վասպուրական մեր աշխարհ
Վարդի փոխան քեզ փուշ բերաւ,
Ցաւերդ դառան բիւր հազար:

Մայիսն եկաւ սոխակներով
Վարդի մի թուփ որոնեց,
Իսկ այդ թփից մացառ գտաւ,
Լալահառաջ ձայն տուաւ:

Հայրիկն ասաց՝ իմ Հայրենեաց
Փուշն անուշ է քան զվարդ.
Ես այն փշոց մէջը դարձեալ
Կը որոնեմ սիրուն վարդ:

Այդ սայրասուր փշերն ամեն
Փունջ կապեցէք շարիշար,
Թողէք զլիսս պսակ կապեն,
Որուն ճակատս է յօժար:

Հայրիկ, Հայրիկ, քո սուրբ ճակատ
Արիւն-արցունք են, ոհ, միշտ,
Փթթեալ վարդից կարմիր թերթեր
Կը պսակեն փառաց զարդ:

172.

Վայր ընկնող աստղեր.

«Հայրիկ, ասաց դուստրը հօրը,
Կապոյտ երկնքի վերայ
Ո՞րքան աստղեր փայլում են վառ,
Ասես, համար, թիւ չը կայ:
Ասում են որ՝ ամենայն մարդ
Աստղիկ ունի երկնքում.

Չձմարի՞տ է, ասա՛, Հայրիկ,
Իմը ո՞րտեղ է փայլում»:

—Այո՛, դստրիկ, այդ աստղերը
Ունին հաշիւ ու համար
Եւ մեզանից իւրաքանչիւր
Մի աստղ ունի իւր համար:

«Հայրիկ, տես տես, աստղը թռաւ,
Յետքից պայծառ գիծ թողեց.
Աստղիկն ընկաւ երկրնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց»:

—Ո՛հ, իմ դստրիկ, հանգիստ կացիր,
Դա մեծատան մի աստղ էր,
Որ իւր օրում, իւր կեանքումը
Խիղճ ասածը չըդիտէր.

Աղքատները նորա դռնից
Գիշեր ցերեկ հալածուած.
Մի մարդ չըկար նորան ծանօթ,
Որ չըլինէր վշտացած:

«Հայրիկ, դարձեալ թռաւ մի աստղ,
Վայր ընկաւ նա երկնքից.

Հայրիկ, ովի՞ աստղն էր արդեօք,
Որ զրկուեցաւ իւր տեղից»:

—Ո՛հ, դստրիկս, հանգիստ կացիր.

Կեղծաւորի դա աստղ էր,

Որ իւր օրում ուղիղ մի խօսք

Մարդու երբէք ասած չէր.

Փարիսական իւր ձևերով

Աշխարհ խաբեց, զարմացուց.

Այդ պատճառով Աստուած նորա

Աստղի լոյսը խաւարցուց:

«Հայրիկ, տես, տես, միւս աստղ թռաւ
Եւ գիծ անգամ չը թողեց.

Աստղիկն ընկաւ երկնքիցը,

Միւս անգամ այլ չերևեց»:

—Ո՛հ, սիրական, խաղաղ մնա,

Բռնակալի դա աստղ էր.

Որ աշխարհը իւրեան գերի

Ծընած օրից կարծել էր.

Շատ հալածանք, շատ նեղութիւն

Պատճառեց նա իւր կեանքում.

Շատ տուն քանդեց, շատ մարդ զրկեց,

Գուլթ չունեցաւ իւր սրտում:

«Ապա այն ի՞նչ աստղ է, հայրիկ,

Որ այնպէս պարզ վառվում է.

Նորա մաքուր, պայծառ լոյսը

Զորս կողմը բակ բռնել է»:

—Ո՛հ, իմ դստրիկ, աղօթք արա,

Դա ծերունու մի աստղ է,

Որ իւր կեանքում ոչինչ մարդու

Ոչինչ վնաս տուած չէ.

Այն լուսաւոր բախն է նորա

Առաքինի գործերը.

Աղօթք արա, որ երկարին

Նորա կեանքի թելերը:

Շատ օր չանցաւ, երկնքիցը

Մի այլ վառ աստղ պակասեց.

Ովի՞ աստղիկն էր, որ ընկաւ,

Բան հարցանող չերևեց:

Մինչդեռ լուսինը արծաթափայլ

Լոյս էր տալիս գիշերին,

Խորհրդաւոր մինչ տիրել էր

Անվրդով, խոր լռութիւն.

Մի սրտաթափ, մազերն արձակ

Վազեց աղջիկ սրգաւոր

Դէպի գեղի գերեզմանքը,

Ծունկ չոքեց մի շիրմի մօտ:

«Հայրիկ, աստղիկդ չէ՞ փայլում,

Դու յաւիտեան քընցեցիր.

Ա՛ռ ինձ քո մօտ, քո ծոց, քո գիրկ,

Ինչո՞ւ անտէր թողեցիր:

Իմ աստղիկն ասո՞ւ նոյնպէս,

Որ չը փայլի, հերիք է.

Այս աշխարհը ինձ առանց քեզ,

Մուլթն ու խաւար մի բանտ է»:

Մի մարդ չը կար, որ նկատէր,

Որ հետեւալ գիշերին

Պակասեցաւ երկնքիցը

Մի պայծառ աստղ խնդազին:

Երբորդ օրը շատ սրգաւորք

Փորեցին մի գերեզման,

Ուր թաղուեցաւ իւր հօր մօտին

Մարմինը խեղճ աղջրկան:

«Հայրիկ, տես տես, աստղը թռաւ,
Յետքից պայծառ գիծ թողեց,
Աստղիկն ընկաւ երկընքիցը,
Միւս անգամ այլ չերևեց...»

Կոմս Էմմանուէլ. (Մ. Նալբանդեանց)։

173.

Ի յիշատակ ողբացեալ Մ. Մամուրեանի. (*)

Հոգւոյդ հանգիստ, մեծահոգիդ Մամուրեան,
Փառք մեր տոհմին, պարծանք հանուր հայութեան,
Քրտանց կաթիլն արցունքներու հետ խառնած՝
Բոլորեցիր կեանք մը բեղուն, լուսարծարծ։

*) Մատթէոս Յովհաննիսեան Մամուրեանը Տաճկաստանցի է և ծնունդով Զմիւռնիայում 1830 թուին։ Նա, հայ գրական աշխարհի մէջ, նշանաւոր գործիչներից միին էր՝ որպէս մանկավարժ, որպէս վիպագրող և որպէս հրապարակաօր։ Նա բազմաթիւ, ինքնուրոյն և թարգմանական գրութիւններ ունի վիպական, համակարգական, թատերական, մանկավարժական, պատմական և իմաստասիրական բովանդակութեամբ։ Հանգուցեալ Մամուրեանն ունէր և իւր օրգանը, «Արեւելեան Մամուլ» անունով ամսաթերթը, որը մի լուրջ և բազմակողմանի բովանդակութիւն ունեցող հրատարակութիւն էր, և որը լոյս էր տեսնում Զմիւռնիայում՝ 30 տարի շարունակ։ Անցեալ 1899 թ. հոկտ. 17-ին, Զմիւռնիայում, փառաւոր հանդէսով տօնուցաւ նորա գրական-հասարակական արդիւնաւէտ գործունէութեան յիսնամեայ յոբելեանը, տեղւոյն գեր. Մեքիսեդեկ Սրբազանի նախագահութեամբ։

Նւ այսպէս, հայոց գրականութեան և մամուլի արեգարդ Նահապետ Մ. Մամուրեանը յիսուն տարի հայ գրական անդամների մէջ անվաստակ գործելուց յետոյ, 1901 թ. յունվարի 1-ին, 70-ամեայ հասունացած հասակում, փոխվում է 'ի Տէր, թողնելով իւր ետեւից մի պայծառ գիծ, մի անջնջի յիշատակ՝ իւր ուշադրութեան արժանի աշխատութիւններով և, երբեմն էլ, «Շահնուր» ծածկանուն սրամիտ և ազդու թղթակցութիւններով։

Գ. Ա. Բ. Գրիգորեանց։

Մարտիրոսի վառուած անբիծ հաւատքով՝
Մինչև վերջը մաքառեցար անվրդով.
Ու երբ մահը հասաւ տալ քեզ հուսկ հարուած՝
Գտաւ ըզքեզ դափնիներով պսակուած։
Դեռ կենդանի՝ փառքիդ վկայ դու եղար,
Ու մեռնելով՝ յանմահութիւն սլացար։
Քու յիշատակդ մնայ յաւէտ անմոռաց՝
Սիրած Ազգիդ սրտին, հոգւոյն հետ կապուած.
Այս պիտ' ըլլայ քու սիրելեաց վեհ ըղձանք,
Այս մտերմիդ ցաւած սրտին ըսփոփանք...։

Ա. Տիվրիկեան.

174.

Առ Զեփիւռն Ալէմտաղի,

Ձմեռն անցաւ, գարունն է արդ,
Բլբուլի դէմ բացւում է վարդ,
Լեռներ, դաշտեր գորգով ծածկուած,
Կենդանութեան արին նոր զարդ։

Շող լուսնեակին

Կոյսն ու ծաղիկ

Միմեանց գգուին

Սիրատարփիկ։

Այս, փափկասուն մանկիկ ղեփիւռ,
Անուշ հոտով ծաղկանց սփիւռ,
Աղբերց վրայէն լուսակարկաջ
Ի՜նչպէս թռչին կուսին առաջ։

175.

✓ Դարիբ Մշեցուն.

Դարիբ աղբէր, արի մեր տուն,
Բուք-բօրանին ուր կերթաս,
Հերիք այդքան թափառելով,
Սև դարդերդ քամուն տաս:

Անտուն աղբէր, արի մեր տուն,
Էս էլ հայի օջախ է.
Իմ պաղ ջուրս, սև-չոր հացս
Քեզ պէս աղբօր հալալ է:

Մշակ աղբէր, արի մեր տուն,
Դարդ ու ցաւդ ինձ պատմէ,
Լաց-լացի տանք էս մեծ տօնին,
Սիրտս լացի կարօտ է...

Տ. Շուշ. Կուռդինեան.

176.

Լեւոն վեցերորդ բանտի մէջ.

Մտաւ արևս երջանկութեան, գլխիս պատեց մութ,
Գլխիս պատեց մութ.
Քաղցրիկ օրերս, պայծառ ժամերս ի՞նչպէս անցան շուտ,
Ի՞նչպէս անցան շուտ.
Գիշեր ցերեկ կ'հառաչեմ, չ'կայ ինձ օգուտ,
Չ'կայ ինձ օգուտ.
Էս իմ ցաւերս, էս իմ վշտերս որո՞ւն ես պատմեմ,
Որո՞ւն ես պատմեմ.

Աշխարհ ինձի աւերակ է, մինչ հայէ զուրկ եմ,
Մինչ գահէ զուրկ եմ,
Մինչ թագէ զուրկ եմ:

Ո՛հ, հայրենիք իմ անտէրունչ ցաւոց մէջ հեծէ,
Ցաւոց մէջ հեծէ.

Մի՞թէ սիրտս ապառաժ է, որ չը հառաչէ,
Որ չը հառաչէ.

Իւր հայրենիք, պալատ, զինուորք ի՞նչպէս չ'իշէ,
Ի՞նչպէս չ'իշէ:

Էս իմ ցաւերս, էս իմ վշտերս, Փարիզ, քեզ պատմեմ,
Փարիզ, քեզ պատմեմ.

Դու մի լինիր ինձ աւերակ, քեզի կը դիմեմ,
Օգնութիւն խնդրեմ,
Գթութիւն խնդրեմ:

Ամիսս է դար, օրըս՝ տարի, ո՛հ, ժամերս՝ ամիս,
Ո՛հ, ժամերս՝ ամիս.

Սէր Կիլիկիոյ անտէր գահոյս լալով կոչէ զիս,
Եզիպտացիք, ազգ խուժադուժ քանդեն հայրենիքս.

Էս իմ ցաւերս, էս իմ վշտերս, Լոնդոն, քեզ պատմեմ,
Դու մի լինիր ինձ աւերակ, քեզի կը դիմեմ,

Օգնութիւն խնդրեմ,
Գթութիւն խնդրեմ:

Մէջ վանդակիս փակեալ Լեւոն սէգ առիւծն հայոց,
Սէգ առիւծն հայոց.

Բացէք վանդակս, եւրոպացիք, տեսէք զոյժն հայոց.
Տեսէք զոյժն հայոց.

Վերջին ոյժն եմ, վերջին ճիւղն եմ Ռուբինեան գահուն,
Լուսինեան գահուն:

Էս իմ ցաւերս, էս իմ վշտերս էլ ո՞ւմ ես պատմեմ,
Էլ ո՞ւմ ես պատմեմ.

Փարիզ, Լոնդոն աւերակ են, իզուր մօրմօքեմ,
Օգնութիւն խնդրեմ,
Գթութիւն խնդրեմ:

Վերջին կտակս ձեզ, ով Հայեր, սիրով միացէք,
 Հոգւով միացէք.
 Զեր միութեան և սիրոյ մէջ սատար խնդրեցէք,
 Փրկիչ խնդրեցէք:
 Էս իմ ցաւերս, էս իմ վշտերս ձեզ պատմեմ, Հայեր,
 Զեզ պատմեմ, Հայեր.
 Աշխարհ ձեզի աւերակ է՝ թէ դուք չունիք սէր,
 Թէ դուք չունիք սէր:
 Ո՛հ, բաց արէք ձեր հին վերքեր. դուք էք ձեզ խոցած,
 Դուք էք ձեզ խոցած.
 Հայն 'ի Հայոց, ոչ յօտարաց է միշտ յաղթուած,
 Է միշտ յաղթուած.
 Քէն և նախանձ Հայոց ազգի տուն տեղն է քանդած,
 Տուն տեղն է քանդած:
 Դուք ձեր վերքեր, դուք ձեր խոցեր սիրով բուժեցէք,
 Սիրով բուժեցէք.
 Աշխարհ ձեզի աւերակ է, թէ զիրար չ'սիրէք,
 Թէ Մասիս չ'սիրէք,
 Թէ կրօն չ'սիրէք:

Ա. Գնունի.

177.

Մեր կեանքի նման ոչ ոք կեանք չունի,
 Միշտ ազատ, ուրախ խմում ենք գինի:

Տրա լա լա լա և այլն:

Ամեն սար ու ձոր, ամեն տափ, մէրի

Մեր պալատներն են սաղ բոլոր տարի:

Տրա լա լա լա և այլն:

Մեր ատամանը մեզ լաւ է պահում,

Մեր ամեն հոգսը նա ինքն է քաշում:

Տրա լա լա լա և այլն:

Թէ գործ պատահի, ու լաւ կատարենք,
 Միշտ մեր փայլ մենք Հալալ ստանում ենք:
 Տրա լա լա լա և այլն:
 Ամեն երկրումը ջոկ անուն ունենք,
 Ամեն տեղ սիրող մենք Հեշտ ճարում ենք:
 Տրա լա լա լա և այլն:
 Ուրեմըն խմենք լի թասով գինի,
 Մեզ նման քէֆով ոչ ոք կեանք չ'ունի:
 Տրա լա լա լա և այլն:

178.

Ա. Ղ. Թ. ք. մ. ա. ն. կ. ա. կ. ա. ն.

Մեր փոքրիկ հօտին՝ նայի՛ր դու, Տէր, Տէր,
 Տէր Յիսուս Քրիստոս՝ խնամող հոգւոյս մեր:
 Երբ քոյ անունով՝ այստեղ ժողոված
 Կարդում ենք այս երգ՝ առ քեզ, ով Աստուած.
 Սուրբ Աստուած հզօր՝ Հոգիդ սուրբ ընդ հօր,
 Սփռի՛ր քոյ շընորհ՝ մեր մէջ աստանոր:
 Բոպէք և ժամեր՝ մեր կենաց համար
 Արա՛, որ չ'անցնին՝ զուր և վայրաբար,
 Որով կարենանք՝ այս և այն կեանքում
 Ուրախ վայելել՝ բարիքդ անտրտում:
 Վասն զի դու ես՝ Տէր մերոց կենաց,
 Եւ քեւ կարող ենք՝ հասնել քոց փառաց:
 Բարեբա՛ր Աստուած՝ մեր հոգւոյ աչքը
 Բաց, լուսաւորեա՛, տեսնել քո փառքը:
 Ա՛ռ մեզ քո գիրկը՝ օրհնի՛ր դու մեզ, Տէր,
 Այն մանկանց նման՝ որոնց օրհնեցեր:
 Յաւել 'ի մեզ, Տէր՝ հաւատ, յոյս և սէր,
 Որ քան զամեն բան՝ քեզ սիրենք մենք, Տէր:

Էիդ անմահի՛ միշտ ձայն գոհութեան
Մեր թոթով լեզուից՝ մատչի յաւիտեան:

Մ. Ե. Ս.

179.

Շ ո ա յ լ ու թ ի լ ն.

(Թիֆլիսեցու զանգատներ).

Մէկը, տեհար—շլեպայով,
Քաշած ձեռին շան կաշին,
Շուշի կտորն աչքերին—
Լուս ընկաւ քո առաջին:

Էսէնց է, մօդա է, մօդա է, մօդա է:

Պետերբուրքումը, միթօմ,
Աւարտիլ է իր ուսում,
Փիլիսօփայ է, կօսես,
Խուրը տրկէմէն է խօսում:

Էսէնց է, մօդա է և այլն:

Մի ձեռը նա, փրփլելով,
Ունի շալվարի ջիբում,
Կոտրատվելով՝ միւս ձեռով
Իւրած մազերն է քօքում:

Էսէնց է, մօդա է և այլն:

Ու բերնումը ծխելով
Սատանայի փուրվարը,
Մէջքը կոտրած կատի պէս,
Երբ չափում է բուլվարը:
Էսէնց է, մօդա է և այլն:

Մէկը, տեհնումիս, պոչը
Թրե է տալիս զայրաթով,

Կօսես, քուչէք աւելը
Վիր է կալի փողրաթով:
Էսէնց է, մօդա է և այլն:

Մէկէն, օչխարի նման,
Էդնէն կապիլ է դրմակ,
Կօսես, դարբնի մինձ փուքսով
Փըչած ըլնի իր քամակ:
Էսէնց է, մօդա է և այլն:

Ա՛խ, էն դամբի պէս գործած
Էրեսների էն քուղը,
Սապոկների ճռճուցը՝
Քանդում են իմ ըղուղը...
Էսէնց է, մօդա է և այլն:

Չիմ կանացի, Հախ Աստու,
Բարկութիւնն իմ սանձել,
Սկսում եմ վայ տալով՝
Մեր կնանիքն անիծել...
Էսէնց է, մօդա է և այլն:

Էդ անիծուած չար մօդան
Ել չէ տեղում մէ տարի,
Գէլաքնուրի ծախողն
Էնքան չ'ունի մուշտարի:
Էսէնց է, մօդա է և այլն:

Յ. Մելիք-Յակոբեան.

180.

Ի տալացի աղջկայ երգ 1859 թ ու ա կ ա ն ի ց.

«Մեր Հայրենիք թշուառ, անտէր,
Մեր թշնամուց ոտնակոխ,

Իւր որդիքը արդ կանչում է,
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ:

«Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած:

«Ահա, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չ'եղայ,
Արտասուքով լուացի:

«Նայիր նորան, երեք գունով
Նուիրական մեր նշան.
Թո՛ղ փողփողի թշնամու դէմ,
Թո՛ղ կործանուի Աւստրիան:

«Ինչքան կին մարդ, մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իւր եղբօրը
Ձանց չարեցի քո սիրուն:

«Ահա իմ գործ, ահա դրօշ,
Շուտ ձի հեծիր քաջի պէս,
Գնա փրկել մեր հայրենիք—
Պատերազմի վառ հանդէս:

«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ' մեռնէ.
Բայց երանի՛, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհվի:

«Գնա, եղբայր, Աստուած քեզ յօյս,
Ազգի սէրը քաջալեր.
Գնա թէև չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր:

«Գնա, մեռիր դու քաջի պէս,
Թո՛ղ չ'տեսնէ թշնամին
Քո թիկունքը, թո՛ղ նա չ'ասէ
Թէ վատ է Իտալացին»:

Ասաց, տուեց օրիորդը
Իւր եղբօրը մի դրօշ,
Մետաքսից էր, ազնիւ գործած,
Ուր երեք գոյն կան որոշ:

Եղբայրն առաւ և ողջունեց
Իւր սիրական քնքուշ քոյր,
Առաւ զէնքը, սուր, հրացան,
Հեծաւ իւր ձին սեւթոյր:

—Քուրիկ—կանչեց քաջ պատանին,—
Մնաս բարեաւ, սիրական,
Այս դրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակ Իտալեան:

Նա սուրբ է ինձ, երբ մկրտված
Արտասուքով ու կնքած,
Դու յանձնեցիր ինձ յիշատակ,
Հայրենիքի նուիրված:

Թէ մեռանիմ, դու մի սգար,
Իմացիր որ տարեցի
Դէպի մահու արքայութիւն
Իմ հետ քանի թշնամի:

Ասաց, վազեց դէպ ի հանդէս
Աւստրիացւոց յանդիման,
Իւր արիւնով գնել յաւէժ,
Ազատութիւն Իտալեան:

Ո՛հ, իմ սիրտը կտրատվում է,
Տեսանելով այսպէս սէր

Դէպի թշուառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր:

Ո՛հ... արտասուք ինձ խեղդում են,
Այլ չեմ կարող բան խօսել.
Ձէ... թշուառ չէ Իտալեան,
Եթէ կանայք այսպէս են:

Միքայէլ Նալբանդեանց.

181.

Ն ե ռ կ ա ռ ա ը.

Մինչև արմուկը թևքերը քշտած,
Սաթի պէս սեցած ձեռքերը կողքին,
Ներկակարասի առջևը կանգնած,
Ինքն իրան խօսում մեր վարպետ Կիւքին.

«Մէջդ գցել եմ, հաստափո՛ր կարաս,
Կէս ֆուստ մեղրի հետ՝ ֆուստ ու կէս լեղակ.
Հարաքնո՛թ արա, ո՛ւժ տայ քեզ Մարաս,
Օրհնո՛ւի քո տոճը, օրհնո՛ւի մեր փեշակ:

«Ի՞նչ վնաս, որ քիչ թանգ է լեղակը,
Էնդուր Կիւքին էլ հնարը գտաւ.
Տանի մուշտարին թող սե ղադակը,
Ամիս չի անցնիլ՝ ճերմակ է կտաւ:

«Քանի՞ թուի կտաւ, քանի՞ կերպ թելեր
Ջոկ-ջոկ նշանած քո մէջն եմ գցել.
Դու մի գոյն ունիս, տասը գոյն ներկեր
Ուղիղ համարած քո մէջն եմ տեսել:

«Գցում եմ ճերմակ, փոքր ինչ պահում,
Մաւի-կապտագոյն եմ ես դուրս հանում.

Պահում փոքր ինչ աւելի երկար,
Սե եմ ստանում, ինչպէս ածխաքար:

«Դեղին եմ գցում, դուրս հանում կանաչ,
Պայծառ ու փայլուն զմրուխտի նման.
Քանի՞ մէկն ասեմ, ես ըլեմ էն Խաչ,
Ձկայ քեզ նման շնորհալի աման:

«Ասենք թէ մի քիչ մեր Հերիքնազը,
Երբ որ տեսնում է ձեռքերս ներկած,
Խրտնում է հեռու, կցում տնազը,
Ի՞նչ անենք, կնոջը այդքանն է տուած:

«Դու ես իմ կարաս, որ Հերիքնազի
Շուալ ծախքերին էլ դիմանում ես.
Դո՛ւ ես, դո՛ւ, որ այդ երկարամազի
Յրած, կորցրածը կրկին գտնում ես:

«Դու ես իմ տոճիկ, որ զաւակներիս
Ուսում, կրթութիւն, շնորհք ես տալիս.
Դու ես այդ բոլոր կարիքը հոգում,
Մի թանաքն է որ՝ ձրի է նստում:

«Դու ես գունազարդ սիրուն իմ կարաս,
Իմ կենդանութիւն, իմ շունչն ու հոգին.
Թո՛ղ քեզ շատ տարի պահի էն սուրբ Մաս,
Որ միշտ պարզերես ապրէ խեղճ Կիւքին:

«Դէհ, շո՛ւտ արա, շո՛ւտ հալեցրու,
Այս անգամ փոքր ինչ աւել է լեղակ.
Իսկ ես անփեշակ մարդկանցը ջգրու
Կրկին ասում եմ միշտ օրհնուի փեշակ»:

Ա. Ադ.

182.

Գտակ կարող, դու մարդ ճարիր, ապա նստիր
գտակ կարիր.

Մարդ կայ՝ մարդ է աշխարհումս,
Մարդ կայ՝ մարդակերպարան է.
Մարդ կայ՝ անզգայ պատկեր է,
Մարդ կայ՝ ամեն բառն բան է:

Մարդ կայ՝ լաւ խօսալից պատ աս,
Մարդ կայ՝ մարդկութեան անհաս աս.
Մարդ կայ՝ էշից քիչ պակաս աս,
Մարդ կայ՝ նորան թարիֆ կանէ:

Մարդ կայ՝ փողով մարդ է դառել,
Մարդ կայ՝ չունի, վիզն է ծռել,
Մարդ կայ՝ հոգսից սիրտն է սառել,
Մարդ կայ՝ պատն զառնշան է:

Մարդ կայ՝ սէրից բէխաբար է,
Մարդ կայ՝ յատուկ սիրահար է.
Մարդ կայ՝ եարն դարդուսար է,
Մարդ կայ՝ սէրն անհիման է:

Մարդ կայ աւազակ՝ պատ պահող,
Մարդ կայ պատակեր՝ մարդ շահող.
Մարդ կայ քարոզիչ՝ ազահող,
Մարդ կայ՝ հազուստից նման է:

Մարդ կայ տավար՝ առանց պողի,
Մարդ կայ՝ չոր գլուխ կ'իսողի.
Մարդ կայ լափող՝ նման խողի,
Մարդ կայ՝ պատուոյ անարժան է:

Մարդ կայ իմաստուն՝ ժանկ չունի,
Մարդ կայ՝ ժանկ ունի, յանկ չունի.
Մարդ կայ՝ անուանը զանկ չունի,
Մարդ կայ՝ լուրն Հնդստան է:

Մարդ կայ՝ սնունդն է անառակ,
Մարդ կայ՝ վաթսունամեայ քուռակ.
Մարդ կայ՝ իւր ազգին հակառակ,
Մարդ կայ՝ հոգւով պարտական է:

Մարդ կայ՝ վասն մեր մարմնացաւ,
Մարդ կայ՝ Աստուած էր, մարդացաւ.
Մարդ կայ՝ ընդ աջմէ Հօր կացաւ,
Մարդ կայ՝ սուրբ Երրորդութիւն է:

Մարդ կայ Ձարկեար՝ ունի Մայիֆ,
Մարդ կայ՝ հազար բերան հայիֆ.
Մարդ կայ՝ մարդոյ մի ընծայիւ
Մարդ կայ՝ շահող օգնական է:

Արրահամ Մարտիրոսեան.

183.

Մ ու խ ա մ մ ա զ.

Մին գիշեր քաղցր քնումն տեսայ ինձ մօտ մարդիկ եկան,
Ղաթարով նստան տընումն, պատրաստեցին շատ լաւ սեղան:
Հարցրի՝ զամէք դուք ռրտեղէն, ո՞ւմ ազգիցն էք, ո՞ւմ ցեղէն,
Կարծեմ դուք շատ լի էք փողէն, էդքան բաց էք վարդի նման:
Տեսամ ողջով ուրախ սրտի, չեն պատահած ցաւի, դարդի,
Մէկս մէկու ալլահվէրդի՝ խման կենացներ զանազան:
Ասան՝ մենք ենք սիրուն բախտն, չի լինիլ մեր տխուր վախտն,
Շատ յիմարներ կհանենք թախտն, շատ խելօքներ կանենք
անբան:

Լալայովի բախտն ասաց.

Մինը տեղիցն վերկացաւ, առիւծի պէս բերան բացաւ,
Միլլիօններէց սօհբաթ քցաւ, ասաւ՝ «ունէք, բերէք մէյդան»:

Եւս Լալայովի բախտն ասաց.

«Ես եմ բախտն Լալայովի, ինձ հետ ոչով չի գալ դովի,
Ոչ դովլաթս կըտամ ծովի, ոչ կըտխրեմ ես յաւիտեան»:

Ներսէսովի բախտն ասաց.

«Ձեզանից պակաս չեմ փողումն, շատն թաղել եմ հողումն,
Կէսը պահած եմ սանդուղումն, օր ըստ օրէ կառնեմ նշան»:

Կեօկշայովի բախտն ասաց.

«Ես լաւ կուտեմ, լաւ կու մաշեմ, նոր ծաղկել եմ, կանաչում եմ,
Ամեններէ ճանաչում եմ, Տէրն է միայն ինձ պահապան»:

Լազրովի բախտն ասաց.

«Բնաւ պատիւ չեմ տալ փողին, սանդուղներով ոսկի դեղին:
Տէրն ողորմի փող թողնողին, էնքան ունեմ, ինձ բաւական»:

Կաճկաճովի բախտն ասաց.

«Առաջ ինչի՞ տէր էի, բայց փողի հետ շատ սէր էի,
Ես ձեզ հետ ընկեր էի, թէ եղբայրս չըլինէր Թուման»:
Հարցրի՝ բաս իմ բախտն ո՞ւր է, կարծեմ ապրելս զուր է.
Ասան՝ քո բախտն տխուր է, գիշեր-ցերեկ քնած, պիան:
Խնդրեցի որ բախտիս կանչեն, բալքա տեսնեն մերկ՝ ամաչեն:
Մեծ մարդիկներն թող ճանանչեն, ամեններն մին քիչ փող տան:
Տեսայ մինն նոր գալիս ա, ձեռին բռնած դարդակ քիսայ,
Ասան՝ հրէս բախտդ էս ա, առանց շապիկ, առանց փոխան:
Ասամ իմ բախտին՝ քեզի բարով, ի՞նչ ես քնում էսքան տարով.
Ասաւ՝ չի լինիլ էշին զօռով եահար գնես, ինի քեօհլան:

Ասամ՝ երեսդ պարզ լինի, խորակդ հունձաւարդ լինի,
Մին քիչ փող տո՛ւր, թող խարջ լինի, բալքայ խարջեմ, գնամ
Շիրվան:

Ասաւ՝ կորիւր, կորիւր, պո՛ւտ. փորիդ տակն ա ընկել չիւլդ,
Աստուած կտրել ա ուսուլդ, փող չես պահում, լինես իշխան:

Ասամ՝ էս դռնիցն հեռացիր, մինչ յաւիտեան քնած կացիր,
Գնա՛ ինձի շատ մոռացիր, ինձնից բէթար լիւթ ես, իւրիան:
Աբրահամն եմ,*) խաղ կանչելով, բոխճաներ չեմ կապել թելով,
Անփոխան բախտին խնդրելով, պիտի լինեմ քեզի արժան:

Աբրահամ Մարտիրոսեան.

184.

Ա. ր ա ք ս ի ա ռ տ ա ս ու լ ն ք ը.

Մայր-Արաքսի ափերով
Քալամուր գընում եմ,
Հին հին դարուց լիշատակ
Ալեաց մէջը պըտրում եմ:

*) Ջարկեարը, իւր հին գրուածքների մէջ, իւր իսկական «Աբրահամ» անունովն է հրապարակ դուրս եկել: Մի այդպիսի գրուածքի մէջ էլ այսպէս է ասում.

«Աբրահամն եմ, լաւ իմացէք,
Հեշտ կուլ-տալի պատառ չեմ.
Աբրահամն եմ, լաւ իմացէք,
Շողդորթ կամ կեղծաւոր չեմ.
Իշխաններից չեմ վախենալ,
Ամենքին էլ զորթը կասեմ.
Ում որ կամենում էք, բերէք,
Նորա կեանքի վատն ասեմ»:

«Աբրահամ» ստորագրութեամբ գրուածքներ մի քանիսը տպուած են մեր հրատարակած «Ջարկեարի Գնար»-ի մէջ:

Գ. Ա. Բ. Գրիգորեանց.

Բայց նոքա միշտ յեղյեղուկ
Պըզտոր ջրով եզերքին
Դարիւ դարիւ խփելով
Փախչում էին լալագին:

Արաքս, ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չի հասած,
Սըզաւոր ես ինձ նըման:

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սէգ, հպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ամիսներից:

Մի՞ պըզտորիլ յատակըդ,
Հանդարտ հոսէ խայտալով,-
Մանկութիւնը քու կարճ է,
Շուտ կը հասնիս դէպի ծով:

Վարդի թրփեր թո՞ղ բըսնին
Քու հիւրընկալ ամիս մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ:

Աշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջրերին
ձկուն ոստն ու տերեւ
Թո՞ղ թաց անեն տապ օրին:

Ափերիդ մօտ երգելու
Հովիւք թո՞ղ գան համարձակ,
Գառն ու ուլը քու վըճիտ
Ջուրը մըտնին միշտ արձակ:-

Մէջքը ուռցուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,

Ամպի նըման գոռալով,
Էսպէս խօսեց յատակից:

«Խիզախ, անմիտ պատանի,
Նիրհըս ինչո՞ւ դարեւոր
Վըգովում ես, նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր:

«Սիրելի մահից յետ
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտքից գըլուխ պըճնուի
Իր զարգերով թանգագին:

«Որի՞ համար զարդարուիմ,
Որի՞ աչքը հրապուրեմ,—
Շատերն ինձ են ատելի,
Շատերին ես օտար եմ...

«Բայց նա ինձ չէ օրինակ,
Ես Հայ՝ Հայիս կըճանչնամ,
Օտար փեսայ չուզելով,
Ես միշտ այրի կըմընամ:

«Կար ժամանակ, որ ես էլ
Շըքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պըչրանքով,
Փախչում էի ամիսներից:

«Յատակս պարզ ու վըճիտ,
Կոհակներըս ոլորուն,
Լուսաբերը մինչև այդ
Ջըրիս միջին էր լողում:

«Ի՞նչս մընաց էն օրից,
Ո՞ր ջրամօտ գեղերըս,
Ո՞րը իմ շէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերըս:

«Տուրքը ջրի ամեն օր
Իր սուրբ ծոցէն Արարատ
Մայրախընամ ինձ սընունդ
Պարգևում է լիառատ:

«Բայց ես այն սուրբ ջրերով
Սուրբ Ակօբի աղբիւրին
Պիտի ցօղեմ արտորայքն
Իմ ատելի օտարին:

«Կամ՝ կենսատու իմ ջրով,
Ափերիս մօտ կըկըզած,
Իւր նամա՞ղը կատարէ
Թուրք կամ Պարսիկը հոտած:

«Մինչ իմ որդիք—ո՞վ գիտէ—
Ծարաւ, նօթի, անտէրունչ
Օտար աշխարհ յածում են
Թոյլ ոտքերով կիսաշունչ...

«Հեռո՛ւ հեռո՛ւ քըշեցին
Բընիկ ազգը իմ Հայկեան,
Նորա տեղը ինձ տուին
Ազգ անկըօն, մոլեկան:

«Դոցա համար զարգարեմ
Իմ հիւրընկալ ավերը,
Եւ կամ դոցա հրապուրեմ
Ճըպուռ, պըլշած աչերը:

«Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կու մընան պանդուխտ,—
Ինձ միշտ սըգւոր կըտեսնէք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ...»

Եւ չի խօսեց Արաքսը,
Յորձանք տուեց ահագին,

Օղակ օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին:

Ի. Պատկանեան.

185.

Բ ու ը ա ս տ ա ն. (*)

Մնաս բարով, Բուրաստան, ափսոս, վարդերդ չը տեսի,
Սիրուն տեսքիդ կարօտած՝ պայծառ զարդերդ չը տեսի,
Երկնային շաղ ու ցօղով լուացած պատկերդ չը տեսի,
Արշալուսի հետ ծիծաղող՝ բացած աչերդ չը տեսի:

Թողնում եմ էդպէս կիսատ՝ չիմանալով ի՞նչ կը լինիս.
Կը ջրվի՛ս, կը պահպանվի՛ս, թէ թուխպի յուսով կը լինիս.
Կը բացուի՛ս, կը զարգարուի՛ս, թէ ինձ պէս տխուր կը լինիս.
Անպահապան Բուրաստան՝ երբէք զարգարուն չը տեսի:
Մնաս բարով, Բուրաստան և այլն: (**)

Շատ եմ թողել չափած, ձեռք Բուրաստան քեզի պէս.
Հողը փորած, ծառեր տնկած այգեստան քեզի պէս.
Լարով քաշած, ուղիղ շարած ծառաստան քեզի պէս.
Սիրտս միշտ կարօտ մնաց՝ ծառերս ծաղկած չը տեսի:

Սիրեցի ես սիրուն պարտէզ՝ լաւ ցանկապատ Բուրաստան,
Սերմի համար շատ ման եկայ, մերթ Եւրոպէ, միշտ Հայաստան,
Ծաղիկների լաւն ընտրեցի՝ տնկեցի սիրուն ծառաստան,
Աչքերս կարօտ մնացին՝ հասած պտուղներ չը տեսի:

*) Այս բանաստեղծութիւնը, որ փոխաբերական մտքով գրուած է Ղ. Հայոց դպրանոցի վերայ, գրել է պ. Գ. Մուրատեանց (այժմ Մեղրիսեղեկ Արքեպիսկոպոս) 1865 թ. ապրիլի 15-ին, հանգուցեալ Պ. Շանշեանցի նոյն դպրանոցում տեսուչ եղած ժամանակ, և տպուած է Կ. Պօլիս, «Նդ» խորագրով գրքոյկի մէջ:

**) Իւրաքանչիւր տան վերջը՝ առաջին տունը պէտք է կրկնել:

Հայաստանի հողի վրայ դրախտի անուշ լսեցի,
Սիրուն տեսքովն սիրահարուած՝ նորա պատկերն նկարեցի,
Անմեղութեան, ճշմարտութեան ցրված սերմերն հաւաքեցի,
Գարնան վերայ ձմեռն եկաւ՝ բացված ծաղիկներ չը տեսի:

Դրախտի սիրովն էրված՝ հալածական շատ ման եկի.
Բերրի հողում, մաքուր օդում՝ ես մի պարտէզ որոնեցի.

Հայաստանի սուրբ ջրերն՝ առուններով բերել տուի.
Խարդախներն պղտորեցին՝ անարատ ծաղիկ չը տեսի:

Պարտիզումս տնկեցի ես՝ շատ թզենի ու ձիթենի,
Սողոմոնի այգու նման՝ շատ նռնենի ու նշենի,
Ոսկներ դարան մտան՝ խառնեցին բարդի վայրենի,
Պարտէզս աւեր եղաւ՝ պողալի ծառեր չը տեսի:

Անմեղութիւն որոնելով՝ վարդ, մանիշակ շատ ցանեցի,
Սոխ ու սխտոր պաշտեցին՝ իմ դրացիքս եգիպտացի,
Բուլբուլի տեղ բայդուշ գրին՝ մութն աւերակ սիրեցին,
Փշի մէջ, տատասկի մէջ՝ վարդը բացուած չը տեսի:

Քանի քանի պարտէզներ էսպէս խոպան մնացին,
Կամ հարաւ և կամ հիւսիս խիստ տօթ ու ցրտով քանդեցին,
Ոչ մէկն չը խղճաց խեղճ քրտնաթոր պարտիզպանին,
Գարունն անցաւ, ամառն եկաւ, պարտիզի կարօտ մնացի:

Ծաղիկներս առան, տարան՝ օտար երկիր, օտար սահման,
Ամեն ծաղիկ իր հողն ունի՝ էս մի օրէնք է բնական,
Տէրն ուրիշ տեղ չը տնկեց, այլ դրախտն ի Հայաստան,
Հայաստանի բնիկ տունկն՝ օտար տեղ ծաղկած չը տեսի:

Ո՛վ իմ սիրուն Բուրաստան, վարած, մշակած եմ թողնում,
Ի՞նչ կը լինիս, չեմ իմանում, սիրտս շատ կտորած եմ թողնում,
Ջրերդ օտար ականից՝ մշակդ հարբած եմ թողնում,
Ո՛չ մի անտէր այգեստան՝ ծաղկած ու հասած չը տեսի:

Բուրաստանն անտէր, անջուր, պարտիզպանն ճնց կը թողնի,
Մատղաշ որդին օտար յուսով լաւ ծնողը ճնց կը թողնի,

Սոխակին վարդից խլում են՝ խեղճ սոխակը ճնց կը թողնի,
Բաժանած սիրտը սէրից երբէք մխիթար չը տեսի:

Քո անուն, քո յիշատակ՝ սրտումս պահած կը լինի,
Սրտի պէս Բուրաստան՝ ո՞վ երբէք տեսած կը լինի,
Սրտի մէջ բուսած վարդն՝ շարունակ ծաղկած կը լինի,
Անմեղութեամբ վառուած սիրտն՝ երբէք անապատ չը տեսի:

Աշուղի շնորհք չունիմ՝ քո սէրն ինձ աշուղ կը շինի,
Սէրն շատին լեզու տուաւ՝ ինձ էլ սիրաբան կը շինի,
Համ կ'երգեմ, համ կը կանչեմ՝ քանի բերնումս շունչ կը լինի,
Իմ Բուրաստան, իմ Վարժարան, անի, ես քեզ ծաղկած չը տեսի:

Գարեգին Մուրատեանց.

186.

Ա Ր Ա Մ — Ե Ր Գ.

Մեր քաջ Հայոց զօրութիւնք,
Վեր կացէք, ասաց Արամ,
Առաջեաւ բացէք նըշան,
Գնանք հայ լեզուն տարածենք.
Ո՛հ, Արամ, Արամ, Արամ:

Նիւքար ստրուկն Ասորին
Բարբառ գոչէ առաջին.
Գլուխն յաշտարակ մեխեցէք,
Որ յերկնից սորուի հայերէն.
Ո՛հ, Արամ, Արամ, Արամ:

Յորդան տուք զօրք, ճն, յորդան,
Դէպ ի կողմն Արեւմտեան,
Պայապիս Քաղեայ Տիտան,
Դիք զ'ի տապաստ ի դամբան.
Ո՛հ, Արամ, Արամ, Արամ:

Յորդան տուք, ծն, զօրք յորդան,
Տեարք լայնալիճ աղեղան,
Քընքուշախօս ամբօխին
Տալ ըզլեզու հայկական.

Ո՛հ, Արամ, Արամ, Արամ:

Ո՛վ չըզիտէ Հայերէն,
Ոչ ճանաչէ նա զօրէն,
Որ բանիւ Հայոց արար
Այս մեծ աշխարհ մեզ համար.

Ո՛հ, Արամ, Արամ, Արամ:

Ի ծովէ մինչեւ ի ծով
Թո՛ղ խօսին Հայ բարբառով.
Ներհակողին նիզակով
Յուցէք, ո՛հ, ասաց Արամ.

Ո՛հ, Արամ, Արամ, Արամ:

187.

Մ ա յ Ր Ե Ն Ի Լ Ե Ղ Ո Լ.

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ, ընտանի իմ հոգու համար,
Առաջին դու խօսք ականջիս հասած,
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած.
Մանկական լեզուիս թօթովանք տրկար
Հնչում ես իմ մէջ դու միշտ անդադար:

Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,
Այդ ի՞նչպէս քաղցրը հնչում ես ինձ դու.
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ
Քո ճօխ գանձերին, հոգւով հայանալ.
Ասես թէ ահա կանչում էին ինձ
Պապեր ու հայրեր խոր գերեզմանից:

Հընչի՛ր դու, հընչի՛ր այժմ և յաւիտեան,
Մայրենի լեզու, բարբառ սիրական,
Արի, բարձրացի՛ր հնութեան փոշուց,
Դու իմ հայ լեզու մոռացած վաղուց.
Ըզգեցի՛ր նոր կեանք սուրբ գրուած քներով,
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով:

Ամեն տեղ փչում է Աստուծոյ շունչը,
Սուրբ է, այո՛, միւս ալ ձեռ ու ոճը.
Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,
Իմ սրտի սէրը յայտնել արժան էր.
Իմ երանական մտածութիւնքը—
Ապա կը խօսեմ իմ մօրըս խօսքը:

Ստ. Նազարեանց.

188.

Ք ա ջ ն Վ ա Ր դ ա ն Մ ա մ Ի կ ո ն ե ա ն.

Մեր նախնիքը ազգի համար
Իրանց կեանքը զոհեցին,
Թշնամեաց դէմ միշտ աներկիւղ
Սուրբ առած վազեցին:

Նրանց առաջնորդ ազգի սէրն էր,
Նրանց խրախուսը մեր հաւատն էր.
Սրանով նրանք քաջ անունը
Իրաւամբ ժառանգեցին:

Նախնեաց փառքին ժառանգաւոր,
Ժառանգ է մեզ քաջ Վարդան,
Մեծ սպարապետ հայրենասէր,
Սուրբ հաւատոյ վեհ պաշտպան:

189.

Երեկոյեան երգ շինականաց.

Մարդս եկաւ, եկաւ դաշտից՝ դաշտիցը,
Կանանչ դաշտից, դաշտից տուն եկաւ,
Տուն եկաւ ու դուռը դրեց՝ նըստեցաւ,
Շալկին խուրձ էր, խուրձ ցորենի արտիցը:

— Խուրձըդ վեր դիր, թող բաց անեմ թուկերը,
Մէջքէդ առնում այդ սուր, այդ սուր գերանդին,
Սուր այդ, սուր այդ գերանդիով հնձել ես,
Հնձել ես ու խուրձ կապել ես ցորենը:

Ա՛խ, ճակատըդ թաց է եղել քրտինքով,
Թող ճակատըդ, թող որ սրբեմ իմ ձեռով,
Իմ ձեռովս դօտիդ բացեմ՝ խուրձըդ առնում իմ ձեռով,
Խուրձըդ առնում— ծանրը բեռըդ շալակէդ:

Սառը ջրով ձեռըդ լուս, ոտքըդ լուս, երեսըդ,
Ձեռքիդ, ոտքիդ ես ջուր կ'ածեմ, երբ լուսնաս երեսըդ.
Սըրբէ ձեռով քո երեսէդ քրտինքըդ,
Գլուխըդ լուս սառը ջրով, ձեռքդ, ոտքըդ, երեսըդ:

Ես քեզ համար հաց թխեցի, սիպտակ, փափուկ գարեհաց,
Ես քեզ համար պատրաստել եմ կաթն ու կարագ ու պանիր.
Գառան մըսէն շամփրի վըրայ խորոված,
Կասկարայով գառան միսը տապակած:

Կուժը լիքը կարմիր գինին զըրած է,
Իմ ձեռագործ կըտաւ սուփրան փռած է.
Ձեռըդ լուս, հանգստացիր, իմ սիրական ամուսին,
Լուսնիակը երևում է երկնքումը փայլելով,
Պատուհանէն լոյս է ձրգել սուփրի վըրայ շողալով:

Երևում է հացն ու կաթը, պանիրը,
Երևում է կարմիր գինւոյ սափորը.
Մէկ ես, մէկ դու, մէկ պահապան հրեշտակը
Ուտենք, խմենք ու գոհանանք Արարչէն,
Հանգստանանք աշխատանքէն, որ քաշեցինք ցերեկը:

Թ. Պատկանեան.

190.

Երգ ուսանող մանկանց.

Տաճկական «Սեաստապօլ» երգի եղանակով.

Մահկանացուդ դու՝ բաց դուռն սրտիդ
Արագ, արագ,

Որ կարողանաս խօսքս տալ մտքիդ:
Ես ինձնից երբէք չեմ կարող ոչինչ,
Աւանդ, աւանդ,

ձառել և գրել գոնեա և փոքր ինչ:
Սուրբ գրքի խօսքերն սէր են քարոզում
Արագ, արագ,

Որով միայն կարեմք բնակիլ երկնքում:
Բոպէք և Ժամեր՝ քո կենաց համար,
Աւանդ, աւանդ,

Պատրաստվել են որ, հոգւոյդ առնես ճար:
Ո՛վ դու կարգացող՝ զաւետարանն ա՛ռ
Արագ, արագ,

Արծարծելով միշտ՝ կարդա՛ անդադար:
Վերջինդ միտ բեր՝ բարի գործ գործիր,
Աւանդ, աւանդ,

Հաւատ, յոյս և սէրդ՝ գործքիդ հետ խառնիր:

Բայց ողորմութեամբ քաւել մեղքերդ

Արագ, արագ,

Զանց չ'առնես երբէք՝ պատուէր եդ Տէրդ:

Ամեն օր և ժամ աղօթքով միայն,

Աւանդ, աւանդ,

Զարդարիր հոգիդ՝ ու անձդ համայն:

Յաւիտեան էլ դու՝ ցաւ, վիշտ, նեղութիւն,

Արագ, արագ,

Ձեռ տեսնիր երբէք՝ այլ սէր, ցնծութիւն:

Էին անմահի՝ զոհութիւն, պատիւ,

Արագ, արագ,

Մատուցուք ամենքս՝ օրերով անթիւ:

Մ. Ե. Մ.

191.

Մ ա ը 2.

Մեզ նոր արեւ ծագէ, բացուի լոյս բոցավառ,
Մեզ առաջնորդ սուրբ երէցներ, ունինք խաչ ու խաչվառ.
Զօրավոր քաջ Վարդան, դիմենք յառաջ 'ի սուր,
Դիմենք բանալ կենաց շաւիղ, հայեր, մեր առաջներ.
Հարսանեաց հարսանեաց սուրբ հանգիստարան,
Մեզ նոր ուխտ կանչումէ լինիլ փրկիչ կրօնի, փրկիչ հայրենեաց.
Հայոց ծաղկունք թողմին, հայերք թէ պղծուին,
Մեզնից ցօղ խնկոց բուրմունք կամին.
Զէնքեր պատենից մէջ եռ գան կրակ դարձած,
Պարսից արեամբ հանգուցանել խնդրել զբազուկս քաջաց.
Նժոյգներ խրխնջան, զերկիր փորեն, տոփեն,
Դիմենք Սրտազ դաշտ, դիմենք Սււարայր,
Մեր հայրենիք, մեր ազգութիւն, կրօն,
Դաւ ժողովիլ 'ի սուրբ տօնս, հրաւիրել զամեն Հայս:

192.

Գ ա ը ու ն.

Մի նոր, հրաշալի կեանքով շունչ առած՝
Ժպտում է բնութիւն, զերդ մանուկ չքնաղ,
Եւ նոր զօրութեամբ երկիրն է զարթած,
Եւ երկինքն յստակ ու գեղածիծաղ:

Այս խորհրդաւոր պահուն ես մենակ
Ծնկաչոք ահա քեզ եմ աղօթում,
Խաչեցեալ Փրկիչ, քո հովանու տակ
Յաւատանջ սրտիս իղձերն եմ բերում:

Թող այս բերկրալից զարնան ջերմ արեւ
Իմ հայրենի տան վերայ էլ փայլի.

Մի օր, գէթ մի օր թող քո առաջիւ
Այնտեղ հէք ծիծռան օրհներգը լսուի,

Թէ անցաւ և մեր ձմեռ ցրտաշունչ,
Թէ անպարտ արիւնն հասցրեց վարդեր,
Եւ տառապելոց ողբերն ու տրտունջ
Դարձան զոհութեան խաղաղ մաղթանքներ:

Յ. Յովհաննիսեան.

193.

Կ ի կ օ ն ի Գ ա ս ը մ - Բ ա շ ա .

Մըր խօր պապկէ գերեզման
Թողի հոնտեղ, կիզամ ման.
Խոգիս կէլնի իւքի տակ,
Խաւտո՞ գոռար ա վաստակ:
Վայլէ լէ, լէ, լէ, լէ, լէ:¹⁾

¹⁾ Կրկնել իւրաքանչիւր տան վերջում.

Քանի ղուրպաթն եմ ընկեր,
Միջացս գօտին չեմ քակեր,
Խարսնուկ անուշ անթառամ,
Քեզնից զատ կինն է հարամ:

Հիմիկ լաճերս ի՞նչ կանեն,
Մեռան, կորան, ի՞նչքան են,
Սիրուն Շուշուն ներօտիկ,
Կըրպօն, Մըրտօն խօրօտիկ:

Հիմիկ իմ արտ ի՞նչ կեղնի,
Ընձնից մահրում կու գեղնի,
Յամքի ռեհան, նուռուֆար,
Գոմից պակսի մըր տաւար:

Արև շողցեր ա պայծառ,
Նախշունա դաշտ, ճեղն ու ծառ,
Ձէրդիս վերև են հաւքեր,
Կու ճըլվըլան մըր խաւքեր:

Ա՛խ, շաշխուն եմ, ի՞նչ էրի,
Ղարիպ ընկայ, սիրտս կերի,
Տղայ, սո՛ւս կաց, ի՞նչ պէտք երգ,
Կիզամ, կիզամ, իմ տղէրք:

✓ 194.

«Վարդ կօշիկս, վարդ կօշիկս,
Վարդից գեղեցիկ կօշիկս».¹⁾

—Մեր տան մէջը քնո՞ղ տղայ,
Կարմիր խնձոր ծախո՞ղ տղայ,
Վարդ կօշիկս գտնո՞ղ տղայ,
Տղայ, ղրկէ՛ վարդ կօշիկս:

—Ձեր տան մէջը քնել չեմ ես,
Կարմիր խնձոր ծախել չեմ ես,
Վարդ կօշիկդ գտել չեմ ես,
Իմ մօտս չէ վարդ կօշիկդ:

—Լաւ օրս եղաւ ան ու վախ,
Կորուցի կօշիկս, աւանդ,
Հայի տղայ, հոգո՞ղ մատաղ,
Տղայ, ղրկէ՛ վարդ կօշիկս:

—Որ մօտս չէ, ո՞ւրտից ճարեմ,
Ըլնի՛ խօսքդ կը կատարեմ,
Ազնիւ աղջիկ, հոգիդ սիրեմ,
Իմ մօտս չէ վարդ կօշիկդ:

—Ես մի անթառամ ծաղիկ եմ,
Անուշ երգող աղունակ եմ,
Պատկերովս գեղեցիկ եմ,
Տղայ, ղրկէ՛ վարդ կօշիկս:

—Ես գիտեմ դու անդրանիկ ես,
Սիրովդ ինձի մօտիկ ես,
Իսկ հասակովդ էլ փոքրիկ ես,
Իմ մօտս չէ վարդ կօշիկդ:

—Մի մնար ինձի պարտական,
Աղջիկ եմ տաս-չորս տարեկան,
Ես կը լինիմ քեզ սիրական,
Տղայ, ղրկէ՛ վարդ կօշիկս:

—Ի՞նչու մնամ քեզ պարտական,
Կամիս, տամ հազար դահեկան,
Եթէ կըլինիս ինձ սիրական՝
Ես կը ճարեմ վարդ կօշիկդ:

¹⁾ Կրկնել իւրաքանչիւր երկու տողից յետոյ:

195.

Մ արմնամարդական խաղ.

(Մանկական).

Մեր գիւղացու հարսանիքում
Տղերքն ուրախ եալլի են խաղում.
Կունաբռնուկ ծլլաշարվում,
Կրնկակոխ քայլում, շարժվում,
Ապա քաղցր ձայնով երգում.
«Եալլին ա հա, եալլին ա,
Մեր սիրտ, ձեր սիրտ բարին ա,
Հէնց էս խաղի տարին ա,
Հըլէ, հըլէ, բարին ա,
Հէնց էս խաղի տարին ա...

Մին ձախ, մին աջ,
Հէյ, հայ, հէյ, հայ,
Թռչենք առաջ,
Հէյ, հայ, հէյ, հայ...»

Ահա այդպէս թռչկոտում են,
Իրանք իրանց կոտրտում են.
Առաջ կամաց—ծանր ու օրօր,
Յետոյ միջակ, ապա յորդոր...

* * *

«Ասա, տեսնեմ, մեր գիւղում
Կովերն ի՞նչպէս են կլթում»:
—Ահա այսպէս են կլթում.—
Հորթին կապում մօր ծնկնից,
Ծիծը խլում զաւակից,

Կովկիթն իրանց ձեռքն առնում,
Ապա կողքին կըկըզում—

Փըշշ, բըժժ...

Փըշշ, բըժժ...

Ահա այսպէս են կլթում,
Փոքրիկ հորթին լացացնում...

* * *

«Ո՞նց են հարում խնոցին,
Հէնց էս օր էլ հարեցին»:
—Ահա այսպէս հարեցին՝
Թոկը ծառից կապեցին,
Հաստ խնոցին կախեցին,
Երկու շաբթուայ հաւաքսը
Նորա մէջը ածեցին,
Տաք ու հով ջուր խառնեցին.
Ապա ծայրից բռնելով,
Տարան, բերին, շարժեցին—
Թըլըխկ, չըլըխկ,
Թըլըխկ, չըլըխկ...
Ահա այսպէս հարեցին,
Դեղին կարագ հանեցին:

Աղերսանդր Արարատեանց.

196.

Երգ շինական խնճոյից.

Միշտ ման եկի Շաքի, Շիրուան, Շամախի,
Գիշեր, ցերեկ՝ քաղքից քաղաք չորս տարի.
«Ամէն ցաւոց ի՞նչ է գեղը» ես հարցրի,
Ողջ բժիշկներ ինձ ասացին՝ «լաւ գինի»:

Դէ՛, մատուռակ, լի անապակ անձ գինի,
 Խմենք կենաց մեր բաժակներ Հայ ազգի:
 Ա՛խ, տէր-տէր ջան, ես այն օրից սկսեալ արի,
 Հացի վերայ միշտ գործ ածել լաւ գինի.
 Փորձով տեսի հոգով մարմնով հիւանդի
 Մի հատ բժիշկ, դեղ ու ճարն է լաւ գինի:
 Դէ՛, մատուռակ, լի անապակ անձ գինի,
 Խմենք կենաց մեր բաժակներ Հայ ազգի:
 Ազնիւ գինի, ո՞վ կարող է քեզ գովել,
 Քո յատկութիւնք մին՝ մին կարգաւ լոխ շարել.
 Աշխարհ՝ ողջ թուղթ, ծմակ՝ զաւամ էլ լինին,
 Ո՛չ ոք կարէ քո գովասանք լի գրել:
 Դէ՛, մատուռակ, լի անապակ անձ գինի,
 Խմենք կենաց մեր բաժակներ Հայ ազգի:
 Ազնիւ գինի, երբ քո շիրան կարասուում
 Կծպծում է, եռում, եփում, պըճալըճում,
 Երբ կուլայից ձայն ես տալիս, քըլքըլում,
 Կեանք ես կանչում, անմահութիւն խոստանում:
 Դէ՛, մատուռակ, լի անապակ անձ գինի,
 Խմենք կենաց մեր բաժակներ Հայ ազգի:
 Ազնիւ գինի, դու աննրման երկնային,
 Յատուկ շնորհուած մի մեծ պարգև ես անգին.
 Ուժ, զօրութիւն, խելք ու շնորք ամէնին
 Միշտ դու կ'տաս քեզ չափաւոր խմողին:
 Դէ՛, մատուռակ, լի անապակ անձ գինի,
 Խմենք կենաց ողջ չափաւոր խմողի:
 Ազնիւ գինի, երբ քեզ խմէ խեղճ մշակ,
 Կ'մոռանայ աւուր քաշած աշխատանք.
 Դու կ'բանաս նորա փակուած ախորժակ,
 Յամաք հացն հէնց կը դգէ մեղր, կարագ:
 Դէ՛, մատուռակ, լի անապակ անձ գինի,
 Խմենք կենաց ժիր մշակաց Հայ ազգի:

Ազնիւ գինի, երբ քեզ խմեն ծերերը,
 Իսկոյն կ'ուղղին նոցա ծռուած մէջքերը,
 Կը սրդալեն իւրեանց մօրուք, պէսերը,
 Եւ կսկսեն լաւ պատմութեանց հիները:
 Դէ՛, մատուռակ, լի անապակ անձ գինի,
 Խմենք բաժակ ողջ ծերերուն Հայ ազգի:
 Ազնիւ գինի, երբ քեզ խմեն պառաւներ,
 Շուտով փալլին նոցա աչաց մութ բիբեր,
 Տեսնես Խնչպէս կը վըզվըզան լիսեռներ,
 Եւ կը դիզուին բուրդ, բամբակի կծիկներ:
 Դէ՛, մատուռակ, լի անապակ անձ գինի,
 Խմենք բաժակ ողջ պառաւանց Հայ ազգի:
 Ազնիւ գինի, երբ քեզ խմեն գըզիրներ,
 Շուտ կը տնկուին նոցա կախուած գլուխներ.
 Մի վայրկեանում պտոյտ կանեն ողջ տուններ,
 Պատուէր կ'տան ինչպէս շահի վէզիրներ:
 Դէ՛, մատուռակ, լի անապակ անձ գինի,
 Խմենք կենաց բոլոր գըզրաց Հայ ազգի:
 Ազնիւ գինի, երբ քեզ խմեն հիւանդներ,
 Դէն կը գցեն բարձ ու տէօշակ, եօրդաններ,
 Կը փըլփըլան վարդի գունով երեսներ,
 Եւ կըստանան նոր կեանք, ոգի՛, նոր սրտեր:
 Դէ՛, մատուռակ, լի անապակ անձ գինի,
 Խմենք կենաց ողջ հիւանդաց Հայ ազգի:
 Ազնիւ գինի, երբ քեզ խմեն հայր սուրբներ,
 Վարուց սրբոց կը լինին քաջ պատմիչներ.
 Առականքով կը տան սիրուն խրատներ,
 Լիանալով կը զարմանան լըսողներ:
 Դէ՛, մատուռակ, լի անապակ անձ գինի,
 Խմենք կենաց կրօնաւորաց Հայ ազգի:
 Ազնիւ գինի, երբ քեզ խմեն քահանայք,
 Մաշտոցն առած շուտ կը վազեն տունօխնանք.

Անգիր կասեն աղօթք, մաղթանք, շարականք,
Սրտով կ'օրհնեն տաշտ ու կարաս, եղամանք:

Դէ՛, մատուռակ, լի անապակ անձ գինի,

Խմենք կենաց քահանայից Հայ ազգի:

Կարմիր գինի, երբ քեզ խմեն տիրացուք,

Բիւլբիւլի պէս կ'անեն պէս պէս ծըլվըլուկ,

Երգեր, տաղեր, խաղեր կ'երգեն կըլկըլուկ,

Կ'զարգարեն կնուռք, հարսնիք ու խընճոյք:

Դէ՛, մատուռակ, լի անապակ անձ գինի,

Խմենք կենաց բոլոր դպրաց Հայ ազգի:

Կարմիր գինի, երբ քեզ խմեն աշուղներ,

Կ'եռան կ'եփեն և ջօշ կը գան սուրբ էշխեր,

Լեզու կ'ելնեն սաղ, քեամանչայ, սանթուրներ,

Կ'ածեն, կ'անչեն լաւ ու ընտիր շատ երգեր:

Դէ՛, մատուռակ, լի անապակ անձ գինի,

Խմենք կենաց ողջ աշուղաց Հայ ազգի:

Կարմիր գինի, երբ քեզ խմեն սազանդէք,

Ձայն կը հանեն փող, տընկըլբազ և զուռնէք:

Եալլի կը տան քաջ տղամարդք և փեսէք,

Պար կը բռնեն հարսըն ու աղջիկ և տղէք:

Դէ՛, մատուռակ, լի անապակ անձ գինի,

Խմենք կենաց սազանդայից Հայ ազգի:

Ազնիւ գինի, դու դատաւոր արդար ես,

Ով քեզ խմէ իւր չափից դուրս՝ կը պատժես:

Յեկի, ձիւնի, փոշուոյ միջում կը թաթխես,

Եւ կատարեալ մոխրաթաւալ մի կանես:

Դէ՛, մատուռակ, լի անապակ անձ գինի,

Խմենք կենաց ողջ չափաւոր խմողի:

Ո'վ սուրբ գինի, դու ամենից կը սիրուիս,

Դու օրհնուած ես, դարձեալ Տէրից օրհնուիս:

Ա՛խ կը կանչեմ բոլոր սրտով Քրիստոսի,

Որ անապակս Հայ սեղանից դու լինիս:

Դէ՛, մատուռակ, լի անապակ անձ գինի,

Խմենք, փառք տանք երկրիս, երկնից մեծ Տէրին:

Ինչ սեղանում քո բաժակներ կը գտնուին,

Ղարիպ եղբարց անուններն կը յիշուին:

Բաժակ բաժկի ծընկծընկալով կը թըխուին,

«Խերով, բարով գան» ասելով կը կոնծուին:

Ա՛խ, տէր-տէր ջան, լի բաժակներ էս գինին

Խմենք կենաց ողջ զարիպաց Հայ ազգին:

Ազնիւ գինի, երբ դու չը կաս ի սեղան,

Տխուր կանցնին կընուռք, հարսնիք, բարեկենդան,

Իսկ հոգեհայ կամ ժամահայ երբոր քեզ հետ միանան՝

Յընճան երեսք, փայլին աչեր, բերանք լինին օրհնաբան:

Ա՛խ, տէր-տէր ջան, լի բաժակներ էս գինին

Խմենք հոգւոց ննջեցելոց Հայ ազգին:

Ո'վ սուրբ գինի, ո'վ կարէ քո արժանին

Գովել խօսքով, կանչել ձայնով բիւրից մին:

Ներքը քո խեղճ ծառայ Ուստա Ջամալին (*),

Որ շատըն թողուց երգս լսողաց սուր խելքին:

Դէ՛, մատուռակ, լի անապակ թաս վերջին

Ա՛ճ, որ խմենք, պատուով վերջ տանք մէճլիսին:

*) Սոյն «Երգ չինական խնճոյից» ինչպէս և «Երգ ամուսնութեան» խորագրով գրուածքները պատկանում են «Միրզա և Աննա» վէպի հեղինակ Մ. վ. (այժմ եպիս.) Բարխուդարեանի գրչին, որը յայտնի է մեր գրականութեան մէջ իւր քանի մի այլ նշանակութիւն ունեցող աշխատութիւններով, — որ սոքա են. «Գաղտնիք Ղարաբաղի», «Աղուանից երկիր և գրացիք», «Պըլը-Պուղի», «Արազը տարին կատարի», «Չնաչ-խարիկ տղայ», «Չարանն ու Նչոնածը» և այլն:

197.

Տ Ղ մ ու տ.

Մտաւ արեւ. Աւարայրին մութ պատեց,
 Սև ամպերով երկնից դէմքը քողարկուեց.
 Բընուլթիւնը մի քուն մըտած հեշտասէր
 Վալելում է անուշութեան վառ ժամեր:

Զէ նուագում քաղցրը սրինգն հովուական,
 Թռչունների քնքուշ տաղեր լռեցան.
 Ծաղիկները նիրհած փափուկ մարգերում
 Երբեմն մեղմիկ հովի հետն են համբուրվում:

Բայց այդ քունը մօտ չէ գալիս հեշտագին
 Ծեր Տղմուտի արիւնակոխ աչքերին
 Այն սև օրից, երբ որ կուրծքը կուսական
 Յուզուեցաւ արիւնովը հայութեան:

Անցան դարեր, դեռ Տղմուտը հեծելով
 Գիշերները խանգարում է անվրդով
 Աւարայրի անուշ քունը, և չունի
 Մինչև այսօր նա ողբակից իւր վշտի:

Եւ ծերունին հառաչում է սրգաւոր.
 Արիւն դարձած կոհակները ալեւոր
 Գընում գալիս, զարնըւում են ափերին,
 Անցած փառքը յիշեցնում են հայերին:

«Զեր նախնեացը էլ չէք նըման դուք, հայեր,
 Զունիք այլ ևս հայրենասէր այն ոգին.
 Նոքա մեռան, և կուրծքերը անվեհեր
 Արեամբ բուսած անմահ վարդեր պսակեցին:

«Նոքա գըլուխ չըտուեցին բռնութեան,
 Զը ծախեցին նոքա խիղճը և ամօթ,
 Ազատութեան երկրպագու կանգնեցան,
 Հաւատալով փառքի լուսոյն անաղտ:

«Եւ անթառամ զարդարեցան պըսակով,
 Անմահացաւ այն վեհ հոգին արութեան.
 Եւ հայրենեաց կեանք տըւեցին արիւնով
 Ահեղ մարտի դաշտում հայ մարդ, հայ կուսան:

«Դո՛ւք ի՞նչ արիք, դո՛ւք փառաւոր նախորդաց
 Ստրո՛ւկ ծընած, անփա՛ռք սընած զաւակներ.
 Հայ սար, հայ գետ, հայ դաշտորայք շունչ առած՝
 Պիտ՝ ամօթով այրեն ձեր սև երեսներ:

«Ազատութեան սուրբ պատկերը կործանած,
 Դուք ծաղրում էք ազատասէր զգացմունք.
 Նոր Յազկերտի անարգ բազին էք կանգնած
 Եւ խայտառակ կատարում էք պաշտամունք:

«Ո՛հ, թէ ելնէր կորած մոռցուած դամբանից
 Վարդանների առիւծական այն հոգին,
 Եւ երկաթի խարաղանը թունալից
 Տար ձեր ժպիւրհ, ամօթապարտ ճակատին:

«Եւ արցունքով համբուրէիք սուրբ շիրիմ,
 Ուխտ կապէիք նորից խաչով ու սրով
 Կանգնեցնել նոր Արտաշատ, Խոխոցիմ
 Վերջ տալ անարգ այս վիճակին արիւնով»...

Եւ Տղմուտը հառաչում է սրգաւոր,
 Արիւն դարձած կոհակները ալեւոր
 Գընում գալիս, զարնըւում են ափերին,
 Անցած փառքը յիշեցնում են հայերին:

Անցան դարեր, դեռ ծերունին հեծելով
 Գիշերները խանգարում է անվրդով

Աւարայրի անուշ քունը, բայց չունի
Նա ոյժ քունը խանգարելու հայերի...

Յ. Յովհաննիսեան.

198.

Կ ա լ ի ե ռ դ .

Մեր գիւղացին երբ տեսնում է
 Լծած եզը տնքալիս,
Երբ արևից նա այրվում է
 Խուրձը հաշտ անելիս,
Կամանն վրա երբ կանգնում է
 Ջուխտ եղներին քշելիս,
Ահա այսպէս նա երգում է
 Իրան կալը կասելիս.
«Ե՛զը ջան, կա՛լ արա, կալիդ ման արա,
Հասկերը փշրի՛, ցորեն դուրս արա,
Հաշանը տրորի՛, լաւ տարման արա:
Ես ու դու մին ենք,—իրար եղբայր ենք,
Մինչև երեկոյ իրար հետ տանջուենք,
Ես երեկոյեան կալը կը թեղեմ,
Դէպի կանաչ խոտ քեզ բաց կը թողնեմ.
Լուսնակ գիշերին թեզը կը քաղեմ,
Ցորեն-տարմանը իրարից ջոկեմ.
Տարմանը մղանով մարաքը կ'ածեմ,
Ցորենը ջուալով ամբարը լցնեմ:
Երբ որ ձմեռը կ'գայ, կը մրսենք,
Դուք տարման կ'ուտէք, մենք ցորնով կապրենք.
Ե՛զը ջան, կա՛լ արա,
Կալիդ ման արա...»

Ե՛զը ջան, եղբայր, դու իմ աջ կուռն ես,
Իմ թե ու թիկունք, դու իմ տան դուռն ես.
Քեզ որ չունենամ, արտ չեմ ունենալ,
Կալ էլ չեմ կալիլ, ցորեն ստանալ:
Բայց, ախ... ցորենը իմ տունը չէ մտնում,
Հորերս-ամբարս ցորնով չեն լցվում.
Ա՛խ... աչքը դուրս գայ մեր պարտքատէրի,
Մէկ փութ պարտքի տեղ՝ վեց փութ կը տանի.
Խեղճ երեսանցս ձմեռուայ կիսին
Քաղցած կը թողնի, ինձ գերի կանի...

Կա՛լ արա, մատաղ,
Դառն է քեզ մատաղ...:

Ե՛զը ջան, քեզ հետ տանջվում եմ, մաշվում,
Դաշտում-արանում վարուցանք անում.
Բայց ես այդ ցանքը արմատից կերած,
Դեռ կանաչ վախտը հնձած եմ, բաժնած:
Ցորնի պարտքը չէ այս իմ ասածը,
Դարդ ու կրակ է իմ վզին դրածը:
Փողի պարտք ունիմ—ցորնից եմ տալիս,
Եւ հարկ ու բէգեառ—ցորնից դուրս տալիս,
Տան կարասիքները ցորնով եմ հոգում,
Տէր-տէրի հարկը ցորեն եմ բաշխում,
Աշըղի, որբի—ցորնից մաս հանում.
Խօսքով. ցորենը մեր բոլոր յոյսն է,
Մեր շունչ պահողը, մեր աչքի լոյսն է.

Ման տուր, իմ եզը,
Ապրի քու պոզը:

Ե՛զը ջան, տեսա՛ր, թէ ինչպէս ծանր է
Մեր օրն ու կեանքը և որքան դառն է...
Դու հէնց կարծեցիր, որ աշխարհքումը
Միմիայն դու ես գերի բանտումը...
Բայց լա՛ւ իմացիր, որ ինձ պէս մարդիկ
Վատ վիճակումն են, քան թէ կենդանիք:

Աստ, ո՞վ կառնի քեզնից տարմանը,
 Ո՞վ կը խլի քո ձմրան պաշարը...
 Բայց, տես, մեզանից շատ մոլի մարդիկ
 Իսպառ խլում են մեր չոր ուտելիք...
 Մէջ արա, եզը ջան,
 Զանս քեզ ղուրբան»:

Աղերսանդր Արարատեանց.

199.

Ա ն ու ը ջ ք.

Յամսավերջն Ապրիլի զպատուհանս բացի,
 Զձիւնաթաղ դաշտորայս ծաղկազարդ տեսի:
 Արտասուք եռանդունք զայտս իմ այրեցին,
 Զիմ անդարձ գերութիւն յուշ իմ մուտ ածին:
 Լեղուապէս դառնացան վէրք վըհատ հոգւոյս,
 Թըմրեցան զգայարանքս, հատան ելք շնչոյս:
 Ափսոս ինձ, ասացի, բիւր անգամ յայն օր,
 Շատ անէծս թափեցի 'ի ծննդեանս վատ օր:
 Մաշեցայ, թոշնեցայ, մըտի խոր 'ի քուն,
 Զչար կսկիծ հէք գերւոյս արկի ծով յանհուն:
 Դըշխոյն մեծ անմահից ել ինձ յայց տեսլեամբ,
 Որպէս թէ 'ի փոսոյ զիս ելոյզ ձեռամբ:
 Աներկմիտ մօտ մատեայ 'ի համբոյր ոտին
 Դերբնապէս սքանչելօք զիս ազատողին:
 Բամք ձայնեղ թըռչնակաց ճոխ դալլալեցին,
 Կենսածին Տիրամօրն փառս վերերգեցին:
 Երանի՜ ասացէք կարմրացայտ վարդիս,
 Քաջալերս տո՛ւք նըմա 'ի դով պաշտպանիս:
 Աւանդ ինձ նեղասիրտ, կարճամիտ լալոյս,
 Զիւրդ գիս կարծեցի կորուսեալ անյոյս:

Նախատինք իմ նեղչած նետք եղեն ինքեանց,
 Նանրացան դաւք նոցա, անկան յիւրեանց ցանց:
 Յաւազնեալք, օրհնեցէք զանուն Տեառն յաւէտ,
 Դիք զյոյս ձեր յօգնութիւն Խաչին փըրկաւէտ:
 Յ. վ. Ալամդարեանց.

200.

Յ ա ու ն ջ.

«Կապոյտ երկնքում» երգի եղանակով.

Յառնջ, դէպ յառնջ վազենք, ո՞վ հայեր, Ժամանակի հետ,
 Ուսում, գիտութիւն և սուրբ միութիւն, ան, մեզ շատ են պէտք:
 Վատ ատելութեան հզօր թեւի տակ իսպառ մաշեցանք,
 Սէրից հեռացած, ահա կորստեան ձորին մօտեցանք:
 Ել ո՛ւմ սպասենք. ամենայն ազգեր պայծառ լուսոյ մէջ
 Փրկութեան, փառքի դրօշակի տակ հրճվում են անվերջ:
 Վկայ են երկինք, ազգ և հայրենիք սիրոյ են կարօտ,
 Առանց այդ սիրոյն, ո՛հ, ոչ ոք չէ մարդ, այլ մի անամօթ:
 Բենական լուսով թէ լցուած սրտեր կան մեր կուրծքի տակ,
 Դուռը փրկութեան բաց է մեզ համար փառքով անքանակ:
 Ապրիլ, ինչպէս մարդ, այս աշխարհիս մէջ, այո՛, մեծ բաղդ է.
 Պարտ և իրաւունք պէտք է ճանաչել, մեզ ո՞վ բան կասէ:
 Երջանիկ կեանքի եթէ լցուած ես անարատ սիրով,
 Տառապեալ Հայ ազգ, ուրեմն յառնջ կատարեալ լուսով:

Յովսէփ վ. Փինաջեանց.

201.

Յերկու ձեռին երկու մօմ՝
 Ինձ ընդ առաջ ել ի տուն,

Մի հարցանէք—հի էր նա,
Հրեշտակ, թէ կոյս լուսագեղ:

Ամօթն զնա վարդ արար,
Ես հիացեալ դարձայ քար,
Այն ի՞նչ օր էր և ի՞նչ ժամ,
Յորում տեսի ես կեանք նոր:

Լիաճրրագ յայնմիկ տան,
Ի մարդաշատ բազմութեան,
Ի մէջ աղջկանց և հարսանց
Յոտին կայր ոմն անդ յանկեան:

Այն օրիորդն էր պարկեշտ,
Ինչպէս տաճեալ առ դրամբ տան,
Զոգիս զրաւեաց յիւր ի սէր,
Ի նմա տեսի ես կեանք նոր:

Մարգարտափայլ մարմին էր,
Հասակն էր յոյժ վայելուչ.
Զոտիւքն իւր վարսք քարշ գային,
Ի գոյն քրքրմոյ փայլէին:

Դիմաց շքեղ երևոյթ,
Յօնից աչաց այտից գեղ,
Շրթանց, լեզուին համանոյ՝
Խոստանային ինչ կեանք նոր:

Ա՛խ ասացի, թըմրեցայ,
Սիրտս սկսաւ դողդողալ,
Զաշխարհ համայն մոռացայ
Ի գեղ կուսին ափշեցեալ:

Բամբ կոչելոցն յայն հանդէս
Ընդ իմ մեծ բաղդ մախային,
Զի մերձաւորք այն կուսին
Փեսայ զանձն իմ ձայնէին:

Եթէ զաշխարհ լի գանձիւք
Ինչ ոք բաշխէր ի պարգև՝
Ո՛չ տեսանէր այնքան ըրախ,
Որքան ՚ի գալս առ կուսին:

Արդեօք՝ գուցէ յաշխարհի
Սիրոյ նման ինչ հըզօր,
Սէր ի ձեռաց Արարչին
Մեզ մահացուածս է ձիր նոր:

Նանրախորհուրդ ազգ մարդկան՝
Շատ մի սիրեր դու զաշխարհ,
Նա թըշնամի է անգութ,
Զար քան զքարբ մահաթոյն:

Ցանցիւ սիրոյ զքեզ կարթէ,
Ի հաղբ անել ըմբռնէ,
Ապա զսիրոյդ առարկայ
Ի քէն արագ կողոպտէ:

Յ. Վ. Ալամդարեանց.

202.

Ն օ ր Տ ար ու ա յ մ ա ղ թ ա ն ք:

(Հայ մանուկների համար).

«Արեն ելաւ, Զէյթունցիներ» երգի եղանակով.

Յաւիտենից անմահ Աստուած,
Տէր և իշխան ժամանակաց,
Լսէ մեր ջերմ աղաչանքներ,
Արտասուածոր պաղատանքներ.

Ո՛հ, Աստուածային ողորմութեամբդ՝ Բճրերար,
Օ՛ն, ցրուէ մատաղ մեր սրտերի խոր խաւար:

Նոր տարւոյս հետ մեզ նոր հոգի
Տո՛ւր միտք, նոր լոյս ծագէ՛, Ա՛ստուած,
Լցուած բարի գիտութիւնով,
Զ՛մնանք միշտ խեղճ, շուարած.

Ո՛հ, բա՛ւ է, որքան տգիտութեամբ տանջեցանք,
Օ՛ն, արժան արա քո շնորհաց, որ ցնծանք:

Նոր տարւոյս հետ մեր խեղճ ազգին
Տո՛ւր սէր, սրտով սիրել միմեանց,
Տալ թեւ թեւի, տալ մէջք մէջքի,
Միշտ ունենալ բարի նախանձ.

Ո՛հ, Տէր, խորտակէ ատելութեան չար ոգին,
Օ՛ն, տո՛ւր միութեան հոգին թշուառ հայ ազգին:

Նոր տարւոյս հետ այց արա, Տէր,

Մեր անուշիկ հայրենիքին,

Ազատ լերան ծեր գազաթէն

Թո՛ղ փայլի մեր յուսոյ արփին.

Ո՛հ, տո՛ւր կիսափուլ տաճարներիդ շինութիւն,

Օ՛ն, թո՛ղ ամեն տեղ փայլի խաչի զօրութիւն:

Նոր տարւոյս հետ վիշտ, տառապանք

Հեռո՛ւ, հեռո՛ւ կորչին մեզնից,

Եւ կենսատուր լոյս մի ցոլայ

Այրարատեան մայր Աթոռից.

Ո՛հ, Հովուապետին մեր զօրացո՛ գաւազան,

Օ՛ն, Տէ՛ր, քո աջովդ կնքէ՛ զիր մեր փրկութեան:

Մեր եղբայրներ, մեր քոյրիկներ,

Լա՛ւ աշխատենք ուսում առնել,

Սիրենք անխոնջ կարգաւ զրել,

Մեր ծնողաց յոյս պսակել.

Ո՛հ, մեր ստացած շնորհքներով նոր տարիս,

Օ՛ն, շնորհաւոր թո՛ղ լինի մեզ ամենիս:

Յովսէփ Վ. Փինաչեանց.

203.

Յորժամ եղև զարուն՝ արև ծագեցաւ,
Հարաւ հողմն հընչեաց, սառն հալեցաւ,
Երկիր կանանչեցաւ, ծառն ծաղկեցաւ,
Խմենք, եղբարք, գինի՝ մեզ անոյշ լինի,
Ածէք, խրմենք գինի՝ բանն Աստուած շինի:

Ո՛վ եղբարք, նըստեալ էք ծաղկեալ ծառի տակ,
Զեռներիդ է գինին կարմիր և յտակ,
Թասի մէջ անկանի ծաղիկ ըսպիտակ. խմենք և ալլն:

Առէք կարմիր գինի և լցրէ՛ք շուտով,
Բերէ՛ք թագայ գառն սինի սարփուշով,
Ղաբլու փլաւ ձգէք մեխակով, նշով. խմենք և ալլն:

Թո՛ղ չիման տեղ նստիմք, ջուր լինի և խոտ,
Կարմիր գինի խմենք մէկսմէկի մօտ,
Միմեանց նուիրեմք զվարդ անուշահոտ. խմենք և ալլն:

Վաղիւն ո՛չ գիտեմք՝ թէ գինչ ծընանի,
Մարդուս կեանքն վայրի ծաղկի նըմանի,
Որ այսօր բացուել է՝ վաղիւն անցանի. խմենք և ալլն:

Նոր գարուն, նոր արև, ծաղիկ շնորհազարդ,
Այսուհետև բացուի մանուշակ ու վարդ,
Զայնբիւլբիւլին, տառալիկն լսէ ամեն մարդ. խմենք և ալլն:

Այլ և խաղաղութեամբ խմելն է հալալ,
Ո՛չ հարբել, գոռալ և ո՛չ բարկանալ,
Ուրախութեամբ խմել, սիրով զուարճանալ. խմենք և ալլն:

Գնա՛, լսց քո մեղքն, Նախաշով Աղամ,
Աշխարքս անցաւոր է, չէ մընացական.
Դուք կերեցէք, խմեցէք, եղբարք սիրական,
Եւ օրհնեցէք զԱստուած այժմ և յաւիտեան:

Նախաշով Աղամ, աշըգ.

204.

«Յիշեան, Տէ՛ր, զպաշտօնեայս քո, զծնողսն
մեր, զվարդապետս, զեղբարս» և այլն.

Ժամագիրք.

Յիշեան, Տէ՛ր,
Իմ ծնողներ կաթողին.
Նոցա սրտի, մտքի մէջ
Միշտ կանխ արա քո հոգին,
Որ երկիւղիւ, դողուլեամբ
Առ քեզ պահեն իմ հոգին:
Յիշեան ազգիս վարդապետք.
Նոցա բանիւն ու գործով
Արա ցաւերն մեր անհետ.
Թո՛ղ նոցա սուրբ գիրն ու բան
Համ փուշ լինեն, համ վարդտան:
Յիշեան եղբարքս քո գթով.
Որպէս տատրակ զգլխով
Զագուց իւրոց թեւ ածեալ
Ողջագուրէ քաղցրապէս՝
Այնպէս և դու՝ սէր տուր մեզ:
Յիշեան զընկերքս գեղեցիկ
Որպէս սոխակ երգեցիկ
Միշտ վարդենեացն առննթեր
Միրէ հանել զտիւ գիշեր՝
Այնպէս և մեզ տո՛ւր գգուել:
Յիշեան
Մեզ հաց տուող տնտեսին.
Տո՛ւր լիութիւն, շատութիւն
Նորա հացին ու մսին.

Նորա մառանն ու մարագ
Արա իբրեւ մի Շիրակ:
Յիշեան, ո՛վ Տէ՛ր, զուխտաւորս.
Նոցա նուէր, պատարագ,
Նոցա ձօնած տաք համբոյր
Արա ընդ միշտ մեծայարգ
Քո սուրբ ժամուց վարագոյր:
Յիշեան ամեն ուղեոր—
Երիտասարդ, ալեոր.
Նոցա կոխած ճանապարհ
Թէ որ ծո՛ւռն են, ուղիղ տար,
Ո՛վ հոգատար Տէ՛ր արդար:
Յիշեան և այն տընւորին,
Որ տեղ կտայ նշդեհին.
Թո՛ղ այնպիսին կանթեղուած
Միշտ քեզանից ունենայ
Հաց ու պաշար, չոր ու թաց:
Յիշեան դու և այն մարդոց,
Որոնք վաստակ թափելով
Շինել են ժամ ու դպրոց.
Եւ կամ փողեր ցնցիւնով
Կտրե՛լ են շատ լաց ու կոծ:
Յիշեան
Պէս պէս մեղքով կեղեքող—
Զյափշտակողս և զգող,
Զմատնիչս, ըզգրկող.
Նոցա արարքն ու գէշ բարք
Ա՛ռ ու ձգի՛ր ծովի տակ:
Յիշեան դու և այն գերի,
Որ ի դուռս օտարաց
Միշտ հանապազ դեգերի.
Եւ այն վհատ հիւանդաց,

Որոնք կարօտ են դեղի:
 Դ՛ո՛ւ՛ իշխանաց մեծ Իշխան,
 Յիշե՛ս զիշխանս, ուր որ կան.
 Քո և նոցա թւոց տակ
 Մեզ ամենիս քո սիրով
 Արա՛ մի անձ, մի զաւակ:
 Յիշե՛ս և զիմ բարերարս,
 Որոնք ինձնից անբաժան
 Իմ կրթութեան փոյթ տարան
 Եւ հաւատով քաշեցին
 Ինձ Քո շնորհաց նստարան:

Սահակ վ. Ամատունի.

205.

Ա. ՆՈՒԱՐԴ ՄԵԶԱՆՈՒՐԵԱՆ.

Նուա՛րդ սիրունիկ,
 Մեզա՛նուրեան դստրիկ,
 Ա՛ռ քեզ մի աղջիկ*)
 Քեզ պէս գեղեցիկ:
 Դէմքն շնորհագեղ,
 Աչկունք սիրազեղ,
 Յօնքերն աղեղ,
 Մազերն բաղեղ:
 Բերան գեղունակ,
 Շրթունք կարմրորակ,
 Իբրև աղբերակ,
 Սէր ծորեն համակ:

*) Գրուած մի աղջկան մանկական սլափերի տակ, նուիրուած փոքրիկ Նուարդին:

Ծնոտն բիւրեղ,
 Պարանոց շքեղ:
 Ո՛վ Աստուած անեղ,
 Պահէ՛ ամեն տեղ
 Նուարդներն անմեղ:

Մ. Ե. Մ.

206.

ՏԵՍԷՔ ՈՐՔԱՆ ԵՆՔ ՄԵՆՔ ԵՐՋԱՆԻԿ, ՈՐ ԱՅԱ ԵՆ
 ԱՍՈՒՄ ՄԵՐ ԿՆԱՆԻՔ.

«Ներկայ դարուս ազատ հոգով
 Մենք զարգացեալ կանայք ենք էլ.
 Լուսաւորուած ամեն կողմով
 Մենք զարգացեալ կանայք ենք էլ:
 Կրթուել ենք, առել ուսում,
 Առաջ գնացել ամեն մասում,
 Ինչ ուզում ենք, այն սկսում,—
 Մենք զարգացեալ կանայք ենք էլ:
 Դուրս ենք եկել ստրկութիւնից,
 Մարդկանց կռաւիտ բռնութիւնից,
 Եւ պըրծել ենք նեղութիւնից,—
 Մենք զարգացեալ կանայք ենք էլ:
 Ել չենք գերին մեր մարդկերանց,
 Արել ենք մենք գերի նրանց,
 Ազատամիտ, լուսաւորուած
 Մենք զարգացեալ կանայք ենք էլ:
 Չենք հետևում մեր նախամօր—
 Մաղենք ալուր, հունցենք խըմօր,
 Բան չենք անի ալդպէս ստօր,—
 Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Եւ կամ բռնենք մենք աղաջուր,
Դընենք թըթու, եփենք ապուր.

Էտոնք ի՞նչ են՝ միայն կեղտ-մուր,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Մերել մածուն, հանել կարագ,
Չունինք մեզի էլ ժամանակ,

Վատնենք այդպէս տեղեր դատարկ,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Էն հին կանայք էին ստրուկ,
Տանջանաց մէջ մաշվում յատուկ,

Մեր գործըն ա ապրել փափուկ,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Ձեռք չենք ձգում տան մի բանին,
Մեզ համար ողջ ծառայք կանեն,

Թըշնամի մարդկանց գրպանին,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Փոյթ չէ մեզի, մեր զաւակը
Թո՛ղ կըրթէ օտար դայեակը,

Միայն լաւ անցնի մեր կեանքը,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Մանր-մունրը այդպէս գործեր
Ձեն շարժում ցանկութիւնը մեր.

Ունենք իդէալ, բարձր մըտքեր,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Ձենք աշխատող մենք, ալլ մսխող,
Նոր ձևերին ճիշտ հետևող.

Հինըն ատող, միշտ նոր հագնող,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Գաղղիացիք մեզ տամ են տարազ,
Հագնում ենք իսկ տեղբատեղ սազ,

Նրանցից աւել, ո՛չ թէ պակաս,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Կարելն, անխօսք, չըգիտենք իսկի,
Տալիս ենք մենք միշտ մադիստիկ,

Որքան ապա դուրս գայ ոսկի,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Այդ մասին փող չենք խընայում,
Ո՛չ էլ մարդկանց կամքին նայում,

Առատութեամբ վարձ ընծայում.—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Այս բանումը մեծ լաւութիւն
Արաւ մեզի մեր մամուլը,

Որ տըռաւ այդ ուղղութիւնը,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Նրա սերմանած սերմերն կանուխ
Աճան առատ, տըռան պտուղ,

Դառանք թեթեւ, եղանք կակուղ,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Խաչատուր, դու շատ մի խօսիր,
Ականջ արա, և մեզ լըսիր.

Քեզ էլ շուտով կ'անեն եսիր,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Խաչատուր Շահնազարեանց.

207.

Ե Ր Գ Ո Ն Ր Ա Խ Ո Ն Թ Ե Ա Ն .

(Նուէր Մ. Աթանասեանցին).

Կ ա ու ա վ ա ի ի ք .

Շողշողում է կարմիր գինին բաժակում,
Ամբարիշտ է, ո՛վ նորան չէ ճաշակում,

Բաժակ բաժակի տալով,

Շըխկ-չըխկ, շըխկ-չըխկ

Ներդաշնակ ձայնով:

Խ ո Ւ մ Բ Ր.

Այո՛, այո՛, ամբարիշտ է, ամբարիշտ,
Հեռո՛ւ, Հեռո՛ւ մեզնից այնպէս ոգին միշտ:

Կ ա ո, ա վ ա ր ի ջ.

Հազար այդպէս «Հեռո՛ւ» կրկնել լուկ խօսքով՝
Չունի արժէք. պէտք է կատարել գործով:

Խ ո Ւ մ Բ Ր.

Այո՛, այո՛, ճշմարիտ է, ճշմարիտ,
Յոյց տալ գործով, Հնազանդ ենք Հրամանիդ:

Կ ա ո, ա վ ա ր ի ջ.

Ուրեմն եկէք անմիջապէս մենք, մենք, մենք
Մէկ էլ շրթիկ-չրթիկ անենք բաժակն ու քամենք.

Շրթիկ-չրթիկ, շրթիկ-չրթիկ,
Քամենք մինչև վերջին կաթիլը, քամենք,
Մեր սիրելի Միքայէլին կեանք մաղթենք:

Սիմէօն Փիլիպպոսեանց.

208.

Ո՛հ, Խնչ քաղցր բան՝
Ըլլալ զինուորական,
Սուրն 'ի մեր ձեռին՝
Հայրենեաց պաշտպան:

Տրա լա, լա, լա, լա և այլն:

Ո՛հ, Խնչ անուշ բան՝
Ըլլալ ուսումնական.

Կրնալ Հայրենեաց

Արդ ծառայել:

Տրա լա, լա, լա, լա և այլն:

Ո՛հ, Խնչ անպէտք բան՝

Ըլլալ ուսումնատեաց

Եւ մեր Հայրենիք

Պանդուխտ Հալածել:

Տրա լա, լա, լա, լա և այլն.

(Յաւելուած)

Ո՛հ, Խնչ անգին բան՝

Ըլլալ կոնծաբան,

Կոնծել միշտ անփող,

Թափառել անբան:

Տրա լա, լա, լա, լա և այլն:

Ո՛հ, Խնչ դժուար բան՝

Ըլլալ թղթաբան,

Տարուել միշտ փողը,

Գլխուն տալ Հողը:

Տրա լա, լա, լա, լա և այլն:

209.

Ն Ո Ւ Ե Ր

«Հայաստանի Սոխակին».

Ո՛վ դու Սոխակ Հայաստանի,
Սիրուն երգիչ Հայ եղեմի,
Որ սաւառնիս յանհունս ի վեր,
Սեթևեթել գողտրիկ երգեր,

Որ անտխեղծ սիրոյ ուժով,
Բիւրապատիկ ելեէջով
Գրկես, զգուես վարդն անուշիկ,
Զերդ երկնային լուսոյ թռչնիկ:

Սաւառնաթե գնա՛, Սոխակ,
Հնչի՛ր հեշտին քո մեղմ նուազ.
Բաց քո աչեր, բաց սրտագին,
Դիտել արտօսը ցաւագին:

Քո պարտիզի նման առատ
Ծաղիկ, շուշան, վարդ հարազատ
Չունէր Լօնդօն, չունէր Փարէզ,
Անցաւ, գնաց այն ասպարէզ:

Թռի՛ր, Սոխակ, թեւատարած,
Սրտիս հառաչ տա՛ր Արագած,
Գեղապսակ հիւսի՛ր փնջեր,
Հայրենիքի երգելով սէր:

Մասիս սարին տակ անուշիկ
Սուլի՛ր, փչի՛ր քո քնարիկ,
Այնտեղ է մեր Պարթեւ Հայրիկ,
Վասպուրականի ծերուկ Արծուիկ:

Գնա՛ սփոփել սիրտ տխրամած,
Սիրտ Հայրիկին մեր վեհապանծ,
Որ ի կորուստ իւր որդեկաց
Նստել ողբայ Մովսիսին գանձ:*)

Արշակ-Վահու՛նի Պալատանանց.

*) Հեղինակը, — երևի, — ակնարկում է Մովսէս Խորենացու Ողբը, որը գրել է Արշակունի ազգից Հայոց թագաւորութեան և Ս. Գրիգորի տանից եպիսկոպոսութեան վերջնապիւղ առթիւ, որ այսպէս է սկսւում. «Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հիւսիսականներից գերագանցդ. որովհետեւ վերցուեցաւ թագաւորն և քահանան, խորհրդականն և ուսուցիչը»: «Գ ա ն ձ», միևնոյն ժամանակ, նշանակում է և այն եկեղեցական տխուր երգերը, որոնք հին ժամանակները երգվում են եղել ննջեցեալների թաղման ժամանակ՝ թէ՛ եկեղեցում և թէ՛ դուրսը, յուզարկաւորութեան ժամանակ, տեղ-տեղ ննջեցեալի դագաղը հանգիստ տալով:

Գ. Ա. Բ. Գրիգորեանց.

210.

Գ ի ն ւ ո յ ե ռ գ .

Ուզում եմ ես այն գինին, սր նորան թմրութիւն չունի,
Ի՞նչ կանեմ ես այն գինին, որ ինձի փրկութիւն չունի.
Ուզում եմ ես այն գինին, որ սուրբ հոգւոյն պէս մաքուր է,
Ի՞նչ կանեմ ես այն գինին որ հոգւոյ կամ մարմնոյ հուր է:

Ուզում եմ ես այն գինին, որ ծնունդն անարատ է,
Ի՞նչ կանեմ ես այն գինին, որ ինքնին մեղաց արմատ է.
Ոտան տակ ընկած գինին հոն ընդունի իմ բերանն,
Նա տաճար Աստուծոյ է, էր կու մտնի անարժանն:

Թէ գիտէք ի՞նչ գինի էր, որ եղև արեան փոխանակ՝
Անկանոն գործ չէք ածիլ դուք գինին ամեն ժամանակ.
Նա իւր արիւնն տալով՝ հաստատում էր հաշտութիւնն,
Դու նախ գինի ես խմում, ապա եղբորդ արիւնն:

Ինձ համար մաքուր գինին անգամանդ սարից բերէք,
Ածողն հրեշտակ լինի, կուլէն մութն աշխարհից բերէք,
Առնելոյ համար նորան՝ տմարդի կեանքն ծախեցէք,
Սառելոյ համար նորան՝ լուսնեակիցը կախեցէք:

Ո՛չ ոսկւոյ, ո՛չ երծաթի, ո՛չ ձեռագործ թաս եմ ուզում,
Ջրհեղեղից մնացած ինքնափոր արմաս եմ ուզում.
Անլուայ խամ կտաւն ինձ համար սեղան արեցէք,
Մահուանս այն սեղանն ինձ յատուկ պատան արեցէք:

Տապանակ ուխտին բերէք, նորանից կրակ վառեցէք,
Արու արծիւ մորթեցէք, միսն խորոված արեցէք:
Ուտեմ միտս սլանայ դէպի սուրբ Երրորդութիւնն,
Երգեմ, սուրբ ասելով՝ օրհնեալ է քո յատկութիւնն:

Երբ բաժակն առնեմ ձեռս՝ բոլոր երկինքն երևի,
Ունիմ այլ ցանկութիւն, թէ պարգևատուն պարգևի.

Եթէ ես այն ճաշակեմ, մեղքերս զղջալ կարենամ՝
Յոյս ունիմ, որ ցոլաձև աթոռն տեսնալ կարենամ:

Բաժակիս չորս կողմովն գրած լինի էլի-էլի,
Որ նա է իմ Փրկիչն՝ Հնչման փողոյն Գաբրիէլի.
Զարկեալի այս մեղքերն մինչի դատաստան չի մնայ,
Որ նորա բարեհաճոյ Մայիֆն փոշիման չի մնայ:

Աբրահամ Մարտիրոսեան.

211.

Փ ո ղ ի վ ե ռ ա յ ա ս ա ծ.

Ո՛վ է հարցնում մարդկութիւնն, մարդ բառն փողն է, իմացէ՛ք,
Մարդկանց անթառամ պահողն՝ սրտերի ցօղն է, իմացէ՛ք.
Եթէ փող ունես, աներկբայ, ինչ որ պատահաւ՝ գողացի՛ր,
Հարուստն ինչքան գողանայ՝ աղքատն գողն է, իմացէ՛ք:

Առհասարակ պիտի ապրենք մինչի հարիւր քսան տարի,
Փողն մարդկանց ծերացնող, շուտ սպանողն է, իմացէ՛ք.
Ծնողք իւրեանց որդւոց մէջին աշխատաւորին են սիրում,
Անփող որդին իւր ծնողաց աչքի գրողն է, իմացէ՛ք:

Թէպէտ կասեն մեծատունն արքայութեան անարժան է,
Բայց մին կերպիւ արքայութեան դուռն բացողն է, իմացէ՛ք.
Մի՛ զարմանաք, ում տեսնում էք միշտ հարբած է առանց գինի,
Նորա սրտի մէջ եռողն՝ ոսկի խաղողն է, իմացէ՛ք:

Ով որ փողով փող աշխատի՝ փողի համար է աշխատում,
Իրան համար աշխատողն՝ հագնող, ուտողն է, իմացէ՛ք.
Անփող մարդն հարսանեաց տան՝ մի այրի կնոջ նման է,
Փողն նուաստին մէջլիսում՝ արիացնողն է, իմացէ՛ք:

Ոչ ով չասի ես խելօք եմ, այսու պատիւ ունեմ աշխատած,
Փողն մարդկանց պատուի հանող, պատուից քցողն է, իմացէ՛ք.
Յուզան իւր Տէրին մատնելով՝ դառաւ նզովեալ, անպիտան,
Նա միմիայն բանին պատճառ է, փողն մատնողն է, իմացէ՛ք:

Ես էլ շատ վախտ ցանկանում եմ լինիլ փողատէր յիմար,
Աշխարհիս մէջի արլահան՝ շատ մտածողն է, իմացէ՛ք.
Քալ մարդիկն իմ խօսքերս կարծեմ ոչնչի տեղ չդնեն,
Բայց յոյս ունեմ, որ Մայիֆի, ականջի օղն է իմացէ՛ք:

Զարկեալն որքան մտածաւ, որ փողից լաւ մին բան ճարի՝
Ոչ կայ և ոչ իլնելու է. սա վերջին տողն է, իմացէ՛ք:

Աբրահամ Մարտիրոսեան.

212.

Վ ե ռ ջ ա բ ա ն ու թ իւ ն *).

Ով ոք կամի ինձ ճանաչել՝ մեծ ինքնահաւանն ես եմ,
Որ ի շարս բանաստեղծից՝ ասում են Ֆլանն ես եմ.
Տաճկաց լեզուից ձեռք քաշեցի, այժմ Հայաստանն ես եմ,
Հայաստանի կորած որդւոց առանց աստիճանն ես եմ,
Ազգասիրութեան պտղիցն նոր ճաշակող ջանն ես եմ:

Ոչ քերականութիւն գիտեմ, ոչ անսխալ գրութիւն,
Իմ բանաստեղծութիւնս է միմիայն մտաց սրութիւն,
Կամ անթերի դատողութեամբ ունիմ լեզու, ճարտարութիւն.
Ծովութեան գերեզմանից ես նոր եմ առած յարութիւն,
Յոյս ունեմ, որ էլ չի մեռնեմ, ազգի մէջ կենդանն ես եմ:

*) Այս գրութեամբ հանգուցեալ Զարկեարը վերջացնում է իւր
մի ձեռագիր տետրակը, որը մինք հրատարակել ենք երկու անգամ,
այն է՝ 1879 և 1890 թուերին: Առաջին հրատարակութիւնը եղել է
Զարկեարի որդ մնացած օրիորդի օգտին, իսկ երկրորդը—վերջերումս
չքաւորութեան մէջ ընկած նորա (Զարկեարի) կնքահայր Մայիֆին օգ-
նելու համար: Այս ոտանավորից ընթերցողը կարող է, մասամբ, ծանո-
թանալ հանգուցեալ Զարկեարի կեանքի և նորա տրամադրութեան
հետ:

Գ. Ա. Բ. Գրիգորեանց.

Եթէ ունենամ ժամանակ, ասենք, ինձի թէ մին տարի՝
Կարող եմ շատ տեսակներն ես յօրինել*) «Նոր Քնարի»:
Սեւերս ինձի աշխարհն, ինձի տալով գործ զարկեարի,
Պակասութիւնն չի թողնում խելքս ու միտքս մին դադարի,
Սրտիս ումիդն եմ բարբառում, ոչ թէ մեծաբանն ես եմ:

Հաւատէք, ինչպէս Հայ եղբարք, իմ այս առաջին տետրակս
Վեց ամսոյ մէջ եմ յօրինել՝ կիւրակին իմ ժամանակս:
Սա մին նախնեաց ասած բան է, անխոտելի է առակս,
Հազս, փորս ինձ չի թողնում, խնդիր է տալիս քսակս,
Եթէ սորանցով պարապեմ՝ վերջի մուրացկանն ես եմ:

Բանաստեղծութիւնն աճում է օր ըստ օրէ Տաճկաստանում,
Քանզի նորանց բանաստեղծքն մեծ ուճիկներ են ստանում,
Հոգս չունեն մի այլ բանի, նորագիւտ երգեր են հանում,
Ներէ՛ք, ուզում եմ բացն ասեմ, որովհետեւ չեմ դիմանում,
Հայոց փողապաշտ իշխանաց դիւմանն ես եմ:

Ո՛ր իշխանի մօտ ես գնամ, խոնարհեմ, գլուխ վեր բերեմ,
Նորանից պաշտօն խնդրեմ, ասելով այս գործի տէր եմ,
Տան դռնիցն ջուղաբ կանի, իբր թէ ես մարդակեր եմ:
Գործով կատարող չեմ տեսած, լեզուաւ կասեն ազգասէր եմ:
Ինչպէս անուամբ քրիստոնեայ՝ գործով աննմանն ես եմ:

Ես Հայաստանի կողմանէ դեռ ոչինչ չեմ շարունակել,
Ուխտաւոր եմ ես այս մասին, նա է սրտիս դուռն փակել,
Տեսնեմ կայ ինձ առաջ քաշող, ապա պատրաստ եմ պսակել,
Յանձս առնեմ լուծն ազգային, կարենամ բեռն շալակել,
Էն ժամանակ կու տեսնեն, որ ազգի օգնականն ես եմ:

*) Հանգուցեալ Զարկեարը—ասում են—Շամախու գիւղերի, այն
է՝ Սաղիանի, Մատրասայի և Գիւրջիլանի գիւղերի և նոցա կարասները
վերայ գովասանական երգեր ունի ասած: Յանկալի էր, որ ձեռնհաս
մարդիկ ժողովէին այդ գրուածքներն և հասցնէին մեզ. շնորհակալ
կ'լինէինք:

Ա՛խ ժամանակ, ախ ժամանակ, մինչի երբ պիտի քեզ չունենամ,
Դու մեր ազգի թշնամին ես, չես թողնում բերանս բանամ,
Ես քո վայելչութիւնից իմ թամազ ատամս հանամ,
Ազգին լսացնելոյ համար՝ սա մին փոքրիկ սերմ էր՝ ցանամ,
Թէ տեսնեմ հարցնող չկայ՝ էլի առաջուանն ես եմ:

Ես տաճկերէն հաղ գրելուս՝ շատ ընծաներ եմ ստացել,
Բոլոր Շամախին վկայ է, որ նեղութիւն չեմ հասկացել,
Հայրենեաց սէրն զգալով՝ այն օգտից ձեռ եմ լուացել,
Հայերից ինձ օգտող չկայ, նեղութեան մէջ եմ մնացել,
Աստուած չի տայ փոշմանութիւն, չեմ ասում փոշմանն ես եմ:

Ինձի ոչ ով չի ճանաչում, բացի երկու ամուր անձանց,
Մէկն ազգին քաջ յայտնի է—իշխան Մովսէսն Զոհրաբեանց,
Միւսն իմ Յարութիւն աղէս—լուսաւորիչն Նաջարեանց,
Երբէք չեմ կարող մոռանալ նախախնամութիւնն նորանց:
Թէ հազար ծառայք ունենան՝ էլի սիրականն ես եմ:

Զարկեարի մտաց աղբիւրի արդեօք ակն բացողն ո՞վ է,
Մի տարուոյ մէջ երեք հարիւր երգ հանել խոստանողն ո՞վ է,
Թո՞ղ ինձ առաջ քաշի, փորձի, ասածիս զարմանողն ո՞վ է,
Նետիս ծայրը նոր եմ սրել, առաջիս դիմանողն ո՞վ է:
Ում մէջքն գետնին չի կպել՝ կ'ասի փահլիվանն ես եմ:

Արրահամ Մարտիրոսեան.

213.

Ն ու է ր Ս ո խ ա կ ի ն .

Ողջոյն ընդ քեզ, իմ Սոխակ,
Հայաստանի զիլ խօսնակ.
Թռի՛ր, գնա՛, շո՛ւտ հասի՛ր,
Պատմի՛ր սրտիս արձագանք:

Երբ դու անցնես սուղելով
Արարատեան դաշտերով՝
Բարե՛ արա Մասիսին,
Թեկներդ թափ տալով:

Կեցցե՛ս, Սոխակ, շատ կեցցես
Քո սրատես աչերով,
Որ միշտ դիտես, միշտ երգես
Հայաստանին՝ քո սիրով:

Արշակ Յարութիւնեանց.

214.

Ս ո խ ա կ ի ն.

Ուզո՞ւմ ես դու, սիրո՞ւն Սոխակ,
Տեսնել եղեմ ծաղկավառ,
Շնչել վարդի բոյրն անուշակ—
Թու՛ր դէպի Հայ աշխարհ:

Ուզո՞ւմ ես դու Հնչել անվախ
Երգըդ գողտրիկ, զգայուն,
Երգել սիրոյ ժամեր խաղաղ—
Թու՛ր դէպի Հայաստան:

Այնտեղ պայծառ, այնտեղ անոյշ
Քեզ կը ժպտայ ճոխ գարուն.
Այնտեղ վարդի ծոցում քնքոյշ
Դու կը գտնես սէր անհուն:

Այնտեղ երկինքն է կապուտակ,
Պայծառ արև, վառ աստղեր.
Այնտեղ ծիծաղ, ժպիտ, բերկրանք,
Այնտեղ կեանքն է անվերջ սէր:

Թու՛ր, Սոխակ, դու Հարազատ
Երգիչ սիրոյ զգացման.
Թո՛ղ բիրտ երկրում ազնաւն ազատ
Հնչէ սիրով իւր զաղան....

Ալեքսանդր Ծատուրեան.

215.

Գ ա Ր ու ն.

Ո՛հ, քնչ անուշ և ինչպէս զով
Առաւօտուց փրչես հովիկ,
Ծաղկանց վրայ գուրգուրալով
Եւ մագերուն կուսին փափկիկ.
Բայց չես հովիկ իմ հայրենեաց,
Գնա՛, անցիւր սրբտէս ՚ի բաց:

Ո՛հ, քնչ աղու և սրտագին
Ծառոց մէջէն երգես, թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի յանտառին
Ըզմայլեցան ՚ի քոյ ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,
Գնա՛, երգէ սրբտէս ՚ի բաց:

Ո՛հ, քնչ մրմունջ Հանես, վրտակ,
Ականակիտ և հանդարտիկ,
Քո հայելուդ մէջ անապակ
Նային զիրենք վարդն ու աղջիկ.
Բայց չես վտակ իմ հայրենեաց,
Գնա՛, հոսէ սրբտէս ի բաց:

Թէպէտ թռչնիկ ու հովն Հայոց
Աւերակաց շրջին վերայ,

Թէպէտ պղտոր վտակն Հայոց
Նոճիներու մէջ կը սողայ,
Նոքա հառաչք են հայրենեաց,
Նոքա չ'երթան սրբոյնս ի բաց:

Մ. Պէշիքթաշլեան.

216.

Վարդանի և իւր զօրաց երգը.

Վ ա ր դ ա ն.

Ո՛վ հալկազունք, ո՛վ դիւցազունք,
Ահա՛ ձեզ նոր հանդիսարան.
Բացէք աչքերդ, հերիք ննջէք.
Տարիք դարեր են անցական:

Զ օ ր ա կ ա ն ք.

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք
Մեր կեանքը զոհ բոլորանուէր
Մատաղ անել Հայոց ազգին,
Նորա լեզուին և կրօնին:

Վ ա ր դ ա ն.

Առէք սուտեր, նետ ու աղեղ,
Ելէք ընդդէմ ձեր թշնամեաց.
Զեր հաւատը և ձեր ազգը
Պաշտպանեցէք յօտար ազգաց:

Զ օ ր ա կ ա ն ք.

Հայ զինուորի կեանքը դառն է,
Երբ որ պարապ տանն է նստած.
Մեզ ասպարէզ անմահ փառաց
Կռուի դաշտն է նշանակած:

Վ ա ր դ ա ն.

Հայ զօրականք, ձեր նետերը
Կապարճից մէջ հերիք մնան,
Զեր երկիրը Պարսիկ ոտից
Ընդէր լինի այդպէս կոխան:

Զ օ ր ա կ ա ն ք.

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք
Մեր սուրբ երկրից հալածական
Առնել անկրօն Պարսից ազգը,
Փրկչի խաչն է մեզ օգնական:

Վ ա ր դ ա ն.

Հայոց հովիւք, ձեր ոչխարներ
Է՞ր սար ու ձոր թափառական
Գազանաց ճանկն ընկած ողբան.
Է՞ր չ'լսէք նոցա կական:

Զ օ ր ա կ ա ն ք.

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք,
Աւետարան, խաչ ի ձեռին
Առաջնորդել Հայոց ազգին,
Ի ժամ սրբոյ պատերազմին:

217.

Ա զ օ թ ք.

Ո՛վ Տէր մեր Աստուած,
Լէր մեզ ողորմած,
Դու ես լոյս լուսոյ,
Մեր հոգին զօրացո՛յ յաւիտեան:

Ո՛վ Տէր դու մեր Աստուած,
Ո՛յժ տուր բազկաց,
Վանենք ոսոխք,
Պահենք Կրօն.
Աստուած, մեր Հոգին
Զօրացո՛յ յաւիտեան:

218.

Հարբած մարդու երգ.

(Գերմանականից).

Ուղիղ գնետունից ես տուն եմ գրնում,
Փողոց, ա՛յ փողոց, էդ ի՞նչ եմ տեսնում,
Ա՛ջ գնամ թէ ձա՛խ՝ ծուռ են երկուսն էլ:

Լուսին ջան՝ ռէխրդ ինչի՞ է ծրուած,
Մէկ աչքըդ կապուել, միւսը կէս բաց.
Դու էլ ես կոնծել, ա՛յ դու անամօթ.
Ամաչի՛ր ինձնից, վաղուցուան ծանօթ:

Բա՛ էստեղ էստեղ,—տես լապտերներն էլ
Չեն կարող ուղիղ ոտքի վրայ կանգնել.
Մէկ պարզ են վառվում, մէկ սաստիկ խաւար
Կամ թէ՛ պատից պատ կըպչում անդադար:

Աղբէր՝ էս գիշեր ամենքն են հարբել,
Ի՞նչ բան է մենակ մենակ ծոմ պահել,
Չէ, էդ կըլինի խտակ գըթուլիւն,
Ուրեմն նորից նոր դառնամ գինետուն:

Գ. Դոդոխեանց.

219.

Սաթինիկ և Արտաշէս մանուկ.

«Կտուր կտուր» երգի եղանակով.

Ուր մուր Կուրն էր գալիս Կովկաս սարերէն,
Մի աննման ձայն էր տալիս էն միւս ափերէն:
Փախէք, աստղեր, արեւ ծագեց Կովկաս սարերէն,
Սաթինիկն եմ, սիրուն եմ ես երկնից լուսնեակէն:

Հայոց քաջեր, քա՛ջ դրէք զէնքեր շուտ ձեր ձեռքերէն,
Սաթինիկն եմ, կ'յաղթուիք դուք իմ սիրոյ սրէն:
Քեզ եմ ասում, քա՛ջ Արտաշէս, դո՛ւրս եկ վըրանէն,
Սաթինիկն եմ, կ'յաղթուիս իմ սև սև աչքերէն:

Տաք տաք արիւն զուր մի՛ թափեր անմեղ սրտերէն,
Սաթինիկն եմ, կ'յաղթուիս իմ կարմիր թըշերէն:
Մի՛ պարծենար քո զօրքերի պէս պէս գունդերէն,
Սաթինիկն եմ կ'յաղթուիս իմ սիրուն ունքերէն:

Մի՛ խըրոխտար քո յաղթական սէգ սէգ քայլերէն,
Սաթինիկն եմ, կ'յաղթուիս իմ փունջ փունջ մաղերէն:
Բաց շուտ շղթայն գերի բռնած եղբօրս ոտերէն,
Սաթինիկն եմ կ'յաղթուիս դու իմ բլբուլ լեզուէն:

Քէն մի՛ պահիր, վրէժ մի՛ ուզիր իմ Ալաններէն,
Բարձր է Կովկաս, քա՛ջ են Ալանք Մասեաց քաջերէն:
Ձայն եմ տալիս, ձայն տուր ձայնիս քո խոր բանակէն,
Դո՛ւրս եկ մէյդան, թէ չես վախում սիրոյս նետերէն:

Ալան, Ալան, յաղթութիւնս առիր իմ ձեռէն,
Ո՛նց դիմանամ, հալվում է իմ թուրս քո կրակէն:
Ալան, Ալան, փառք ու պսակս առիր իմ գլխէն,
Ո՛նց դիմանամ, սիրուն ես դու մեր սիրուններէն:

Այդ դու անգուլթ, այրվում է սիրտս քո չոր ծարաւէն,
 Ո՞նց դիմանամ, չեմ հովանում Կուրի ջրերէն:
 Տո՛ւր ինձ թւեր քո մօտ թռչեմ Կուրի վրայէն,
 Մի թիթեռնիկ դարձայ ես քո ճըրագի լուսէն:

Հազար կըտամ, տասն հազար իմ անթիւ գանձերէն,
 Քեզ ինձ կ'առնեմ հարս-թագուհի քաջ Ալաններէն:
 Ոսկւոյ անձրեւ շաղ կըտամ քո գլխիդ վրայէն,
 Սէլ կըգնայ մարդարտէ քո ոտի տակերէն:

Կ'թափեմ Կուրը լայքա ոսկի կարմիր մորթերէն,
 Ծածկուի գետը ընծայաբեր բարձած ուղտերէն:
 Ասաց, հեծաւ արի արքայն սեն իւր ձիերէն,
 Արծուի նման ճնշեց, անցաւ Կուր գետի մէջէն:

Հասաւ, հանեց իւր կարմիր թուկ օղն ոսկեղէն,
 Զգեց, ընկաւ Սաթինիկի մէջքի մէջտեղէն:
 Թռի՛ր, փախի՛ր, իմ զեղեցիկ սեւ ձիս հըրեղէն,
 Մէջքիդ մարալն որս եմ բռնել Կովկաս սարերէն:
 Թռի՛ր, փախի՛ր, մեծն է սա իմ բոլոր որսերէն,
 Թւի՛ր վըրի Կոյսն եմ խլել քաջ Ալաններէն:

Սամուէլ Գիւլզատեանց.

220.

Ո՛վ դու հայ աշխարհ, աշխարհ եղեմեան,
 Հայ մարդոյ համար վայր նուիրական.
 Է՛ր քո որդւոց մէջ դաւաճանք ծնան՝
 Հայ մարդոյ սրտին դնել սեւ նշան:

Տիգրան, Միհրդատ, նա և քաջ Վարդան
 Քո գոռ թշնամեաց ի՞նչպէս դէմ կենան.
 Երբ Փառնակ, Վասակ, մատնիչ Մեհրուժան
 Իւրեանց հայրենեաց լինին դաւաճան:

221.

Ե Ղ Ի 2 Է.

(Հեղինակ ու թիւնը).

Ոսկեծըղի, զեղեցկատիպ

Ո՛վ իմ գրքոյկ ոսկեշունչ,
 Ազգիս փառքը, անբաղդ օրը
 Դու քարոզող անմըռունչ:
 Ո՛վ պիտի տար այն անրսպառ
 Սէրն ու գուլթը դէպ Հային,
 Թէ որ մարդիկ քեզ, ո՛վ գըրքուկ,
 Երբեմն չի կարգային:
 Քեզ կարգալով՝ կըմոռանամ
 Ես թերութիւնք մեր աղգին,
 Դէպ հայ եղբարքս գուլթ ու սիրով
 Միշտ կըլցուի իմ հոգին:
 Մըտքիս մէջը ես միշտ կասեմ.
 «Սերունդք Վարդան մեր Քաջին
 Անհընար է՝ անփառունակ
 Ըստրուկ մընան կամ կորչին»:
 Կամ՝ տեսնելով հէզ հայ տէրտէր,
 Սուրբ Ղևոնդին կըյիշեմ,
 Ու յուսահատ տրտում մըտքեր
 Ինձմէն հեռու կըքըշեմ:
 Եղիշէին հայք կարգալով,
 Նոր յոյսերով կըլցուին,
 Հայի գալոց բարիքն նոցա
 Հոգւոց առջև կըբացուին:
 Հայ պատանի՝ շուտ շուտ կարգա՛
 Այս գըրքուկը ոսկետառ,
 Որ համոզուիս՝ թէ մեր Հայը
 Կորչելու ազգ չէ իսպառ:

Գամառ - Քաթիպա.

222.

Ուղերձ յաւուր օրհնութեան բացման
ձեմարանի Ս. Էջմիածնի.

Ո՛հ, զի չըքնաղ ըզգացմանց 'ի վառ՝
Յուզին այսօր հոգեպարար.

Հրապոյրք 'ի միտս 'ի սիրտ կայտառ,
Եւ յորդեն իղձք 'ի Հայորեար:

Ո՛չ այս հանդէս վեհ և շքեղ—
Մինչ այս պաշտին յօրհներգս գեղգեղ,
Նաւակատիք Տանս փառահեղ—
Գուշակէ քաջ յաւսոց 'ի գեղ:

Ո՛չ այս հանդէս քաղցր աւետեաց
Հընչէ ըզձայն Հայաստանեայց,
Հարսին լուսոյ տայ հրճուազգեաց,
Ի ձայն հրաւէր՝ 'ի վայրս դալրեաց:

Յորում ահա՛ 'ի թևս ուխտից,
Հանդիսակցեալ կարօտալից,
Նաև Ոգի Սուրբ Հայազնից
Վերասլանան մաղթանք սըրտից:

Փառք միշտ ձեռին նըւիրական,
Որ զայս կանգնեաց ըզձեմարան,
Եւ խանդակաթ յիղձս եռանդեան,
Բանայ ըզգրուենս՝ գործել 'ի ջան:

Ո՛հ, զի վսեմ՝ լայն ասպարէզ
Հարթեաց սովաւ յուսմունս պէսպէս,
Որ հովուեսցէ յայս սուրբ կրկէս
Ամենակալ Աջըն անմերձ:

Սա է երկիր, սուրբ, բանաւոր,
Ոչ աւետեաց և մեղրածոր,
Եւ ո՛չ կաթին առակաւոր,
Այլ փրկութեան մեր հոգևոր:

Սա սըփուեսցէ զեռանդս սուրբ Հարց,
Մեծն Գրիգորի և Թարգմանչաց՝
Սահակ, Մեսրոպ, Է՛հետևողաց,
Ի սիրտս համայն այսց ժառանգաց:

Պահեա՛, Աստուած, զայս նոր Տաճար,
Յօգուտ, 'ի փառս Հայութեան յար.
Պայծառացո՛, Տէր Բարերար,
Յարդիւնս ատոք և պերճափառ:

Եւ ընդ սըմին միշտ պանծասցի
Ի փառաւոր յիշատակի
Անուն Սորին Վեհ Հիմնադրի՝
Տէր Տէր ԳԵՈՐԳ Հայրապետի:

Վահրամ վ. Մանկունի.

223.

Երգ, սէր և գինի.

Ուրախ լինինք, եղբարք, քանի—որ կըտրիճ ենք,
Թէ չէ՛ շուտով կանցնի մեր մանկութիւնը,
Կու գայ, մեզ կու կոխէ ծերութեան ցաւը,
Ապա ի՞նչ պիտ' անենք մենք ան ատենը:

Արտորանք երգելու՝ քանի որ շունչ ունինք,
Թէ չէ՛ գարնան ծաղկի պէս շուտ կու թառամինք.
Ափսոս է, ափսոս է մեր ոյժն ու սիրտը,
Ցաւ կ'լինի մեր սրտին անցած օրերը:

Ե՛կ սիրենք, եկ սիրենք, եղբայրք, մէկզմէկու,
 Մեր մէջից գէն-ձրգենք չար բամբաստներ,
 Բաց սիրով, պարզ աչքով մէկ մէկու նայինք,
 Թո՛ղ սիրով անց-կացնենք մեր մանուկ կեանքը:
 Եղբայրք՝ խմենք գինին հալ-ազգի կենացը,
 Որ ամուր պահպանէ իւր սուրբ հաւատը,
 Քաջ սրտով, վառ սիրով սիրէ իւր ազգը.
 Ուրեմն դարձրկենք մենք մեր դաւաթը:

224.

Ո՛ր մահկանացուն այս երկրիս վերայ
 Երջանիկ ժամեր վայելել կրնայ.
 Եւ ո՞րն է այն վարդ ծլած աշխարհի,
 Որ ձեռացդ մէջ իսկոյն չը թողմի.
 Ձեն, չեն երջանիկ ո՛չ ժամք սիրանըւէր,
 Որ զըգուէ հողմիկ ըզկուսին մազեր:

Թէ մտօք զրկես զերկին և զերկիր,
 Եւ ամեն գաղտնիք քեզ մերկանային,
 Անհնար է քեզ ըլլալ երջանիկ,
 Այլ դժխեմ բաղդին թշուառ խաղալիկ,
 Ձէք, չէք երջանիկ, ո՛վ դժբաղդ հայեր,
 Մինչդեռ հայրենիք չէք մըխիթարեր:

Ի զուր դիւցազունք պատերազմական
 Դաշտերուն վերայ կանգնեցին նշան,
 Հազիւ ստացան յաղթութեան պսակ,
 Կորզեց ձեռքերնէն զայն մահու հրեշտակ.
 Ո՛հ, չէք երջանիկ, ո՛վ դժբաղդ հայեր,
 Մինչդեռ հայրենիք չէք մըխիթարեր:

225.

Ի յօրելեան քսանեհինգամեայ տարեդարձի
 «Մարդասիրական Ընկերութեան» Հայոց Բազուայ*).

Որ վառեցեր ՚ի զգօն հոգիս
 Սէր առ եղբարս, առ ընկեր,
 Լուսաւորչին հիմնել յանուն
 Զընկերութիւնս Մարդասէր.

*) Բազուի Հայոց «Մարդասիրական Ընկերութիւնը», յանուն Ս. Գրիգորի Լուսաւորչին Հայաստանի, Բարձրագոյն հաստատութեամբ է, 1864 թ. մայիսի 21-ին, Ռուսիայի Կայսր՝ և՛ ազգութեան և՛ հայրենիքի նահատակ Ալեքսանդր II-ի օրով և Նորին Մեծութեան Հայրական առանձնաշնորհութեամբ:

«Մարդասիրական Ընկերութիւնը» իւր 25-ամեայ յորելեանը առնեց 1889 թ. մայիսի 21-ին, կիւրակէ օրը: Հանդէսը, որ կատարվում էր Ընկերութեան հին դպրոցի, Լուսաւորչի մայր եկեղեցուն կից, գեղեցիկ և չքեղ զարդարած բակում, սկսուեցաւ «Боже, Царя храни!» հիմնով: Հանդիսում կարգացուեցան, բացի Ընկերութեան 25-ամեայ դործունէութեան հաշուից, բաղմամբիւ ուղերձներ, ճառեր և շնորհաւորական հեռագիրներ:

Հեռագիրներից նշանաւոր էր, մանաւանդ, Մոսկուայից ուղարկւած պ. Շահաղիդ-Վամարականի հետեւեալ բանաստեղծական հեռագիրը. «Какъ воздухъ становится все легче въ прекрасное майское утро, такъ на душѣ дѣлается все отраднѣе въ виду двадцатипятилѣтней годовщины общества. Оно благополучно прошло свой тернистый путь и уже успѣло положить прочный фундаментъ своему существованію. Слава обществу! Тутъ впервые стала раздаваться голосъ на поднятіе челоуѣческаго достоинства и братскаго союза. Не кстати-ли увѣковѣчить сіе юбилейное торжество, воздвигнувъ памятникъ незабвенному учредителю общества, доктору Ростомянцу, честно прослужившему дѣлу милосердія? Пусть недремлющее духовное око его взглянетъ на это видимое выраженіе признательности: пусть онъ новой силой

Լէր զօրավիգ, ո՛վ Տէր, 'ի գործս
Վարչաց Սորին Հանապազ՝
Յարատեւել յեռանդ անշէջ,
Արդեամբք փալլիլ աննուազ:
Կեցցեն բարերարք
Գործոյս և սատարք.
Կեցցեն երջանիկ
Մարդասէր ոգիք:

Հ. Ղուկասեանց.

пробудить въ присутствующихъ чувство долга и самознанія!»

Տողբրիս գրողն էլ հետեւեալ նամակն էր ուղղել Ընկերութեան խորհրդական Անդամներին.

«Ինչք այսօր տօնում էք Բագուի Հայոց «Մարդասիրական Ընկերութեան» 25-ամեայ յորելեանը. սքանչելի և գեղեցիկ միտք. պաշտելի և խնկելի զգացմունք. կեցցէք:

Նւ, իրաւ, արժէր, շատ արժէր. որովհետեւ «Մարդասիրական Ընկերութիւնը, հաւատարիմ մնալով իւր նշանաբանին՝ միշտ գործել, միշտ աշխատել, միշտ հերկել է հայրենիքի բարոյական անդաստանը՝ առաջադիմութեան, կրթութեան և լուսաւորութեան սուրբ գործի համար—ինչպէս գերմանացիք ասում են—ոչ շտապելով, ոչ հանգիստ առնելով (ohn Hast, ohn Rast).

«Մարդասիրական Ընկերութիւնն» ունեցել է մի չափք որդեգիրներ միջնակարգ և բարձրագոյն դպրոցներում: Այդ որդեգիրներին մինն էլ, յանդգնում եմ ասելու, ես լինելով, հրապարակով յայտնում եմ ազգային Ընկերութեան իմ սրտի և իմ հոգու անչափ և անմոռանալի գոհունակութիւնը: Նւ ի նշան իմ երախտագիտական զգացմանց դէպի այդ պաշտելի Ընկերութիւնը՝ նուիրում եմ Նորան անփոփոխ անդամութեան վճար՝ մի հարիւր ըսւելի, և շնորհաւորելով Նորա 25-ամեայ յորելեանը՝ բարեմաղթում եմ, ասելով. կեցցէ հայկեան Մարդասէր Ընկերութիւնը, կեցցեն նորա խորհրդի աշխատասէր և անվաստակ Անդամները, կեցցէ և Հայոց ազգ՝ իւր արդիւնաւէտ գործերով միշտ և յաւիտեան»:

Գ. Ա. Բ. Գրիգորեանց.

226.

Ժ ո Ղ ո Վ ու Ր դ ն եր ի եր գ ը .

Խաղաղութեան եմք կարօտ.

Ո՛վ իշխաններ, թագաւորներ աշխարհի,
Բաւական է, որքան մատաղ մեր որդիք
Կրուկներում զոհ գրնացին կապարի

Կամ տուն դարձան Հաշմանդամ ու վիրալիք:
Հարկաւոր չեն էլ մեզ կապար ու վառօդ,
Մեր որդիներ խաղաղութեան են կարօտ:

Բաւական է, որքան մայրեր խառնեցին
Պղղտոր արցունք իրենց որդոց վարդ արեան.
Բաւական է, որքան Հարսեր թառմեցին,
Ըսպասելով փեսաների գալըստեան:

Հարկաւոր չեն էլ մեզ կապար ու վառօտ,
Մայրեր, Հարսեր խաղաղութեան են կարօտ:

Բաւական է, որքան սրբտեր յուզւեցին

Պատերազմի աղաղակից վայրենի,

Որքան Հայրեր իրանց որդոց դաս տըւին՝

—Բարբարոս դաս,—թափել արիւն նրմանի:

Հարկաւոր չեն էլ մեզ կապար ու վառօտ,

Բոլոր Հայրեր խաղաղութեան են կարօտ:

Մենք չենք ուզում Հարըստութիւն ու ընծան,

Որ խլած են մի այլ ազգից կործանուած.

Մենք չենք ուզում շողունք փառքի ծիածան,

Որ օտար մօր արցունքում է կամարած:

Հարկաւոր չեն էլ մեզ կապար ու վառօտ,

Բոլոր ազգեր խաղաղութեան են կարօտ:

Ո՛վ իշխաններ, թագաւորներ աշխարհի,
Ա. խ, երբ մեզ հետ ձեր Գահոյքի բարձունքից *)
Կը քարոզէք անենեզ սրբտով և արի՛
Եղբայրութեան աւետարանը ամբիծ.
— «Անկցի՛ վրէժ, անկցի՛ն կապար ու վառօտ,
Մարդկութիւնը խաղաղութեան է կարօտ»:

Արամ-Չարըզ.

227.

Հ ո վ ե ր .

Ո՛վ դուք առաւօտեան անուշիկ հովեր,
Խնդրանօք ձեզ տալու նամակ ունիմ ես,
Շնչաւ հասցրէք Բագու և անցէք ծովեր,
Ա՛յնտեղ ինձ բարեկամ «Սոխակ» ունիմ ես:

Որսորդի դէմ ազատ խօսող թռչունին,
Ամեն ցանցից չը երկնչող թռչունին,
Մայրենի բարբառով երգող թռչունին
Աչքերով տեսնելու փափագ ունիմ ես:

Վերոյիշեալ նամակս ընթերցող լեր,
Մասնաւոր ասութեանս դու սիրող լեր.
Քո Խալաթն եմ, երգիդ մէջ միշտ լիշող լեր,
Ձէ՛ որ անսպառ սէր միակ ունիմ ես:

*) Ռուսիայի Թագաւոր Կայսր, լուսամիտ Նիկոլայ Ալեքսանդրովիչն առաջինն եղաւ, որ այդ մասին յայտնեց իւր մարդասէր զգացմունքը, և այդ առթիւ էլ Նորա նախաձեռնութեամբ խաղաղութեան կոնֆերանսի տէր միակ ունիմ ես:

Գ. Ա. Ք. Գրիգորեանց.

228.

Ե ր գ լ ի ք ը տ կ ճ օ Ր ի .

Ուռած փորիդ, ցցուած պորտիդ,
Դքուած մէջքիդ, դուզ շըլնքիդ,
Երկար ու ձիգ ձիգ կողերիդ,
Տռուզ, տռուզ պճղներիդ,
Մեծ անունիդ, զօրութիւնիդ
Եւ պատուական բնութիւնիդ
Տամք համբոյր ծունր կրկնելով,
Զի արբուսցես մեզ քո լուլով:

Դու բնակարան երանելի,
Բնակողն ի քեզ միշտ տօնելի,
Որոյ անունն է սուրբ գինի,
Որոյ տունկը օրհնեալ լինի,
Որոյ տնկող, ըմպող Նոյը
Էր երջանիկ, առաքինի.
Ուստի և մեք զսա ուղղակի
Արբուք ըստ նորին օրինակի:

Ուրեմն լից, ո՛վ սանահէր,
Լիքը լիքը մեր բաժակներ,
Խմենք, կարգանք միշտ օրհնութիւն,
Խնդրենք Նոյին արքայութիւն,
Որ սորան մշակեց, տնկեց,
Յետոյ մեր գլխին կտակեց.
Վասնորոյ միշտ կո՛ւլ տանք ազատ
Մեք ժառանգներս հարազատ:

Ս. Փիլիպպոսեանց.

Ս ո խ ա կ .

229.

Ազգային մաղթանք.

Ո՛վ Հայր մեր և Աստուած,
Միշտ բարի և գըթած,
Կեցո՛ ՀայուԹիւն:

Մի թող, Տէր, մեզ իսպառ՝
Անխընամ և թշուառ.
Դու միւսանգամ պայծառ
Արա՛ ՀայուԹիւն:

Տէր, մեզ գըթած դու կրկին,
Տո՛ւր Հոգի իմ ազգին
Միաբանական,

Որ քո փառքիդ համար
Դարձեալ դէպի արդար
Գընանք ճանապարհ,
Քեզ պաշտել ազատ:

Մաքրե՛ր, Տէր, Հայի
Ե՛ւ սիրտ և՛ Հոգի
Հոգւոյդ կրակով,

Որ ճմարտութիւն զգան,
Եւ զուգութիւն
Կապէ ազգութիւն

Ամուր շաղկապով:

Յովհաննէս Քուչուքեզանց.

230.

Յիսուս խաչի վերայ.

Ոտք ու ձեռքը ամուր գամած,
Գըլխին պսակ փըշահիւս,
Խաչի վերայ բազկատարած՝
Լուռ տանջվում է Կեանք և Յոյս:
Խոցած կողից—սրտամորմոք
Արեան ծորում են շիթեր,
Սուրբ աչերից—հրաբորբոք
Ցայտում սիրոյ վառ շանթեր:
Կոյր ամբոխը—արդարախաջ՝
Մեղքի ծովում թաթախուած՝
Այպանում է մարդկանց առաջ
Իր Փրկիչըն ու Աստուած:
Բայց Անմեղի ներկայ Հոգին
Լուռ տանում է այդ զըրկանք,
Որ կարենայ մեռած ազգին
Տալ իր մահով մի նոր կեանք:
Ժամը հընչեց... և սե խաւար
Ծածկեց քողով ողջ աշխարհ.
Խաչի ծայրից «Ելի՛-Ելի՛»
Մի ձայն ելաւ սոսկալի.
Եւ աչերը լի կորովով
Դէպի երկինք Նա գցեց,
Մարդկանց համար աղօթելով
Իր սուրբ Հոգին աւանդեց:

Սիմէօն Սափարեանց.

231.

Հանգուցեալ Գամառ-Քաթիպայի յիշատակին*).

Ո՛ւր ես, Հայ բըլբուլ, ձայնիդ է կարօտ
Մեր հոգին էրված, մեր սիրտը եարօտ...
Սե սուգ է պատել մեր կեանք ու օրին,
Սե թուխպ է կապել մեր սար ու ձորին.
Վայ, սե գիշերն է մեր կեանքը մաշում,
Քո լոյս-երգերի կարօտն ենք քաշում.
Ո՛ւր ես, Հայ բըլբուլ, ձայնիդ ենք կարօտ,
Չէս երգում էլ մեզ դարնան առաւօտ...
Մեր օրն ու արեւ մըթնել, սեւացել,
Դըժոխքի դուռն է մեզ կեանքը բացել,
Բաղդն էլ մեղանից երես շուռ տուել,
Խեղճ Հային կրակի բերանն է գցել,
Էրվում ենք անմեղ, սըրտներս եարօտ՝
Քո դեղ ու դարման երգին ենք կարօտ:
Սարէսար ընկած՝ մենք վայ ենք կանչում,
Բաղդաւոր ազգեր մեզ չեն ճանաչում,
Քաղցած ենք, ծարաւ, անտէ՛ր, խղճալի,—
Հաց, ջուր ենք ուզում՝ մեզ թոյն են տալի.
Մեր ճամբէն դժուար, մեր ճամբէն քարօտ.
Ո՛ւր ես, Հայ բըլբուլ, ձայնիդ ենք կարօտ...

*) Հեղինակը սոյն ոտանաւորը կարգացել է հանգուցեալ Գամառ-Քաթիպայի (Ռափայէլ Պատկանեանի) մահարձանի բացման ժամանակ, 23-ն սեպտեմբ. 1901 թ., խուռն յարգող-բազմութեան ներկայութեամբ, Ս. Խաչ վանքում, ուր թաղուած է յիշեալ բանաստեղծը: Օրհնում եմ հայ Մուսայի, Գամառ-Քաթիպայի, յուշարձանի բացման փառաւոր հանդէսը և սրտի խորքից բարեմաղթում—անչէջ մնալու նորա պանծալի անունը հայ-սրտերի մէջ:

Գ. Ա. Ք. Գրիգորեանց.

Լեզուով չի պատմվի Հայի դարդ ու ցաւ,
Հայի արիւնով աշխարհ ներկվեցաւ.
Սիրտն է մըխկտում, սիրտն է սեւնում,
Ոչ ով մեր ձէնին ականջ չի դնում.
Ո՛ւր ես, Հայ բըլբուլ, երգիդ է կարօտ
Էս սե օրերին մեր սիրտը եարօտ...
Բըլբուլ, դու մեզ հետ տանջվում ու լալիս,
Մեր անյոյս օրին՝ յոյս էիր տալիս.
Դու ասում էիր—ազգ իմ, մի սգա,
«Յուսով եմ, վաղ ուշ դարունը պիտ գայ».
Բայց, ախ, չը տեսանք դարուն վարդահոտ.
Ո՛ւր ես, Հայ բըլբուլ, ձայնիդ ենք կարօտ...

Ալեքսանդր Ծատուրեան.

332.

Ma chère et très aimable

Ա***

Պայծառատես բաղդն իմ անգին,
Շորեր հագած ըստ նոր ձեւին,
Այսօր եկել էր սուրբ Տաճար—
Փրկչից խնդրել օրեր երկար:
Ողջ կոյսերից նա, ճշմարիտ, գեղեցիկ էր,
Ի՛նչ սիրուն էր, ի՛նչ սիրուն էր, ի՛նչ սիրուն էր:

Աչքեր նորա փայլում էին,
Անոյշ ժպիտ էր երեսին.
Թշեր նորա վառուած կարմիր,
Գերում էին ինձ գեղալիր:
Հրեշտակ էր նա, Հրեշտակ էր նա, Հրեշտակ էր նա,
Երես փայլուն, վիզն գեղեցիկ և մարմարեայ:

Նորա վարսակըն երկնագեղ,
Իբրեւ գիշեր սեւ, թուխ, շքեղ,

Այնպէս, ասեմ, գեղեցիկ էր,

Որ տեսնողն կը ցնորվէր.

Նորա համար դազաղ մըտնել ես սեւատես,
Պատրաստ եմ ես, պատրաստ եմ ես, պատրաստ եմ ես:

Բայց առաւել սըրտաշարժիկ

էր հայեցուած նորա քաղցրիկ,

Սիրելի էր հայեցուածն այն,

Ձիր և շընորհ էր բնութեան.

Ո՛հ, դու Ա***, ո՛հ, դու Ա***, ո՛հ, դու Ա***,

Տանջեցիր ինձ, տանջեցիր ինձ, Աստուած վկայ:

Յանկարծ տեսնեմ—ժամը պըծաւ,

Եւ նա համեստ... Նա մօտեցաւ,

Գլուխ խոնարհեց երկրպագութեան

Եւ համբուրեց Աւետարան:

Ո՛հ, ինչ շարժուածք, ո՛հ, ինչ գընացք Չըքնաղն ունէր,
Երկնային էր, երկնային էր, երկնային էր:

Նա դուրս եկաւ հեղ շարժուելով,

Իւր մեծ քրոջ ձեռն բռնելով,

Նա հեռացաւ, ես կանգնեցի

Եւ, վիզս ծըռած, շատ նայեցի:

Առանց նորան, պարոններ իմ, արդարն ասեմ,

Ես կը մեռնեմ, ես կը մեռնեմ, ես կը մեռնեմ:

Adieu, mon Ange, ma chère A**a!

Adieu,

Մնամ պաշտող, Սէր իմ, միշտ քեզ,

Բայց իմացիր, մաշվում եմ ես:

Ասացի ես, ո՛վ պարոններ, այլ չի տեսայ.

Ո՛ւր գընաց նա, ո՛ւր գընաց նա, ո՛ւր գընաց նա:

Ս. Շահազիզեան.

233.

Պ ո է տ ի ն.

Պոէտ, դու հպարտ, սէգ արծուի նըման,
Բարձրից մի նայիլ տգէտ ամբոխին.

Եւ կըծու երգով մի ծաղրիլ նորան,

Շանթեր մի թափիր խղճուկի գըլխին:

Ի՞նչով է, ասա՛, ամբոխն խնցաւոր,
Որ խորթ են նորան քո հոգու ձայներ.

Դու վարդ ես երգում, պոէտ բախտաւոր,

Երբ նորա կեանքին պատած են փշեր...

Ի՞նչ անէ ամբոխն, ի՞նչպէս հասկանայ

Քո գողտրիկ տաղերն, երբ թւեր առած,

Դու միշտ ապրում ես ամպերի վերայ,

Կեանքից անջատուած, եթեր վերացած...

Ամբոխը, պոէտ, զաւակ է երկրի,

Լուսազուրկ զաւակ, քրտնաթոր մշակ.

Նա միշտ կարօտ է կեանքի երգերի—

Երգիւր նորան հաց և արդար վաստակ:

Երգիւր նորան լոյս, բարիքներ ուսման,

Եղիւր ամբոխին ուսուցիչ-ընկեր.

Նստիր նորա հետ մի ճաշի սեղան,

Շօշափիր մօտից դու նորա վէրքեր:

Ապրիր նորա հետ, նորա տանջանքով,

Մի զգուհիւր նորան ձեռքդ պարզելու.

Դու ո՛ր ճիշտ ներշնչիր նորան քո երգով—

Խաւարի կապանքն անվախ փշրելու...

Եւ տես, ո՛վ պոէտ, քեզ այն ժամանակ

Որպիսի՜ սիրով կը սիրէ ամբոխ.

Սէրն ալդ կը հիւսէ քեզ դափնէ պսակ,
Սէրն ալդ կը կանգնէ քեզ յաւերժ կոթող...

Ալեքսանդր Մատուրեան.

234.

Գ ա Ր Ն ա ն ե Ր Գ Ե Ր.

Ա.

Պայծառ արև, կայտառ հովեր,
Առուի կարկաջ ու խոխոջ,
Կոյս դալլայներ, ժըպտուն շողեր,
Վարդի կոկոն ու բողբոջ,
Անվերք սըրտեր, անվերջ երգեր,
Սիրոյ արցունք ու հառաչ,
Սար ու ձորում կազմած խրմբեր
Կ'երթան դարնան ընդ առաջ:

Բ.

Քընքնու ձեռքեր, մատաղ մատներ,
Վառ պրսակներ ոլորէք.
Լոյս ճակատներ, վճիտ աչեր,
Գարնան շուրջը բոլորէք:
Կոկոն սըրտեր, շուշան կըրծքեր,
Անուշ երգեր բուրեցէք.
Վարդ լեզուներ, յանկինթ շըրթներ,
Գարնան վեհ մուտքն օրհնեցէք:

Գ.

Սիրուն աղջիկ, վարդի թերթիկ,
Գարուն եկաւ իմ սըրտին.

Ծաղկի ցողիկ, դարնան հովիկ,
Ել օտար չեմ քո շընչին:
Ես վարդի թերթ, դու զով զեփիւռ,
Ինձ գուրգուրա՛ն այսուհետ.
Ես ծաղկի ծոց, դու ցող ու բոյր,
Ապրիլ, ցընդիլ դարնան հետ:

Դ.

Ալ-վարդերով, թարմ վարդերով
Անկողին եմ յարդարել,
Սիրող սըրտի արցունքներով
Մարգարիտներ եմ շարել:
Անտէր թըռչնիկ, որբ բըլբուլիկ,
Արի, նընջիլ վարդին մէջ,
Շուշան աղջիկ, սըրտիս ծաղիկ,
Արի, բացուիլ հոգուս մէջ:

Արամ - Զարըգ.

235.

Մ 2 ա կ.

Պայծառ առաւօտ մէյդանի վերայ
Անհամար մարդիկ շարժւում են ահա.
Մին արհեստանոց, մին կրպակ վազում,
Միւս դէպի կշիռ բեռը շալակում,
Արծաթ վաստակել,
Ընտանիք պահել:

Փոքր առ փոքր արև բարձրանում,
Նորանոր մարդիկ աչքի են ընկնում.
Կանայք ըսպիտակ էհրամով ծածկուած,
Փոքրիկ մանուկներ գիրկները առած
Անցնում փողոցից
Ուրախ, խնդալից:

Եւ ահա մինը աչքերը ճոթուած
Նա անցորդներին նայում է ապշած.
Խորը հառաչանք վրդոված հանում
Աչքից արտասուք գետի պէս թափում.

Ընտանիք ունիմ,
Բայց ի՞նչ օրի են:

Քաշուեց պատի տակ, բարդանին յենուեց,
Ծըռելով վիզը, ծանրը անքաշեց.
Շուրջ տասը տարի հայրենիք թողած,
Այս օտար երկիր եմ պանդրխտացած.

Արծաթ վաստակեմ,
Պարտքից ազատուեմ:

Բայց մինչև այսօր մինս երկու չեղաւ,
Դարձեալ նոյն տանջանք, նոյն վիշտ և նոյն ցաւ,
Իմ շուրջըս պատած, տանջում են, տանջում,
Ընտանեացս հոգսի հետ հալումաշ անում.

Արծաթ էլ չունեմ
Նոցա ուղարկեմ:

Մըմնջաց մըշակը դեռ անյայտ խօսքեր,
Դէպի բարդանը պարզեց իւր ձեռքեր,
Ձոքեց, տնքալով բեռը շալակեց,
Քրտինքում կորած՝ աղի տուն հասցրեց.

Աչքը աղայի
Ձգած է ձեռին:

Երկու սև փարայ խեղճին շրպրտեց,
Դուռը երեսին շրխկալով խըփեց.
Առաւ մըշակը, ասաց ինքն իրան.
«Սորանով պահեմ ողջ մի գերդաստան».
Դըլուխ քաշ գնաց,
Թուլացած, յոգնած:

Զուրկ ընտանեկան քաղցրութիւններից
Ու իմ սիրելեաց քաղցր տեսութիւնից,
Պանդուխտ տանջում եմ երկար տարիներ,
Վաստակածս ուտում եմ պարապ օրեր.

Հանգիստ էլ չունեմ,
Աստուած, ի՞նչ անեմ:

Բայց ինչ նմաններ, թէ ինչ կը լըսեն,
Ասած խօսքերիս ականջ կը դնեն,
Իւրեանց հայրենիք զուր տեղ չեն թողնիլ,
Հարուստի դրան դառնապէս տանջուիլ.

Քիչ կը վաստակեն,
Բայց հալալ կ'ուտեն:

Ս է Թ.

236.

Աղասիի երգը.

Սար ու ձոր ընկած մէկ չոր թփի տակի,
Գետինն նայելով՝ մնացել եմ նստած.
Զեռս ծոցումս, գլուխս մէկ լեռ քարի
Տըւած՝ լալիս եմ, օրըս խաւարած:
Ամպերն առաջիս, սարերն ետևիս,
Քեզ մտիկ տալով, այ իմ քաղցր Մասիս՝
Աղի արտասուքով էրուած, խորոված,
Երեսիդ նայեմ, մընամ քարացած:
Ծընող, ազգականք հեռու ինձանից,
Լուսնին նայելով, ձեր սէրն լիշելով,
Եարաք երբ կըլի, որ ես ձեզանից
Իմ կարօտս առնեմ, ձեզ ջան ասելով:
Աչքըս ծով դարձաւ ճամբին նայելով.
Մէկ զուշ, որ գլխիս պըտիտ է գալիս,

Թէ երբ մէկ խաբար կը հասնի ինձ բարով,
 Հոգևոց հանելով ասում եմ լալիս.
 «Նազըն իմ, Նազըն, աննման Նազըն,
 Սիրտս խորովի՝ անունդ յիշելով.
 Նազըն իմ, Նազըն, հրաշալի Նազըն,
 Աղասին քեզ տայ իր յետին բարով:
 Սարերի դօշին, ձորերի միջին,
 Վայ գլխին տալով քո խեղճ Աղասին,
 Երեսիցդ զրկուած, քո սիրով մաշուած՝
 Տատրակի նրման փշի վերայ նըստած:
 Նազըն իմ, Նազըն, մէկ շունչս է մնացել,
 Ոսկերքս քրքրվել՝ աչքերս խաւարել,
 Թող մէկ շունչդ առնեմ, լետով հողը մտնեմ,
 Դժոխքն էլ տանեն՝ ես հանգիստ կ'լինեմ:
 Քեզ եմ մընում, քեզ, քո ջանին մեռնեմ,
 Հող ու գերեզման ես վըրէս ունեմ.
 Քանց իմ սառը մարմին էլ ի՛նչ գերեզման
 Ինձի պէտք կուգայ, երեսիդ ղուրբան:

Խաչատուր Աբովեանց.

237.

Աղա Մկրտիչ Սանասարեանցի մահուան յիշատակին*).

Սուրբ գերեզմանին
 Քո մատաղ լինիմ,

*) Մկրտիչ Սանասարեանը հայ ազգի բարեգործներէց ամենա-
 նշանաւորն է: Բաղմաթիւ դպրոցներ օժանդակութիւն են ստացել նո-
 րանից թէ՛ փողով և թէ՛ ուսումնական պիտոյքներով: Գերմանական
 համալսարաններում բաւական թուով հայ երիտասարդներ են ուսել
 նորա հաշուով և ուսանում են: Երգրումի այժմեան «Սանասարեան
 Դպրոց»-ը Մկրտիչ Սանասարեանի փողովն է կառուցուած և նորա

Ո՛հ, անգուգական,
 Վեհ Սանասարեան:
 Ի՛նչպէս անբաւ և անհամար
 Քո բարիքը չ'իշեմ յար,
 Զոր հայ-ազգըդ, Հայր ցանկալի,
 Կ'վայելէ արդ լիուլի:
 Սուրբ գերեզմանին
 Քո մատաղ լինիմ,
 Ո՛հ, անգուգական,
 Վեհ Սանասարեան:
 Քոյդ յիշատակ սուրբ խնկելի
 Սրտիս մէջ կայ անջնջելի.
 Եւ հետեող պիտի լինիմ
 Քո սիրալի օրինակին:
 Սուրբ գերեզմանին
 Քո մատաղ լինիմ,
 Ո՛հ, անգուգական,
 Վեհ Սանասարեան:

Բագրատունի.

ապագան նշանաւոր դրամագլխով ապահովեցրած:

Ո՛ւմ չէ օգնել արդեօք ազգի առաջադիմութեան և բարօրու-
 թեան սիրահար Մկրտիչ Սանասարեանը:—Ամենքին, պատասխա-
 նում ենք, այո՛, ամենքին, որոնք փորձել են դիմել նորան՝ իրանց կա-
 րօտութիւնը լրացնելու համար: Կարճ. Սանասարեանը ապրել է իւր
 համար և ամենքի համար: Բայց ափսոս, որ այդ ազգին սիրելի բա-
 րեւէր և բարեգործ մարդը, անգուգական Սանասարեանն այլ եւ չկայ...
 Նա 1890 թ. մայիսի 19-ին կնքում է իւր մահկանացուն Փրանսիայի
 Պարիզ մայրաքաղաքում:

Քանի որ հայ դպրոցները կանգուն են քո յիշատակներով, քանի
 որ «Սանասարեան Դպրոց»-ը շարունակ և շարունակ ազգին պիտանի
 և օգտակար անդամներ է տալիս՝ դու մեռած չես ազգի համար, հան-
 գուցեալ եղբայր: Ի՛նչ կենդանի ես ամենքի համար և ամենքի սրտում:

Գ. Ա. Ք. Գրիգորեանց.

238.

Նոր-Նախիջևանի երգ.

Սամաւարը պատուական է,
Մէջին ջուրը բաւական է,
Զայ խորթողին աչքը սիրեմ,
Զեռքէն բռնեմ, քովս բերեմ:
Զայ ասած բանդդ խիստ աղեկ բան է,
Մարդուս սիրտը ռահաթ կ'անէ.
Զայ խորթողին աչքը սիրեմ,
Զեռքէն բռնեմ, քովս բերեմ:
Հանէ ռոմին, շիշան հանէ,
Դեղին չայը կարմիր կ'անէ,
Զայ խորթողին աչքը սիրեմ,
Զեռքէն բռնեմ, քովս բերեմ:
Արծաթի պոտնոս, թաս ու գաւաթ,
Ռոմի շիշան մէջը դրած.
Զայ խորթողին աչքը սիրեմ,
Զեռքէն բռնեմ, քովս բերեմ:

239.

Մի մօր օրօրական երգ.

«Աղնիւ ընկեր» երգի եղանակով.

Սիրահեղիկ, սիրոն աղջիկ,
Քընիւր անուշակ քնով,
Որ զօրանաս, սրտիս ծաղիկ,
Քնքոյշ տեսքով, հասակով:

Քեզ սիրում է քո մայրիկը,
Մաքուր կաթինս*) քեզ տալով
Եւ օրհնում է քո հայրիկը,
Քեզ փարելով, զգուելով:

Ինձ մի տանջիր, իմ անուշիկ,
Թո՛ղ մընայ սրտիկս խաղաղ,
Ննջիր հանգիստ, հոգւո՛յս հատիկ,
Թո՛ղ ես չ'ասեմ ան ու վնաս:

Խաչն Յիսուսի քեզ պահապան
Գիշեր ցերեկ—օրն ի բուն,
Որ զարգանաս, իմ աննման,
Եւ լինիս մայր սրբասուն:

Սուսամբար Տէր-Յովհաննէսեանց.

*) Երանի՜ թէ ամեն մի Հայ տիկին կատարէր իւր այդ անհրաժեշտ պարտաւորութիւնը, մաքուր և հարազատ կաթ տալով իւր նորածին մանուկին: Բայց չէ. մեր քանի մի, այսպէս ասած, մօղասէր, և պճնասէր և իրանց լուսաւորուած համարող Հայ տիկնայք, փառաւոր կերպով նստած բազկաթոռների և դահաւորակների վերայ, յանձնում են իրանց նորածին մանուկներին օտարազգի դայեակներին, նոցա ժլատ և խորթ կաթին, նոցա դաստիարակութեան, ուղղութեան և, առհասարակ, նոցա ամեն մի վնասակար ազդեցութիւններին—ի հարկէ—Հայերիս վերաբերմամբ:

Յիշեցէք, Հայ պարկեշտունի տիկնայք, յիշեցէք հինգերորդ ծաղկած դարու, Հայկական պատմութեան մէջ յայտնուած «Ոսկեղէնիկ» դարու, «Ոսկեղէնիկ» չըջանի մէջ հանդէս դուրս եկած երանելի Հայ տիկնանց, որոնք իրանց կեանքն անգամ դնում էին իրանց մանուկների վերայ:—Նոքա և՛ կերակրում էին նոցա, և՛ սնուցանում, և՛ մեծացնում Աստուածապաշտութեան մէջ: Նոքա և՛ հագցնում էին նոցա, և՛ սիրում, և՛ գգվում, և՛ պահպանում իրանց պարզ և անմեղ սովորութիւններով: Եթէ նոցա սպառնում էր մի որ և է կրօնական կամ ազգային վտանգ, նոքա, թողնելով մայրենի ազատութեան փափկութիւնը, և, իբրև զիւղացի մարդիկ, իրանց մանուկներին գիւղի կամ շալակն առած, փախչում էին անապատներ և այնտեղ,

240.

Ս ու ռ ը ր Կ ար ա պ ե տ ի ե ռ զ .

Ս ու ռ ը ր Կ ար ա պ ե տ չ ա յ ի ր չ ի մ ա ն ,
Բ ո լ ը ր բ ար ձ ր մ է ո մ է ո գ ի լ ա ն ,
Վ ա ն ք ե ռ ն հ ե ո ու է ն կ ե ռ լ ա ն ,
Ս ու ռ ը ր մ ա ս ու ն ք դ վ ա ն ե յ գ ի վ ա ն .
Մ շ ու Ս ու լ թ ա ն ս ու ռ ը ր Կ ար ա պ ե տ :

Ս ու ռ ը ր Կ ար ա պ ե տ գ ե ղ ի ն մ օ տ ի կ ,
Ե ռ ե ք օ Ր վ ա զ ե յ ի բ ո բ ի կ ,
Ի ն ք ն կ ա ն է մ ար գ ու մ տ ի կ ,
Մ Ե ծ զ օ Ր ա լ ո Ր ս ու ռ ը ր Կ ար ա պ ե տ :

Ս ու ռ ը ր Կ ար ա պ ե տ ա ղ ր ու ը ու ջ ու ը ,
Ո տ ք դ կ ու գ ա յ շ ա տ կ ա ղ ու կ ու ը ,
Դ ու ա մ ե ն ու ն մ ու ը ր ա ղ ը տ ու ը ,
Մ ու ը ր ա ղ ա տ ու ը ս ու ռ ը ր Կ ար ա պ ե տ :

Ս ու ռ ը ր Կ ար ա պ ե տ կ ա յ ն ե յ ու ը ի ն ,
Լ ու ս ե ղ է ն հ ա ն գ ե ռ ձ հ ա գ ու ը ի ն ,
Ք ը ի ս տ ո ս գ ի ը կ ը մ կ ը տ ե յ ի ն ,
Մ կ ը տ ար աւ ր ս ու ռ ը ր Կ ար ա պ ե տ :

բ ա Ր ո յ ա կ ա ն ե կ ե ղ ե յ ի կ ա զ մ ի ը լ , ս ա ղ մ ո ս ն ե ը ի ը ն թ ե ը ց ա ն ու թ ե ա մ ր և
ա յլ ս Ր տ ա շ ար թ ե ը գ ե ը ո լ է ի ն զ բ ա ղ վ ու մ :

Թ ո ղ ն ե ն ք ձ ե ը ս ա ղ մ ո ս ն ե ը ի ու ե ը գ ե ը ը , մ ի ա յ ն ձ ե ը մ ա ն ու կ ն ե ը ի ն
ձ ե ը հ ար ա ղ ա տ կ ա թ ո լ ս ն ու ը չ է ք ու զ օ Ր ա ղ ք է ք : Դ ո լ ա ն ո լ — ա ն կ ա ս կ ա ծ —
մ ե ծ բ ար ու թ ի լ ն ար ա ծ կ ի լ ն է ք ձ ե ը մ ա ն ու կ ն ե ը ի ն ն ո յ ա ս ա ղ ա ղ ա յ
կ ե ա ն ք ի մ է ջ , և ս ա ղ ա թ է ի Ր ա լ ու ն ք կ ու ն ե ն ա ք հ ա Ր ա ղ ա տ մ ա յ ը
կ ո չ ու ե լ ու ն ո յ ա :

Գ. Ա. Ք. Գ ը ի գ ը ը ր ե ա ն յ .

Ս ու ռ ը ր Կ ար ա պ ե տ յ է լ մ ա ն գ ե տ ե ը ,
Մ է ջ ն է բ ու ս ե ը կ ա ն ա ն չ խ օ տ ե ը ,
Ք ե ն է կ ու գ ա յ խ ն կ ի հ օ տ ե ը ,
Չ ա ն կ լ ի - գ ի լ ա ն ս ու ռ ը ր Կ ար ա պ ե տ :

Ս ու ռ ը ր Կ ար ա պ ե տ բ ար ձ ր բ ո լ ը ր ,
ձ ա մ փ է ք ու ն ի ո լ ը ր - մ ո լ ը ր ,
Ու ը ր գ ու ու կ ե ը թ ա յ շ ա տ ու խ տ ա լ ո ը ,
Ո՛ր ո տ ա լ ո ը , ո՛ր ձ ի ա լ ո ը :

Մ ու ը ր ա ղ կ ու տ ա յ ո տ ա լ ո ը ի ն ,
Օ ս կ է խ ն ձ ո ը ձ ի ա լ ո ը ի ն ,
Ջ ու խ տ ա կ ա ղ ր ու ը մ ը ջ ու ը բ ա կ ի ն ,
Ու գ ու ու կ ե ը թ ա յ զ ա ու ու մ ա ք ի ն ,
Մ ա տ ա ղ կ է ն ի ն լ ու ս կ ի ը ա կ ի ն :

Ս ու ռ ը ր Կ ար ա պ ե տ ք ե օ շ ա յ - ք ե օ շ ա յ ,
Դ ու ու գ կ ու գ ա յ բ ա գ ու փ ա շ ա յ ,
ձ ա մ փ է ք ու ն ի ս ղ օ շ ա յ - ղ օ շ ա յ ,
Լ ու ս - գ ե ը ե ղ մ ա ն ս ու ռ ը ր Կ ար ա պ ե տ :

Ս ու ռ ը ր Կ ար ա պ ե տ է մ է ջ գ ա շ տ ի ն ,
Ս ը բ ա ն ու ն ք ն ի ը ե ն հ ե տ հ ա շ տ ի ն ,
Շ ա տ խ ա չ ա ղ ա շ տ ի ը ե ն պ ա շ տ ի ն ,
Մ շ ու Ս ու լ թ ա ն ս ու ռ ը ր Կ ար ա պ ե տ :

241.

Ե Ր Ա Ղ .

Ս ար ս ա փ ե լ ի ե ը ա ղ տ ե ս ա յ ա յ ա գ ի շ ե ը ,
Ո ը ա կ ե ս թ է մ ի պ ար տ ի ղ ի մ է ջ կ ա ն գ ն ա ծ ե մ .
Մ շ տ ա ղ ա լ ար զ ար գ ար ու ա ծ է կ ա ն ա չ ո լ .
Բ ի լ ր ծ ա ղ ի կ ն ե ը ի լ ը բ ա ն յ հ օ տ ը բ ու ը ը ու մ ե ն :

Ս ո խ ա կ .

Ուրախ ուրախ թռչունները երգելով,
Ծառէ ի ծառ ողջունեցին իմ գալը.

Ծաղիկները քնքուշ գլուխքը խոնարհած,
Ողջոյն տուին, զմայլեցաւ իմ սիրտը:

Գնումեմ խոր պարտիզի մէջ. մարդ չկայ,
Ո՛չ մի տեղից ձայն, աղաղակ չէ լսվում.
Միայն հեռուից հասանումէ ականջիս
Ջրի ձայնը, բայց ջուրը գեռ չեմ տեսնում:

Իմ գնացած ճանապարհի ծայրումը
Ահա՛ բացվեց մի գեղեցիկ հրապարակ.
Մարմարոնեայ, գեղեցկաշէն աւազան,
Ուր գործումէր ջուրը այնքան աղաղակ:

Երբ մօտեցայ աւազանին, ի՛նչ տեսնեմ,
Մի հրաշագեղ, մատաղահաս օրիորդ,
Աւազանի ափի վերայ խոնարհած,
Լուանում է իստակ ջրում մի լուացք:

Գերբնական է այդ աղջկայ տեսիլը,
Ո՛չինչ չկայ դուրա վերայ հողեղէն.
Լուսեղէն է, թափանցիկ է մարմինը,
Սչքը, յօնքը սև սաթի պէս փայլում են:

Չքնաղ իրան, մէջքը բարակ, իսկ կուրծքը
Գուրս է նայում բարակ հագուստի տակից,
Որպէս երկու հասունացած մեծ նռներ,
Թաւիշապատ, խելք է թռցնում գլուխից:

Կերպարանքը կանոնաւոր ու սիրուն,
Ոսկիամայրն չարժէ նորա մօտ ո՛չինչ.
Ծածանումէ ուսի վերայ մազերը,
Բերնի վերայ ծաղկումէ քաղցր ժպիտ:

Երգ երգելով, նա կտաւ է լուանում,
Նորա ձայնը կախարդում է թովչի պէս.

«Խաղա՛, աղբիւր, նա երգումէ, խայտալով,
Իմ կտաւը ճերմակացրո՛ւ քո ջրերով»:

Ո՛վ իմ չքնաղ, ասա՛, լսեմ, ո՞վ ես դու.
Ես մօտեցայ և ասումեմ նազելով,
Ո՛ր տեղից ես եկած այս տեղ և ինչո՞ւ,
Այդ ի՛նչ բան է, լուանումես երգելով:—

Ինչ պատասխան տուեց այսպէս. «Պատրանս կաց,
Մահու պատանք լուանումեմ քո համար».
Եւ այս խօսքը ասած չասած, ծուխի պէս
Անյայտացաւ իմ աչքիցը ամեն բան:

Տեսնումեմ, որ կանգնած եմ անտառում,
Ծառի կատարքը հասանումեն երկնքին.
Իւր մռայլոտ դագաթովը անտառը
Սոսկալի էր ահաբեկուած իմ սրտին:

Լսելիքս ամբոխվեցան... վաստակեցան աչքերս...
Կացինի ձայն հեռուից յանկարծ լսումեմ.
Խիտ ծառերի միջերից դուրս վազելով,
Յանկարծ մի այլ նոր երևոյթ տեսնումեմ:

Մի հաստաբուն, բարձր կաղնի ահագին,
Նորա տակին նոյն օրիորդն է կանգնած
Կացին ձեռքին. ջարդոտվելով մեծ կաղնին,
Հրաժարվումէ իւր դարաւոր արմատից:

Օրիորդը կտրում է ու երգում է,
Նորա երգը սիրտ կախարդող է դարձեալ.
«Կտրի՛ր, կտրի՛ր, սրաբերան իմ տապար,
Փայտ կտրատիր, տախտակ տաշիր իմ համար»:

—Իմ նազելի, իմ սիրական, ասա՛ ինչ,
Մօտենումեմ նորան դարձեալ ասելով.
Ասա՛, ո՞վ ես և կամ ուստի՞ ես եկած,
Ի՛ր տախտակներ կտրատումես երգելով:—

Իմ հարցմունքին այսպէս տուեց պատասխան.
«Քո օրհասը մօտեցել է. տախտակներ
Պատրաստուեմ ես քո դադաղի համար»:
Ասաց, դարձեալ անյայտացաւ. ես մնացի:

Քայքայվելով հոգիս ու սիրտս նայումեմ...
Ահա դաշտը սևանում է չորս կողմից,
Ես չգիտեմ, թէ ինչ պիտի գայ գլխիս,
Բայց գողումեմ բոլոր մարմնով երկիւղից:

Երթումեմ ես... բայց ամպի պէս մի պատկեր
Հեռուիցը երևեցաւ իմ աչքին.
Մօտ վազեցի, դարձեալ տեսայ... ես նորան,
Մի գունաթափ, տխուր դէմքով ուրուական:

Մի ծանր մուրճ բռնած էր պինդ իւր ձեռքում,
Որով գետինը փորում էր անդադար.
Ո՛հ, թէ եւ այնքան զեղեցիկ էր իմ աչքին,
Բայց երկիւղից սիրտս զարկում էր կատաղած:

Նա փորելով դարձեալ երգում էր մի երգ—
Մի սրտաշարժ, մի շատ տխուր, տրտում երգ.
«Մո՛ւրճ իմ, մո՛ւրճ իմ, փորի՛ր դու ինձ մի փոս խոր,
Փորի՛ր, մո՛ւրճ իմ, մի գրկաչափ զետնափոր»:

Մօտենումեմ նորան դարձեալ խնդրելով,
—Իմ նազելի, իմ սիրական, ասա՛ ինձ,
Ասա՛, ո՞վ ես և կամ ուստի՞ դու եկար,
Կամ այդ փոսը դու փորում ես ո՞ւմ համար:—

Իմ հարցմունքին պատասխանում է այսպէս.
«Ես քո համար պատրաստումեմ գերեզման».
ձայլեց սիրտս... և՛ երկիւղից և՛ ցաւից,
Բայց կամեցայ տեսնել իմ այդ օթեան:

Երբ գնացի ես փոսի մօտ նայելու,
Սարսափելի մի ձայն եկաւ ականջիս.

Յետ եմ նայում, տեսանումեմ այլ աղջիկ,
Նոյնպէս չքնաղ, նոյնպէս մատաղ, թափանցիկ:

—Իմ նազելի, գո՛նէ դու ինձ գլծա՛, ասա՛,
Ո՞վ է փորող օրիորդը և դու ո՞վ.
Ի՛նչու այդպէս գիշատում էք իմ սիրտը.
Ե՛՛հա պատասխան տուր, նազելի, խղճալով:—

«Մենք երկուքս քոյր ենք միմեանց անբաժան»,
Օրիորդը պատասխանեց հեգնելով.
«Նա երէցն է, իսկ ես կրտսեր հարազատ...»
—Բայց ո՞վ էք դուք, ես հարց արի գոռալով:

«Նա ալեւոր «Հայաստանի հոգին է»...
«Իսկ իմ անունս է»—«Անմիաբանութիւն»,
«Մեք շատ դարեր անցուցել ենք խռովով,
«Եւ շատ մարդիկ փոս են ընկել մեր ձեռքով»:

Ասաց, ժպտաց. կատաղաբար երկու քոյր
Գլորեցին ինձ փոսի մէջ, ես ընկայ...
Ենչարգելված նեղութիւնից զարթելով
Ստուգեցի, թէ երազ էր, որ տեսայ:

Կոմս Էմմանուէլ (Մ. Նալբանդեանց).

242.

Ի մ ս ա զ ւ .

(Աշուղի երգերից).

Սազ եմ առել,
Աշուղ դառել,
Սիրտ եմ դրել իմ սաղում.
Սըրտի վերք եմ,
Սըրտի երգ եմ

Սաղիս ձէնով ձեզ ասում...
 Ձեզ անհատնում
 Դարդ եմ պատմում:
 Դուզուն-դարդ կայ իմ սաղում,
 Ի՛ն եմ երգում,
 Ինչ կայ կեանքում—
 Կեանքի երգ եմ ձեզ ասում...

Ալեքսանդր Մատուրեան.

243.

Թէ ի՛նչ կասէ պանդուխտն զարնան սոխակին.

Սոխակն ունի կարմիր վարդ,
 Կարմիր, ճերմակ վարդ ու զարդ.
 Վշտացն է դա մեծ սփոփ,
 Սփոփ սրտին իւր ամփոփ:

Յարշալուսին հրաւէր
 Կարդայ մարդկան քնասէր՝
 Տեսնել լսել գոռն ու գոչ—
 Թուչո՛ւն մ'է սա, թէ ժամկոչ:

Նա բնութեան է քնար,
 Քնար, ջութակ կամ կիթար.
 Երգ ի լեզուկ յար ճչէ,
 Չչէ, գոչէ և մնջէ:

Նա զարնայնի է մուսայն,
 Սիրուն մուսայն և գուսան.
 Ի թուի վարդին յար թառի,
 Թառի, թռի և մարի:

Տեսէք, քանի՛ ձևեր հոծ
 Ի տես բերէ վառ ի բոց՝

Գգուել վարդին ըզտերև,
 Ձարև, տերև, խենդ ու խև:

Ի տես մարգաց զեղադէմ
 Տեսէք ժպիտն վարդին դէմ
 Ի գիւ ի քալ ընդոստում
 Խայտանք, խնդում և ոստում,

Յաչըս փայլին մերթ արտսուք,
 Արտսուք և սուգ և պասուք,
 Եւ մերթ ցօղէ ի թերթիկ,
 Յօղ ի թերթիկ, ո՛հ, փափկիկ:

Վարդի թուփն է նորա բերդ,
 Բերդ՝ որ թուէ զեկն ու զերթ.
 Հաղար քիչ է ժամուան մէջ
 Թռիչ, կամ ճիչ, ելևէջ:

Հոս կը պաշտէ, հոն կ'երգէ,
 Հոս բարձրանայ, հոն կքէ,
 Երգել սիրէ ցայգ և տիւ,
 Գեղգեղ անթիւ միշտ ճիւ ճիւ:

Հոս կը փարի, հոն քծնի,
 Հոս կը մարի, հոն խրտչի,
 Սիրոյն հսկէ միշտ թագուն,
 Թագուն ի բոյն կամ անքուն:

Հոս կը ճախրէ, հոն տխրի,
 Հոս կ'աւաղէ, հոն սխրի
 Խենթ թէ խելօք, չունի կարգ,
 Չունի կանոն, կարգ ու կադ:

Նա չէ թշուառ, չէ հանդարտ,
 Թէ խինթ ունի և թէ դարտ—
 Մեռնիլ, մնալ վարդին տակ.
 Այս է իւր փառք, այս իւր կեանք:

Գնահ, սոխակ, վարդ ու մարգ,
Քեզ թող լինին ձորք և սարք,
Երգ ու ճխանք, ճիչ, ճուռոզ
Քեզ թող մնան անփոփոխ:

Քեզ ճախր ազատ ի յեթեր,
Յօդն ու յեթեր կամ յայեր,
Գնահ, սոխակ, քեզ լինին
Արև, լուսին և երկին:

Դու վարդ ունիս, իսկ ես սուգ,
Դու խինթ ունիս, ես արտսուգ,
Քեզ կեանք մնան, ինձ շիրիմ—
Շիրիմ մթին մի լռին:

Ասաց պանդուխտն և հեծեր,
Քամակ տալով սոխակին.
Աստուած գիտէ թէ ո՞վ էր,
Կոյս, պատանի՞, ա՛յր, թէ կին:

Տ. Ճգնափորեան.

244.

Մ ու խ ա մ մ ա զ.

«Հայաստանի Սոխակի» վերայ.

Սոխակ, Սոխակ, իմ Սոխակ,
Գիտեմ, չը կայ քեզ նման.
Հայաստան աշխարհումը
Գովելի ես, աննրման:
Թրուչում ես ամեն տեղեր,
Ժողովում ես ծաղիկներ,
Փունջ անելով բերում ես
Հայոց համար Երգարան:

Ո՞վ Սոխակ, խելքս տարաւ քո քաղցրանոյշ կարգալը,
Հայոց քաղաքներումը քո զանազան մանգալը,
Իմ հայ եղբարց սրտերին քո սիրոյ խնդում տալը.
Միայն քո ձայնդ մնաց յաւիտենից յաւիտեան:

Սոխակ, Հայաստանի մէջ քեզ տխուր տառ չը տեսայ,
Ես մանգալով ամեն տեղ՝ քեզնից վատ բառ չը տեսայ,
Բոլոր Հայաստանումը քեզ պէս երգող չը տեսայ,
Սէրդ անպատմելի է, նա է անմահ մեզ նըշան:

Ո՞վ Սոխակ, քաղցր ձայներ ունես քեզ քո մօտումը,
Գիշեր, ցերեկ երգում ես բուրաստանաց հոտումը,
Սոխակ, ինձի թողեցիր քո սէրիդ կարօտումը,
Ափսոս, որ ես կը մնամ քո սէրիցդ անարժան:

Քեշիշ-Օղլին եմ, Սոխակ, քեզ կարօտ եմ առանձին,
Հայաստանը կարօտ է, ա՛խ, քո երգին, քո գանձին.
Կեանք տայ Աստուած ազգասէր Աւագ*) Գրիգորեանցին,
Որ հայ բանաստեղծների երգերը թողնի կենդան:

Քեշիշ-Օղլի, աշըգ.

245.

«Հայաստանի Սոխակին»

Ն ո Վ Ե Ր.

Սոխակ գեղեցիկ՝ կանաչ պարտեզում
Երգում է, երգում, այրվում, խորովվում.
Սուլում է, սուլում Հայաստան երկրում
Եւ իւր նախահարց վէրքերը պատմում:

*) «Սոխակի» Հրատարակչի աշխարհական անունն է:

Պատմում է և, ախ, Հայաստան երկրից,—
Հին քաղաքներից, մեծ մեծ գիւղերից,
Վանք, վանահայրից, զօրեղ սուրբերից,
Թագ, Թագաւորից, Վարդան, Վահանից:

Ի՞նչ տեղ էիր դու, իմ սիրուն Սոխակ,
Մինչ եօթանասուն և երեք թիւը*):
Քեզանով միայն, քեզանով, հոգեակ,
Կեանք առին սիրով Հայի որդիքը:

Քո ձայն լսելով, քո երգ սիրելով,
Կոկոն մանուկներ բացուեցան շուտով,
Տես, քանի՜ քանի՜ սիրուն գրուածքներ
Նուիրում են քեզ ուրախ սրտերով:

Ուրախ սրտերով, վառուն յոյսերով
Երկար տարիներ մաղթում են Հայեր

*) Ճիշտ է. «Սոխակի» առաջին հատորի առաջին տպագրութեան իրաւունքը գրաքննական ատեանից ստացել ենք 6-ն հոկտ. 1873 թ., և 1874 թուին լոյս ընծայելով նորան, նուիրել ենք նորան Բագուի Հայոց «Մարդասիրական Ընկերութեան» պատնծալի անուանը, որպէս սան նոյն Ընկերութեան, հետեւեալ տողերով. «Մեծապատիւ Անդամք. ընդունեցէք, խնդրեմ, այս փոքրիկ աշխատութիւնը, «Սոխակ Հայաստանի» խորագրով, որն այսօր հրապարակով և սիրոյ զգացմունքով նուիրում եմ Ձեզ և Ձեզանով—Հայկական ազգին: Այս աշխատութիւնը թէև չէ կազմում մի վսեմ գործ, որը համապատասխան լինէր Ձեր մարդասէր տիրութիւն, սակայն, իբրև աղքատիկ լուծայ, հայ գրականութեան դանձանակի մէջ գցելու, նուիրվում է մի պարզ սրտից: Այո, կրկնում եմ, մի պարզ սրտից, որը երբէք մոռանալու չէ այն ազնիւ յիշատակը, որ Ընկերութիւնդ գործ է դրել դէպի մի Հայ պանդուխտ, —դէպի ինձ, ուսանողութեանս ժամանակ: Այս առթիւ, ահա, «Սոխակ Հայաստանին», այսօր, իւր թեկնները թափելով տալով, պատնում է դէպի Ձեզ՝ յայտնելու իմ այն երախտագիտական զգացմունքը, որով մնալու եմ Մարդասէր Ընկերութեանդ միշտ խոնարհ որդեգիր՝ Աւագ Գրիգորեանց»:

Ե՛ւ քեզ և՛ քո Տէր Հայր Գրիգորեանցին,
Որ միշտ մշակէք անդաստան ազգին:

Կարապետ Տէր-Զաքարեանց.

246.

Վ երջին վարդ.

(Գերմանականից).

Վ երջին վարդ, վերջին վարդ,
Սիրականիս վերջին զարդ,
Նա քեզ հանեց իւր կրծից,
Ինձ պարգևեց վերջին վարդ:

Մանկութեան ոսկէ ժամերն
Անցել են անդառնալի,
Կորած սիրոյս յիշատակ
Դու ես միայն, վերջին վարդ:

Գարնան օրերն անցել են,
Տօթ ամառն է ինձ էրում,
Միշտ սպասում եմ քու տեսքին,
Դու, ամառուայ վերջին վարդ:

Երջանիկ կեանքիս օրերը
Ցաւ են դառել առաջիս,
Ուրիշ օրեր, ուրիշ կեանք
Միտքս բերի՜ր, վերջին վարդ:

Շատ չի տեղի՜ կ'բացուի
Առաջիս սև գերեզման,
Էս աշխարհից միայն քեզ
Հետս կ'առնում, վերջին վարդ:

247.

Ի մ ա չ Ր ա ֆ ֆ ի ի *).

Վ լ ը հ ա տ ա ծ հ ո գ ու լ յ ա լ ա ծ խ ո Ր ք եր ի ց՝
Ա շ խ ո ղ ժ, ար թ ն ա ց ի Ր, — կ Ր կ ի ն ո գ ի ա ու,
Տ ու Ր ի ն ձ, ար ի լ ն ո տ ս Ր տ ի ս թ ե լ եր ի ց
Մ ի պ ս ա կ հ ի լ ս ե մ ա ն մ ա հ ի հ ա մ ար:

Ա ն մ ա հ Ր ա ֆ ֆ ի ի ս ու Ր ք յ ի շ ա տ ա կ ի ն՝
Բ եր ու մ ե մ ա հ ա ի ձ ո ն ա յ ս հ ի լ ս ու լ ա ծ,
Ա զ գ ի ս բ ա զ մ ա շ խ ա տ ա զ ն ի լ մ ը շ ա կ ի ն՝
Ե ս-է լ ու զ ու մ ե մ տ ա լ յ ար գ ա ն ք յ ու զ ու լ ա ծ:

Գ ու ժ կ ա ն, մ թ գ ու ժ ի Ր, թ է Ր ա ֆ ֆ ի ն մ ե ու ա լ,
Ն ա ա ն ա ն ց կ ե ա ն ք ո Վ մ ի շ ա կ ա յ կ ե ն դ ա ն ի, —
Պ ա Ր եր կ ը ս ա հ ի ն, ն ա դ ե ու ա ն զ Ր ա լ
Հ ա յ ս եր ն դ ո ց մ է ջ եր կ ար կ ե ա ն ք ու ն ի: —

*) Ր ա ֆ ֆ ի ն վ ա խ մ ա ն ու լ ե ց ա լ 1888 թ ու լ ի ա պ ը լ ի լ 25-ին, 50 տ ա-
ր ե կ ա ն հ ա ս ա կ ու մ: Հ ա ն գ ու լ ց ե ա լ ի մ ա հ ո Վ հ ա յ ն ո Ր ա հ ա ս գ ը ա կ ա ն ու լ թ ի լ ն ը
կ ո Ր ց ն ու մ է ի լ ը ա մ ե ն ա յ ա յ տ ն ի ք ա ն ք ա Ր ա լ ո Ր մ ա տ ե ն ա զ ի Ր ն եր ի ց մ ի ն ի ն:
Հ ա ն գ ու լ ց ե ա լ Ր ա ֆ ֆ ի ն, ի բ Ր ե հ ու չ ա կ ու ա ծ գ ը ո ղ, ու ն ի բ ա ղ մ ա թ ի լ վ ի ա ղ ա-
ս ա ն ա կ ա ն և ա յ լ ար ձ ա կ և ո տ ա ն ա լ ո Ր գ ը ու ա ծ ք ն եր: Մ ե ն ք ա յ ս ա ե ղ ա-
ւ ե լ ո Ր գ ե ն ք հ ա մ ար ու մ մ ի ա ու մ ի յ ի չ ե լ հ ա ն գ ու լ ց ե ա լ ի տ ա ղ ա գ ը ու ա ծ ա շ-
խ ա տ ու լ թ ի լ ն ն եր ը, ք ա ն ի ո Ր ն ո ք ա ար գ է ն ծ ա ն թ լ և շ ա տ լ ա լ յ ա յ տ ն ի ե ն
հ ա յ հ ա ս ա Ր ա կ ու լ թ ե ա ն ը ն թ եր ց ո ղ դ ա ս ի մ ե ծ ա մ ա ս ն ու լ թ ե ա ն ը:

Ա յ դ ա շ խ ա տ ու լ թ ի լ ն ն եր ի վ ա ձ ա ու ու մ ի ց ս տ ա ց ա ծ ար գ ի լ ն ք ո Վ պ է ա ղ
է ա պ ը ի ն և՛ ն ո Ր ա ա յ ը ի ա մ ու ս ի ն ը և՛ ն ո Ր ա ո Ր բ մ ն ա ց ա ծ մ ա ն ու կ ի ն եր ը...
Օ գ ն ե ց է ք, ու Ր ե մ ն, բ ա Ր ի մ ա Ր գ ի կ, ա յ դ ա շ խ ա տ ու լ թ ի լ ն ն եր ը տ ա Ր ա ծ ե-
լ ու հ ա յ հ ա ս ա Ր ա կ ու լ թ ե ա ն մ է ջ, ի ն ա ղ ա ս տ հ ա ն գ ու լ ց ե ա լ Ր ա ֆ ֆ ի ի վ շ ա-
ց ե ա լ ը ն տ ա ն ե ա ց, և Ա ս տ ու ա ծ եր լ ն ք ի ց կ՝ ո Ր հ ն ի ձ ե գ:

Գ. Ա. Բ. Գ Ր ի զ Ո Ր ե ա ն ց.

Ն ո Ր ա վ ե հ մ ը տ ք ի վ ա յ լ ու ն ծ ը ն ու ն դ ն եր —
«Կ ա յ ծ եր», Խ ա մ ս ա յ ի Մ ե լ ի ք ու լ թ ի լ ն ն եր»,
«Ս ա մ ու է լ», «Փ ը ն ջ եր», «Խ ե ն թ», «Պ ա լ ի թ-Բ է գ եր»
Կ ը ն ծ ա յ ե ն Հ ա յ ի ն ն ո Ր կ ե ա ն ք ի մ ը տ ք եր...

Ճ ա ն ա պ ա Ր հ տ ու է ք, Ր ա ֆ ֆ ի ն ա ն ց ն ու մ է,
Ու ս եր ի ն բ ա Ր ձ ա ծ բ ե ու ն ա ն մ ա հ ու լ թ ե ա ն...
Տ ե ս է ք հ ե տ ք եր ը ո Ր չ ա փ հ ը ն ձ ու մ է
Հ ա մ ա յ ն Հ ա յ ա զ գ ի ց դ ա փ ն ի ք գ ո հ ու լ թ ե ա ն:

Թ ո ղ Ր ա ֆ ֆ ի ն եր թ ա յ, կ ա յ թ է ա յ ն կ ա ճ ա ու՝
Ու Ր հ ա ն դ ի ս ա ց ա ծ կ ա ն մ եր մ ե ծ մ ա Ր գ ի կ, —
Բ ա յ ց Հ ա յ ը ը ն դ մ ի շ ա ն ո Ր ա ձ ի Ր ք ն ու հ ա ն ճ ա Ր
Կ ը յ ար գ է ա ն կ ե ղ ծ զ եր թ ք ն ք ո յ շ վ ա Ր գ ի կ:

Ա ն ց ի Ր, ս ը լ ա ց ի Ր դ ու եր կ ն ի խ ո Ր ա ն,
Ո՛վ յ ա լ եր ժ ա ց ա ծ լ ու ս ա փ ա յ լ հ ո գ ի, —
Բ ա յ ց ք ո վ ա ս տ ա կ ն եր ն կ ը տ ա ն ն ո Ր ո գ ի,
Ն ո Ր շ ու ն չ Հ ա յ եր ի ն վ եր ա ծ ը ն ու լ թ ե ա ն...

Ա ն ց ա լ և Ր ա ֆ ֆ ի ն ի ն չ ա կ է ս մ ի յ ա ղ թ ո ղ,
Ե լ ա յ ծ ա ու հ ե տ ք ը թ ո ղ ե ց ա շ խ ա Ր հ ու մ.
Ս եր ն դ ի ց ս եր ու ն դ ն ա կ ա ն գ ն ե ց կ ը թ ո ղ՝
Ն ը շ ա ն ա ն մ ու ա ց Հ ա յ ո ց ս Ր տ եր ու մ...

Յ ար ու թ ի ն-Ո ս տ ա ն ի կ (Յ ո Վ հ. Գ ու լ ց ու բ է գ ե ա ն ց).

248.

Վ ա Ր գ ա ն Մ ա մ ի կ ո ն ե ա ն.

«Մ եր ք ա ջ Հ ա յ ո ց զ ո Ր ո թ ի ն ք» եր գ ի ե ղ ա ն ա կ ո Վ.

Վ ա Ր գ ա ն մ եր ք ա ջ զ ո Ր ա վ ար,
Թ ու Ր ը ձ ե ո ի ն ո ս կ է վ ա ու,
Կ ա ն չ ու մ է ի լ ը ք ա ջ եր ի ն,
Ջ ա Ր գ ե լ գ լ ու խ Յ ա զ կ եր տ ի ն:

Հայոց զօրքերն գունդագունդ,
Մեծաբարբառ, գոռով թունդ
Հաւաքվում են Արտաշատ,
Մայրաքաղաք մարդաշատ:

Հայոց զօրքերն անհամար,
Դրօշակներով են պայծառ,
Ամեն կողմից շտապած՝
Վազվզում են կատաղած:

Ղևոնդեանց խումբը անմահ,
Անվախ, անդող և անահ,
Խաչը բռնած Քրիստոսեան,
Բորբոքում են զօրքն Հայկեան:

Կանայք համեստ, աննման,
Վառված սիրով Աստուածեան,
Դուրս են թռչում տըներից—
Վազել դաշտը ծաղկալից:

Քաղցրախօսիկ և սիրուն
Օրիորդներ փափկասուն
Ոսկէ ձրգում են շորեր,
Հագնում են սուր մահաբեր:

Փռուք և պարծանք յաղթական
Քեզ, սիրելի ազգ հայկեան,
Որ քո սիրով բորբոքիչ
Միշտ եղել ես քաջ փրկիչ:

Դէ, գնացէք, առիւծներ,
Ով աչքի լոյս, քաջ հայեր,
Ջարդեցէք զօրքն պարսկական,
Դըրէք գետին անկենդան:

Դէ, դուրս թռէք ասպարէզ,
Ախոյաններ, քաջապէս,

Փշրեցէք դուք կատաղած
Սրեր, թրեր թշնամեաց:

Ս. Շահազիզեան.

249.

Երգ աւազակաց.

Վառեց երկինք իւր լապտեր
Աւազակաց համար,
Հնչեն հողմունք, փոթորիկ,
Գինով լցուին մեր փորիկ,
Մեր պալատն է անտառ:

Խ մ բ ա պ ե տ.

Երբ որ մեռնիմ, ով ընկերներ,
Գինիներով խօսք տուէք որ՝
Լի բաժակներ ձեռներիդ,
Գաք ու պարէք շիրմիս բոլոր.
Եւ առ 'ի զոհ մեծ քաւութեան՝
Հողւոյս բարի պաղատելով՝
Պիտի ցօղէք իմ գերեզման գինիներով,
Գինիներով հարիւր բաժակ,
Գինիներով հարիւր տակառ,
Գինիներով, գինիներով:

250.

Հոնի կորիզը.

Տարեմուտի երեկոյին
Մայրս թխեց կարկանդակ,
Մէջը զրաւ հոնի կորիզ,
Իբրեւ բախտի նշանակ:

Կորիզն, ասաց, ո՛ւմ որ ընկնի,
Դովլաթաւոր կը դառնայ,
Ուր որ գնայ, ի՛նչ գործ բռնի,
Փառք ու պատիւ կ'ստանայ:

Կարկանդակը բաժանեցինք,
Կորիզն ընկաւ ինձ բաժին,
Եղբայրներըս սրտնեղելով՝
Նախանձեցան իմ բախտին:

«Կոյր է Բախտը» սուտ չէ ասած,
Մեծ եղբայրըս փնթփնթաց,
«Մի՞ թէ դա է ամենիս մէջ
Աշխատաւոր, բանիմաց»...

Մէկէլներն էլ հաւանեցան
Մեծ եղբորըս ասածին,—
«Իրաւ, իրաւ, չէր արժանի»,
Միաբերան ձայնեցին...

Մայրըս ասաց. «Խելօք կացէք,
Ահա կը գայ Նոր-Տարին,
Նա որ տեսնէ ձեզ կռուելիս,
Պարգև չի տալ ոչ մէկին:
Բայց որ տեսնէ՝ դուք սիրով էք
Եւ խռով չէք իրարից,
Այնուհետեւ ինչ որ ուզէք,
Զի խնայիլ ձեզանից»...
Այս ասելով՝ նա մեզ տուաւ
Տեսակ-տեսակ մրգեղէն,
Զիր ու չամիչ, տանձ ու խնձոր
Եւ զանազան քաղցրեղէն.
Քաղցրը կերանք ու քաղցրացանք,
Եւ խնդացինք շատ ու շատ,
Զաւրազ արինք, նուռ, սերկեղի,
Ունաբ, սալոր, թուզ, փշատ...

Հոնի կորիզն այնուհետեւ
Բոլորովին մոռացանք,
Եւ շատ սիրով՝ իրար գրկած,
Պառկոտեցանք, քնեցանք...

Ղ. Աղայեանց.

251.

Մ ա ղ թ ա ն ք Օ գ ո ս տ ա փ ա ռ Կ ա յ ս ե Ր Ռ ու ս ա ց .

Տէր, պահե՛՛ւ զԿայսր մեր հզօր Ինքնակալ.
Թագաւորե՛՛ւ դու մեզ ի պարծանս.
Թագաւորե՛՛ւ, Կայսր, յերկիւղ թշնամեաց.
Թագաւոր Ուղղափառ.
Տէր, պահե՛՛ւ զԿայսր մեր:

252.

Ե Ր Գ .

Տէր,
Ինչ մարդ է ճշմարտաբան՝ դու լէր նմա օգնական,
Ով ունի մաքուր բերան՝ դու լէր նմա օգնական.
Ով գինի չէ ըմպում և չի սուտ երդնում՝
Նա է մարդ ամենարժան, դու լէր նմա օգնական:

Տէր,
Կան բազումք, որ աշխարհի հետ չեն փոխիլ քո սուրբ բառն,
Կան ոմանք, որ քո խրատուց կատարմանը են յոյժ սառն.
Երևի սա է նոցա թշուառ վիճակի պատճառն.
Ով սիրէ զաւետարան՝ դու լէր նմա օգնական:

Ս ո խ ա կ .

Տէր,
 Շատ մարդիկ չ'գիտեն ի՞նչ է պաշտօն Աստուածապաշտութեան,
 Շատ մարդիկ գոն՝ չ'գիտեն կանոն սիրոյ և հաշտութեան,
 Շատ մարդիկ քո սուրբ բանդդ արարին զառիթ կոշտութեան.
 Ով ունի սէր բնական՝ դու լեր նմա օգնական:

Տէր,
 Հայք շատ են հեռացել քո քաղցրահամ լծոյ տակէն.
 Կարճ ճանապարհը թողեալ՝ անկան երկարի քամակէն*):
 Որքան յիմար է պիտում, որ հեռանայ արեգակէն.
 Ով որ չէ փոփոխական՝ դու լեր նմա օգնական:

Տէր,
 Սէյեադին ողորմելով՝ տո՛ւր նմա դու հաստատ հաւատ,
 Զի մարդ աշխարհի գոլով՝ հոգւոյ մասին է յոյժ աղքատ.
 Աւետարանը մէկ է, թարգմանիչները շատ և վատ.
 Ինչ մարդ է անկեղծ թարգման՝ դու լեր նմա օգնական:

Պետրոս Մաղաթեան.

253.

Գ ի ւ ղ ի Ժ ա մ ր .

Տան-դօ, տան-դօ... Նազլիւ վեր կաց,

Արեն արդէն մայր է մտնում.

Տես, Խաթունն էլ գործը պրծած

Փողոցումն է, ժամ է շտապում:

Ժամը տուին—տան-դօ, տան-դօ,

Տէր, փառքդ շատ, տան-դօ, տան-դօ...

Շուտով նախիրն հանդից կը գայ.

Գընանք, որ շուտ էլի լետ գանք,

Կովը կը թենք, թ՛ըռ-թ՛ըռ, կաթ տայ,

Կովը կը թենք, մեր ցաւն հոգանք...

*) Հանգուցեալ Սէյեադը այս տողերով ակնարկում է Շամախու այն հայերին, որոնք, թողնելով հայ-լուսաւորչական կրօնը, 1861 թ. ընդունեցին լիւտերա-դաւանութիւն:

Ա՛խ, Նազլու ջան, չես իմանում—
 Եգուց էլի աղան կը գայ,
 Նորա սիրտը միշտ անկշտում,
 Ելի ամպի պէս պիտ գոռայ.
 —«Շուտով, Գրիգոր, փողերը բեր...
 Ելի չըկա՛յ. կովըդ հանիր»...
 Ա՛խ, Նազլու ջան, այն ինչ բան էր,
 Միտդ է հերու... Տէր, դու փրկիր:
 Հայրիկդ արդէն գընացել է,
 Որ փող ճարի. ե՛րբ պիտի գայ.
 Տեսնենք մէկը խղճացել է...
 Ա՛խ, սե օրը Տէրն էլ չըտայ:
 Շուտով, Նազլու, գընանք ժամը,
 Աղօթք անենք. քո ձայնն Աստուած
 Շուտ կը լսի—այս անգամը
 Մեզ չի թողնիլ անկով, անհաց:

Յ. Յովհաննիսեան.

254.

Հ ի ն գ եր ո ղ դ դ ա բ ու մ .

Տիկնայք փափկասունք Հայոց Աշխարհին
 Եկան ժողուեցան ու խորհուրդ արին.

—«Զըմընաց այր մարդ հայրենի երկրում.

Զըմընաց որդի մայրերի գըրկում:

Սուրբ հայրենիքը կանչել է նըրանց,
 Դուրս գալ կատաղած թըշնամու դիմաց.
 Առիւծների պէս կռուել ու մեռնել,
 Հայրենի հողը պարսկից ազատել:

Գնաց և՛ Վարդան և՛ Վահան, Տաճատ.
 Գնաց և՛ ստրուկ և՛ իշխան ազատ,

Իսկ մենք մնացինք մեր պալատներում,
Փափկասուն կեանքի անվայել գրքերում:

Մեր դահլիճները ոսկեզօծ նախշած,
Մեր գաթաները շաքարով թրխած.
Հագնում ենք ոսկի օղեր, մանեակներ,
Մետաքս ու կերպաս, թանգազին քարեր»:

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին
Եկան ժողովեցան ու խորհուրդ արին.
— «Չըմընաց այր մարդ Հայրենի երկրում,
Չըմընաց որդի մայրերի գրքերում:
Ել ում համար են ոսկի ու արծաթ,
Ել ի՞նչու հագնենք յակինթ, ադամանդ.
Ել ում համար մենք հագնենք, զարդարուենք,
Ճոխ դահլիճներում էլ ումն սպասենք:

Մեր որդիները, մեր առիւծ մարդիկ՝
Մինը կըսպանէ հինգ հազար պարսիկ.
Բայց չի կըշտանալ՝ կըգնայ շարունակ,
Մինչև վերաւոր ընկնի ծառի տակ:

Եւ նըրան չեն տալ մի բաժակ ցուրտ ջուր,
Երբ նըրան կայրէ մահու դաժան հուր.
Եւ նա կըմեռնէ տանջուած պապակով,
Իսկ մենք ապրում ենք այստեղ ապահով»:

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին
Կանչեցին իրանց աղախիններին.

— «Առէք այս ամենն, ասացին նըրանք՝
Ոսկի, ադամանդ, ակն ու զարդարանք:
Տարէք, ծախեցէք վաշխառուներին,
Կիսով տուեցէք թէ գին չըտուին.
Կտաւ առէք շատ, վերակապ շինէք,
Վերք զովացնող գեղեր շատ առէք»:

Եւ շուտ կարեցին բոլոր հայ կուսանք
Հազար երեսուն վերքերի կապանք.
Մի վայրկենի մէջ կապեցին բեռներ
Եւ ժողովեցին առույգ նըթոյգներ:

Հընչեց բամբիւր, երգեցին կոյսեր,
Ամեն մէկին ձեռ փայլեց մի սուսեր.
Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին
Դէպի յԱւարայր թըռան, սըլացին...

Ս. Հախումեան.

255.

«Ի մ հայրենիքը տեսէլ ես, ասա».

Տեսէլ ես արդեօք այն բըլուրները,
Ուր ճոխ ծաղկում է մշտական զարուն.
Կանանչում թաղուած այն այգիները,
Ուր, իբրեւ գոհար, խաղողն է հասնում:

Տեսէլ ես դաշտեր, մարգագետիններ,
Ու բացուած այնտեղ վառ շուշան, մեխակ,
Ծնորհատու արեւ, ոսկի նըշույլներ
Եւ միշտ սիրաշունչ երկինք կապուտակ:

Տեսէլ ես ծերուկ ժայռերի միջով
Կատղած անցնելիս գետը փըրփըրած.
Ականջ դըրէլ ես խըռոված հոգով
Այն աղմկալից գոռոցին ալեաց:

Տեսէլ ես գիւղը հովտի մէջ մենակ
Եւ շուրջը փռուած շքեղ պարտեզներ,
Եւ ոսկի հասկեր և խաղաղ վըտակ,—
Լըսէլ ես քաղցրիկ արտուտի երգեր:

Եւ դու տեսէլ ես նորա գանձն անդին,
Դէմքով հըրեշտակ, հասակը փարթամ
Հարաւոյ դուստրը, հրապոյրքն աչերին,
Շրթունքը ալ վարդ, ժրպիտն անթառամ...
Սիրատանջ այրուած քնքուշ այտերից
Քաղէլ ես համբոյր, որ քաղցր է մեղրից:

Յ. Յովհաննիսեան.

256.

Ա. Վ. փոքրիկն Շուշանիկ Պ. Փափագեան.

Տեսած էք անշուշտ՝ հոյլ հոյլ ծաղիկներ,
Դաշտաց ու հովտաց՝ գեղեցիկ զարդեր:
Մտած էք անշուշտ՝ ծաղկանց պարտէզներ,
Հոռոտած անդէն՝ անուշ բուրումներ:
Տեսած էք անշուշտ՝ հարսներ, կուսաններ,
Ծաղկով պսակած՝ իրենց գլուխներ:
Դիտած էք անշուշտ՝ պայծառ խորաններ,
Եւ սուրբ խաչի մօտ՝ ծաղկահիւս փնջեր:
Լսած էք անշուշտ՝ տաղեր ու երգեր,
Եւ ծաղկանց համար՝ պէսպէս գովեստներ:
Դիտած էք անշուշտ՝ գոյնգգոյն գորգեր,
Անթիւ, անհամար՝ ծաղկեայ կերպասներ:
Տեսած էք անշուշտ՝ հոտաւէտ իւղեր,
Ծաղկանց հիւթերէն՝ կազմած բալսամներ:
Բնական ծաղկին՝ տեսքն գեղեցիկ
Վառած է այսքան՝ իւր սիրով մարդիկ:
Որ արհեստական՝ ծաղիկն իսկ անբոյր
Ունեցած է միշտ՝ աչած հրապոյր:
Չէ այսքան միայն՝ ծաղկանց մեծ համբաւ,
Կան դեռ շատ պարծանք՝ և պատիւ անբաւ:

Կան շատ անուաններ՝ կուսանաց, կանանց,
Որք են անուաններ՝ գեղատես ծաղկանց:
Սոյն անուաններէն՝ Շուշան, Շուշանիկ
Է մի պատմական անուն գեղեցիկ:
Որո՞ւն չէ ծանօթ՝ սուրբ գրոց Շուշան,
Ողջախոհ կենաց՝ տիպար ու նշան:
Ո՞ր Հայ չըլիշեր՝ արին Շուշանիկ
Մեծին Վարդանայ՝ գեղանի դստրիկ:
Կը տեսնենք ահա, որ Շուշան անուն,
Թէ ծաղիկ լինի՝ և թէ մականուն:
Ունի միշտ ներբող՝ նկարներ անբաւ,
Բիւր բիւր ծաղկանց մէջ՝ յոյժ շքեղ համբաւ:
Չէ որ մեր Տէրն իսկ՝ զարդուց օրինակ
Հռչակեց Շուշան՝ ծաղիկն սպիտակ:
Ասաց՝ Սողոմոն՝ չը հազաւ երբէք
Շուշանի նման՝ զգեստ պերճ ու սեգ:
Իսկ ես ուրախ եմ՝ որ ունիմ սանիկ,
Զեռքովս դրոշմած՝ անուն Շուշանիկ:
Արդ, ո՞վ Շուշանիկ, դստրիկ գեղանի,
Քեզ կը պատկանի՝ այս երգ Շուշանի:
Թո՞ղ այժմ կարդան՝ ծնողք քո բարի
Ազնիւն Պետրոս՝ զգօն Եպրուհի:
Իսկ երբ մեծանաս՝ և այս ձօն կարգաս,
Արդեօք դու հրջափ պիտի գոհանաս:
Որ Շուշանիկ ես՝ ճերմակ թւերով,
Սնած, զարգացած՝ մօր մաքուր կաթով:
Իբրեւ գեղձանիկ՝ փայլուն մազերով,
Եւ Հայու աղջիկ՝ ծաւի աչերով:

Մ. Ե. Մ.

257.

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի

Տ. Տ. ՄԿՐՏՁԻ

Գայուստն ի Բաբու, ի 5-ն փետրուարի 1898 ամի*).

Տեսէք, ի՞նչպէս խաչը ձեռին

Հայրապետն Հայ ազգի

Իջնում է սուրբ եկեղեցին՝

Փառք ու պատուով Հայերի:

Կեցցէ, գոչենք, մեր Հայրիկ

Վեհափառ,

Մեր սրտին խունկ անուշիկ

Եւ բուրվառ

Սիրավառ:

*) Երջանկայիշատակ Մակար Կաթողիկոսից յետոյ (22-ն հոկտ. 1888 թ.), այս երկրորդ անգամն է, որ Հայոց Կաթողիկոս է այցելում Բագուն: Տողերիս գրողն էլ, որպէս Բագունի եկեղեցեաց գործակալ, հասարակութիւնից ընտրված պատգամաւորներէ, այն է՝ պ. պ. Յակ. Աղամեանի, Գր. Այվազեանի, Թ. Ամիրեանի և Կոստ. Խատիսեանի հետ պատիւ ունեցանք ներկայանալու Վեհափառ Հայրիկին, Տփլիսում, փետր. 1-ին, և հրաւիրելու Նորին Ս. Օծուծիւնն ի Բագուն: Սիրեցեալ Հայրիկը, յարգելով Բագունի հայ հասարակութեան խնդիրը, ընդունել բարեհաճեցաւ պատգամաւորութեանս հրաւերը:

Փետրվարի 5-ն էր: Վաղ առաւօտեանից Բագուն, ասես, փոխուած էր: Այն փողոցները, որտեղով պէտք է անցնէր Վեհափառ Հայրիկը, մարդկային լեռներ էին կազմում, իսկ պարսպապետ կոչուած հրապարակը, որ գտնվում է հայոց Ս. Լուսաւորչի մայր եկեղեցու հանդէպ, անանցանելի էր դարձել: Ծովացեալ ժողովուրդը, հանգստութիւն չ'գտնելով, տատանվում էր, օրօրվում: Պարապետի մայթի կիսից սկսած մինչև եկեղեցին ծածկուած էր գորգերով, կարմիր և կանաչ մահուդով: Այդպէս կազմ և պատրաստ էր հայ հոգեւորականութեան

Նա, օրհնելով հոժ բազմութիւն

Խաչանշան կրնքելով՝

Յանկանում է բարօրութիւն

Հէք Հայերին սուրբ սրտով:

Կեցցէ, գոչենք, մեր Հայրիկ

Վեհափառ,

Մեր սրտին խունկ անուշիկ

Եւ բուրվառ

Սիրավառ:

Թեան ամբողջ կազմակերպութիւնը՝ փայլուն և պատշաճին զգեստներով:

Օրուայ 11/2 ժամն էր, երբ երեցաւ Հայրիկի կառքը կարմրագեղատ շաթիրներով: Հաղարաւոր բերաններից դուրս թռան «ուռն», «կեցցէ՛ Հայրիկը», «կեցցէ՛ Վեհափառը» ուրախացուցիչ ձայները և շարունակուեցան երկնային, շատ երկար: Կառքերը, մինը միւսի ետևից, թռած եկան, կանգնեցին որոշեալ տեղը: Նորից կեցցէ, նորից ուռնա, նորից աղաղակ: Հայոց ծերունազարդ և պարթև Հայրիկը, շուրջաւ առնելով և ամպշովանու տակ անցնելով, իւր չքախմբի հետ, ուշագրաւ թափուրով և՛ «Հրաշափառ» և՛ «Ուրախ լեր» շարականների ներդաշնակ երգեցողութեամբ առաջնորդուեցաւ դէպի Լուսաւորչի մայր եկեղեցին, ուր յայտնի սաղմոսը սրտաշարժ կերպով և մաքուր առողանութեամբ արտասանելուց յետոյ, օրհնեց լճացեալ ժողովուրդին: Երբ Վեհափառ Հայրիկը դուրս էր գնում եկեղեցուց, ժողովուրդն իւր անվերջ «կեցցէ՛նե-րով» թնդացրեց օդը: Հայրիկը, կանգ առնելով եկեղեցու գաւթի սանդուխդների վերայ՝ ասաց. «Ի՞նչ «կեցցէ՛» կ'պուաք. չնորհակալ եմ: Ի՞նչ կ'ուղէք, որ տամ ձեզի: Բան մը չ'ունիմ. Աւետարան միայն ունիմ և Աւետարանով կ'օրհնեմ ձեզ: Ժիր եղէք, աշխատասէր եղէք և արդարադատ եղէք»: Ապա, կառք նստելով, հաղարաւոր «կեցցէ՛նեք» տարափով պրցաւ դէպի Հայոց «Մարդասիրական Ընկե-րութեան» հոյակապ շէնքը, որը չքեղ կերպով պատրաստուած էր, այդ մասին կազմուած յանձնաժողովի շնորհիւ, մանաւանդ Ս. Լուսաւորչի եկեղեցու երէցփոխ պ. Համբ. Մելիքեանցի եռանդուն աշխատութեամբ:

Վեհափառ Հայրիկը, 8 օր մնալով Բագունում, այցելեց ում և որտեղ պէտք էր: Եւ ապա փետրվարի 13-ին, երեկոյեան, սաղմոս-դնացով մեկնեց դէպի Գանձակ, ոգեւորուած կեցցէ՛ն երբ որոտումով:

«Ուրախ եղէ» պարզ կարգալով
Սուրբ աղօթքը տաճարում,
Նա արձակեց «պահպանիչով»
Ժողովրդին, անպատում
Պատճառելով—հա—խնդում:
Կեցցէ, գոչենք, մեր Հայրիկ
Վեհափառ,
Մեր սրտին խունկ անուշիկ
Եւ բուրվառ
Սիրավառ:

Բ. Ա. Գ.

258.

Ս. Ղ ք ա տ կ ի ն:

(Գաղղիերէնից).

Յուրաքանչէր փշեց, ձմեռ սաստիկ.
Ձիւնը ծածկեց գետինը,
Ամենայն մարդ մտաւ իւր տուն,
Պատսպարվիլ ցրտիցը:
Ժամի դռնում դողդողալով
Կանգնած է մի աղքատ կին.
Նորա հանգերձ պատառ պատառ,
Ձունի շապիկ իւր հագին.

Տողերիս գրողն էլ, որպէս գործակալ, Գանձակի պատգամաւորների հետ ուղեկցեց Վեհափառ Հայրիկին մինչի Գանձակ և նոյն ամսի 14-ին, երեկոյեան, վերադարձաւ Բագու, նախապէս արժանանալով Նորին Ս. Օծութեան օրհնութեանն և քանի մի սիրալիւր և հոգու չափ մի ի թաւրոյ խօսքերին:

Գ. Ա. Բ. Գրիգորեանց.

Անհամարձակ նա իւր ձեռքը
Պարզում է անց կացողին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Ձեզ, սիրելիք, ասեմ ով էր
Այս խղճալի աղքատը,
Այն ցրտումը ոտաբոբիկ
Կանգնած ժամի դռնումը.
Շատ ժամանակ դեռ չէ անցել,
Երբ նա փառքով ու պատուով
Ման էր գալիս փողոցներում
Իւր սեպհական կառքերով.
Այժմ վախով նա իւր ձեռքը
Պարզում է անց կացողին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Մինչ թատրոնում յայտնվում էր,
Մինչ խաղում էր հանդիսում,
Դղրդում էր թէատրոնը,
Նա դափնիք շատ էր հնձում.
Ժողովուրդը հաւաքվում էր
Մօտ թատրոնի պատշգամբին,
Ձէր կշտանում նայել նորա
Քնքոյշ, չքնաղ երեսին.
Այժմ նորան չեն ճանաչում,
Մոռացել են բնաւին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Ամենայն օր նորա դռնում
Կանգնած էին շատ կառքեր.

Միշտ հացկերոյթ, ընթրիք, գինի,
Նուագարան ու տաղեր.

Ամենայն ոք ցանկանում էր
Լինել նորան բարեկամ.

Ամենայն ժամ նորան բաց էր
Շուայլ քսակը մեծատան.

Այժմ զրկված ամեն բանից,
Զուռնի անգամ հացի գին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Ամենայն օր իւր մարմինը
Անուշահոտ ջրերով
Լուանում էր, մազը սանրում
Կրիայի սանրով.

Նա հագնում էր բեհեզ, կերպաս,
Դիպակ, թաւիշ թանգագին.

Նա չգիտէր ի՞նչ ասել է
Արծաթի կարօտութիւն.
Այժմ անլուայ, մազերն արձակ,
Զուռնի հագուստ թէև հին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Նորան շքեղ ննջարանում
Բնակվում էր Աստղիկը,
Նորա որդին փայփայում էր
Նորան ամբողջ գիշերը...
Ախտաբորբոք երիտասարդք
Իւրեանց անձը երջանիկ
Կը հաշուէին, թէ լինէին
Նորա ձեռքում խաղալիք...
Այժմ փողոցում քնում է նա
Խոնաւ պատերի տակին—

«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Ժամի դռնում նա կանգնած է,
Աչքերը կոր, վիզը ճուկ.
Նորա նախկին բարեկամքը
Զեն ասում նորան, «խղճով,
Ե՛կ դու մեր մօտ, մեք կ'ամոքենք
Քո վիճակի դառնութիւն.
Կը թուլացնենք ճակատագրիդ
Խիստ հարուածի սաստկութիւն»:
Նա տանում է տառապելով
Այս սոսկալի վշտերին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Միքայէլ Նալբանդեանց.

259.

Հրաւեր ազգասիրութեան.

Ցանկալի է ինձ, ազգասէր հերոսք,
Ձեր քաղցր անունին ուղերձել նուէր.
Ես ձեր հետ կամիմ խօսել երկու խօսք,
Ձեզ հաճոյ լինի իմ տկար հրաւեր:

Մեր աչքը ձգենք դէպի հայրենիք,
Նորա վիճակը մտածենք հանդարտ.
Ո՞ր տեղ է նորա փառք, երկիր բնիկ,
Ո՞ւր էր նա երբեմն և կամ ո՞ւր է արդ:

Ասեա թէ իբրև մի երկրորդ Ադամ,
Արտաքսած, ձգած փափկութեան դրախտից,

Նստած միայնակ տխուր ու տարտամ
Գանգատում է նա իւր ձախող բաղձից:

Եւ ո՞վ կը լինի նորան օգնական,
Նորա նորոգման միջնորդ մի աղքու.
Դուք, հայրենասէր հերոսք պատուական,
Ձեզ պարտ է լինել նորան ձեռնտու:

Իբրեւ հայրենեաց վեհանձն պաշտպան,
Հոգացէք Հայոց մի վիճակ պայծառ.
Երանի՛ է ձեզ, թէ դուք միաբան
Կանգնէք ազգութեան հաստատուն տաճար:

Նորա շինուածքի նիւթը հոգեղէն
Բարձէք, կրեցէք ձեր հոգու լծակով.
Կախեցէք այն տեղ կանթեղ ոսկեղէն,
Վառեցէք նորան գիտութեան լուսով:

Իբրեւ ջանասէր, ժրագլուխ եզներ,
Լծուած ազգային վաստակի գութան,
Փոխեցէք յառաջ ձեր մտքի քայլեր,
Գործելու անխոնջ Հայոց անդաստան:

Քաջ մշակեցէք այգին հայազգի,
Ձուր տալով նորան ձեր քրտինք ու սէր,
Որ զուարթ, դալար տունները Հայկի
Բողբոջին, ծաղկին, լինին պտղաբեր:

Ձանաղիւր եղէք հայկական անուն
Շինել աշխարհում սուրբ և պատուական,
Ձնջել ու մաքրել այն կեղտոտ անուն,
Այն տգեղ կնիք չար տգիտութեան...

Սփոփեցէք սիրով մեր մայր Հայաստան,
Սրբելով նորա արիւնոտ աչքեր,
Որ նստած մենակ, ողբում է անձայն,
Պարզած դէպի ձեզ գողգոջուն ձեռքեր:

Հաւաստի կացէք, ձեր փոյթ և վաստակ
Երկնքից կ'առնուն իւրեանց առատ վարձ.
Աստուած ձեզ կը տայ պարծանքի նոր թագ,
Որով կը խնդաք յաւէտ պարծ ի պարծ:

Հայոց հարազատ, մտերիմ որդիք
Կ'օրհնեն ձեր անուն միշտ լիաբերան.
Ձեր սուրբ, անմոռաց գործ ու երախտիք
Դրոշմելով սրտի տախտակի վերան:

Բայց և յատկապէս, ձեր մահից յետոյ,
Ձեր հողի վերայ կը մաշեն ծունկեր.
Ձեր միշտ պաշտելի նշխարքին յարգոյ
Ծխելով անոյշ, բանաւոր խունկեր:

Ամեն Հայ անցող ձեր շիրմի մօտից,
Իսկոյն յիշելով ձեր արդիւնք և երկ՝
Կը բացականչէ իւր սրտի խորքից.
«Ձեզ խաղաղութիւն, կենդանի ոսկերք»:

Արքայհամ Գ. Նազարեանց.

260.

Հ ա յ Ր ի կ ն Հ ա յ ո ց *).

Փալլեց Մասիս, ճակտից ամպերն հեռացան—
Մայր Սիօնի սգոյ արցունք ցամքեցան.

*) Հայոց Վեհափառ Հայրիկը, Տ. Տ. Մկրտիչ Առաջին, Կաթուղի-
կոսութեան թեկնածու է ընտրվում, Ս. Էջմիածնի համազգային ժողո-
վում, միաձայն, այն է՝ 72 ձայնով, 1892 թ. մայիսի 5-ին և Կաթուղի-
կոսութեան մէջ հաստատվում Ռուսիայի Կայսր Ալեքսանդր III-ից
1893 թ. յունիսի 3-ին: Վեհափառ Հայրիկի Ս. Օծման փառաւոր
հանդէսը կատարվում է նոյն թուի սեպտեմբերի 26-ին, Վարազայ Ս.
Խաչի տօնին:

Գ. Ա. Բ. Գրիգորեանց.

Միաբերան, եղբւրք, Աստուած մենք օրհնենք.
«Կեցցէ Հայրիկ, Հայոց Հայրիկ» մենք զոչենք:

Ահա սրաթե սաւառնում է սէգ Արծուին—
Դէպի Մասիս—Հայրենիք է իւր ուղին.
Եկէք, եղբւրք, լինինք մի սիրտ, մի Հոգի,
Գոչենք՝ «Կեցցէ Հայոց Հայրիկ պանծալի:

Վարդեր փռենք նուիրական ոտքին տակ
Եւ սրտեռանդն հնչեցնենք մեր նուագ—
«Երկար օրեր ապրի Հայրիկ մեզ համար,
Թո՛ղ մեծ անունն անմահ լինի դարեդար»:

Մոռնանք ցաւեր, և արցունքով խնդութեան
Ցօղենք սուրբ Աջն իւր հէգ հօտին պահապան,
Եւ հրճուանաց անուշ երգով բերկրալի
Գոչենք՝ «Կեցցէ Հայոց Հայրիկ պանծալի:

Յ. Յովհաննիսեան.

261.

Հ ա յ Ր Է Կ . . .

Փոթորիկն անցաւ. տօնում եմ ահա
Պայծառ արևի ծագումն հրաշափառ.
Աւետեաց հրեշտակն իջաւ մեզ վերայ,
Եւ նոր առաւօտ բաց է մեզ համար:

Երկար տանջուեցանք. որպէս սև զիշեր
Խաւար էր պատել մեր բիրտ սրտերին.
Վայելենք նոր օր—ահա ջինջ եթեր
Լցուած է բուրմամբ մի եղեմային:

Վարդերն ինձ այսօր ժպտում են անոյշ,
Սոխակին դայլալ հնչում է քաղցրիկ...

Ա՛խ, այս ինչ յոյզ է, որ այսպէս քնքոյշ
Շոյում է հոգիս,—յոյզ չնաշխարհիկ:

Մարած է սև կիրք, լռել է նախանձ.
Եղբւրք—ձայնում եմ ես իմ թշնամուն...
Ո՛հ, թէ երկնային այս զգացումն անանց
Տէր մընար յաւէտ ամենիս հոգուն:

Մի անուն միայն, մի քաղցրիկ անուն
Թո՛ղ մեզ բոլորիս շաղկապէ սիրով—
Հայրի՛կ... նսգելի և թովիչ հնչիւն,
Համակ անհուն սէր և համակ գորով:

Յ. Յովհաննիսեան.

262.

Ռ ա փ ա յ Է Լ Պ ա տ Կ ա ն Ե ա ն ի յ ի շ ա տ ա Կ ի ն *).

«Քաղցրախօս Պովէտ» կապուեց յաւիտեան
«Քո անոյշ լեզուն», էլ չես խօսելու.
«Ներդաշնակ քնարդ» սփոփիչ հայութեան
Լռեց, աւաղ մեզ, էլ չենք լսելու:

*) Ռափայէլ Պատկանեանը, կամ, որ նոյն է, Գամառ - Քաթի-
պան, վախճանուել է 1892 թ. օգոստոսի 22-ին, 62 տարեկան հաս-
կում և թաղուել, նոյն ամսի 24-ին, այնտեղ, ուր Յարութիւն վարդա-
պետ Ալամդարեանի և Միքայէլ Նալբանդեանի աճիւններն են հանգս-
տանում, այն է՝ Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքի գաւթում:

Ռափայէլ Պատկանեանի մահով հայ ազգը մի մեծ և անփոխարի-
նելի կորուստ ունեցաւ: Պատկանեանի հոգու, սրտի, զգացմունքի
քնարը մի կատարեալ շկուա էր թէ տղայի և թէ աղջկայ համար.
Թէ մեծի և թէ փոքրի համար. թէ հասարակ ժողովրդի և թէ ինտե-
լիգէնտ դասակարգի համար: Ահա ինչու զգալի և խիստ զգալի էր
Պատկանեանի մահը՝ հայ ժողովրդի, հայ հասարակութեան համար...

Ս ո խ ա Կ .

Ի՞նչ վսեմ մտքեր, ազնիւ ձգտումներ
Արծարծում էիր երգերով սահուն.
Նոցա լսողը յափշտակվում էր,
Թէ որ իւր կրծքում ունէր սիրտ զգայուն:

Ուսանողական զուարթ կաճառում,
Վարժատներում, ուրախ խրախճանում
Եւ Մէլպոմենի շքեղ տաճարում
Միշտ քո երգերով էինք զուարճանում:

Սէր էիր երգում—սիրով բորբոքում
Թէ ծերի և թէ երիտասարդին.
Ամենքի սիրտը վշտով մորմոքում,
Երբ ողբդ նուիրում ազգի աղէտին:

Բայց—ամօթ չ'իւնի հարցնել—ի՞նչպէս էր ապրում այդ հանրա-
ծանօթ մարդը, այդ ազգի բանաստեղծը՝ Գամառ-Քաթիպան:

—Աղքատ...

—Ի՞նչպէս, ի՞նչ դրութեան մէջ մեռաւ:

—Աղքատ, չափ աղքատ...

—Ի՞նչ կտակեց իւր սիրական հայ-ազգին:

—Իրան ս. Էջմիածնում թաղել և իւր ինն որբ և անօգնական
մնացած զաւակներին սղահել-պահպանել:

Ահա բոլորը...

Եւ այսպիսի թշուառութեամբ են ապրում մեր ազգի գործիչները
և թշուառութեամբ մոռնում գերեզման...

Հանգուցեալ Գամառ-Քաթիպայի բոլոր թէ ոտանաւոր և թէ ար-
ձակ գրուածքները, երկու ստուար և չքեղ հատորներով «ՌԱՓԱՅԷԼ
ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ԸՆԹԻՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ» խորագրով, հրատարա-
կել է, Ս. Պետրբուրգում, գիտնական հայագէտ պ. Գր. Խալաթեանի
խմբագրութեամբ, մեծ. տիկին Վառվառէ Քանանեանը, հեղինակի
երկու լուսանկար 1852 և 1890 թ.թ. պատկերներով: Յարգելի տի-
կինը այդ աշխատութիւնները հրատարակել է յօդուտ հեղինակի ըն-
տանեաց և այդ երկու հատորի գինն է 4 ըուբլի, որ, համեմատաբար,
թէ արժան է և թէ մի սուրբ գործի սկզբնապատճառ: Հրաւիրում
ենք հայ հասարակութեանը՝ ձեռք բերել այդ ընտիր գրուածքները և
կարդալ ու միշտ կարդալ:

Գ. Ա. Բ. Գրիգորեանց.

Սիրելի եղար դու հայոց ազգին.
Թէև չըտուեց քեզ դափնէ պսակ,
Բայց քո յիշատակ անմահ, թանգագին
Աւանդ կըթողնէ զաւակէ զաւակ...

Գ. Բարխուդարեանց.

263.

Ն ո Ր Տ ա Ր ու Ն .

Քաղցրանուէր ողջոյն տալով
Քո գալստեան, Նոր-Տարի,
Կըցանկայի Հոգով, սրտով,
Որ դու մեր քաղցր աշխարհի
Դարմանէիր և վէրք ու ցաւ,
Եւ նեղութիւնք և տանջանք,
Եւ զերդ սոխակ բարեհամբաւ,
Աւետէիր մեզ նոր կեանք:

*

Կըցանկայի և խեղճ, անտէր
Լքեալներին կեանք խաղաղ,
Որ երկինքը էլ չըլսէր
Երկրի անվերջ «ախն, աւաղ»...
Կըցանկայի Հոգով, սրտով,
Որ արեւին լուսավառ
Նայէր ազատ և անխռով
Ամենայն ոք—ողջ աշխարհ...

Ալեքսանդր Մատուրեան.

264.

Օ ր օ ր օ ր Ի Ե ր ֊ ք .

Քո՛ւն եղիր, պալաս, աչքդ խո՛ւփ արա,
Նախշուն աչերուդ քուն թո՛ղ գայ վրայ.
Օր օր օր, պալաս, օր օր օր, նանի,
Իմ անուշ պալիս քունը կը տանի:

Օսկէ խաչ վզիդ քեզի պահապան,
Նարօտ կապել է ծարէն տէր պապան.
Օր օր օր, պալաս, օր օր օր, նանի,
Իմ (Աշխէն) պալիս քունը կը տանի:

Մովի հիլլուններ կապել եմ ես ալ,
Նազար չես առնուլ, քո՛ւն եղիր, մի՛ լալ.
Օր օր օր, պալաս, օր օր օր, նանի,
Իմ (Սուրէն) պալիս քունը կը տանի:

Աս քանի՞ մօրըդ անքուն աչքովը
Անցել են օրեր օրոցքիդ քովը.
Օր օր օր օր, պալաս, օր օր օր, նանի,
Իմ (Արսէն) պալիս քունը կը տանի:

Օրոցքդ օրեմ, օրով բօյ քաշես,
Մըղկըտան ձայնով սիրտս չի մաշես.
Օր օր օր օր, պալաս, օր օր օր, նանի,
Իմ (Հեղինէիս) քունը կը տանի:

Դուն ալ քո՛ւն եղիր, ինձի ալ քո՛ւն տուր,
Սուրբ Աստուածամայր, մանուկիս քո՛ւն տուր,
Օր օր օր, պալաս, օր օր օր, նանի,
Իմ (Սաթիսիկիս) քունը կը տանի:

Ռ. Պատկանեան.

265.

Ի մ Մ ան Ի կ Ի օ ր օ ր ք .

I.

Քո՛ւն եղիր, Մանիկ,
Քնի՛ր, իմ բալաս,
Աչքդ խո՛ւփ արա,
Հերիք, քանի՞ լաս:
Գուցէ քաղցած ես,
Ուզում ես ուտել.
Գուցէ ցաւ ունես,
Ասա՛, ի՞նչ անել:
Ահա՛ քեզ կաթը,
Կեր ու կշտացիր.
Ահա՛ տաք շորեր,
Դէ, հանգստացիր:
Բայց չէ, լալիս ես,
Ձեւ ուզում լռել,
Քո անքուն մօրդ
Խղճալ ու քնել.
Դէ, եկ իմ գիրկը,
Քեզ լայ-լայ կանչեմ,
Լայ-լայով գուցէ
Աչքիդ քուն բերեմ:

II.

Լայ-լայ սիրուն, իմ Մանիկ,
Լայ-լայ նախշուն, իմ մանկիկ,
Մատաղ գնամ աչերիդ,
Մատաղ կամար ունքերիդ:

Պաշիկ կըտամ ճակատիդ,
 Պաշիկ փափիկի թաթիկիդ,
 Գիշերը ցերեկ ես կանեմ.
 Լայ-լայ, լայ-լայ, իմ Մանիկ,
 Լայ-լայ, լայ-լայ, իմ մանկիկ:

III.

Ահա քնեց Մանիկս,
 Նախշուն աչերը խոփ արաւ.
 Դէ, այժմ արի, հրեշտակ,
 Որ պահպանես թևիդ տակ:

Կ. Կ. Մելիք-Շահնազարեանց.

266.

Ի Մ Պ Ս Ա Կ Ը

Գրիգոր Զանգեանի յիշատակին*).

«Աղնիւ ընկեր» երգի եղանակով.

Քո թարմ շիրմին ես մի պսակ,
 Սրտիս վշտի ծաղկունքից,
 Ահա, հիւսած, իմ սէր-հոգեակ,
 Նուիրում եմ թախծալից:

*) Գրիգոր Աւետեան Զանգեանը մեր կրակոտ երիտասարդներից միին էր, որ ծնունդ է թիֆլիսում 1851 թ. և աւարտել Մոսկուայի համալսարանի իրաւաբանական բաժանմունքը 1874 թ., նուիրելով իրան մասամբ փաստաբանական և գլխաւորապէս գրական գործունէութեան, որի մէջ մեծ հռչակ ստացաւ՝ որպէս գրող, որպէս թշուառների պաշտպան և որպէս ազնիւ մարդ: Զանգեանի սիրտը թրթռում էր ամեն մի տեսակ գեղեցիկ և՛ օգտաւէտ և՛ մարդասէր գործ կատարելու համար: Նա, հեռու հիւսիսից, Մոսկուայից, ուր նորա մշտական բեղի-

Սա պսակ է բարոյական,
 Միշտ անթառամ, անթառամ,
 Եւ յիշատակ քեզ, իմ Զանշեան,
 Շատ տարիներ, յարածամ:

Ա. Ը, Գրիգոր, իմ նուէրը՝
 Սոյն մի քանի տողերով.
 Թող քո անուն, յիշատակը
 Միշտ օրհնելի Աստուծով:

Բ. Ա. Գ.

գէնցիան էր, լսում էր, թէ ինչպէս թիւրքահայ հարիւրաւոր որբ մանուկներ, անտուն, անտէր մնացած լինելով, «հաց, հաց» են ճչում՝ տուող չկայ... ջուր և ջուր» են մրմնջում՝ սրի սպառնալք են ստանում... պառկելու տեղ են որոնում՝ պատերի տակը և փողոցներն են ցոյց տալիս...

Սոյն աւելի քան տխուր պատկերը տեսնելով գորովազուրթ Զանգեանը, էլ չկարողացաւ համբերել: Նա այդ որբերի օգտին հրատարակեց մի ընտիր, պատկերազարդ ժողովածու «Братская помощь» անունով և մեծ օգնութիւն հասցրեց նոյն թշուառներին, նոցա համար 10—12 որբանոցներ բանալով: Այդ բաւական չհամարելով, նա երկրորդ տպագրութեամբ հրատարակեց այդ սպառնալից գիրքը, դարձեալ նոյն նպատակով: Բայց երբ մեր բարի Զանգեանը ցանկանում էր աւելի բարձր դրութեան մէջ դնել անտէր և անօգնական որբերի վիճակը, այլ աղբիւրներ որոնելով, յանկարծ լսում է, որ կրակոտ Զանգեանը, որբերի բարերար և հովանաւորող Զանգեանը այլ ևս չկայ... Եւ ինչ. նա վախճանվում է յուլիսի 17-ին 1900 թ., թողնելով նորից թշուառացած որբերին դարձեալ «հաց», դարձեալ «ջուր», դարձեալ «ապաստանարան» գոչելով և հեկեկալով... Դժբա կ'գայ արդեօք մի երկրորդ Զանգեան՝ հայ որբերին և՛ խնամելու, և նոցա սպառնալից ոյժերին և՛ կեանք և՛ կենդանութիւն ներշնչելու. տեսնե՞նք...

Քո մեծ «Братская помощь» փայլուն գործով միշտ կենդանի կ'մնաս մեր մէջ, հանգուցեալ եղբայր Զանգեան. Sit tibi terra levis!

Գ. Ա. Գ. Գրիգորեանց.

267.

Հայ բեռնակրի Ձատիկը.

Քսան տարի է, որ իմ քաղցր ամուսին
Անուշ, մանրիկ զաւակներուս հետ մէկ տեղ
Քաղցած, ծարաւ, թողեր մեր տուն, մեր երկիր,
Պանդրխտութեան մէջ կը տանջուիմ ես այստեղ:

Իմ հաց՝ մոխիր, ջուրըս լեղի է փոխուել,
Արտասուելէս աչքերուս լոյսն է քաղուել.
Զօր ու գիշեր ծանրը բեռներ կըրելէս
Մէջքս ծըռեր, իսպառ կըմախք եմ դարձել:

Բայց դեռ նոյնն եմ, նոյն բեռնակիր եմ աղքատ,
Մերկ ու քաղցած զիմ կեանք կ'ողբամ յուսահատ.
Իմ բաղդակից շատ մի անսիրտ հայ մարդիկ
Կու գան կ'ասեն. «Շնորհաւոր քո զատիկ»:

Ո՛չ. մենք մեր զատիկն այն օր կը տօնենք,
Երբ մեր զաւակաց, մեր ամուսնուն հետ մէկ տեղ
Մեր պապերու օճախներուն մէջ ժողված՝
Մեր քրտինքով վաստկած կուտեմք հալալ հաց:

Այո՛. մենք մեր զատիկն այն օր կը տօնենք,
Երբ կը շատնան մեր մէջ բարի հարուստներ,
Որ մեր ձեռք ոյժ՝ և մեր զաւակաց գիր, ուսում
Տալու համար չը խընայեն արծաթներ:

Այո՛. մենք մեր զատիկն այն օր կը տօնենք,
Երբ կը շատնան մեր քաջ արթուն հովիւներ,
Որ Հայու սուրբ եկեղեցւոյն չեն թողներ,
Որ ձեռք զարնեն մեզ այլակրօն մարդորսներ:

Այո՛. այն օր «Շնորհաւոր մեր զատիկ»
Կարենք ասել մենք մէկ մէկու խընդագին.
Այո՛. այն օր հայրը որդուն, որդին մօր,
Եղբայր եղբօր զատիկ կարգայ շնորհաւոր:

Ս է Թ.

268.

Պանդխտի երգը.

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,
Դու, հայրենիք, քեզ յիշելով կ'արտասուեմ.
Զըկայ ծնող, չկան որդիք, քոյր, եղբայր,
Զի՛ք ամուսին, որով ցաւերս մեղմանայր:

Օտար երկին, արեւ, աստղեր և լուսին
Թէև պայծառ՝ ինձի խաւար կը թուին:
Բնակարանս՝ տխուր պանդուկ օտարաց,
Օդս օտար, ջուրս օտար, օտար հաց:

Ո՛ւր է հայրս, ո՛ւր է մայրս քաղցրանուն,
Ո՛ւր զաւակունքս, ո՛ւր սիրելիքս սիրասուն:
Սակայն ունիմ քովս Յիսուս, փրկէ զիս.
Նա օտար չէ, Նա իմս է, սիրէ զիս:

269.

Երկրի Մշակներ.

Օ՛, դառն հոգսերի խղճով զաւակներ,
Որքան համբերող, քան է ձեր հոգին,
Տանջվում էք անվերջ—օրեր, տարիներ,
Կարծես տանջանքն է միայն ձեր բաժին...

Մանուկ օրերից ձեր մէջ ապրելով,
Վկայ եմ եղել ձեր շատ ցաւերին.

Տեսել եմ, ինչպէս տանջանքի գնով
Դուք հաց էք տալիս հայրենի երկրին:

Տեսել եմ, ինչպէս յուսալից, զուարթ
Դուք մշակում էք անմշակ դաշտեր.

Ինչպէս տանջանքում անլաց, անվհատ
Դուք երգ էք երգում—վաստակի երգեր:

Տեսել եմ, ինչպէս ամառուայ շոքին,
Երբ արևն, ասես, կըրակ է թափում,
Քրտնակոխ եղած, մանգաղը ձեռքին,
Դուք բան էք անում ոսկեշող արտում:

Տեսել եմ, ինչպէս գունաթափ աշնան
Հայրենի երկրի կուրծքը պատռելով,
Այնտեղ թաղում էք, գանձերի նման,
Ոսկի՜ հատիկներ. ոսկի՜ յոյսերով:

Տեսել եմ, զարնան սիրուն օրերին
Պայծառ արևը դեռ նոր ծագելիս,
Կանաչ, ալէծով արտերի մօտին
Ձեզ ծունկ խոնարհած ջերմ աղօթելիս...

Տեսել եմ, ինչպէս և ցուրտ, տաղտկալի
Ձմրան գիշերներ նստած խըրճիթում,
Յոգնած ձեռքներիդ դադար չէք տալի—
Խօփն էք նորոգում, մանգաղը սըրում...

Եւ այդպէս ազնիւ գործին անձնուէր՝
Ապրում, տանջվում էք անբաւ հոգսերում.
Եւ ձեր տանջանքում, հերոս-մշակներ,
Արդար վաստակն է ձեզ ոգևորում...

Օ՛, հայրենիքիս քրտնաջան որդիք,
Որքան համբերող, քան է ձեր հոգին.

Ձեզնով է միայն կանգուն հայրենիք—
Համբոյր ու օրհնանք ձեր սուրբ վաստակին:

Ալեքսանդր Մատուրեան.

270.

Ա. շ ու ղ ի խ ա ղ ե ռ ի ց.

(Ժողովրդական մոտիվ).

Օխտը սարով հեռու քեզնից,
Քու շուաքով եմ ապրում.

Օխտը տարով բաժան քեզնից,
Քու կարօտով եմ էրվում:

Դարդիս դարման, եարիս մահլամ
Ջան ու ջիգեար եարս ուր ա:

Գիշեր-ցերեկ զրկուած քնից,
Ծով է կտրում աչքերս,
Բալքի դարիւր-ճամբորդիցը մ՝
Խաբար առնեմ եարիցս:

Դարդիս դարման, եարիս մահլամ
Թագն ու պսակ եարս ուր ա:

Օխտը տարի ծում ու պասով
Օր ու արև սևցուցի,
Բալքի Մուշու-Սուլթան զօրքով
Իմ մուրազս տար ինձի:

Դարդիս դարման, եարիս մահլամ
Թե ու թիկունք եարս ուր ա:

Ա. Իսահակեան:

271.

Օրրերգ առ Հրանտիկ.

Օրոր, օրոր, օրորօր...

Իմ աննրման, իմ աղուհոր

Հըրանտիկ.

Դու իմ յուսոց, բերկրութեանց

Պայծառ արևն ես և գանձ

Մէկ հատիկ:

Օրոր, օրոր, օրորօր...

Իմ աննրման, իմ աղուհոր

Հըրանտիկ.

Ո՛վ կենսաբույսդ իմ աղբիւր,

Որ ցնծութեամբք լընուս բիւր

Ձ'իմ սըրտիկ:

Օրոր, օրոր, օրորօր...

Իմ աննրման, իմ աղուհոր

Հըրանտիկ.

Հրեշտակիկդ իմ գեղանի,

Հոգիս միայն քե՛ւ լինի

Հըպարտիկ:

Օրոր, օրոր, օրորօր...

Իմ աննրման, իմ աղուհոր

Հըրանտիկ.

Ունիս լուսնի կերպարան,

Շուշան-ճակատ, նուռ-բերան,

Վարդ-այտիկ:

Օրոր, օրոր, օրորօր...

Իմ աննրման, իմ աղուհոր

Հըրանտիկ.

Որքան կակուղ, որքան գէր

Մարմին ունիս և ձեռքեր

Ու տոտիկ:

Օրոր, օրոր, օրորօր...

Իմ աննրման, իմ աղուհոր

Հըրանտիկ.

Կարծեմ տեսնել ես արփին

Բիբերուդ մէջ այն նըրբին,

Պը՛ղտըտիկ:

Օրոր, օրոր, օրորօր...

Իմ աննրման, իմ աղուհոր

Հըրանտիկ.

Աղաւնեակ մ'ես դու, ի՛նչ ես,

Որ օրրանիդ մէջ նընջես

Հանդարտիկ:

Օրոր, օրոր, օրորօր...

Իմ աննրման, իմ աղուհոր

Հըրանտիկ.

Թռչնի՛կ մ'ես դու, ձայնարկու,

Ում կը պակսին թեք երկու

Խատուտիկ:

Օրոր, օրոր, օրորօր...

Իմ աննրման, իմ աղուհոր

Հըրանտիկ.

Եթէ ինձ գն՛հ նըւիրեն,

Ո՛չ, ես չեմ տար փոխարէն

Քո մատիկ:

Օրոր, օրոր, օրորօր...

Իմ աննրման, իմ աղուհոր

Հըրանտիկ.

Քընէ, մեծցիւր անխափան,
Թող քեզ լինի պահապան
Սուրբ Զատիկ:

Օրօր, օրօր, օրօրօր...

Իմ աննըման, իմ աղուհի
Հըրանտիկ.

Ո՛վ իմ կենաց վառ աստղիկ,
Ո՛վ իմ թռչնիկ, իմ ծաղիկ
Խորոտիկ:

Աղեր. Գ. Փանոսեան:

272.

Պ ա ն դ խ տ ի ե ռ գ ը.

Օտար երկինք, օտար արև,
Որ շողում էք գլխիս վերև,
Ինչքան շողաք... դուք ինձ համար
Միշտ կը մնաք գիշեր խաւար...

Սիրտըս տոչոր՝ ձեզ նայելով,
Անտէր, պանդուխտ կեանքս լալով,
Օր չի անցնում—հայրենիքիս
Վառ կարօտը չ'այրի հոգիս:

Մատաղ լինեմ նորա պայծառ
Էն երկնքին, ուր սիրավառ
Ոսկի՛ արևն ինձ վերևից
Փայփայել է մանուկ օրից:

Հայրենիքիս խաղաղ ծոցում,
Ինչպէս փափուկ օրօրոցում,
Ես մեծացել, կեանք եմ առել,
Նրա շնորհով մարդ եմ դառել:

Ո՞նց մոռանամ ես էն օրհնած
Սարն ու ձորը ծաղկով լցուած.
Էն կենսատու ջուրն ու հողը,
Գարունքի էն հովն ու ցօղը:

Ո՞նց մոռանամ ես էն փարթամ
Դաշտն ու արտը, ուր շատ անգամ,
Ասես, թիթեռ, թըրթըռացել,
Արար-աշխարհ եմ մոռացել...

Ուր լսել եմ սրտիս ազիզ
Գեղջուկ-մշակ եղբայրներիս
Դառն լացը, կուշտ ծիծաղը,
Ուրախ-ուրախ երգ ու տաղը...

Օտար երկինք, օտար արև,
Որ շողում էք գլխիս վերև,
Ինչքան շողաք... դուք ինձ համար
Միշտ կը մնաք գիշեր խաւար...

Ալեքսանդր Ծատուրեան.

273.

Մ շ ու թ ո չ ու ն օ տ ա ը ե ռ կ ը ու մ.

Օր մի տեսաւ զուան թռչուն,
Բուլբուլ կուլար պուտ պուտ արուն:
«Յորի՞, ասաց, բուլբուլ սիրուն,
Յորի՞ կուլաս պուտ պուտ արուն:
Յորի՞, չուր երբ դու երերուն,
Տխրիկ կուլաս վըր չոր փետուն.
Աշխարհ ամեն վառ քո սիրուն,
Բո ճովուան՝ քաղցր ձէնուն:
Ապա յօրի՞ դու զօրն ի բուն
Էս լուս ու մութ առաւօտուն,

էս շատ անուշ՝ զով հովերուն,
Ախ ու վախով կուլաս արուն,
Անգին գոհար լուս աստղերուն,
Առու աղբուր ու գետերուն»:
— Ի՞նչ կը խօսիս, զըռան թռչուն,
Խենթ ու խելառ դու ցնորուն.
Զմեռ նստեց մեր սարերուն,
Խամրեց գուններ ծաղկներուն,
Փոխեց ձէներ մեր ձագերուն:

274.

Ղ ա ը ի բ ի ե ը գ ը.
(Աշուղի երգերից).

Օխտը տարով, օխտը սարով,
Այ սիրական իմ աշխարհ,
Հեռացել եմ քեզնից լալով,
Ղարիբ ընկել սարէ-սար:

Կեսնք եմ մաշում, սև օր քաշում,
Ընկած խալխի դըռներին.
Քու սէրն է ինձ էրում, մաշում,
Հոգիս կը տամ էդ սէրին...

Կ'ուզեմ հողիդ կարօտն առնեմ,
Հող ու ջրիդ ես ղուրբան.
Բայց հնց անեմ՝ ջամբէդ բըռնեմ,
Բախտն է կապել իմ ջամբան:

Վա՛յ զարիբին—օրը՝ օր չի,
Վայով կեանքն է անցընում.
Դուրսը մեռնի, չօլում կորչի—
Ո՞վ է խեղճին հարցընում...

Ալեքսանդր Մատուրեան.

275.

Խ ա չ, օ գ ն ե ա ի ն ձ*).

Նուէր ծնողասէր մանկանց.

Օրորանիս մօտը նստած՝
Մայրս անուշ երգելով
Ինձ շատ անգամ քուն էր արած՝
Խաչանշան կընքելով:

Աջն ու խաչը քեզ պահապան,
Անթիւ անգամ կրկնել էր,
Խաչն իւր սիրոյն միշտ ասպստան
Ամեն ժամում կանչել էր:

Երբ որ թոթով լեզուս բացաւ՝
Խաչի դասըն աւանդեց.
«Խա՛չ, օգնե՛ա ինձ» կրկնիւր, ասաց,
Գըթոտ սիրով պատուիրեց:

Քանի տարի էս սիրուն դասն
Ես շարունակ կրկնեցի,
Մօրըս հետը ժամ գընացի,
Խաչելութիւն սիրեցի:

Ուխտատեղի, թէ մատուռներ,
Ուր որ ես ուխտ գնացի,
Համբուրեցի ես խաչքարեր՝
«Խա՛չ, օգնե՛ա ինձ» կրկնեցի:

*) Սոյն «Գ. Ասողիկ» ծածկանունան տակ ստորագրութիւնը, ինչպէս մեր յարգելի բժիշկ պ. Արամեանցն ասում է, պատկանում է Գարեգին (այժմ Մեքիսեդեկ արքեպիսկոպոս) Մուրադեանցի գեղ գրչին և նորա բանաստեղծական հանձարի գոհարներէից մինն է, որ գրել է Տփլիսի Ներսիսեան Գալանդուգում դասատու եղած ժամանակ, 1863 թուին:

Գ. Ա. Ք. Գրիգորեանց.

Սոխակ.

Երբ որ փոքր ինչ ես մեծացայ,
Մայրըս տուաւ քերական.
«Խաչ, օգնեա՛ ինձ» կրկնէր, ասաց,
Խաչն է ուսման օգնական:

Խաչն օգնական ինձ կանչելով
Այբ ու բէնէն ըսկսայ,
Ամէն դասում միշտ կրկնելով,
Շուտով կարդալ սովորեցայ:

Քերականն աւարտեցի,
Յետոյ մըտայ վարժարան.
Եօթը տարի ես կարգացի,
Ուսմունք առի զանազան:

Քանի քանի շարագրածներ,
Որ ես ինձէն գրեցի,
Դեռ չըսկըսած՝ ճակատներն
«Խաչ, օգնեա՛ ինձ» դրոշմեցի:

Աստուածաշունչ, աւետարան
Որչափ սիրով կարդացի,
Այնքան խաչին սիրոյ նըշան
Սըրտիս մէջը ըզգացի:

Ըզգացի՛ որ խաչի ճառըն
Մեծ ուսմունք է մարդկութեան,
Մեր փրկութեան գրօշըն է նա,
Ճշմարտութեան սուրբ նշան:

Ըզգացի՛ որ նախատանքով
Գողգոթայում տընկուեցաւ,
Բայց և յետոյ անհուն փառքով
Գըմբէթներում փայլեցաւ:

Ըզգացի՛ որ նա է բաժին
Ճշմարտութիւն գոչողին,
Նա է կենաց անձուկ ուղին
Ճշմարտութիւն սիրողին:

Արդարութիւն, ճշմարտութիւն,
Նըրան ծընունդ երկուորեակ,
Խաչըն է նըրանց ոյժ զօրութիւն,
Աճելութեան մայր դայեակ:

Ըզգացի՛ որ երկունք խաչին
Ծանր է քան ցաւ ծնող մարց,
Բայց և ծնունդք արի, ուժգին
Եւ ոչ որպէս հէգ կանանց:

Ըզգացի՛ որ խաչեալն Աստուած
Սիրոյ համար խաչ շալկեց,
Մարդկանց սիրով խաչը գըրկած՝
Խաչ վեր առնուլ քարոզեց:

Ըզգացի՛ որ խաչ կայ պատրաստ
Ամէն մարդու առաջին,
Ով կը ցանկայ լինիլ ըզգաստ
Գընալ զհետ մեր Փրկչին:

Ըզգացի՛ որ ես էլ ունիմ
Իմ յատուկ խաչն աշխարհքում,
Որ անտրտունջ պիտի տանիմ
Սիրով ամէն դիպուածքում:

Խաչ կայ մարդուն իր կրքերից,
Խաչ ամէն տեղ, ամէն ժամ,
Խաչ կայ անքուն ոսոխներից
Դաւ, հալածանք յարաժամ:

Խաչ կայ կենաց աղէտներից
 Խաչ բընական դիւրատար,
 Խաչ կայ մատնիչ յուգաններից
 Խաչ դժուարին, ծանրատար:

Խաչ կայ անմիտ տգէտներից
 Իմաստասէր հանճարին.
 Խաչ կայ աշխարհ պաշտողներից
 Աշխարհի հետ մրցողին:

Խաչ կայ խաւար յամառներից
 Լոյս որոնող մտքերին.
 Խաչ—բարբարոս իշխողներից
 Գերութեան լուծ առողին:

Խաչ կայ անշարժ թույլ վատերից
 Յառաջադէմ ձրգտողին,
 Խաչ կայ մոլար կարծիքներից
 Չշմարտասէր դիւցազին:

Խաչ կայ նենգժոտ խարդախներից
 Պարզ և ուղիղ սրտերին,
 Խաչ կայ ըստրուկ ոգիներից
 Պարտք իրաւունք խնդրողին:

Ըզգացի՜ որ էսքան խաչերն
 Էն խաչի մօտ ոչինչ են,
 Որ մարգասէր գըլթոտ Տէրըն
 Բարձաւ իւր ուսն հեզօրէն:

Նա է սիրոյ անհուն նշան
 Խաչեալն սէր գըլխովին,
 Սփոփանաց մեծ ապաստան
 Սիրով իւր խաչ բարձողին:

Ըզգացի՜ որ Փրկչի խաչն էր,
 Որ օգնական ինձ կոչեց,
 Երբ որ մայրս հեզ, որդեսէր
 «Խաչ, օգնե՛ա՛ ինձ» դաս տուեց:

Քանի՜ քանի՜ նեղութիւններ,
 Որ իմ հանդէպ դուրս եկան,
 Միտըս բերի մօրըս պատուէր,
 Կոչեցի խաչն օգնական:

Քանի՜ քանի՜ հեշտութիւններ,
 Որ ես ինձէն գրկեցի,
 Թափեցի յորդ արտասունքներ,
 «Խաչ, օգնե՛ա՛ ինձ» կրկնեցի:

Վիշտ ու վտանգ փարատեցան,
 Ըզգացի մեծ սփոփանք,
 Բուք, փոթորիկ կուտակեցան,
 Անցի մէջէն անվտանգ:

Օրհնուի՜ քո գերեզմանը,
 Որդեխնամ մայր գլթոտ,
 Որ դու խաչի փրկարար դասն
 Ուսուցիր ինձ համառօտ:

Թէ որ մանուկ, թարմ հասակէս
 Չազդէիր ինձ խաչին սէր,
 Ի՞նչպէս պիտի լինէի ես
 Մըրըրկաց մէջ անվեհեր:

Թէ որ խաչի անյաղթ ոյժը
 Ինձ յարաժամ չը սփոփէր,
 Ի՞նչպէս պիտի տանէի ես
 Սուտ, անիրաւ զրկանքներ:

Մայր իմ, դասըդ չեմ մոռանալ,
Քանի որ ես կենդան եմ,
Նեղութեանց մէջ չեմ թուլանալ,
Խաչն ինձ պարծանք կ'անուանեմ:

Ուրախութեամբ ես կը տանեմ
Ամէն զրկանք, ամէն խաչ,
Քանի սիրով ես կը տեսնեմ
Փրկիչն ի խաչ բարձրացած:

Գ. Ասողիկ.



„ՍՈՒԱԿԻ“ ՑԱՆԿԸ

	Երես.
Աստուած, պահիր Կայսրին:—Գ. Ա. Ք. Գրիգորեանց	9
Աշխարհէ աշխարհ:—Ս. Վ. Ամատունի	11
Աւարայրի դաշտը ներկեց:—Աշըգ-Ջիւանի	14
Աղօթարանը բացուեցաւ:—Գամառ-Քաթիպա	15
Անհոգ ես, չեմ գիտեր:—Աշըգ-Ջիւանի	»
Ահա ծագեց կարմիր արեւ:—Բաքի	16
Արի, իմ սոխակ:—Գամառ-Քաթիպա	17
Արի ինձ անգամ կալ:—Սայեաթ-Նովա	18
Ազնիւ ընկեր, մեռանումեմ:—Ս. Շահազիզեան	19
Աստուած իմ, ի քեզ յուսացայց:—Քաջիկեան	20
Այն ինչ գործիչ է:—Սիրունի	21
Ասի աշուղ, ան չունգուրդ:—Յ. Յովհաննիսեան	23
Ամեն անգամ, երբ լսում եմ:—Ա. Մատուրեան	24
Ամեն անգամ, երբ թերթում եմ:—Յ. Յովհաննիսեան	25
Այսօր համայն հայութիւնը:—Մ. Տալեանց	26
Ալեւանջ հոգեւոյ միակ միւթար:—Ս. Փիլոսեան	27
Արևոր լեռան սպիտակ գլխին:—Լ. Մանուէլեան	28
Արեւ դեռ չ'եղած:—Ա. Աղ.	30
Այն անցեալ գիշերն:—Ա. Մարտիրոսեան (Ջարիկեար)	33
Ահա սուրհանդակի սալակը:	36
Այ մարդ, այսօր շատ քնեցար:—Ռ. Պատկանեան	37
Այն ինչ ազգ է:—Ք. Պատկանեան	38
Ահա եկաւ մեր դարուն:—Ա. Գրիգորեանց	39
Արկածք Հայոց:—Է. Մելիքեան	40
Ափսոս քեզ:—Ստեփան վարդապետ	41
Ակնապիշ, անձայն:—Ռ. Պատկանեան	42
Ազնիւ ընկեր, ինչո՞ւ այդպէս:—Ա. Գրիգորեանց	43
Ա'րեւ արեւ, դուրս ելիր:—Ս. Սափարեանց	44
Այսօր ուրախ, պարզ սրտով:—Ա. Գրիգորեանց	45
Ակունքին մեծ կարասին:—Ե. Վ. Չաքրճեան	46

Այն ո՞վ է կանգնած:—Ռ. Պատկանեան	47
Արդեօք երբ լինի:—Կ. Յովհաննանեանց	48
Աստուած բարի տայ:—Մ. Փ.	50
Առաւօտ կանուխ:—Գամառ-Քաթիպա	51
Ահա մեր տան առաջին:—Կ. Տէր-Դաւթեանց	53
Արի, Աստուած, հարցն մերոց:—Ա. Կաթողիկոս	54
Ա՛յ սե ամպեր:—Ա. Ծատուրեան	55
Ա՛յս, բաց արէք:—Նոյնը	56
Ահա մի չափիր:—Ա. Փիլիպոսեանց	57
Արեւ ծագեց:—Կ. Մելիք-Շահնազարեանց	60
Աշխարհիս վերայ մէկը կար միայն:—Ղ. Աղայեանց	61
Ա՛յս, թէ երկինք:—Ա. Ծատուրեան	62
Արագ, տակըդ մի փորէ:—Ա. Խնկոյեանց	63
Ահա, տղէք, իմ այգին:—Ա. Վ. Ամատունի	64
Արդեօք, եթէ սիրուն ծաղկունք:—«Լուիկ-Մնջիկ»	66
Աստուած, չեմ խնդրում:—Ա. Ծատուրեան	67
Արագն էկաւ լափին տալով	»
Ահա եկաւ խոտ հարողը:—Ղ. Աղայեանց	68
Ալէլուեա, ալէլուեա	70
Աղջկէք, պար բռնեցէք:—Ղ. Աղայեանց	71
Արձակ, համարձակ:—Գ. Խալաթեանց	73
Աղջիկ տեսի, աղջիկ սիրուն:—Մ. Ե. Մ.	74
Բարեհաւ, որ դաս:—Մ. Պարեան	75
Բիւրիւն զարթնել է:—Ա. Մարտիրոսեան	76
Բամ. փորոտան:—Հ. Ղ. Ալիշան	77
Բարի, գեղեցիկ:—Աշրդ-Ջիւանի	78
Բաժակներ առնունք:—Ռ. Պատկանեան	79
Բաւական է մեզ:—Մ. Փ.	»
Բանք, քանի՞ հրաշափառ:—Վ. Վ. Մանկունի	81
Բարձր, ձիւնոտ սար կայ:—Յ. Կոստանեանց	82
Բերդիցը դուրս էլայ	83
Բոյդ բարձր, սալի չինար	»
Բարձր սարին:—Յ. Կոստանեանց	84
Գեղամայ ծովակ:—Նէեմիա (Մ. Ե. Մ.)	86
Գարունն է եկել:—Ռ. Պատկանեան	91
Գիւղական աղջիկ եմ ես	92
Գնդթան մանկտի	93
Գիշեր ցերեկ կ'հառաչեմ	94

Գեղեցիկ Արմենուհի:—Մ. Փ.	95
Գինետունքն քիչ պիտէին:—Ա. Մարտիրոսեան	96
Գարունն եկաւ շողշողալէն:—Գ. Գեմիրճեան	97
Գարնանային սիւք ցօղաթէ:—Խ. արք. Նար-Պէյ	98
Գնաս բարով:—Յ. Թումանեանց	100
Գնանք պաղնեք սուրբ մեռոնը:—Մ. Արեղեան	102
Դու տեսիլ ես երկնքում:—Ռ. Պատկանեան	104
Դու դեռ գանձում ես:—Աշտարակեցի Խաչիկ	106
Դառն սրտով միշտ կարդում եմ:—Ա. Ծատուրեան	107
Դու տեսիլ ես սրբավայրում:—Յ. Յակոբեան	»
Դարեր եկան, դարեր անցան:—Յ. Յովհաննիսեան	108
Ելցաւ հապօն:—Հ. Ղուկասեան	109
Եղբարք, ուժից ընկած:—Գ. Բարխուդարեանց	»
Երբ սկսիլ օր:—Ի. Բագրատունի	111
Երբ որ բացուին դռներն յուսոյ	»
Եղբարք, մի շուրջ ժողովեցէք:—Ռ. Պատկանեան	112
Երգի՛ր, Սննակ Հայաստանի:—Ա. Գրիգորեանց	113
Ես լսեցի մի անոյշ ձայն:—Ա. Շահազիզեան	114
Երկու աչքով կոյր ծերունին:—Գ. Բարխուդարեանց	115
Երբ որ հողից մարդ դարձայ:—Ռ. Պատկանեան	117
Եկայք, ընկերք:—Ա. Գրիգորեանց	119
Ես շատ կը սիրեմ:—Մ. Ալիսանեան	120
Ե՛կ, Տէր Յիսուս, ողորմեա մեզ	121
Ես տաճար մտայ:—Ա. Ծատուրեան	»
Եթէ զիս աննըշան:—Յ. Գայեան	122
Եւ աչքըդ պայծառ:—Ա. Ծատուրեան	123
Ես մէկ ծառ եմ ծիրանի	124
Եօթն օր, եօթ գիշեր	125
Ես ման եմ գալիս:—Ա. Շահազիզեան	126
Երբ առաջին կոյսն:—Ռ. Գ. Բարխուդարեան	129
Երկինք մեզ տուաւ:—Մ. Ե. Մ.	130
Երբ իմ թուխ աչեր:—Ա. Վ. Ամատունի	131
Զարմանք բան է:—Ռ. Պատկանեան	134
Զարթի՛ր, սիրտ իմ վշտահար	135
Զայն մանկանցս. ո՞վ Տէր Յիսուս	136
Զինուորիս երգերը:—Գ. Դողոթեանց	»
Զանգին կուգայ:—Յ. Կոստանեանց	137
Է՞ր հեռանաս:—Յ. Կարինեանց	138

Է՛յ, նաւաւոր:—Ա. Ծատուրեան	138
Է՛հ, եղբայրներ:—Ա. Աթայեանց	140
Է՛յ, կանանչ ակապէր:—Ա. Իսահակեան	141
Թէ որ ամպերէն:—Ս. Վ. Ամատունի	142
Թռչկէք դէպի լոյս, գիտութիւն:—Ա. Գրիգորեանց	145
Թէ իմն հայրենեաց քնար:—Ս. Ֆէլէկեան	146
Թէ ծխաքարչը ձեռիս:—Բ. Պատկանեան	148
Թուրքը հասաւ:—Ս. Սափարեանց	150
Թո՛ղ փրչէ քամին:—Գամառ-Քաթիպա	151
Թշուառ Հայաստան:—Պ. Մաղաթեան	152
Թռի՛ր, իմ նժոյգ:—Ա. Ծատուրեան	154
Թէ՛ գիւղ, թէ՛ քաղաք:—Ս. Վ. Ամատունի	155
Թո՛ղ բարձրացնեն ճռինչ, աղաղակ:—Ղ. Աղայեանց	157
Թէ միտք ունիս:—Յ. Քուչուքեանց	158
Ժամանակաց անցից լսեմ կրթարան:—Գ. Գ. Չ.	159
Իմ կեանքիս մէջ:—Յ. վարժ. Մեծատունեանց	160
Ի խումբ ի պար:—Ս. Փափաղեան	161
Ի զուր են ի զուր:—Խ. եպ. Գալֆայեան	162
Ինչո՞վ պէտք է մեր սրտերն ազնուացնենք	»
Իմ հայրենիքն ունի լեռներ:—Լ. Մանուէլեանց	163
Իբրեւ Արաքս, ես հոսում եմ:—Պ. Տրդատեան	»
Իմ գլխու ֆութէն կիտամ	165
Ինջինար եար ջան	168
Ի՞նչ բանի ես դու նման:—Ս. Փիլիպպոսեանց	»
Ի ննջմանէդ արքայական զարթի՛ր	170
Իստակ ջուր վազուկ:—Մ. Նալբանդեանց	»
Ինչո՞ւ չես երգում:—Վ. Նղիազարեանց	171
Իմ անվարքութիւնս:—Գ. Մելիքեանց	173
Լցրէ՛ք, եղբարք, ձեր բաժակները	»
Լըճի մէջ նաւակը:—Գամառ-Քաթիպա	175
Խորհուրդ մեծ և սքանչելի:—Շարական	177
Խաղաղութիւն ձեզ:—Ա. Ծատուրեան	»
Խինդ ու ցնծութեամբ տօնենք:—Յակ. Ղաղարեան	178
Ծովի դէմ նստած:—Նէեմիա (Մ. Ն. Մ.)	179
Ծիծեռնակ, ծիծեռնակ:—Գ. Գոգոխեանց	181
Ծառիս տակը մանիչակ	183
Ծնունդ եմ հայ:—Կ. Տէր-Աստուածատրեան	185
Կորուստ անդարձ ողբանուէր	188

Կապոյտ երկնքում:—Գ. Բարխուդարեանց	188
Կրամբամբուլին:—Բ. Պատկանեան	189
Կռնկ, ուստի՞ կուգաս	190
Կեանքիս մէջ:—Գամառ-Քաթիպա	192
1890 թուականին Ռափայել Պատկանեան:—Ա. Կայծունի	193
Կէս գիշեր է:—Ա. Ծատուրեան	196
Կապուտակ ձին նստել եմ	»
Կան յիշատակներ:—Նէեմիա (Մ. Ն. Մ.)	198
Կրակ վառուեց իմ սրտում:—Գ. (ա. քահ.) Մանգակունի	202
Կուչտ եմ և առողջ:—Ա. Ծատուրեան	204
Հանել եմ աշխարհ:—Ս. Վ. Ամատունի	205
Հուր բարկութեան:—Ռ. Սէտէֆեան	208
Համեստափայլ կոյս:—Մ. Հեղեան	209
Հայոց սիրուններ:—Ս. Գիւլգատեանց	211
Հայրենիք սրբազան:—Յ. Քուչուքեանց	212
Հայոց աղջիկներ:—Գ. Միրիմանեանց	213
Հայկազունք, պար բռնենք:—Ս. Պ. Պ. Փափաղեան	214
Հատիկ, դո՛ւ, իմ հատիկ:—Ա. Գրիգորեանց	215
Հայոց լեզու, Ագամայ լեզու:—Պ. Մաղաթեանց	216
Հոյոց երգերը, սէրն և զինին	217
Հիմի էլ լըռենք:—Ռ. Պատկանեան	218
Հնչեացն լարք գեղգեղ ի սուր:—Վ. Վ. Մանկունի	220
Հայոց մանուկներ:—Վարդենի	221
Հանդիստ իմ անոյշ:—Ս. Շահաղիգեան	223
Հայրենիքիս վառ երազով:—Գ. Դեմիրճեան	224
Հարբրեան, ջանէ ջան	225
Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիք	226
Հայրիկ, ասաց դուստրը հօրը:—Մ. Նալբանդեանց	227
Հոգևոյդ հանգիստ:—Ա. Տիվրիկեան	230
Ձմեռն անցաւ, դարունն է արդ	231
Ղարիբ աղբէր:—Տ. Շ. Կուռղինեան	232
Մտաւ արեւ երջանկութեան:—Ս. Գնունի	»
Մեր կեանքի նման ոչ ոք կեանք չունի	234
Մեր փոքրիկ հօտին նայի՛ր:—Մ. Ն. Ս.	235
Մէկը տեսար չլեապայով:—Յ. Մելիք-Յակոբեան	236
Մեր հայրենիք:—Մ. Նալբանդեանց	237
Մինչև արմունկը:—Ա. Աղ.	240
Մարդ կայ, մարդ է:—Ա. Մարտիրոսեան	242

Մին գիշեր քաղցր քնումն:—Ա. Մարտիրոսեան	243
Մայր Արաքսի ափերով:—Ռ. Պատկանեան	245
Մնաս բարով, բուրաստան:—Գ. Մուրադեանց	249
Մեր քաջ հայոց զօրութիւնք	251
Մայրենի լեզու, մայրենի բարբառ:—Ս. Նազարեանց	252
Մեր նախնիքը ազգի համար	253
Մարդս եկաւ:—Ռ. Պատկանեան	254
Մահկանացու դու:—Մ. Ե. Ս.	255
Մեզ նոր արե ծագէ	256
Մի նոր հրաշալի կեանքով:—Յ. Յովհաննիսեան	257
Մըր խօր պապիէ գերեզման	»
Մեր տան մէջը քնոյ տղայ	258
Մեր գիւղացու հարսանկրում:—Ա. Արարատեանց	260
Միշտ ման եկի Շաքի, Շիրուան:—Ուստա-Ջամալի	261
Մտաւ արե:—Յ. Յովհաննիսեան	266
Մեր գիւղացին:—Ա. Արարատեանց	268
Յամապերջն ապրիլի:—Յ. Վ. Ալամդարեանց	270
Յառնջ, դէպ յառնջ:—Յ. Վ. Փինաչեանց	271
Յերկու ձեռնի երկու մոմ:—Յ. Վ. Ալամդարեանց	»
Յաւիտենից անմահ Աստուած:—Յ. Վ. Փինաչեանց	273
Յորժամ եղև գարուն:—Նախաշով Ադամ	275
Յիշեա՛, Տէր:—Ս. Վ. Ամատունի	276
Նուա՛րդ սիրունիկ:—Մ. Ե. Մ.	278
Ներկայ դարուս ազատ հոգով:—Խ. Շահնազարեանց	279
Շողոպում է կարմիր գինին:—Ս. Փիլիպոսեանց	281
Ո՛հ ինչ քաղցր բան	282
Ո՛վ դու Սոխակ Հայաստանի:—Ա. Վ. Պալասանեանց	283
Ուզում եմ ես այն գինին:—Ա. Մարտիրոսեան	285
Ո՛վ է հարցնում մարդկութիւնն:—Նոյն	286
Ով դը կամի ինձ ճանաչել:—Նոյն	287
Ողջոյն ընդ քեզ, իմ Սոխակ:—Ա. Յարութիւնեանց	289
Ուզում ես դու, սիրոն Սոխակ:—Ա. Մատուրեան	290
Ո՛հ ինչ անուշ:—Մ. Պէշքթալեան	291
Ո՛վ հայկազունք, ով գիւցազունք	292
Ո՛վ Տէր մեր Աստուած	293
Ուզող զնետունից:—Գ. Գոլոբեանց	294
Ուր մօրը Կուրն էր գալիս:—Ս. Գիւլգատեանց	295
Ո՛վ դու հայ աշխարհ	296

Ոսկեծղի, գեղեցկատիպ:—Գամառ-Բաթիպա	297
Ո՛հ, դի չըքնադ:—Վ. Վ. Մանկունի	298
Ուրախ լինե՛ք, եղբարք	299
Ո՞ր մահկանացուն այս երկրիս վերայ	300
Որ վառեցեր:—Հ. Ղուկասեանց	301
Ո՛վ իշխաններ, թագաւորներ:—Արամ-Չարըզ	303
Ո՛վ դուք առաւօտեան անուշիկ հովեր:—Աչըզ-Խայաթի	304
Ուռած փորիդ:—Ս. Փիլիպոսեանց	305
Ո՛վ Հայր մեր և Աստուած:—Յ. Գուշուբեանց	306
Ոտք ու ձեռքը ամուր դամած:—Ս. Սափարեանց	307
Ո՛ւր ես, հայ բըրբուր:—Ա. Մատուրեան	308
Պայծառատես բաղդն իմ անգին:—Ս. Շահաղիզեան	309
Պուէտ, դու հալարտ:—Ա. Մատուրեան	311
Պայծառ արե, կայտառ հովեր:—Արամ-Չարըզ	312
Պայծառ առաւօտ:—Սէթ	313
Սար ու ձոր ընկած:—Խ. Արուկեանց	315
Սուրբ գերեզմանին քո մատաղ լինիմ:—Բաղդատունի	316
Սամալբը պատուական է	318
Սիրահեղին, սիրուն աղջիկ:—Յ. Տէր-Յովհաննիսեանց	»
Սուրբ Կարապետ չայիլ չիման	320
Սարսափելի երազ տեսայ:—Մ. Նալբանդեանց	321
Սազ եմ առել:—Ա. Մատուրեան	325
Սոխակն ունի կարմիր վարդ:—Տ. Ճգնափորեան	326
Սոխակ, Սոխակ:—Քեչիշ-Օղլի	328
Սոխակ գեղեցիկ:—Կ. Տէր-Չաքարեանց	329
Վերջին վարդ:—Բ. Պատկանեան	331
Վըհատած հոգուս:—Յարութիւն-Ոստանիկ	332
Վարդան մեր քաջ:—Ս. Շահաղիզեան	333
Վառեց երկինք իւր լապտեր	335
Տարեմուտի երկնոյն:—Ղ. Աղայեանց	»
Տէր, պահե՛ս զԿայսր մեր	337
Տէր, ինչ մարդ է:—Պ. Մադաթեան	»
Տան-դօ, տան-դօ:—Յ. Յովհաննիսեան	338
Տիկնաչք փափկասունք:—Ս. Նախուսեան	339
Տեսիլ ես արդեօք:—Յ. Յովհաննիսեան	341
Տեսած էք անշուշտ:—Մ. Ե. Մ.	342
Տեսէ՛ք, ինչպէս խաչը ձեռնին:—Բ. Ա. Գ.	344
Յուրտը փչեց:—Մ. Նալբանդեանց	346

Յանկալի է ինձ:—Ա. Գ. Նազարեանց	349
Փայլեց Մասիս:—Յ. Յովհաննիսեան	351
Փոթորիկն անցաւ:—Նոյն	352
Քաղցրախօս Պոլէտ:—Գ. Բարխուդարեանց	353
Քաղցրանուէր ողջոյն տալու:—Ա. Ծատուրեան	355
Քննեալ եղիւր, պալատ:—Ռ. Պատկանեան	356
Քննեալ եղիւր, Մանիկ:—Կ. Կ. Մելիք-Շահնազարեանց	357
Քո թարմ չիրմին:—Բ. Ա. Գ.	358
Քսան տարի է:—Սէթ	360
Օտար երկիր, օտար պանդուխտ	361
Օ՛, դառն հոգսերի:—Ա. Ծատուրեան	»
Օխտը սարով:—Ա. Իսահակեան	363
Օրօր, օրօր, օրօրօր:—Ա. Գ. Փանոսեան	364
Օտար երկիրնք, օտար արեւ:—Ա. Ծատուրեան	366
Օր մի տեսաւ դուան թռչուն	367
Օ՛խտը տարով:—Ա. Ծատուրեան	368
Օրօրանիս մօտը նստած:—Գ. Ասողիկ	369

ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՅՑ ՏՊՈՒԱԾ ԵՆ.

1. Հնդկացւոյ անցքը անմարդաբնակ կղզիներում	72 p.
2. Մանկական լեզու (այբբենարան-ընթերցարան)	74 »
3. Սոխակ Հայաստանի I հատոր.	74 »
4. Հայկական Գեղագրութիւն, վիմատիպ	75 »
5. Սոխակ Հայաստանի II հատոր	75 »
6. Русская Азбука съ картинами	76 »
7. Սոխակ Հայաստանի III հատոր	76 »
8. Սոխակ Հայաստանի IV հատոր	78 »
9. Զարկեարի Քնարը, բանաստեղծութիւններ.	79 »
10. Սոխակ Հայաստանի I հատոր, Բ. տպագրութիւն	81 »
11. Սոխակ Հայաստանի V հատոր	88 »
12. Սոխակ Հայաստանի I հատոր, Գ. տպագրութիւն	90 »
13. Զարկեարի Քնարը Բ. տպագրութիւն	90 »
14. Սոխակ Հայաստանի I հատոր, Գ. տպագրութիւն	95 »

Սոքա բոլորը սպառուած են:

15 Սոխակ Հայաստանի I հատոր, Ե. տպագրութիւն	1 p. 20 կ.
--	------------

ՇՈՒՏՈՎ ՏՊԱԳՐՈՒԵԼՈՒ ԵՆ.

1. Զարկեարի Քնարը Գ. տպագրութեամբ:
2. „Богъ въ природѣ“ գրքոյկի հայերէն թարգմանութիւնը:

Օտարաբաղաբացի ցանկացողները, յայտնելով իրանց ճիշդ հասցեն, զիմում են Բագու, «ՍՈՒԱԿԻ» նրատարակիչ Գրիգոր աւագ քահանայ Գրիգորեանցին, հետեւեալ հասցեով.

Протоіерею Григорію Григоріанцъ, въ Баку.

33,

ՀՀ Ազգային գրադարան



NL0380916

73 223

